ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2019

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Հայտարարվել են կազմակերպչական փոփոխություններ՝ **Երիտասարդներին զորացնելու** համար:

Նախագահ Նելսոնը փառաբանում է տաճարային օրհնությունները, մյուսների հանդեպ սերը:

Հայտարարվել են 8 նոր տաճարներ:

Միայն միտքը Քո մասին (Մեսիա),
Էլսփեթ Յանգ

«Փրկիչի Քավության մասին խոսելիս, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է.

«Բոլոր բաներում Հիսուս Քրիստոսը մեր լավագույն օրինակն է, «որ իր առաջին դրուած ուրախութեան փոխանակ խաչը հանձն առաւ» [Եբրայեցիս 12.2]: Մտածեք այդ մասին: Որպեսզի տաներ Երկրի վրա երբևէ կրած ամենատանջալի փորձառությունը, մեր Փրկիչը կենտրոնացավ ուրախության *վրա:. . .*

Նմանապես, «մեր առաջ դրված» ուրախությունը Փրկիչին օգնելն է Նրա փրկագնման գործում»:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Սրբերի ուրախությունը», 17:

© ELSPETH YOUNG, ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է

Բովանդակություն նոյեմբեր 2019

Հատոր 20 • Համար 4

Շաբաթ առավոտյան նիստ

6 **Ուղերձը, նշանակությունը և բազմությունը**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

9 **Փրկիչի ճշմարիտ աշակերտները**
Երեց Տերենս Մ. Վինսոն

12 **Եղեք հավատով, այլ ոչ անհավատ**
Սթեֆեն Վ. Օուեն

15 **Սրբերի ուրախությունը**
Երեց Դ. Թոդ Քրստոֆերսոն

19 **Հոգևոր կարողություն**
Միշել Քրեյգ

22 **Անսասան նվիրվածություն առ Հիսուս Քրիստոս**
Երեց Դեյլ Գ. Ռենլանդ

26 **Տիրոջն ապավինիր**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

Շաբաթ ցերեկային նիստ

30 **Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորների, Տարածքային Յոթանասունականների և Բարձրագույն Պաշտոնյաների հաստատումը**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

31 **Շարունակ արթուն լինեք աղոթքում**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

35 **Գտնվել է Մորմոնի Գրքի զորությամբ**
Երեց Ռուբեն Վ. Ալիո

38 **Վկաներ, Ահարոնյան Քահանայության քվորումներ, Երիտասարդ Կանանց դասարաններ**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

40 **Փոփոխություններ երիտասարդներին զորացնելու համար**
Երեց Քվենթին Լ. Քուք

44 ***Եկ, հետևիր ինձ.* Տիրոջ հակառազմավարությունը և կանխարգելող ծրագիրը**
Մարկ Լ. Փեյս

47 **Հաստատուն և անվիատ վստահություն**
Երեց Լ. Թոդ Բադջ

50 **Մեր հավատքի փորձությունից հետո**
Երեց Խորխե Մ. Ալվարադո

53 **Կանգնել մեր խոստումների և ուխտերի կողքին**
Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ

Կանանց նիստ

57 **Ամպերի և արևի շողերի միջով, Տեր մնա ինձ հետ**
Ռեյնա Ի. Ըբարթո

60 **Պատվելով Նրա անունը**
Լիզա Լ. Հարկնես

67 **Սիրելի դուստրեր**
Բոննի Հ. Քորդոն

70 **Ուխտի կանայք Աստծո հետ գործընկերության մեջ**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

73 ***Երկու* մեծ պատվիրանները**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

76 **Հոգևոր գանձեր**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի առավոտյան նիստ

80 **Պատկանելություն ուխտին**
Երեց Գերիթ Վ. Գոնգ

83 **Ուրախություն գտնել ավետարանով կիսվելիս**
Քրիստինա Ֆռանկո

86 **Ձեր մեծ արկածը**
Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ

90 **Փրկիչի հպումը**
Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես

93 **Ինձ մի խաբիր**
Երեց Գարի Ի. Սթիվենսոն

96 **Երկրորդ մեծ պատվիրանը**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի ցերեկային նիստ

100 **Սրբությունը և երջանկության ծրագիրը**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

104 **Իմանալ, սիրել և ածել**
Երեց Հանս Թ. Բում

106 **Մեր մարմինների վերահսկողությունը հանձնելով մեր հոգուն**
Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ

110 **Հակառակորդին հաղթելու զորությունը**
Երեց Պիտեր Մ. Ջոնսոն

113 **Վերցնենք մեր խաչը**
Երեց Ուլիսես Սոարես

116 **Պտուղ**
Երեց Նիլ Լ. Անդերսեն

120 **Ամփոփիչ ելույթ**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

64 **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները**

123 **Եկեղեցու նորությունները**

127 ***Եկ, հետևիր ինձ.* սովորել գերագույն համաժողովի ելույթներից**

189-րդ կիսամյա գերագույն համաժողով

Շաբաթ առավոտ, 5 հոկտեմբերի, 2019թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Լարի Ե. Ուիլսոն
Փակման աղոթք. Երեց Սթիվեն Ռ. Բանգերթեր
Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնաքլ երգչախմբի, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահար՝ Էնդրյու Անսվորթ. “Sweet Is the Work,” *Hymns,* no. 1; “We Thank Thee, O God, for a Prophet,” *Hymns,* no. 90, arr. Wilberg; “We Listen to a Prophet’s Voice,” *Hymns,* no. 277, arr. Murphy; “Press Forward, Saints,” *Hymns,* no. 85; “Tell Me the Stories of Jesus,” *Children’s Songbook,* 96, arr. Murphy; “My Redeemer Lives,” *Hymns,* no. 3, arr. Wilberg:

Շաբաթ ցերեկ, 5 հոկտեմբերի, 2019թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք. Երեց Մեթյու Լ. Քարփենթեր
Փակման աղոթք. Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսեն:
Երաժշտությունը՝ Պրովո Յուտա տարածքի ցցերի միացյալ երգչախմբի, խմբավար՝ Ջիմ Կասեն, երգեհոնահար՝ Ջոզեֆ Փիփլզ. “The Lord Is My Light,” *Hymns,* no. 89, arr. Kasen; “Sweet Is the Work,” *Hymns,* no. 147, arr. Kasen; “Redeemer of Israel,” *Hymns,* no. 6; “Thy Spirit, Lord, Has Stirred Our Souls,” *Hymns,* no. 157, arr. Kasen:

Շաբաթ երեկո, 5 հոկտեմբերի, 2019թ., կանանց գերագույն նիստ
Վարող՝ Ջոյ Դ. Ջոնս
Բացման աղոթք: Սալոտե Տուկոֆու
Փակման աղոթք. Քերոլ Քոսթլի
Երաժշտությունը՝ Յուտայի Ուեստ Ջորդան տարածքի Երեխաների Միության միացյալ երգչախմբի. խմբավար՝ Քեյսի Բրադբուրի, երգեհոնահար՝ Լինդա Մարգետ. “Praise to the Lord, the Almighty,” *Hymns,* no. 72, arr. Webb; “We Thank Thee, O God, for a Prophet,” *Hymns,* no. 19; “I Love to See the Temple,” *Children’s Songbook,* 95, arr. Mohlman; “He Sent His Son,” *Children’s Songbook,* 34–35, arr. DeFord:

Կիրակի առավոտ, 6 հոկտեմբերի, 2019թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Օ. Վինսենթ Հալեք
Փակման աղոթք. Բեքի Քրեյվեն
Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնաքլ Երգչախմբի, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Բրայան Մաթիաս և Ռիչարդ Էլիոտ. “Sing Praise to Him,” *Hymns,* no. 267; «Աստծո Սրբեր», *Օրհներգ* հմր. 6, arr. Wilberg; “I Feel My Savior’s Love,” *Children’s Songbook,* 12, arr. Cardon; “Come, Ye Children of the Lord,” *Hymns,* no. 304; “O Thou Rock of Our Salvation,” *Hymns,* no. 254, arr. Wilberg; “Come, Follow Me,” *Hymns,* no. 116, arr. Wilberg:

Կիրակի ցերեկ, 6 հոկտեմբերի, 2019թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք. Երեց Ջեք Ն. Ջերարդ
Փակման աղոթք. Դուգլաս Դ. Հոլմս
Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնաքլ Երգչախմբի, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահար՝ Ռիչարդ Էլիոտ. “Come, Ye Children of the Lord,” *Hymns,* no. 58, arr. Murphy; “I Stand All Amazed,” *Hymns,* no. 193, arr. Murphy; “Let Us All Press On,” *Hymns,* no. 243; “More Holiness Give Me,” *Hymns,* no. 131, arr. Staheli:

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.ChurchofJesusChrist.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածում: Սովորաբար համաժողովից հետո վեց շաբաթվա ընթացքում անգլերեն լեզվով տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Գերագույն համաժողովի մասին նյութերը սահմանափակ կարողություններ ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են disability.ChurchofJesusChrist.org կայքում:

Կազմի վրա
Առջևի կազմ. լուսանկարը՝ Ջեյնի Բինգհեմի
Հետևի կազմ. Լուսանկարը՝ Վելդեն Ս. Անդերսենի

Համաժողովի լուսանկարները
Սոլթ Լեյք Սիթիում լուսանկարել են՝ Վելդան Անդերսոն, Քոդի Բել, Ջանե Բինգհեմ, Ռենդի Քոլիեր, Վեստոն Քոլտոն, Բրուոն Լիմա, Բրայան Նիքըլսոն, Լեսլի Նիլսոն, Մեթ Ռեյեր, Քրիստինա Սմիթ և Դեյվ Ուարդ:

ՆՈՅԵՄԲԵՐ 2019 ՀԱՏ. 20 Հ. 4
ԼԻԱՀՈՆԱ 18611 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին նախագահություն Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս և Հենրի Բ. Այրինգ
Տասներկու Առաքյալների Քվորում. Մ. Ռասսել Բալլարդ, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբենդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ, Գերրիտ Վոլտեր Գոնգ և Ուլիսես Սոարես

Խմբագիր. Ռեդի Դ. Ֆանկ
Խորհրդատուներ. Բեքի Քրեյվեն, Քրիստինա Բ. Ֆրանկո, Շարոն Յուբանկ, Վոլթեր Ֆ. Գոնզալեզ, Լարի Ս. Քեյեր, Էդրիան Օչոա, Վեմ Պ. Սթենֆիլ

Գլխավոր տնօրեն. Ռիչարդ Ի. Հիթոն
Եկեղեցու ամսագրերի տնօրեն.
Ալան Ռ. Լոյբորգ
Բիզնես ղեկավար. Գարֆ Քենոն

Գործադիր խմբագիր. Ադամ Ս. Օլսոն
Գործադիր խմբագրի օգնական. Ռայլն Քար
Հրատարակման օգնական. Կամիլա Կաստրիլոն
Ձեռագրեր և խմբագրում. Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջոն Ռայան Ջենսեն, Սիարոն Ջոնսթոն, Շարլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոկ, Ջոշուա Ջ. Փերքի, Ջեն Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Սելու, Լորի Ֆուլլեր, Սոսա Չեյզլ Ուրդլեյ, Մարիսա Վիդիսոն

Խմբագրության ինտերն. Ալեքսանդրա Փալմեր
Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Նկարչական ձևավորման տնօրեն. Թադ Ռ. Փիթերսոն
Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Ջոշուա Դենիս, Դեյվիդ Գրին, Քոլլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Էմիլի Չիկո Ռեմինգթոն, Մարք Վ. Ռոբիսոն, Կ. Նիկոլ Վոլկենհորստ
Ձևավորման ինտերն. Սոֆիա Սպաննաուս

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն
Հրատարակման տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակում. Իրա Գլեն Ադեր, Ջուլի Բըրդեթ, Թոմաս Գ. Քրոնին, Բրայան Վ. Ջիջի, Ջինի Ջ. Նիլսոն, Մարիսսա Մ. Սմիթ
Նախատպագրություն: Ջոշուա Դենիս

Տպագրության տնօրեն. Սթիվեն Թ. Լյուիս
Բաշխման տնօրեն. Նելսոն Գոնսալես

Փոստային հասցե. *Liahona,* Fl. 23, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0023, USA.

Լիահոնան (Մորմոնի Գրքի եգրոսյթ է, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հուանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիներեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է՝ ըստ լեզուների:)

© 2019 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Տեղեկատվություն հեղինակային իրավունքի մասին. Եթե չկա որևէ նշում, անհատները կարող են պատճենահանել նյութերը *Լիահոնայից* անձնական, ոչ-առևտրային օգտագործման նպատակներով (ներառյալ Եկեղեցու կոչումների համար): Այս իրավունքը կարող է ուժը կորցրած ճանաչվել ցանկացած ժամանակ: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., FL 13, Salt Lake City, UT 84150, USA, կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ChurchofJesusChrist.org:

For Readers in the United States and Canada: November 2019 Vol. 20 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (American Express, Discover, MasterCard, Visa) may be taken by phone or at store.ChurchofJesusChrist.org. (Canada Post Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Խոսնակների ցուցիչ

Ալվարադո, Խորխե Մ., 50
Այրինգ, Հենրի Բ., 30, 70, 100
Անդերսեն, Նիլ Լ., 136
Բադջ, Լ. Թոդ, 47
Բալլարդ, Մ. Ռասսել, 106
Բեդնար, Դեյվիդ Ա., 31
Բում, Հանս Թ., 124
Գոնգ, Գերիթ Վ., 80
Գոնզալես, Վոլթեր Ֆ., 90
Ալիո, Ռուբեն Վ., 35
Հարկնես, Լիզա Լ., 60
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 6
Նելսոն, Ռասսել Մ., 38, 76, 96, 120
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 86
Ջոնսոն, Պիտեր Մ., 110
Ռասբենդ, Ռոնալդ Ա., 53
Ըբարթո, Ռեյնա Ի. 66
Ռենլանդ, Դեյլ Գ., 22
Սթիվենսոն, Գարի Ի., 93
Սոարես, Ուլիսես, 133
Վինսոն, Տերենս Մ., 9
Փեյս, Մարկ Լ., 44
Քորդոն, Բոնիի Հ., 67
Քուք, Քվենթին Լ., 40
Քրեյգ, Միշել Դ., 19
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 15
Օուքս, Դալլին Հ., 26, 84
Ֆռանկո, Քրիստինա Բ. , 83
Օուեն, Սթեֆեն Վ., 12

Թեմաների ցուցիչ

Սիարոնյան Քահանայություն, 38, 40
Աղոթք, 19, 31, 104, 110
Աղքատություն, 96
Ամուսնություն, 84, 80
Անվտանգություն, 31
Աշակերտություն, 9, 15, 19, 22, 60, 86, 96, 104, 113
Ապաշխարություն, 73, 100, 104, 106, 133
Առաջին Տեսիլք, 6, 104, 120
Առաջնորդություն, 38, 40, 67
Արարողություններ, 38, 80, 116
Բժշկում, 57, 90
Գայթակղություն, 31, 93
Գիտելիք, 104
Դարձ, 15, 22, 35
Եկեղեցու կազմակերպությունը, 40, 67
Եպիսկոպոսներ, 38, 40
Երիտասարդ կանայք, 38, 40, 67
Երիտասարդ Տղամարդիկ, 38, 40
Երիտասարդներ, 12, 38, 40, 53, 120
Երջանկություն, 100
Զորություն, 35, 76, 110
Ընկերակցություն, 12, 67
Ընտանիք, 83, 106
Ինքնատիրապետում, 106, 133
Խորաթափանցություն, 76, 93
Ծառայություն, 70, 96, 104
Ծառայություն, 15, 19, 60, 70, 86, 96
Ծոմի նվիրատվություններ, 96
Կանայք, 70, 73, 76
Հաղորդություն, 110
Հավատք, 6, 12, 19, 22, 47, 50, 67, 76, 116
Հիսուս Քրիստոս, 6, 9, 15, 22, 26, 35, 44, 47, 53, 66, 60, 80, 83, 86, 90, 93, 100, 110, 113, 116
Հնազանդություն, 15, 73, 93
Հոգիների աշխարհ, 26, 106
Հոգևորություն, 12, 19, 44
Հույս, 47, 90
Հուսահատություն, 130
Զախորդություն, 15, 47, 50, 57, 90, 100, 104, 113, 116
Մահկանացու մարմին, 31, 106
Մարդասիրական օգնություն, 96
Միսիոներական աշխատանք, 83, 86
Մորմոնի Գիրք, 35, 80, 83, 130
Մտավոր հիվանդություն, 66
Նախաերկրային կյանք, 86, 106
Նախապատրաստություն, 31, 70
Ներում, 133
Շիտակություն, 53
Ուխտեր, 22, 53, 60, 76, 80, 83, 116
Ուրախություն, 9, 15, 47, 83, 96, 116
Պաշտպանություն, 31, 44
Պատվիրաններ, 15, 73, 93
Պարտավորություն, 9, 22
Ջոզեֆ Սմիթ, 6, 93, 100, 104, 113, 120
Սատանա, 31, 44, 93, 110
Սեր, 84, 86, 104, 106, 110, 116
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 44, 110
Սուրբ Հոգի, 19, 35
Սրբություն, 100, 120
Վեհացում, 73
Վերականգնում, 120
Վստահություն, 19, 26, 47
Տաճարներ, 26, 76, 120
Տեխնոլոգիաներ, 12, 19, 40, 110
Տուն, 12, 44
Փրկության ծրագիր, 83, 100, 106, 116
Քահանայություն, 76, 80
Քավություն, 9, 47, 60, 106, 116
Օրենքներ, 84
Օրինակ, 50
Օրհնություններ, 76, 90, 120

189-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

Եկեղեցու ղեկավարները, ովքեր ելույթ ունեցան գերագույն համաժողովին, կրկին ու կրկին հրավիրեցին մեզ դառնալ ավելի երջանիկ, ավելի սուրբ, ավելի նմանվել Փրկիչին և օգնել ուրիշներին անել նույնը:

Դեռ ավելին, նրանք այդ փոփոխությունը հասանելի դարձրին մեզանից յուրաքանչյուրի համար:

«Տերը ցանկանում է, որ Իր զավակները ճաշակեն հավերժական օրհնությունները, որոնք հասանելի են Նրա տաճարներում»,- ուսուցանեց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը: «. . . Տիրոջ տունը մտնելու անհատական արժանավորությունը պահանջում է մեծ հոգևոր պատրաստվածություն: Բայց Աստծո օգնությամբ ոչ մի բան անհնարին չէ»:

Գտնել երջանկություն և սրբություն

Նախագահ Նելսոնը հրավիրեց մեզանից յուրաքանչյուրին արժանանալ տաճարի օրհնություններին (տես էջ 120):

Նախագահ Հենրի Բ. Այրինգը բացատրեց կապը աճող սրբության և աճող երջանկության միջև (տես էջ 100):

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ուսուցանեց մեզ՝ ինչպես գտնել «սրբերի ուրախությունը» (տես էջ 15):

Սիրելու և կիսվելու հրավեր

Նախագահ Նելսոնը ուսուցանեց մեր մերձավորին սիրելու մասին և մանրամասնեց Եկեղեցու հեռանկարային մարդասիրական աշխատանքը (տես էջ 96):

Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆը բացատրեց այն զորությունը, որը գալիս է, երբ ուրիշներին հրավիրում ենք «գալ և տեսնել» (տես էջ 86):

Քույր Քրիստինա Բ. Ֆռանկոն նկարագրեց ավետարանով կիսվելու ուրախությունը (տես էջ 83):

Զորացնել երիտասարդներին

Մարգարեն ներկայացրեց երիտասարդների կազմակերպությունների փոփոխությունները, որոնք կխրախուսեն քվորումների և դասարանի նախագահության երիտասարդներին աճել և ղեկավարել (տես էջ 38):

Երեց Քվենտին Լ. Քուքը ներկայացրեց, թե ինչպես կգործի Ահարոնյան ղեկավարությունը (տես էջ 40):

Քույր Բոննի Հ. Քորդոնը կիսվեց Երիտասարդ Կանանց կազմակերպության փոփոխություններով (տես էջ 67):

Կառուցել տաճարները, կառուցել մեզ

Կանանց նիստի ժամանակ Նախագահ Նելսոնը հայտարարեց ութ նոր տաճարների մասին (տես էջ 76):

Կիրակի ցերեկային նիստին նա ուսուցանեց տաճար մտնելու արժանավորության մասին և ներկայացրեց տաճարային երաշխավորագրի վերանայված հարցերը (տես էջ 120): ■

ԵՐԵՑ ՋԵՖՐԻ Ռ. ՀՈԼԼԱՆԴ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ուղերձը, նշանակությունը և բազմությունը

Ամեն օրվա անդադար աղմուկի ու թմբուկի ձայների ներքո, եկեք նայենք Քրիստոսին՝ որպես մեր կյանքի, մեր հավատքի և մեր ծառայության կենտրոն:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, սա յոթ ամսական Սեմի Հո Չինգն է, ով անցած տարվա ապրիլին իր տանը հեռուստատեսությամբ դիտում էր գերագույն համաժողովը:

Երբ ժամանակը մոտեցավ նախագահ Ռասսել Մ. Նելսոնին և մյուս բարձրագույն իշխանություններին հաստատելու համար, Սեմիի ձեռքերը զբաղված էին իր շիշը պահելով: Եվ այսպես նա մի ուրիշ լավ բան արեց:

Սեմին լիովին նոր նշանակություն հաղորդեց ձեր ոտքերով քվեարկելու սկզբունքին:

Բարի գալուստ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս կիսամյա համաժողովին: Տարին երկու անգամ տեղի ունեցող այս հավաքների նշանակության քննարկումը սկսելու համար, ես կցանկանայի, որ դուք մտածեիք Նոր Կտակարանի Ղուկասի ավետարանի հետևյալ պատմության մասին.[1]

«Եւ եղաւ, որ [Հիսուսը] Երիքովին մօտենալիս, մի կոյր ճանապարհի վերայ նստած մուրացկանութիւն էր անում:

. . . *երբոր ժողովրդի անցնելը լսեց, հարցնում էր՝ թէ Դա ի՞նչ է:*

. . . պատմեցին նորան, թէ Յիսուս Նազովրեցին է անցնում:

Սեմի Հո Չինգը սատարում է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին 2019 թ. ապրիլի գերագույն համաժողովի ժամանակ:

Եւ նա աղաղակեց եւ ասեց. Յիսուս՝ որդի Դաւթի, ինձ ողորմիր»:

Ապշելով նրա համարձակությունից, ամբոխը փորձեց լռեցնել այդ մարդուն, իսկ «նա էլ աւելի էր աղաղակում», ասվում է պատմության մեջ: Իր համառության շնորհիվ նրան բերեցին Հիսուսի մոտ, ով լսեց տեսողությունը վերականգնելու նրա հավատով լի խնդրանքը և բուժեց նրան:[2]

Ամեն անգամ այդ վառ փոքրիկ դրվագը կարդալիս, ես ոգեշնչվում եմ: Մենք կարող ենք զգալ այդ մարդու տառապանքը: Մենք գրեթե կարող ենք լսել, թե նա ինչպես է գոռում՝ Փրկիչի ուշադրությունը գրավելու համար: Անշուշտ, մենք ժպտում ենք, երբ նա հրաժարվում է լռել և վճռականորեն *բարձրացնում է* իր ձայնը, երբ մնացած մարդիկ ասում են, որ նա *ցածրացնի* այն: Դա ինքնին, վճռական հավատքի մի լավ պատմություն է: Բայց, ինչպես բոլոր սուրբ գրություններում, որքան մենք կարդում ենք այն, այնքան ավելի շատ բան ենք բացահայտում:

Մի միտք, որը վերջերս է ծագել իմ մեջ, այն է, որ այդ մարդը չէր կորցրել ողջամտությունը, երբ հոգևորապես զգայուն մարդիկ էին շրջապատել նրան: Այս պատմության ամբողջ կարևորությունը կախված է մի քանի անանուն կանանցից և տղամարդկանցից, որոնց, երբ նրանց գործընկերը հարցրեց, թե «Ի՞նչ է նշանակում այդ խառնաշփոթը», նրանք իմաստություն ունեցան Քրիստոսին ճանաչելու որպես աղմուկի պատճառ. Նա «Անձնավորված Իմաստն էր»: Այդ կարճ խոսակցությունից բոլորս կարող ենք դաս քաղել: Հավատքի և համոզմունքի հարցերում, օգտակար կլինի ձեր հարցն ուղղել այն մարդկանց, ովքեր իրականում ունեն որոշակի հավատք և համոզմունք: «Մի՞թէ կարող է կոյրը կոյրին առաջնորդել»: Մի անգամ հարցրեց Հիսուսը: «[Եթե այո,] չէ՞ որ երկուսն էլ փոսը կ՚ընկնեն»:[3]

Հավատքի և համոզմունքի այդպիսի որոնումը մեր նպատակն է այս համաժողովներում, և այսօր մեզ միանալով դուք կհասկանաք, որ այս որոնումը կիսում են շատերը: Նայեք ձեր շուրջը: Այս տարածքներում կարող եք տեսնել տարբեր մեծության ընտանիքների, ովքեր եկել են տարբեր

տեղերից: Հին ընկերներն ուրախությամբ հանդիպում են, հիասքանչ երգչախումբը նվագում է, իսկ ցուցարարները բղավում են իրենց սիրելի անկյուններից: Վաղ օրերի միսիոներները փնտրում են իրենց նախկին զուգընկերներին, իսկ վերջերս վերադարձած միսիոներները փնտրում են լիովին *նոր* զուգընկերներ (եթե գիտեք, թե ինչ նկատի ունեմ): Իսկ լուսանկարնե՞րը: Անչափ շատ են: Բոլորս մեր սմարթֆոններով «յուրաքանչյուր անդամ միսիոներ է» կարգավիճակից անցել ենք «յուրաքանչյուր անդամ լուսանկարիչ է» կարգավիճակին: Այս հիանալի իրարանցման ժամանակ կարելի արդարացիորեն հարցնել. «Ի՞նչ է նշանակում այս ամենը»:

Ինչպես մեր Նոր Կտակարանի պատմության մեջ, նրանք, ովքեր օրհնված են տեսողությամբ, կհասկանան, որ բացի այն ամենից, ինչ կարող է մեզ առաջարկել համաժողովների այս ավանդույթը, այն ոչինչ չէր նշանակի, եթե մենք չգտնենք Հիսուսին այդ ամենի կենտրոնում: Որպեսզի հասկանանք այն տեսլականը, որը մենք փնտրում ենք, հասկանանք այն բուժումը, որը Նա խոստանում է, հասկանանք այն կարևորությունը, որը մենք ինչ-որ կերպ գիտակցում ենք, որ ներկա է, մենք պետք է պոկվենք այդ խառնաշփոթից, որքան էլ դա ուրախալի լինի, և մեր ուշադրությունը սևեռենք Նրա վրա: Յուրաքանչյուր խոսնակի աղոթքը, յուրաքանչյուր երգիչի հույսը, յուրաքանչյուր հյուրի ակնածանքը՝ բոլորը նվիրված են Նրա Հոգու կանչին, ում Եկեղեցին կոչված է սա՝ կենդանի Քրիստոսին, Աստծո Գառին, Խաղաղության Իշխանին:

Սակայն պարտադիր չէ, որ լինենք համաժողովի կենտրոնում՝ Նրան գտնելու համար: Երբ երեխան առաջին անգամ կարդում է Մորմոնի Գիրքը և ուրախանում է Աբինադիի քաջությամբ կամ 2000 պատանի մարտիկների երթով, մենք կարող ենք մեղմորեն ավելացնել, որ Հիսուսն այս հրաշալի տարեգրության ամենատարածված կենտրոնական կերպարն է, որը կոլիզեյի նման առկա է բոլոր գլուխներում և կապ է հաստատում այդ գլուխների հավատք ներշնչող մնացած բոլոր կերպարների հետ:

Նմանապես, երբ ընկերը սովորում է մեր հավատքի մասին, նա կարող է մի փոքր ճնշված լինել մեր կրոնական սովորույթի եզակի տարրերից և անծանոթ բառապաշարից՝ սննդակարգի սահմանափակումները, ինքնապահովման նյութերը, ռահվիրայական գաղթուղիները, թվայնացված ընտանեկան ծառերը, ինչպես նաև՝ անհաշվելի թվով ցցի կենտրոնները, որտեղ ոմանք հավանաբար սպասում են, որ կարող են պատվիրել հրաշալի, նուրբ, միջին չափի տապակած սթեյքեր (հումորային է, քանի որ անգլերենում “stake” (ցից) արտասանվում է նույն կերպ, ինչպես “steak” (ուտելիք): Այսպիսով, քանի որ մեր նոր ընկերների համար ամեն ինչ նորովի է, մենք պետք է օգնենք նրանց հասկանալ այդ խառնաշփոթի իմաստն ու նպատակը և հիմնականում կենտրոնանալ հավերժական ավետարանի վրա՝ երկնային Ծնողների սիրո, աստվածային Որդու քավության պարգևի, Սուրբ Հոգու մխիթարական առաջնորդություն, այս բոլոր ճշմարտությունների վերջին օրերի վերականգնման և շատ այլ բաների վրա:

Երբ ինչ-որ մեկն առաջին անգամ տաճար է գնում, նա կարող է ինչ-որ չափով զարմացած մնալ այդ փորձառությունից: Մեր խնդիրն է ապահովել, որ սուրբ խորհրդանիշները և բացահայտված ծեսերը, արարողակարգային հագուստը և տեսողական ցուցադրությունները երբեք չշեղեն, այլ ընդհակառակը՝ մատնանշեն դեպի Փրկիչը, ում երկրպագելու ենք մենք գնացել: Տաճարը Նրա տունն է, և Նա պետք է առավելագույնս լինի մեր մտքում և սրտում. Քրիստոսի հոյակապ վարդապետությունը հագեցնում է մեր էությունն այնպես, ինչպես որ այն գերակշռում է տաճարի արարողություններում՝ սկսած այն պահից, երբ մենք կարդում ենք արձանագրությունը մուտքի դռան վրա, մինչև շինության մեջ մեր վերջին վայրկյանը: Մեզ հանդիպած բոլոր հրաշքների մեջ, ամենից առավել, մենք պետք է տեսնենք Հիսուսին՝ տաճարում:

Մտածեք այս վերջին ամիսներին եկեղեցու համարձակ նախաձեռնությունների և նոր հայտարարությունների շրջադարձի մասին: Սպասավորելով միմյանց, զտելով մեր կիրակնօրյա փորձառությունը կամ ուրախ ընդունելով երեխաների և երիտասարդների նոր ծրագիրը, մենք կարող ենք բաց թողնել այդ հայտնությամբ տրված ճշգրտումների իրական պատճառը, եթե մենք դրանց նայենք որպես անհամեմատելի, կապ չունեցող տարրեր, այլ ոչ թե որպես փոխկապակցված ջանք՝ օգնելու մեզ ավելի ամուր հիմք կառուցել մեր Փրկության վեմի վրա:[4] Իհարկե, սա այն է, ինչ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նկատի ունի, երբ խնդրում է մեզ օգտագործել Եկեղեցու՝ հայտնությամբ տրված անունը:[5] Եթե Հիսուսը՝ Նրա անունը, Նրա վարդապետությունը, Նրա օրինակը, Նրա աստվածությունը լինեն մեր երկրպագության կենտրոնում, մենք մեկ անգամ ևս կհաստատենք այն մեծ ճշմարտությունը, ինչը մի անգամ ուսուցանեց Ալման. «Կան շատ բաներ, որ պետք է գան. [բայց] ահա կա մի բան, որն ավելի մեծ կարևորության է, քան մնացած բոլորը, . . . Քավիչը [ով] կգա ու կապրի իր ժողովրդի մեջ»:[6]

Եվս մեկ եզրափակիչ միտք. Ջոզեֆ Սմիթի 19-րդ դարի սահմանային միջավայրը լիքն էր քրիստոնյա վկաների մրցակցող մարդկանցով:[7] Բայց իրենց ստեղծած ժխորի մեջ, այս մեծամիտ նորաթուխները հեգնանքով կեղծում էին հենց այն Փրկիչին, որին այդքան ջանասիրաբար փնտրում էր երիտասարդ Ջոզեֆը: Պայքարելով իր իսկ խոսքերով կոչած «խավարի ու անորոշության» դեմ,[8] նա մեկուսացավ ծառերի պուրակի մենության մեջ, որտեղ տեսավ ու լսեց ավետարանի համար Փրկիչի կարևորության ավելի փառահեղ մի վկայություն, քան այս առավոտ նկարագրած որևէ այլ վկայություն: Անհերևակայելի ու չսպասված տեսողության պարգևով, Ջոզեֆը տեսիլքում տեսավ իր Երկնային Հորը, տիեզերքի մեծ Աստծուն և Հիսուս Քրիստոսին՝ Նրա կատարյալ Միածին Որդուն: Այնուհետև հայրը բերեց այն օրինակը, որին մենք այսօր առավոտյան ծափահարում էինք. Նա մատնացույց արեց Հիսուսին ու ասաց. «Սա է Իմ սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»:[9] Հիսուսի աստվածային ինքնության, փրկության ծրագրում Նրա առաջնահերթության և Աստծո աչքում Նրա արժանավորության որևէ ավելի մեծ արտահայտություն երբևէ չէր կարող գերազանցել այդ կարճ յոթ բառից բաղկացած հայտարարությանը:

Արդյո՞ք կա խառնաշփոթ և շփոթություն: Արդյո՞ք կա ամբոխ և հակառակություն: Մեր աշխարհում դրանից շատ կա: Իսկապես, թերահավատները և հավատացյալները դեռ վիճում են այս տեսիլքի շուրջ և գրեթե բոլոր այն հարցերի շուրջ, որոնց մասին ես այսօր խոսեցի: Իսկ եթե *դուք* ձգտում եք ավելի հստակ տեսնել և իմաստություն գտնել բազում կարծիքների մեջ, ես մատնանշում եմ նույն Հիսուսին և առաքելական վկայություն եմ բերում Ջոզեֆ Սմիթի տեսիլքի մասին, որը տեղի ունեցավ մոտ 1800 տարի անց այն բանից հետո, երբ մեր կույր ընկերը վերականգնեց իր տեսողությունը հին Երիքովի ճանապարհին: Այդ երկուսի և անցյալի մի շարք մարդկանց հետ ես վկայում եմ, որ անկասկած, կյանքի առավել հուզիչ պատկերն ու ձայնն այն է, որ Հիսուսը ոչ միայն անցնում է մեր կողքով,[10] այլև Նա գալիս է *դեպի* մեզ, կանգնում է մեր *կողքին*, և բնակություն է հաստատում մեզ *մոտ*:[11]

Քույրե՛ր և Եղբայրնե՛ր, ամեն օրվա անդադար աղմուկի ու թմբուկի ձայների ներքո եկեք նայենք Քրիստոսին՝ որպես մեր կյանքի, մեր հավատքի և մեր ծառայության կենտրոն: Այդտեղ է թաքնված իրական նշանակությունը: Իսկ եթե կլինեն օրեր, երբ մեր տեսողությունը կլինի սահմանափակ, մեր ինքնավստահությունը կնվազի կամ մեր հավատքը կփորձվի և կզտվի, որն անկասկած կլինի, ապա եկեք բարձր աղաղակենք. «Յիսուս՝ որդի Դաւթի, ինձ ողորմիր»:[12] Ես խոստանում եմ առաքելական ջերմեռանդությամբ և մարգարեական համոզմունքով, որ Նա կլսի ձեզ և ուշ կամ շուտ կասի. «Տե՛ս. քո հաւատքն ապրեցրեց քեզ»:[13] Բարի գալուստ գերագույն համաժողով: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դա հնարավոր է լինի նույն դեպքը, որը գրված է Մատթեոս 20.30–34-ում, որտեղ երկու կույր մարդ արձագանքում են, կամ այն հատվածը, որը գրված է Մարկոս 10.46–52, որտեղ այդ կույր մարդը նկարագրվում է Տիմեի որդի Բարտիմեոսը:
2. Տես Ղուկաս 18.35–43, շեշտադրումն ավելացված է:
3. Ղուկաս 6.39:
4. Տես 2 Նեփի 9.45:
5. Տես Ռասսել Մ. Նելսոն , «Եկեղեցու ճիշտ անունը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 87–89:
6. Ալմա 7.7:
7. Պալմիրայի մերձակայքում գտնվող Նյու Յորքի շրջանը հաճախ կոչվում էր «այրված թաղամաս»՝ կրոնական եռանդի պատճառով, որը պարբերաբար տարածվում էր այդ փոքր համայնքներում:
8. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.13:
9. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17:
10. Տես Ղուկաս 18.37:
11. Տես Հովհաննես 14.23:
12. Մարկոս 10.47:
13. Ղուկաս 18.42:

ԵՐԵՑ ՏԵՐԵՆՍ Մ. ՎԻՆՍՈՆ
Յոթանասունի Նախագահությունից

Փրկիչի ճշմարիտ աշակերտները

Մենք կարող ենք տևական ուրախություն զգալ, երբ մեր Փրկիչը և Նրա ավետարանը դառնում են առանցք, որի շուրջ մենք կառուցում ենք մեր կյանքը:

Հին Կտակարանի Անգեի գրքում թաքնված է մարդկանց մի խմբի նկարագիր, ովքեր կարող էին օգտագործել Երեց Հոլլանդի խորհուրդը: Նրանց սխալն այն էր, որ նրանց կյանքը և ծառայությունը չէր կենտրոնանում Քրիստոսի վրա: Անգեն մտածելու տեղիք տվող որոշ խոսքերով հանդիմանում է մարդկանց, որ Տիրոջ տաճարը կառուցելու փոխարեն նստել են իրենց հարմարավետ տներում.

«Ձեզ համար ժամանա՞կ է արդեօք, որ ձեր ձեղունազարդ տներումը բնակուէք, իսկ այս տունը աւերակ մնայ:

Եւ հիմա այսպէս է ասում Զօրաց Տէրը. Ձեր ուշը դարձրէք ձեր ճանապարհներին:

Սերմել էք շատ, բայց բերել էք քիչ, կերել էք, բայց չէք կշտացել, խմեցիք, բայց ծարաւը չհանգցրիք, հագնուեցաք, բայց չտաքացաք. Եւ վարձկանը վարձի համար գործում է ծակուած քսակով:

Այսպէս է ասում Զօրաց Տէրը, Ձեր ուշը դարձրէք ձեր ճանապարհներին»:[1]

Որքան լավ է նկարագրված Աստծո բաների փոխարեն հավերժական հետևանքներ չունեցող բաներին անիմաստ առաջնահերթություն տալը:

Վերջերս հաղորդության ժողովի ժամանակ մի վերադարձած միսիոներ մեջբերեց մի հոր խոսքերը, ով հրաշալի ամփոփել էր այս գաղափարը, երբ ասել էր իր զավակներին. «Ահա, թե ինչ է մեզ անհրաժեշտ այժմ. ավելի քիչ Wi-Fi, և ավելի շատ Նեփի»:

Հինգ տարի ապրելով Արևմտյան Աֆրիկայում, ես տեսել եմ բազում օրինակներ, երբ մարդիկ առաջնահերթությունը սրտանց տվել են ավետարանին՝ առանց ամաչելու: Նման օրինակներից է Գանայում անվադողերի վերանորոգման և անիվների հավասարակշռման բիզնեսի անվանումը: Սեփականատերն այն անվանել է «Քո կամքի հավասարակշռումը»:

Մենք կարող ենք տևական ուրախություն[2] զգալ, երբ մեր Փրկիչը և Նրա ավետարանը դառնում են առանցք, որի շուրջ մենք կառուցում ենք մեր կյանքը: Սակայն այդ առանցքը շատ հեշտությամբ կարող է փոխարինվել աշխարհիկ բաներով, իսկ ավետարանը դառնալ լրացուցիչ մի բան, կամ պարզապես երկու ժամով եկեղեցի հաճախել կիրակի օրերին: Դա նման է մեր աշխատավարձը «ծակուած քսակի» մեջ դնելուն:

Անգեն հորդորում է մեզ լինել նվիրված, ինչպես մենք Ավստրալիայում ենք ասում, «գործել շիտակ» ավետարանով ապրելիս: Մարդիկ գործում են շիտակ, երբ նրանց խոսքը և գործը համահունչ է:

Շիտակ գործելու և նվիրված լինելու մասին ես մի փոքր սովորել եմ ռեգբի խաղալիս: Սովորել եմ, որ երբ խաղում էի ողջ ջանասիրությամբ, անում ամեն հնարավոր բան, առավելագույնս վայելում էի խաղը:

Ռեգբիի իմ լավագույն տարին ավագ դպրոցից հետո էր: Մեր թիմը տաղանդավոր էր և նվիրված: Մենք

այդ տարվա հաղթող թիմն էինք: Ինչևէ, մի օր մենք խաղալու էինք ցածր կարգի թիմի հետ, իսկ խաղից հետո բոլորս ժամադրություն ունեինք քոլեջի ամենամյա պարերում: Ես կարծեցի, որ քանի որ սա հեշտ խաղ է լինելու, պետք է խուսափեմ վնասվածքներից, որպեսզի լիովին վայելեմ պարերը: Այդ խաղի ընթացքում մենք չցուցաբերեցինք առավելագույն նվիրվածություն և պարտվեցինք: Դրան գումարվեց նաև այն, որ ես խաղն ավարտեցի այտուցված շրթունքով, փչացնելով իմ տեսքն իմ կարևորագույն ժամադրության համար: Անշուշտ, ես պետք է ինչ-որ բան սովորեի:

Լիովին այլ փորձառություն ունեցանք հետագա մի խաղի ժամանակ, երբ ես մեծ նվիրում ցուցաբերեցի: Մի պահ ես ուժերս լարած առաջ էի մղվում, երբ ցավ զգացի դեմքիս: Հիշելով հորս խրատները, որ հակառակորդը երբեք չպիտի իմանա, որ ես վնասվել եմ, ես շարունակեցի խաղը: Այդ երեկո, մինչ փորձում էի ճաշել, ես հասկացա, որ չեմ կարողանում ծամել: Հաջորդ առավոտ ես գնացի հիվանդանոց, որտեղ պարզվեց, որ ծնոտի կոտրվածք ունեմ: Հաջորդ վեց շաբաթների ընթացքում բերանս անշարժացված էր:

Դասեր քաղեցի այտուցված շրթունքի և կոտրված ծնոտի առակից: Անկախ վեց շաբաթների ընթացքում պինդ սննդի անհագ փափագի հիշողություններից, երբ ես միայն հեղուկներ կարող էի ընդունել, ես չեմ զղջում իմ կոտրված ծնոտի համար, քանի որ դա արդյունքն էր իմ ողջ ջանասիրության: Սակայն ես զղջում եմ այտուցված շրթունքիս համար, քանի որ այն խորհրդանշում է ինձ հետ պահելը:

Մեր բոլոր ջանքերը ներդնելը չի նշանակում, որ մենք շարունակ պարուրված ենք լինելու օրհնություններով կամ միշտ հաջողություններ ենք ունենալու: Սակայն դա նշանակում է, որ մենք ուրախ ենք լինելու: Ուրախությունը ակնթարթային հաճույք կամ ժամանակավոր երջանկություն չէ: Ուրախությունը հարատև է և հիմնվում է այն բանի վրա, որ Տերն ընդունում է մեր ջանքերը:[3]

Նման կերպ ընդունված լինելու օրինակ է Օլիվեր Գրենջերի պատմությունը: Ինչպես նշել է Բոյդ Ք. Փաքերը. «Երբ սրբերը քշվեցին Կիրթլենդից, . . . Օլիվերը մնաց այնտեղ, որպեսզի վաճառեր իրենց սեփականությունները թեկուզ փոքր գումարով: Հաջողության հասնելու մեծ ակնկալիքներ չկային: Եվ, իսկապես, նա հաջողության չհասավ»:[4] Առաջին Նախագահությունը տվեց նրան մի հանձնարարություն, որի իրականացումը դժվար էր լինելու, եթե ոչ անհնար: Սակայն Տերը հետևյալ խոսքերով արձագանքեց նրա անհաջող թվացող ջանքերին.

«Ես հիշում եմ իմ ծառա Օլիվեր Գրենջերին. ահա, ճշմարիտ ասում եմ նրան, որ նրա անունը պիտի պահվի սրբազան հիշողության մեջ՝ սերնդեսերունդ, հավիտյանս հավիտենից, ասում է Տերը:

Հետևաբար, թող նա լրջորեն պայքարի իմ Եկեղեցու Առաջին Նախագահության փրկագնման համար, . . . և երբ նա ընկնի, նա կրկին կբարձրանա, քանզի նրա զոհաբերությունն ինձ համար ավելի սրբազան կլինի, քան նրա աճը, ասում է Տերը»:[5]

Տերենս Մ. Վինսոնը (ձախից չորրորդը)՝ որպես իր բարձրագույն դպրոցի ռեգբիի թիմի անդամ:

Սա վերաբերում է նաև մեզ. ոչ թե մեր հաջողությունները, այլ մեր զոհաբերությունն ու ջանքերն են, որ կարևոր են Տիրոջ համար:

Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտի մեկ այլ օրինակ է մեր թանկագին ընկերը Արևմտյան Աֆրիկայից՝ Կոտ դԻվուարից: Այս հրաշալի, հավատարիմ քույրը բավականին երկար ժամանակ իր ամուսնու կողմից ենթարկվել է սարսափելի էմոցիոնալ և նույնիսկ որոշ ֆիզիկական բռնության, ապա նրանք, ի վերջո, բաժանվել են: Նրա հավատը երբեք չի տատանվել, և նա շարունակել է բարի մնալ, սակայն նրա հանդեպ ցուցաբերված դաժանության արդյունքում, երկար ժամանակ նա մեծ ցավ է զգացել: Ահա նրա իսկ խոսքերը պատահածի վերաբերյալ.

«Չնայած ասում էի, որ ներել եմ նրան, ես միշտ քնում էի ցավն իմ սրտում. օրերս անցնում էին ցավով: Սիրտս կարծես այրվում էր: Բազմիցս ես աղոթել եմ Տիրոջը, որ հեռացնի այն ինձանից, սակայն ցավն այնքան մեծ էր, որ ես խորապես համոզված էի, որ զգալու էի այն ողջ կյանքիս ընթացքում: Ես ավելի մեծ ցավ էի զգում, քան այն ժամանակ, երբ երիտասարդ հասակում կորցրի մորս. ավելի մեծ ցավ, քան երբ կորցրի հորս և նույնիսկ որդուս: Կարծես այն մեծանում ու ծածկում էր սիրտս, ստեղծելով այնպիսի տպավորություն, թե ամեն վայրկյան կարող եմ մեռնել:

Լինում էին պահեր, երբ հարցնում էի ինքս ինձ, թե ինչ կաներ Փրկիչն իմ իրավիճակում, ապա ասում. «Տեր, սա չափից ավելի է»:

Ապա, մի առավոտ ես փնտրեցի այդ ցավն իմ սրտում, որ գալիս էր այդ ամենից և գնացի ավելի հեռուն՝ փնտրելով այն իմ հոգում: Այն այլևս չկար: Միտքս արագ վերանայեց իմ ցավերի բոլոր պատճառները, սակայն ես չէի զգում ցավը: Ամբողջ օրը սպասում էի, թե արդյոք նորից եմ իմ սրտում ցավ զգալու. ես չէի զգում այն: Ուստի, ես ծնկի իջա և շնորհակալություն հայտնեցի Աստծուն, որ Տիրոջ քավող զոհաբերությունը գործեց ինձ համար»:[6]

Այս քույրն այժմ երջանիկ է. նա կնքված է մի հրաշալի, հավատարիմ մարդու հետ, ով շատ է սիրում նրան:

Այսպիսով, ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը, եթե մենք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ենք: Եվ ի՞նչ արժեք ունի ավետարանը մեզ համար, երբ մենք «[մեր] ուշը դարձնում [ենք մեր] ճանապարհներին», ինչպես խորհուրդ է տալիս Անգեն:

Ինձ դուր է գալիս Լամոնի թագավորի հոր ցուցաբերած ճիշտ վերաբերմունքը: Դուք հիշում եք նրա զայրույթը սկզբում, երբ իմացավ, որ իր որդին ընկերացել է Ամմոնի՝ մի նեփիացու հետ. ժողովուրդ, որին լամանացիներն ատում էին: Նա դուրս բերեց իր թուրը, որ կռվի Ամմոնի դեմ և շուտով Ամմոնի թուրը հայտնվեց իր կոկորդի մոտ: «Արդ, թագավորը, վախենալով, թե ինքը պիտի կորցնի իր կյանքը, ասաց. Եթե դու խնայես ինձ, ես կշնորհեմ քեզ, ինչ որ դու խնդրես, մինչև իսկ թագավորության կեսը»:[7]

Ուշադրություն դարձրեք նրա առաջարկին. իր թագավորության կեսը իր կյանքի դիմաց:

Սակայն ավելի ուշ, ավետարանը հասկանալուց հետո, նա մեկ այլ առաջարկ արեց: «Թագավորն ասաց. Ի՞նչ պիտի ես անեմ, որ կարողանամ ունենալ այդ հավերժական կյանքը, որի մասին դու խոսեցիր: Այո, ի՞նչ պիտի ես անեմ, որ կարողանամ ծնվել Աստծուց, այս ամբարիշտ հոգին արմատախիլ անելով իմ կրծքից, և ստանամ նրա Հոգին, որպեսզի կարողանամ լցվել ուրախությամբ, որպեսզի ես չվտարվեմ վերջին օրը: Ահա, ասաց նա, ես կհրաժարվեմ բոլոր բաներից, ինչ ես ունեմ, այո՛, ես կթողնեմ իմ թագավորությունը, որպեսզի կարողանամ ստանալ այդ մեծ ուրախությունը»:[8]

Այս անգամ նա պատրաստ էր տալու իր *ողջ* թագավորությունը, քանի որ ավետարանն ավելին արժեր, քան իր բոլոր ունեցածը: Նա լուրջ մոտեցում ցուցաբերեց ավետարանի հանդեպ:

Ուստի, մեզանից յուրաքանչյուրը կանգնած է հետևյալ հարցի առաջ. արդյո՞ք մենք ամենայն լրջությամբ ենք վերաբերվում ավետարանին: Որովհետև, եթե մենք տատանվում ենք, ուրեմն շիտակ չենք կարող գործել: Իսկ մեզ հայտնի է, որ Աստված չի գովաբանում գաղջ վիճակը:[9]

Չկա որևէ գանձ, սիրած զբաղմունք, հասարակական դիրք, սոցիալական լրատվամիջոց, տեսախաղ, սպորտ, շփում հանրաճանաչ մարդու հետ կամ որևէ բան երկրի վրա, որն ավելի թանկ է, քան հավերժական կյանքը: Ուստի, Տերը խորհուրդ է տալիս յուրաքանչյուրին՝ «Ձեր ուշը դարձրէք ձեր ճանապարհներին»:

Իմ զգացողությունները լավագույնս արտահայտված են Նեփիի խոսքերում. «Ես հրճվում եմ պարզությամբ. ես հրճվում եմ ճշմարտությամբ. ես հրճվում եմ իմ Հիսուսով, քանզի նա փրկագնել է իմ հոգին դժոխքից»:[10]

Արդյո՞ք մենք ճշմարիտ հետևորդներն ենք Նրա, ով ամեն բան տվեց մեզ համար: Նա, ով մեր Քավիչն է և մեր Բարեխոսը Հոր առաջ: Նա, ով անձամբ ամբողջությամբ նվիրաբերվեց Իր քավիչ զոհաբերությամբ և այժմ էլ նվիրված է Իր ողջ սիրով, Իր զթությամբ և Իր ցանկությունն է, որ մենք ունենանք հավերժական ուրախություն: Ես աղերսում եմ բոլոր նրանց, ովքեր լսում կամ կարդում են այս խոսքերը. Խնդրում եմ, խնդրում եմ, մի դադարեք ձեր ողջ նվիրվածությամբ հետամուտ լինել ձեր պարտականություններին, մինչև որ կատարեք դրանք ապագա ինչ-որ անհայտ մի ժամանակահատվածում: Այս պահից սկսած գործեք շիտակ և զգացեք դրանից բխող ուրախությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Անգե 1.4–7:
2. Տես Հովհաննես 15.11, Հռովմեացիս 14.17, Բ Կորնթացիս 8.2, Եբրայեցիս 12.2, Մովսես 5.10, 7.53:
3. Տես Ենովս1.3–6, 27, Վարդապետություն և Ուխտեր 52.15, 97.8–9:
4. Բոյդ Ք. Փաքեր, «Այս փոքրերից մեկը», *Լիահոնա,* նոյ. 2004, 86:
5. Վարդապետություն և Ուխտեր 117.12–13:
6. Անձնական նամակագրություն:
7. Ալմա 20.23:
8. Ալմա 22.15:
9. Տես Հայտնություն 3.15–16:
10. 2 Նեփի 33.6:

ՍԹԵՖԵՆ Վ. ՕՈՒԵՆ
Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահ

Եղեք հավատով, այլ ոչ անհավատ

Մենք պետք է մտածված կերպով ամեն օր ժամանակ հատկացնենք, որպեսզի կտրվենք աշխարհից և կապվենք երկնքի հետ:

Վերջերս ես արթնացա և պատրաստվեցի ուսումնասիրել սուրբ գրությունները: Ես վերցրի իմ հեռախոսը և նստեցի մահճակալիս կողքի աթոռին, մտադրություն ունենալով բացել Ավետարանի գրադարան հավելվածը: Բացեցի հեռախոսս և նոր էի սկսել ուսումնասիրությունը, երբ տեսա մի շարք տեքստային հաղորդագրություններ և էլ-նամակներ, որոնք եկել էին գիշերվա ընթացքում: Ես մտածեցի.«Արագ կստուգեմ հաղորդագրությունները, իսկ հետո անմիջապես կանցնեմ սուրբ գրություններին»: Այսպիսով, երկու ժամ անց ես դեռ կարդում էի տեքստային հաղորդագրությունները, էլ-նամակները, լրատվական տեղեկագրերը և սոցիալական լրատվամիջոցների գրառումները: Երբ հասկացա, թե ժամը քանիսն է, ես անհապաղ վեր թռա, որպեսզի պատրաստվեմ այդ օրվա համար: Այդ առավոտ ես բաց թողեցի սուրբ գրություններիս ուսումնասիրությունը, և հետևաբար չստացա հոգևոր սնուցում, ինչը հույս ունեի անել:

Հոգևոր սնուցում

Համոզված եմ, ձեզանից շատերն են ունեցել նման փորձառություններ: Ժամանակակից տեխնոլոգիաները օրհնում են մեզ բազմաթիվ եղանակներով: Դրանք կարող են կապել մեզ ընկերների և ընտանիքի հետ, տեղեկատվություն տալ ողջ աշխարհում ընթացող իրադարձությունների և նորությունների վերաբերյալ: Սակայն, դրանք կարող են նաև շեղել մեզ ամենակարևոր կապից՝ երկնքի հետ մեր կապից:

Ես կրկնում եմ այն, ինչ մեր մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն է ասել. «Մենք ապրում ենք մի աշխարհում, որը բարդ է, և գնալով ավելի հակասական է դառնում: Սոցիալական լրատվամիջոցների հասանելիությունը և 24-ժամյա նորությունները անողոք հաղորդագրությունների տարափ են տեղում մեզ վրա: Եթե ուզում ենք անհամար ձայների և մարդկանց փիլիսոփայությունների միջից մաղել ճշմարտությունը, մենք պետք է սովորենք հայտնություն ստանալ»:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը շարունակում է զգուշացնել, որ «գալիք օրերում հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտապես սփոփող ազդեցության»:[1]

Տարիներ առաջ Նախագահ Բոյդ Ք. Փաքերը պատմեց եղնիկների մի հոտի մասին, որը ձյան առատ տեղումների պատճառով դուրս էր մնացել իր բնական կենսամիջավայրից և դիմակայում էր հնարավոր սովամահությանը: Որոշ մարդիկ բարի մտադրությամբ՝ ջանալով փրկել եղնիկներին, բեռնատարներով չոր խոտ բերեցին և լցրեցին այդ ողջ տարածքում. դա այն չէր ինչ սովորաբար եղնիկներն ուտում են, բայց նրանք հույս ունեին, որ դա առնվազն նրանց կպահեր ձմռան ընթացքում: Դժբախտաբար, հետագայում եղնիկների մեծ մասին գտան անկենդան: Նրանք կերել էին չոր խոտը, բայց դա նրանց չէր սնուցել, և նրանք սովամահ էին եղել լիքը ստամոքսներով:[2]

Շատ հաղորդագրություններ, որոնք տեղում են մեզ վրա այս տեղեկատվական դարում, հոգևորապես համարժեք են եղնիկներին խոտով կերակրելուն. մենք կարող ենք դա ամբողջ օրն ուտել, բայց այն չի սնուցի մեզ:

Որտե՞ղ գտնենք իսկական հոգևոր սնուցում: Բոլորից հաճախ այն չի հայտնվում սոցիալական լրատվամիջոցներում: Մենք գտնում ենք այն, երբ «առաջ ենք մղվում [մեր] ճանապարհով» ուխտի արահետի վրա «անընդհատ ամուր բռնած երկաթյա ձողից» և ճաշակում ենք կյանքի ծառի պտղից:[3] Սա նշանակում է, որ մենք պետք է մտածված կերպով ամեն օր ժամանակ հատկացնենք, որպեսզի կտրվենք աշխարհից և կապվենք երկնքի հետ:

Իր երազում Լեքին տեսավ մարդկանց, ովքեր ճաշակեցին պտղից, բայց հետո թողեցին այն՝ մեծ և ընդարձակ շենքի՝ աշխարհի հպարտության, ազդեցության պատճառով:[4] Հնարավոր է, որ երիտասարդ մարդիկ մեծանան Վերջին Օրերի Սրբերի տանը, հաճախեն Եկեղեցու բոլոր օգտակար ժողովներին և դասերին, նույնիսկ մասնակցեն տաճարային արարողություններին, իսկ հետո հեռանան «դեպի արգելված ուղիներ և [կորսվեն]»:[5] Ինչո՞ւ է այդպես պատահում: Շատ դեպքերում դա այն պատճառով է, որ մինչ նրանք անցնում էին հոգևորության թելադրանքների միջով, նրանք իրոք դարձի չէին եկել: Նրանք կերակրվել էին, բայց չէին սնուցվել:

Ի հակադրություն սրա, ես հանդիպել եմ ձեզանից շատերի հետ՝ Վերջին Օրերի Սրբե՛ր, դուք խելացի եք, ուժեղ և հավատով լի: Ես գիտեմ, որ դուք Աստծո որդիներն ու դուստրերն եք, և որ Նա աշխատանք ունի ձեզ համար անելու: Դուք սիրում եք Աստծուն ձեր ողջ «սրտով, զորությամբ, մտքով և ուժով»:[6] Դուք պահում եք ձեր ուխտերն ու ծառայում ուրիշներին՝ սկսելով տնից: Դուք հավատք եք գործադրում, ապաշխարում և կատարելագործվում ամեն օր և սա բերում է ձեզ հարատև ուրախություն: Դուք պատրաստվում եք տաճարային օրհնությունների և այլ հնարավորությունների, որոնք դուք կունենաք՝

որպես Փրկիչի ճշմարիտ հետևորդներ: Եվ դուք օգնում եք աշխարհին պատրաստվել Երկրորդ Գալուստին՝ հրավիրելով բոլորին գալ դեպի Քրիստոսը և ստանալ Նրա Քավության օրհնությունները: Դուք կապված եք երկնքի հետ:

Այո, դուք հանդիպում եք մարտահրավերների: Բայց դա այդպես է ամեն սերունդի հետ: Սրանք մեր ժամանակներն են, և մենք պետք է հավատով լինենք, այլ ոչ անհավատ: Ես վկայում եմ, որ Տերը գիտի մեր մարտահրավերների մասին, և Նախագահ Նելսոնի ղեկավարության միջոցով Նա պատրաստում է մեզ՝ դիմակայելու դրանց: Հավատում եմ, որ մարգարեի վերջին կոչը տնակենտրոն եկեղեցու վերաբերյալ, որն աջակցվում է նրանով, ինչ մենք անում ենք մեր շենքերում,[7] նախատեսված է օգնելու մեզ գոյատևել, նույնիսկ բարգավաճել այս օրերի հոգևոր թերսնուցման պայմաններում:

Տնակենտրոն

Ի՞նչ է նշանակում լինել տնակենտրոն եկեղեցի: Տները կարող են շատ տարբեր տեսք ունենալ ողջ աշխարհում: Գուցե դուք պատկանում եք մի ընտանիքի, որը Եկեղեցում է եղել շատ սերունդների ընթացքում: Կամ գուցե դուք Եկեղեցու միակ անդամն եք ձեր ընտանիքում: Գուցե դուք ամուսնացած եք կամ ամուրի, երեխաների հետ տանն եք կամ առանց նրանց:

Անկախ ձեր հանգամանքներից, դուք կարող եք դարձնել ձեր տունը ավետարանը սովորելու և դրանով ապրելու կենտրոն: Դա ուղղակի նշանակում է անձնական պատասխանատվություն ստանձնել ձեր դարձի և հոգևոր աճի համար: Դա նշանակում է հետևել Նախագահ Նելսոնի խորհրդին. «[Վերափոխել ձեր] տունը հավատքի սրբավայրի»:[8]

Հակառակորդը կփորձի համոզել ձեզ, որ հոգևոր սնուցումը անհրաժեշտ չէ, կամ ավելի խորամանկորեն կհամոզի, որ դա կարող է սպասել: Նա է կործանման վարպետը և հապաղման հեղինակը: Նա ձեր ուշադրությանը կկենտրոնացնի այնպիսի բաների վրա, որոնք հրատապ են թվում, բայց իրականում այդքան էլ կարևոր չեն: Նա կկամենա ստիպել ձեզ այնքան «անհանգստանալ շատ բաների մասին», որ դուք կանտեսեք «այն մեկ բանը [որն] անհրաժեշտ է»:[9]

Որքան երախտապարտ եմ «լավ ծնողների» համար,[10] ովքեր մեծացրել են իրենց ընտանիքը կայուն հոգևոր սնուցման, սիրառատ փոխհարաբերությունների և զվարճալի, օգտակար միջոցառումներով լի տան մթնոլորտում: Իմ պատանեկության ընթացքում նրանց ուսուցանած ուսմունքները շատ օգտակար էին ինձ համար: Ծնողնե՛ր, խնդրում եմ ամուր փոխհարաբերություններ ստեղծեք ձեր երեխաների հետ: Նրանք ամենաշատը ձեր ժամանակի կարիքն ունեն, ուրիշ ոչինչ:

Եկեղեցու կողմից աջակցվող

Մինչ դուք կառուցում եք ձեր ընտանեկան հարաբերությունները, Եկեղեցին պատրաստ է աջակցել ձեզ: Եկեղեցու մեր փորձառությունները կարող են զորացնել հոգևոր

սնուցումը, որը կատարվում է տանը: Մինչ այժմ այս տարի մենք տեսել ենք այդպիսի Եկեղեցական աջակցություն Կիրակնօրյա Դպրոցում և Երեխաների Միությունում: Մենք կտեսնենք ավելին Ահարոնյան Քահանայությունում և Երիտասարդ Կանանց ժողովներում ևս: Սկսած այս հունվարից այդ ժողովների ծրագիրը թեթևակի կփոփոխվի: Այն առաջվա նման կկենտրոնանա ավետարանի թեմաների վրա, բայց այդ թեմաները կհամաձայնեցվեն *Եկ, հետևիր ինձ. Անհատների և Ընտանիքների համար ձեռնարկի հետ:* Սա փոքր փոփոխություն է, բայց կարող է մեծ ազդեցություն ունենալ երիտասարդների հոգևոր սնուցման վրա:

Ուրիշ ի՞նչ աջակցություն է ապահովում Եկեղեցին: Եկեղեցում մենք ճաշակում ենք հաղորդությունը, որն օգնում է մեզ ամեն շաբաթ վերահաստատել մեր պարտավորությունը Փրկիչի հանդեպ: Եվ Եկեղեցում մենք հավաքվում ենք մյուս հավատացյալների հետ, ովքեր կապել են նույն ուխտերը: Սիրառատ փոխհարաբերությունները, որոնք մենք զարգացնում ենք Հիսուս Քրիստոսի ընկերակից աշակերտների հետ, կարող են հզոր աջակցություն լինել մեր տնակենտրոն աշակերտության համար:

Երբ 14 տարեկան էի, իմ ընտանիքը տեղափոխվեց մի նոր վայր: Գուցե ձեզ սոսկալի ողբերգություն չթվա, բայց դա ինձ համար շատ դժվարին ժամանակ էր: Դա նշանակում էր՝ շրջապատված լինել մարդկանցով, ում ես չգիտեի: Դա նշանակում էր, որ իմ ծխի մյուս բոլոր երիտասարդ տղամարդիկ հաճախելու էին ուրիշ դպրոց: Եվ ես մտածում էի ինչպես 14-ամյա պատանի. «Ինչպե՞ս կարող էին ծնողներս այդպես վարվել ինձ հետ»: Ես զգում էի այնպես, կարծես կյանքս խորտակվել էր:

Այնուամենայնիվ, մեր Երիտասարդ տղամադկանց միջոցառումների միջոցով, ես կարողացա փոխհարաբերություններ հաստատել իմ քվորումի մյուս անդամների հետ, ովքեր դարձան իմ ընկերները: Բացի այդ, եպիսկոպոսության անդամները և Ահարոնյան Քահանայության խորհրդականները սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել իմ կյանքին: Նրանք մասնակցում էին իմ սպորտային մրցումներին: Նրանք գրում էին խրախուսական երկտողեր, որոնք ես պահել եմ մինչև այսօր: Նրանք շարունակում էին կապ պահպանել ինձ հետ քոլեջ գնալուց հետո, և երբ ես մեկնեցի միսիա: Նրանցից մեկը նույնիսկ օդանավակայանում էր, երբ ես տուն եկա: Ես ընդմիշտ երախտապարտ կլինեմ այդ հրաշալի եղբայրների և նրանց սիրո և բարձր ակնկալիքների համադրության համար: Նրանք ուղղորդեցին ինձ դեպի Երկնային Հայրը և կյանքը դարձավ պայծառ, երջանիկ և ուրախ:

Ինչպե՞ս ենք մենք, որպես ծնողներ և ղեկավարներ, օգնում երիտասարդներին իմանալ, որ իրենք մենակ չեն, երբ քայլում են ուխտի արահետով: Անձնական փոխհարաբերություններ ստեղծելուց բացի, մենք հրավիրում ենք նրանց մեծ և փոքր հավաքների՝ Երիտասարդներին Զորացնելու համար համաժողովներից և երիտասարդական ճամբարներից մինչև ամենշաբաթյա քվորումի և դասարանական միջոցառումների: Երբեք մի թերագնահատեք այն ուժը, որը գալիս է մյուսների հետ հավաքվելուց, ովքեր նույնպես փորձում են ուժեղ լինել: Եպիսկոպոսնե՛ր և մյուս ղեկավարնե՛ր, խնդրում ենք, ձեր ծխում կենտրոնացեք երեխաներին և երիտասարդներին սնուցելու վրա: Նրանք ամենաշատը ձեր ժամանակի կարիքն ունեն, ուրիշ ոչինչ:

Լինեք դուք ղեկավար, հարևան, քվորումի անդամ, թե ուղղակի ընկերակից Սուրբ, եթե հնարավորություն ունեք ազդել որևէ երիտասարդ անձնավորության կյանքի վրա, օգնեք նրանց կապվել երկնքի հետ: Ձեր ազդեցությունը կարող է լինել հենց «Եկեղեցու աջակցությունը», որի կարիքն ունի այդ երիտասարդ անձնավորությունը:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն է այս Եկեղեցու ղեկավարը: Նա ոգեշնչում է մեր ղեկավարներին և մեզ առաջնորդում դեպի հոգևոր սնուցում, որի կարիքը մենք ունենք՝ վերջին օրերում գոյատևելու և բարգավաճելու համար: Այդ հոգևոր սնուցումը կօգնի մեզ հավատով լինել, ոչ թե անհավատ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 96:
2. Տես Jeffrey R. Holland, “Teaching and Learning in the Church,” *Liahona,* June 2007, 64:
3. 1 Նեփի 8.30:
4. Տես 1 Նեփի 8.24–28, 11.36:
5. 1 Նեփի 8.28:
6. Վարդապետություն և Ուխտեր 4.2:
7. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 7:
8. Ռասսել Մ. Նելսոն , «Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 113:
9. Ղուկաս 10.41–42:
10. 1 Նեփի 1.1:

ԵՐԵՑ Դ. ԹՈԴ ՔՐԻՍՏՈՖԵՐՍՈՆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Սրբերի ուրախությունը

Ուրախությունը գալիս է Քրիստոսի պատվիրանները պահելու, Նրա միջոցով վիշտն ու թուլությունը հաղթահարելու և Նրա նման ծառայելու արդյունքում:

Մորմոնի Գրքի մարգարե Ենովսը՝ Լեքիի թոռը, գրել է մի յուրահատուկ փորձառության մասին, որը տեղի էր ունեցել նրա կյանքի վաղ շրջանում: Անտառում որս անելիս Ենովսը սկսել է խորհել իր հոր՝ Հակոբի ուսմունքների մասին: Նա գրել է. «Խոսքերը, որոնք ես հաճախ լսել էի իմ հորն ասելիս, հավերժական կյանքի և սրբերի ուրախության մասին, խորը ընկղմվել էին իմ սրտում»:[1] Հոգևոր քաղցից մղված, Ենովսը ծնկի եկավ աղոթքով՝ մի ուշագրավ աղոթքով, որը տևեց մի ամբողջ օր ու շարունակվեց գիշերը, աղոթքով՝ որը տվեց նրան ճակատագրական հայտնություններ, հավաստիացումներ և խոստումներ:

Ենովսի փորձից սովորելու շատ բան կա, բայց այն, ինչ առանձնանում է ինձ համար, Ենովսի հիշողությունն է, որ հայրը հաճախ էր խոսում «սրբերի ուրախության» մասին:

Երեք տարի առաջ այս համաժողովում, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոսել է ուրախության մասին:[2] Ի թիվս այլ բաների, նա ասել է.

«Ուրախությունը, որ մենք զգում ենք, շատ քիչ է կապված մեր կյանքի հանգամանքների հետ և մեծապես կապված է մեր կյանքի կիզակետի հետ:

Երբ մեր կյանքը կենտրոնացած է Աստծո փրկության ծրագրի վրա . . . և Հիսուս Քրիստոսի ու Նրա ավետարանի վրա, մենք ուրախություն ենք զգում, անկախ այն բանից՝ մեր կյանքում ինչ-որ բան տեղի է ունենում, թե ոչ: Ուրախությունը գալիս է Նրանից ու Նրա շնորհիվ. . . Վերջին օրերի սրբերի համար Հիսուս Քրիստոսը ուրախություն է»:[3]

Սրբերը նրանք են, ովքեր ավետարանի ուխտ են կապել մկրտությամբ և ձգտում են հետևել Քրիստոսին՝ որպես Նրա աշակերտները:[4] Այսպիսով, «սրբերի ուրախությունը» Քրիստոսի նման դառնալու ուրախությունն է:

Ես կցանկանայի խոսել այն ուրախության մասին, որը գալիս է Նրա պատվիրանները պահելու արդյունքում, ուրախության, որը զգում ենք Նրա միջոցով վիշտը և թուլությունը հաղթահարելիս, և ուրախության, որը բնորոշ է այնպիսի ծառայությանը, ինչպիսին Նրա ծառայությունն էր:

Քրիստոսի պատվիրանները պահելու ուրախությունը

Մենք ապրում ենք հեդոնիզմի դարաշրջանում, երբ շատերը կասկածի տակ են դնում Տիրոջ պատվիրանների կարևորությունը կամ պարզապես անտեսում են դրանք: Հազվադեպ չէ, երբ մարդիկ, ովքեր արհամարհում են աստվածային հրահանգները, ինչպիսիք են՝ մաքրաբարոյության օրենքը, ազնվության չափանիշը և Հանգստության օրվա սրբությունը, կարծես թե բարգավաճում են և վայելում կյանքի բարիքները, երբեմն նույնիսկ ավելի շատ, քան նրանք, ովքեր ձգտում են հնազանդ լինել: Ոմանք սկսում են մտածել, թե արդյո՞ք արժե ջանք գործադրել և զոհողություններ անել: Հին Իսրայելի ժողովուրդը մի անգամ բողոքել էր.

«Դուք ասում էք. Դարտակ է Աստուծոյ ծառայելը, եւ ի՞նչ օգուտ որ մենք նորա պահպանութիւնները պահել ենք, եւ սուգով վարուեցանք Զօրաց Տիրոջ առաջին:

Եւ հիմա մենք երանում ենք գոռոզներին, եւ բարեշէն էլ են անօրէնութիւն անողները, մինչեւ անգամ Աստուծուն էլ փորձում են եւ պրծնում»:[5]

Միայն սպասեք, ասել է Տերը, մինչև «այն օրը, որ ես կ'անեմ իմ սեպհականութիւնը»: «Եւ դուք ետ կ'դառնաք եւ կ'տեսնէք արդարի ու ամբարշտի տարբերութիւնը. Աստուծոյ ծառայութիւն անողին եւ ծառայութիւն չ'անողին տարբերութիւնը»:[6] Ամբարիշտները «ուրախություն ունեն իրենց գործերում միառժամանակ», բայց դա միշտ ժամանակավոր է:[7] Սրբերի ուրախությունը հարատև է:

Աստված իրերը տեսնում է իրական տեսանկյունից, և Նա հաղորդում է այդ հեռանկարը մեզ իր պատվիրանների միջոցով՝ արդյունավետորեն առաջնորդելով մեզ մահկանացության վտանգների միջով դեպի հավերժական ուրախություն: Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է. «Երբ Նրա պատվիրանները սովորեցնում են մեզ, դա հավերժության տեսանկյունից է, քանզի Աստված նայում է մեզ, կարծես մենք հավերժությունում ենք: Աստված բնակվում է հավերժությունում և չի նայում ամեն ինչին այնպես, ինչպես մենք ենք նայում»:[8]

Ես չեմ հանդիպել որևէ մեկին, ով գտնելով ավետարանն իր կյանքի որոշակի փուլում, չէր ցանկանա, որ դա ավելի շուտ տեղի ունենար: Նրանք ասում են. «Չէ՞ որ, ես կարող էի խուսափել վատ ընտրություններից ու սխալներից»: Տիրոջ պատվիրանները մեր ուղեցույցն են, որ ավելի լավ ընտրություններ և ավելի դրական արդյունքներ ունենանք: Մենք որքա՜ն ուրախ պետք է լինենք և շնորհակալություն հայտնենք Նրան, որ մեզ ցույց տվեց այս հրաշալի ուղին:

Դեռահաս տարիքում Քույր Կալոմբո Ռոզեթ Կամվանյան՝ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունից, ով այժմ ծառայում է Կոտ դ՚Իվուարի Աբիջան Արևմտյան միսիայում, երեք օր ծոմ էր պահել և աղոթել էր՝ պարզելու համար, թե ինչ ուղղությամբ է Աստված ցանկանում, որ ինքը գնա: Գիշերային ուշագրավ տեսիլքում նա տեսել էր երկու շենք, որոնցից մեկը հավաքատուն էր, իսկ մյուսը՝ ինչպես հիմա է հասկանում՝ տաճար էր: Նա սկսել էր փնտրել և շուտով գտել էր երազում տեսած հավաքատունը: Անվանումն այսպիսին էր՝ «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»: Սկզբում Քույր Կամվանյան մկրտվեց, այնուհետև մկրտվեց նրա մայրը, հետո՝ վեց եղբայրները: Քույր Կամվանյան ասել է. «Երբ ես ստացա ավետարանը, ինձ մոտ այնպիսի զգացում էր, որ ես գերեվարված թռչուն էի և ազատություն ստացա: Սիրտս լցված էր ուրախությամբ: . . . Ես հավաստիացում ունեցա, որ Աստված սիրում է ինձ»:[9]

Տիրոջ պատվիրանները պահելով, մենք ավելի լիարժեք և ավելի հեշտ ենք զգում Նրա սերը: Պատվիրանների նեղ ու անձուկ ճանապարհը տանում է ուղիղ կյանքի ծառի մոտ, իսկ ծառն ու դրա պտուղները, որոնք ամենաքաղցրն են և «բաղձալի բոլոր մյուս պտուղներից ավելի»,[10] ներկայացնում են Աստծո սերը և հոգին լցնում «չափազանց մեծ ուրախությամբ»:[11] Փրկիչն ասել է.

«Եթե իմ պատուիրանները պահեք, կմնաք իմ սիրո մեջ, ինչպես ես իմ Հոր պատուիրանները պահեցի և մնում եմ Նրա սիրո մեջ:

Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ իմ *ուրախութիւնը* ձեզանում մնայ, եւ ձեր *ուրախութիւնը* լցուած լինի»:[12]

Քույր Կալոմբո Ռոզեթ Կամվանյա

Ջեք և Ջո Էնն Ռաշթոններ

Դժվարությունները Քրիստոսի միջոցով հաղթահարելու ուրախությունը

Նույնիսկ, երբ մենք հավատարմորեն պահում ենք պատվիրանները, լինում են փորձություններ և ողբերգություններ, որոնք կարող են ընդհատել մեր ուրախությունը: Բայց, երբ փորձում ենք Փրկիչի օգնությամբ հաղթահարել այդ մարտահրավերները, ապա ներկայիս ուրախության մեր զգացումին ավելանում է նաև այն ուրախությունը, որն ակնկալում էինք: Հիսուսն Իր աշակերտներին ասել է. «Աշխարհքումը նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»:[13] Երբ դառնում ենք դեպի Հիսուսը, հնազանդվում ենք Նրան, կապվում ենք Նրա հետ, փորձությունն ու վիշտը վերածվում են ուրախության: Կբերեմ մի օրինակ:

1989 թվականին Ջեք Ռաշթոնը ծառայում էր որպես Միացյալ Նահանգների Իրվին Կալիֆորնիա ցցի նախագահ: Կալիֆորնիայի ծովափին ընտանեկան հանգիստն անցկացնելու ժամանակ, երբ Ջեքը բոդիսերֆինգով էր զբաղվում, մի ալիք նրան տարել և հարվածել էր մոտակա ժայռին, ինչի արդյունքում նա ստացել էր պարանոցի և ողնաշարի ծանր վնասվածքներ: Հետագայում Ջեքն ասել է. «Այն պահին, երբ ալիքն ինձ խփեց, ես գիտեի, որ անդամալույծ էի դառնալու»:[14] Նա այլևս չէր կարող խոսել, և նույնիսկ ինքնուրույն շնչել:[15]

Ընտանիքը, ընկերներն ու ցցի անդամները աջակցում էին եղբայր Ռաշթոնին և նրա կնոջը՝ Ջո Էննին, և, ի թիվս այլ բաների, նրանք վերափոխել էին նրանց տան մի հատվածը՝ Ջեքի անվասայլակը տեղավորելու համար: Ջո Էննը դարձավ Ջեքի հիմնական խնամակալը հետագա 23 տարիների ընթացքում: Վկայակոչելով Մորմոնի Գրքի պատմությունները, որտեղ Տերն այցելել էր Իր ժողովրդին իրենց չարչարանքների մեջ և թեթևացրել նրանց բեռը,[16] Ջո

Էնն ասել է. «Ինձ հաճախ զարմացնում է սրտի այն թեթևությունը, որը ես զգում եմ ամուսնուս խնամելիս»:[17]

Ջեքի շնչառության համակարգի բարեփոխման արդյունքում վերականգնվեց նրա խոսելու ունակությունը, և մեկ տարվա ընթացքում Ջեքը կանչվեց ծառայելու որպես ավետարանի վարդապետության ուսուցիչ և ցցի հայրապետ: Երբ նա հայրապետական օրհնություն էր տալիս, մեկ այլ քահանայություն կրող դնում էր Եղբայր Ռաշթոնի ձեռքը օրհնություն ստացողի գլխին և օրհնության ընթացքում պահում էր նրա ձեռքն ու բազուկը: 2012 թվականի սուրբ ծննդյան օրը Ջեքը մահացավ, 22 տարի անձնվեր ծառայելուց հետո:

Հարցազրույցներից մեկում Ջեքն ասել էր. «Մեր ողջ կյանքի ընթացքում լինելու են խնդիրներ. դա պարզապես այս երկրի վրա գտնվելու պայմաններից մեկն է: Ոմանք կարծում են, թե կրոնը կամ Աստծո հանդեպ հավատք ունենալը կպաշտպանեն վատ բաներից: Չեմ կարծում, որ դա է կարևորը: Կարծում եմ, կարևորն այն է, որ մեր հավատքն այնքան ամուր լինի, որ երբ վատ բաներ պատահեն, իսկ դրանք պատահելու են, մենք կարողանանք հաղթահարել. . . Իմ հավատքը երբեք չի սասանվել, բայց դա չի նշանակում, որ ես ընկճախտի մեջ չեմ եղել: Երբ կյանքումս առաջին անգամ ես մտածեցի, որ հատվել է ունակություններիս սահմանը, և բառացիորեն ոչ մի տեղ չկար շրջվելու, ես շրջվեցի դեպի Տերը, և մինչ օրս անսահման ուրախություն եմ զգում»:[18]

Այսօր այնպիսի ժամանակաշրջան է, երբ սոցիալական լրատվամիջոցներում և անհատական շփումներում երբեմն անողոք հարձակումներ են կատարվում նրանց վրա, ովքեր փորձում են պահել Տիրոջ չափանիշները հագուստի, զվարճանքի և սեռական մաքրության տեսանկյունից: Սրբերի շրջանում հաճախ երիտասարդներն ու չափահաս երիտասարդներն են, ինչպես նաև կանայք և մայրերը, ովքեր կրում են ծաղրի և հալածանքների այս խաչը: Հեշտ չէ հաղթահարել նման հալածանքը, բայց հիշեք Պետրոսի խոսքերը. «Եթէ նախատուիք Քրիստոսի անունի համար, երանելի

էք. Որովհետեւ փառքի եւ Աստուծոյ Հոգին հանգչում է ձեզ վերայ, նորանցից նա հայհոյվում է, բայց ձեզանից փառաւորվում»:[19]

Եդեմի պարտեզում Ադամն ու Եվան անմեղ վիճակում էին, «չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն»:[20] Այժմ, որպես պատասխանատու էակներ, մենք ուրախություն ենք գտնում ցանկացած տեսակի թշվառության հաղթահարման մեջ՝ մեղքի, փորձության, թուլության կամ երջանկության ցանկացած այլ խոչընդոտի: Սա է աշակերտության ճանապարհին ուրախություն զգալը՝ «ստացած լինելով իրենց մեղքերին թողություն, և ունենալով խղճմտանքի խաղաղություն»,[21] ուրախության այնպիսի զգացումը, երբ հոգին մեծանում ու աճում է Քրիստոսի շնորհով:[22]

Քրիստոսի նման ծառայելու ուրախությունը

Փրկիչն ուրախություն է գտնում՝ իրականացնելով մեր անմահությունն ու հավերժական կյանքը:[23] Փրկիչի Քավության մասին խոսելիս Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է.

«Ինչպես բոլոր բաներում, Հիսուս Քրիստոսը մեր լավագույն օրինակն է, «որ իր առաջին դրուած ուրախութեան փոխանակ խաչը հանձն առավ» [Եբրայեցիս 12.2]: Ի՞նչ հրաշալի բան: Որպեսզի տաներ երկրի վրա երբևէ կրած ամենատանջալի փորձառությունը, մեր Փրկիչը կենտրոնացավ *ուրախության* վրա:

Իսկ ո՞րն էր ուրախությունը, որը դրվել էր Նրա առաջ: Անշուշտ, այն ընդգրկում էր մեզ մաքրելու, բժշկելու և զորացնելու ուրախությունը, ուրախությունը՝ վճարելու բոլոր նրանց մեղքերի համար, ովքեր կապաշխարեն, ուրախությունը՝ իմ և քո տունդարձը հնարավոր դարձնելու համար, որպեսզի մաքուր և արժանի լինենք՝ ապրելու մեր Երկնային Ծնողների ու ընտանիքների հետ»:[24]

Նմանապես, «մեր առաջ դրված» ուրախությունը Փրկիչին օգնելն է Նրա փրկագնման գործում: Որպես

Աբրահամի զավակներ և սերունդ,[25] մենք մասնակցում ենք երկրի բոլոր ընտանիքների օրհնությանը “Ավետարանի օրհնություններով, որոնք փրկության, այսինքն՝ հավերժական կյանքի օրհնություններն են»:[26]

Միտքս են գալիս Ալմայի խոսքերը.

«Սա է իմ հրճվանքը, որ գուցե կարողանամ Աստծո ձեռքում գործիք լինել, որ ինչ-որ մի հոգու ապաշխարության բերեմ. և այս է իմ ուրախությունը:

Եվ ահա, երբ ես տեսնում եմ իմ եղբայրներից շատերին՝ իսկապես զղջացող, և եկող դեպի Տերը՝ իրենց Աստվածը, այդ ժամանակ է իմ հոգին լցվում ուրախությամբ. . .

Բայց ես չեմ ուրախանում իմ սեփական հաջողությամբ միայն, այլ իմ ուրախությունն ավելի լիուլի է իմ եղբայրների հաջողության պատճառով, ովքեր եղել են Նեփիի երկրում. . .

Այժմ, երբ ես մտածում եմ իմ այս եղբայրների հաջողության մասին, իմ հոգին տարվում է հեռուն, մինչև իսկ կարծես թե անջատվելն իմ մարմնից, այնքան մեծ է իմ ուրախությունը»:[27]

Եկեղեցում միմյանց հանդեպ մեր ծառայության պտուղները «մեր առաջ դրված» ուրախության մի մասն են: Նույնիսկ հուսալքության կամ տագնապի ժամանակ մենք կարող ենք համբերատար ծառայել, եթե կենտրոնացած ենք Աստծուն հաճույք պատճառելու և Նրա զավակներին՝ մեր եղբայրներին ու քույրերին լույս, թեթևություն և երջանկություն պարգևելու ուրախության վրա:

Անցյալ ամիս Պորտ-օ-Պրենս տաճարի նվիրագործման առիթով գտնվելով Հաիթիում, Երեց Դեյվիդ Բեդնարը և Քույր Սյուզան Բեդնարը հանդիպեցին մի երիտասարդ քրոջ, որի ամուսինը մի քանի օր առաջ վախճանվել էր ողբերգական վթարի հետևանքով: Նրանք սգացին այդ քրոջ հետ: Սակայն կիրակի օրը այս բարի կինն իր տեղում էր որպես նվիրագործման ծառայությունների վերահսկող՝ մեղմ, ողջունող ժպիտով դիմավորում էր բոլորին, ովքեր մտնում էին տաճար:

Ես հավատում եմ, որ «սրբերի ուրախությունը» գալիս է այն գիտելիքից, որ Փրկիչը պաշտպանում է իրենց դատը,[28] «և ոչ մեկը չի կարող երևակայել այն ուրախությունը, որը լցվ[նում է] մեր հոգիներն այն պահին, երբ մենք լսում [ենք Հիսուսին]՝ մեզ համար Հորն աղոթելիս»:[29] Միանալով Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին, ես վկայում եմ, որ ուրախությունը հավատարիմ սրբերի պարգևն է, «ովքեր դիմացել են աշխարհի խաչերին»[30] և ովքեր «նպատակադրված փորձում են ապրել արդար կյանքով, ինչպես ուսուցանել է Հիսուս Քրիստոսը»:[31] Թող ձեր ուրախությունը լիարժեք լինի, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ենովս 1.3:
2. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 81–84:
3. Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», 82:
4. Տես Աստվածաշնչի բառարան, «Սուրբ»:
5. Մաղաքիա 3.14–15:
6. Մաղաքիա 3.17–18:
7. Փրկիչը հայտարարել է, որ եթե եկեղեցին (կամ կյանքը) «կառուցված չլինի իմ ավետարանի վրա, և կառուցված լինի մարդկանց գործերի վրա, կամ դևի գործերի վրա, ճշմարիտ եմ ասում ձեզ, նրանք ուրախություն ունեն իրենց գործերում միառժամանակ, և շուտով գալիս է վերջը, և նրանք կտրվում են, և զցվում կրակի մեջ, որտեղից չկա վերադարձ» (3 Նեփի 27.11):
8. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 475:
9. Անձնական նամակագրություն
10. 1 Նեփի 11.22, տես նաև 1 Նեփի 8.11:
11. 1 Նեփի 8.12:
12. Հովհաննես 15.10–11, շեշտադրումն ավելացված է:
13. Հովհաննես 16.33:
14. Jack Rushton, in “Faith in Adversity: Jack Rushton and the Power of Faith,” SmallandSimpleTV, Sept. 2, 2009, YouTube.com.
15. Տես Allison M. Hawes, “It’s Good to Be Alive,” *Ensign,* Apr. 1994, 42:
16. Տես Մոսիա 24.41:
17. Jo Anne Rushton, in Hawes, “It’s Good to Be Alive,” 43.
18. Jack Rushton, in “Faith in Adversity: Jack Rushton and the Power of Faith.”
19. Ա Պետրոս 4.14: Հիշեք նաև խոստումները, որոնք գրված են 2 Նեփի 9.18 և 3 Նեփի 12.12:
20. 2 Նեփի 2.23, տես նաև Մովսես 5.10–11:
21. Մոսիա 4.3:
22. Մենք հիշում ենք նաև Հակոբոսի խոսքերը, որոնք ոգեշնչեցին Ջոզեֆ Սմիթին «հարցնել Աստծուն» (Հակոբոս 1.5): Պակաս ծանոթ չեն նաև նախորդող հատվածները.

    «Եղբայրնե՛րս, բոլորովին ուրախություն համարեք, երբ շատ նեղությունների մեջ եք ընկնում.

    Գիտենալով որ ձեր հաւատքի փորձառութիւնը համբերութիւն է գործում:

    Իսկ համբերութիւնը թող կատարեալ գործ ունենայ. Որ կատարեալ եւ ամբողջ լինիք, եւ ոչ մի բանի պակասութիւն չ’ունենաք» (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Հակոբոս 1.2 [Հակոբոս 1.2, ծանոթագրություն *ա*], Հակոբոս 1.3–4):
23. Տես Մովսես 1.39:
24. Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», 82–83, շեշտադրումը՝ բնագրում:
25. «Ապա եթէ դուք Քրիստոսինն էք, ուրեմն Աբրահամի զաւակ էք՝ եւ խոստմունքի համեմատ ժառանգներ» (Գաղատացիս 3.29, տես նաև Ծննդոց 22.18, 26.4, 28.14, Գործք 3.25, 1 Նեփի 15.18, 22.9, Վարդապետություն և Ուխտեր 124.58):
26. Աբրահամ 2.11:
27. Ալմա 29.9–10, 14, 16: Տերն ասում է մեզ. «Եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ Հոր արքայություն, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ» (Վարդապետություն և Ուխտեր 18.16): Երեք Նեփիացիներին խոստացվեց լիակատար ուրախություն, քանի որ նրանք ցանկացան հոգիներ բերել Քրիստոսի մոտ «մինչ աշխարհը կանգուն կլինի» (3 Նեփի 28.9, տես նաև 3 Նեփի 28.10):
28. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.3–5:
29. 3 Նեփի 17.17:
30. 2 Նեփի 9.18:
31. Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», 84:

ՄԻՇԵԼ ՔՐԵՅԳ
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Հոգևոր կարողություն

Որպես Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտ, դուք կարող եք ստանալ անձնական ոգեշնչում և հայտնություն Նրա պատվիրանների համաձայն, որոնք կանխատեսված են ձեզ համար:

Երբ ես հեռանում էի Երիտասարդ Կանանց ճամբարից այս ամառ, մի հաճելի երիտասարդ կին ինձ մի երկտող տվեց: Նա հարցնում էր երկտողում. «Ինչպե՞ս կարող եմ իմանալ, երբ է Աստված փորձում ինձ ինչոր բան ասել»: Ինձ *դուր է գալիս* նրա հարցը: Մեր հոգիները ձգտում են կապվել մեր երկնային տան հետ: Մենք ցանկանում ենք զգալ պետքական և օգտակար: Բայց երբեմն մենք դժվարանում ենք տարբերել մեր սեփական մտքերը Հոգու նուրբ հուշումներից: Հնադարյան և ժամանակակից մարգարեներն ուսուցանել են, որ եթե ինչ-որ բան «հրավիրում է ձեզ և հրապուրում է բարիք գործել, գալիս է Քրիստոսից»:[1]

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը տարածել է մի պարզ, հզոր հրավեր. «Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, *աղերսում եմ* ձեզ մեծացնել հայտնություն ստանալու ձեր *հոգևոր կարողությունը*: . . . Ընտրեք կատարել պահանջվող հոգևոր աշխատանքը՝ վայելելով Սուրբ Հոգու պարգևը և ավելի հաճախ ու ավելի հստակ լսելով Հոգու ձայնը»:[2]

Այս առավոտ ես ցանկանում եմ անկեղծորեն խոսել ձեզ հետ հայտնություն ստանալու ձեր հոգևոր կարողությունը մեծացնելու չորս ուղիների մասին:

1. Նպատակասլաց եղեք Աստծո ձայնը լսելու համար ժամանակ և տարածություն ստեղծելու գործում

Երբ օգտագործում եք ձեր ազատ կամքը, որպեսզի ամեն օր ժամանակ

հատկացնեք Աստծո ձայնին մոտենալու համար, հատկապես Մորմոնի Գրքում, ապա, ի վերջո, Նրա ձայնը ավելի հստակ և ավելի ծանոթ կդառնա ձեզ համար:

Ընդհակառակը, այն *շեղումները* և *աղմուկը,* որոնք լցնում են աշխարհը, մեր տները և մեր կյանքը, կարող են ավելի դժվար լսելի դարձնել Նրա ձայնը: Այդ շեղումները կարող են այնպես զբաղեցնել մեր միտքն ու սիրտը, որ մենք տեղ չենք թողնի Սուրբ Հոգու մեղմ հուշումների համար:

Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ հաճախ Աստված Իրեն հայտնի է դարձնում «մարդկանց առանձին, իրենց սենյակում, անապատում կամ դաշտերում, և սովորաբար առանց աղմուկի կամ ժխորի»:[3]

Սատանան ուզում է բաժանել մեզ Աստծո ձայնից՝ մեզ դուրս պահելով այդ խաղաղ վայրերից: Եթե Աստված խոսում է մեղմ, բարակ ձայնով, ես և դուք պետք է մոտենանք, որպեսզի լսենք Նրան: Ուղղակի պատկերացրեք, թե ինչ կպատահեր, եթե մենք նույնքան ուշադիր լինեինք երկնքի հետ կապված մնալուն, ինչպես հետևում ենք Wi-Fi-ի հետ կապի մեջ մնալուն: Ընտրեք ժամանակ և տեղ՝ ամեն օր Աստծո ձայնը լսելու համար: Եվ ճշգրտորեն պահեք այդ սրբազան պայմանավորվածությունը, քանի որ այնքան շատ բան է կախված դրանից:

2. Գործեք առանց հապաղելու

Երբ ստանում եք հուշումներ, իսկ հետո նպատակասլաց գործում, Տերը կարող է օգտագործել ձեզ: Որքան շատ եք գործում, Հոգու ձայնը ավելի ծանոթ է դառնում: Դուք ավելի ու ավելի կճանաչեք Աստծո առաջնորդությունը, և որ Նա «կամենում է . . . հայտնել Իր միտքը և կամքը»:[4] Եթե հետաձգեք, գուցե մոռանաք հուշումը կամ բաց թողնեք Աստծո փոխարեն ինչ-որ մեկին օգնելու հնարավորությունը:

3. Ստացեք ձեր հանձնարարությունը Տիրոջից

Երկնային Հայրը ձգտում է պատասխանել այն աղոթքին, որում առաջնորդություն ենք խնդրում դեպի այն մեկը, ով մեր օգնության կարիքն ունի: Նախագահ Հենրի Բ. Այրիգն

ուսուցանել է մեզ՝ ձգտել հայտնություն ստանալ Աստծուց այն մասին, թե ում կարող ենք օգնել Նրա փոխարեն: «Եթե այդպիսի հարցեր տաք, Սուրբ հոգին կգա և դուք հուշումներ կստանաք, թե ինչ կարող եք անել ուրիշ մարդկանց համար: Երբ գնաք և անեք այդ բաները, դուք կլինեք Տիրոջ հանձնակատարը, և երբ դուք Տիրոջ հանձնարարությունն եք կատարում, դուք արժանի եք դառնում Սուրբ Հոգու պարգևին»:[5]

Դուք կարող եք աղոթել և Տիրոջից հանձնարարություն խնդրել: Երբ անեք այդ, Նա կարող է օգտագործել ձեր սովորական հմտությունները՝ իրականացնելու Իր անսովոր աշխատանքը:

Պապ՝ Ֆրից Հալմար Լանդգրենը, արտագաղթեց Շվեդիայից, երբ 19 տարեկան էր: Նա Ամերիկա ժամանեց միայնակ, մի ճամպրուկով և ընդամենը վեցամյա դպրոցական կրթությամբ: Չկարողանալով խոսել անգլերեն, նա ճանապարհ ընկավ Օրեգոն և այնտեղ աշխատեց որպես փայտահատ, իսկ հետագայում տատիկիս և մայրիկիս հետ միացավ Եկեղեցուն: Նա երբեք չնախագահեց ծխում, բայց որպես հավատարիմ տնային ուսուցիչ, նա ավելի քան 50 տարբեր ընտանիքներ բերեց եկեղեցական գործունեության: Նա ինչպե՞ս արեց այդ:

Պապիկիս մահից հետո ես նայում էի նրա թղթերով լի արկղերից մեկը և հանդիպեցի մի նամակի, որը գրված էր մի մարդու կողմից, ով եկեղեցի էր վերադարձել պապիկիս սիրո շնորհիվ: Նամակում ասվում էր. «Հավատում եմ, որ Եղբայր Ֆրիցի գաղտնիքը նրանում է, որ նա միշտ Երկնային Հոր հանձնարարության մեջ է»:

Այդ նամակը Եղբայր Վեյն Սիմոնիսից էր: Պապիկս այցելեց նրան և ծանոթացավ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ: Ժամանակի ընթացքում, պապիկս ասաց, որ նրանց կարիքը զգացվում էր, և նրանց հրավիրեց հաճախել եկեղեցի: Բայց այդ կիրակի, Եղբայր Սիմոնիսը արթնացավ դժվարին երկընտրանքի մեջ. նա չէր ավարտել իր տան տանիքի վերանորոգումը, իսկ հաջորդ շաբաթ անձրև էր սպասվում: Նա որոշեց, որ կգնար եկեղեցի, պապիկիս հետ ձեռքով կբարևեր, իսկ հետո տուն կգնար՝ վերջացնելու տանիքը: Նրա ընտանիքը կարող էր մասնակցել հաղորդության ժողովին առանց իրեն:

Նրա ծրագիրը լավ էր աշխատում, մինչև տանիքից նա լսեց, որ ինչ-որ մեկը մագլցում էր աստիճանով: Նրա խոսքերով. «Երբ վերև նայեցի, . . . աստիճանի ծայրին Եղբայր Ֆրիցն էր կանգնած: Նա ուղղակի լայն ժպտաց ինձ: Սկզբում շփոթվեցի և զգացի փոքրիկ երեխայի նման, ով բռնվել էր դպրոցից փախչելիս: Ապա . . . բարկություն զգացի: [Բայց Եղբայր Ֆրիցը ուղղակի] հանեց իր կոստյումը և կախեց աստիճանի վրա: Երբ նա ծալում էր իր ճերմակ վերնաշապիկի թևքերը, շրջվեց դեպի ինձ և ասաց. «Եղբայր Սիմոնիս, ունե՞ս ևս մեկ մուրճ: Այս աշխատանքը պետք է որ շատ կարևոր լինի, թե չէ չէիր թողնի ընտանիքդ, և եթե դա այդքան կարևոր է, ես ուզում եմ օգնել քեզ: Երբ ես նայեցի նրա աչքերի մեջ, միայն բարություն և Քրիստոսանման սեր տեսա: Բարկությունս անցավ: . . . Այդ կիրակի ես վար դրեցի գործիքներս և հետևեցի իմ լավ ընկերոջը՝ ներքև իջնելով աստիճաններով, և վերադարձա ժողովատուն»:

Պապիկս ստացել էր իր հանձնարարությունը Տիրոջից, և նա գիտեր, որ պետք է գտներ կորած ոչխարին: Ինչպես չորս տղամարդիկ իրենց անդամալույծ ընկերոջը բարձրացրին տանիքի վրա, ապա այնտեղից իջեցրին, որ Հիսուս Քրիստոսը բժշկեր նրան,[6] այնպես էլ պապիկիս հանձնարությունը նրան կտուր տարավ: Տերը հայտնություն է ուղարկում նրանց, ովքեր ձգտում են օգնել մյուսներին:

4. Հավատացեք և վստահեք

Վերջերս, սուրբ գրություններում ես կարդացի ևս մեկ հիանալի միսիոների մասին, ով ձեռք բերեց իր հանձնարարությունը Տիրոջից: Ահարոնն ուսուցանում էր Լամանացիների թագավորին, ով հետաքրքրվում էր, թեԱհարոնի Եղբայր Ամմոնը ևս ինչու չեկավ ուսուցանելու իրեն: «Եվ Ահարոնն ասաց թագավորին. Ահա Տիրոջ Հոգին կանչեց նրան *մեկ այլ ճանապարհով:*»[7]

Երբ կարդում էի այդ խոսքերը, Հոգին խոսեց սրտիս հետ. մեզանից յուրաքանչյուրը տարբեր առաքելություն ունի կատարելու, և երբեմն Հոգին կարող է կանչել մեզ «մեկ այլ ճանապարհով»: Գոյություն ունեն Աստծո արքայությունը կառուցելու

շատ ուղիներ՝ որպես Հիսուս Քրիստոսի ուխտ կապող և պահող աշակերտներ: Որպես Նրա հավատարիմ աշակերտ, դուք կարող եք ստանալ անձնական ոգեշնչում և հայտնություն՝ Նրա պատվիրանների համաձայն, որոնք կանխատեսված են ձեզ համար: Դուք առանձնահատուկ առաքելություններ և դերեր ունեք կատարելու կյանքում և ձեզ կտրվի հատուկ առաջնորդություն դրանք իրականացնելու համար:

Նեփին՝ Հարեդի եղբայրը, և նույնիսկ Մովսեսը պետք է անցնեին ջրի մեծ զանգվածների միջով, և յուրաքանչյուրն արեց դա տարբեր ձևով: Նեփին «զարմանալի վարպետությամբ հեծաններ» մշակեց:[8] Հարեդի եղբայրը բեռնանվեր կառուցեց, որոնք «անջրանցիկ էին ամանի պես»:[9] Իսկ Մովսեսը «ծովի միջով ցամաքով գնաց»:[10]

Նրանցից յուրաքանչյուրը ստացավ անհատական ուղղորդում, որը նախատեսված էր նրանց համար, և յուրաքանչյուրը վստահեց և գործեց: Տերն ուշադիր է նրանց հանդեպ, ովքեր հնազանդվում են և Նեփիի խոսքերով «մի ուղի [կկպատրաստի [մեզ] համար, իրագործելու այն, ինչ նա պատվիրել է մեզ»:[11] Ուշադրություն դարձրեք, որ Նեփին ասում է. «*մի* ուղի», ոչ թե*ուղին*:

Արդյո՞ք մենք բաց ենք թողնում կամ վանում ենք Տիրոջ անձնական հանձնարարությունները, որովհետև, Նա պատրաստել է «մի ուղի», որը տարբերվում է այն մեկից, որին մենք ենք սպասում:

Պապիկս առաջնորդվեց մի անսովոր վայր՝ կոստյումը հագին, կտուրի վրա, կիրակի օրը: Վստահեք Աստծուն, որ առաջնորդի ձեզ, եթե նույնիսկ այդ ուղին տարբերվում է ձեր սպասածից, կամ տարբեր է մյուսներից:

Վերջին Օրերի Սրբերն ունենբազմաթիվ կերպարանքներ և չափսեր, բայց «բոլորը նման են Աստծուն». «Սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, արական թե իգական», ամուրի թե ամուսնացած, հարուստ թե աղքատ, երիտասարդ թե ծեր, ողջ կյանքում անդամ թե նորադարձ:[12] Անկախ նրանից, թե ով եք դուք կամ ինչի հետ գործ ունեք, դուք հրավիրված եք Տիրոջ սեղանի մոտ:[13]

Երբ Հոր կամքի որոնումն ու կատարումը դառնում է ձեր առօրյա կյանքի ռիթմը, դուք իհարկե, կառաջնորդվեք՝ փոխվելու և ապաշխարելու համար:

Երեխաների և երիտասարդների համար Եկեղեցու նոր ծրագիրը կառուցված է այն հիմքի վրա, որը սովորեցնում է փնտրել հայտնություն, բացահայտել, թե ինչ է Տերը կամենում, որ մենք անենք, իսկ հետո գործենք այդ ուղղությամբ: Մեզանից յուրաքանչյուրը, անկախ մեր տարիքից կամ հանգամանքներից, կարող է ձգտել *փնտրել, ստանալ և գործել:* Երբ դուք հետևեք այս հավերժական օրինաչափությանը, որը կարգվել է մեր օրերի համար, ավելի կմոտենաք Հիսուս Քրիստոսին՝ Նրա սիրուն, Նրա լույսին, Նրա ուղղորդմանը, Նրա խաղաղությանը, և Նրա բժշկությանն ու զորացնող ուժին: Եվ դուք կմեծացնեք Նրա ձեռքերում ամենօրյա գործիք դառնալու ձեր հոգևոր կարողությունը՝ Նրա մեծ աշխատանքն իրականացնելու համար: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դեյվիդ Ա. Բեդնար «Դեմ առ դեմ Երեց և Քույր Բեդնարի հետ (համաշխարհային երիտասարդական հեռարձակում», մայիս 12, 2015), facetoface.ChurchofJesus Christ.org, տես նաև Մորոնի 7.16:
2. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 96, շեշտադրումն ավելացված է:
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 121:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», 94:
5. Henry B. Eyring, in “President Eyring 1990s,” *Deseret News,* Apr. 2, 2009, deseretnews.com.
6. Տես Ալմա 2.1–12:
7. Ալմա 22.4, շեշտադրումն ավելացված է:
8. 1 Նեփի 18.1:
9. Տես Եթեր 6.5–8:
10. Ելից 14.29:
11. 1 Նեփի 3.7:
12. 2 Նեփի 26.33:
13. Տես Քվենթին Լ. Քուք, «Հավերժական ամենօրը», *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 51:

ԵՐԵՑ ԴԵՅԼ Գ. ՌԵՆԼԱՆԴ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Անսասան նվիրվածություն առ Հիսուս Քրիստոս

Աստված հրավիրում է մեզ հասանելիությունից լիովին դուրս նետել մեր հին ուղիները և նոր կյանք սկսել Քրիստոսում:

Անցյալ ապրիլին ես արտոնություն ունեցա նվիրագործել Կինշասա Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության Տաճարը:[1] Խոսքերը չեն կարող արտահայտել այն ուրախությունը, որ հավատարիմ կոնգոցիները և ես զգացինք՝ տեսնելով նվիրագործված տաճարը նրանց երկրում:

Մարդիկ, ովքեր մտնում են Կինշասա Տաճարը, տեսնում են մի բնօրինակ նկար, որը կոչվում է *Կոնգոյի ջրվեժը:*[2] Այն յուրօրինակ ձևով հիշեցնում է տաճար գնացողներին այն անսասան նվիրվածության մասին, որն իրենցից պահանջում է՝ խարսխվել Հիսուս Քրիստոսին և հետևել մեր Երկնային Հոր ծրագրի ուխտի արահետին: Նկարում պատկերված ջրվեժները հիշեցնում են մի սովորույթ, որն ավելի քան մեկ դար առաջ տարածված էր Կոնգոյում քրիստոնեության առաջին նորադարձների մեջ:

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության Կինշասա տաճարը

Նախքան իրենց դարձը, նրանք երկրպագում էին անշունչ առարկաներին, հավատալով, որ այդ իրերն ունեին գերբնական զորություններ:[3] Դարձի գալուց հետո շատերը ուխտագնացություն էին կատարում դեպի Կոնգո գետի անհամար ջրվեժներից մեկը, ինչպես օրինակ Նզոնգո Ջրվեժը:[4] Այդ նորադարձները ջրվեժի մեջ էին նետում իրենց նախկին կուռքերի առարկաները՝ որպես խորհրդանիշ Աստծուն և մյուսներին, որ իրենք հրաժարվել են իրենց հին ավանդույթներից և ընդունել են Հիսուս Քրիստոսին: Նրանք մտածված կերպով իրենց իրերը չէին նետում հանդարտ, ծանծաղ ջրերում, այլնետում էին դրանք մեծ ջրվեժների փրփրադեզ ջրերի մեջ, որտեղ իրերը դառնում էին անհասանելի: Այդ գործողությունները Հիսուս Քրիստոսի հանդեպ նոր, բայց անսասան նվիրվածության նշան էին:

Կոնգոյի ջրվեժը, *Դեյվիդ Մեյքլ*

Մարդիկ այլ վայրերում և դարերում ցույց են տվել իրենց նվիրվածությունն առ Հիսուս Քրիստոս նմանատիպ ձևերով:[5] Մորմոնի գրքի մարդիկ, ովքեր հայտնի էին որպես Անթի Նեփի Լեքիներ, «վար դրեցին իրենց ապստամբության զենքերը»՝ թաղելով դրանք «խորը հողի մեջ», որպես «մի վկայություն Աստծուն, . . . որ իրենք երբեք չեն օգտագործի [իրենց] զենքերը»:[6] Այդպես վարվելով, նրանք խոստացան հետևել Աստծո ուսմունքներին և երբեք չնահանջել իրենց նվիրվածությունից: Այդ գործողությունը «առ Տերը դարձի գալու» և երբեք չմոլորվելու սկիզբն էր:[7]

«Առ Տերը դարձի եկած» նշանակում է՝ թողնել գործողության մեկ ուղղությունը, որն ուղղորդվում է հին հավատալիքների համակարգով, և որդեգրել նորը, որը հիմնված է Երկնային Հոր ծրագրի և առ Հիսուս Քրիստոս ու Նրա Քավությունը հավատքի վրա: Այս փոփոխությունն ավելին է, քան բանականությամբ Նրանց ուսմունքներն ընդունելը, դա Նրանց հանդեպ անսասան նվիրվածություն զարգացնելն է: Այն ձևավորում է ինքնություն, փոխում է կյանքի իմաստի մեր հասկացողությունը և առաջնորդում դեպի անխախտ հավատարմություն առ Աստված: Անձնական ցանկությունները, որոնք հակառակ են Փրկիչին խարսխված լինելու և ուխտի արահետին հետևելու համար, անհետանում են և փոխարինվում են Երկնային Հոր կամքին ենթարկվելու վճռականությամբ:

Առ Տերը դարձի գալը սկսվում է Աստծո հանդեպ անսասան նվիրվածությամբ, որից հետո այդ նվիրվածությունը դառնում է մեր կյանքի հիմնական մասը: Նման նվիրվածության ամուր հաստատումը մեր կյանքում ցմահ գործընթաց է, որը պահանջում է համբերություն և շարունակական ապաշխարություն: Ի վերջո, այդ նվիրվածությունը դառնում է մեր կյանքի հիմնական մասը՝ ներդրված մեր ինքնագիտակցության մեջ, և ընդմիշտ ներկա մեր կյանքում: Ճիշտ, ինչպես մենք երբեք չենք մոռանում մեր անունը, անկախ նրանից, թե ինչի մասին ենք մտածում, մենք երբեք չենք մոռանում այն նվիրվածությունը, որն ամրագրված է մեր սրտերում:[8]

Աստված հրավիրում է մեզ հասանելիությունից լիովին դուրս նետել մեր հին ուղիները և նոր կյանք սկսել Քրիստոսում: Սա տեղի է ունենում, երբ մենք հավատք ենք զարգացնում Փրկիչի հանդեպ, որը սկսվում է լսելով նրանց վկայությունը, ովքեր հավատք ունեն:[9] Այնուհետև, հավատքը խորանում է, երբ գործում ենք այն ուղիներով, որոնք ավելի ամուր են խարսխում մեզ Նրան:[10]

Լավ կլիներ, եթե մեծացող հավատքը փոխանցվեր՝ ինչպես գրիպը կամ սովորական հարբուխը: Ապա հասարակ «հոգևոր փոշտոցը» հավատք կկառուցեր ուրիշների մեջ: Սակայն դա տեղի չի ունենում այդ ձևով: Միակ ուղին, որով մարդու հավատքն աճում է՝ հավատքով գործելն է: Այդ գործողությունները հաճախ հուշվում են ուրիշների կողմից տարածվող հրավերների միջոցով, բայց մենք չենք կարող «աճեցնել» մեկ ուրիշի հավատքը, ոչ էլ ամբողջովին ապավինել ուրիշներին՝ մեր սեփականը խթանելու համար: Մեր հավատքը մեծացնելու համար մենք պետք է ընտրենք հավատք ստեղծող գործողություններ, ինչպիսիք են՝ աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրումը, հաղորդության ճաշակումը, պատվիրանների պահումը և ուրիշներին ծառայելը:

Երբ մեր հավատքը առ Հիսուս Քրիստոս մեծանում է, Աստված հրավիրում է մեզ խոստումներ տալ Իրեն:

Այդ ուխտերը, ինչպես կոչվում են խոստումները, մեր դարձի դրսևորումներն են: Ուխտերը նաև հաստատուն հիմք են ստեղծում հոգևոր առաջընթացի համար: Երբ մենք որոշում ենք մկրտվել, սկսում ենք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը[11] և ընտրում մեզ նույնացնել Նրա հետ: Մենք երդվում ենք դառնալ Նրա նման և զարգացնել Նրա հատկանիշները:

Ուխտերը մեզ խարսխում են Փրկիչին և առաջ մղում այն ուղիով, որը տանում է մեր երկնային տուն: Ուխտերի ուժը օգնում է մեզ պահպանել սրտի հզոր փոփոխությունը, խորացնել մեր դարձը առ Տերը և լիովին ստանալ Քրիստոսի պատկերը մեր դեմքին:[12] Բայց անվճռական նվիրվածությունը մեր ուխտերի հանդեպ մեզ ոչինչ չեն երաշխավորում:[13] Մենք գուցե գայթակղվենք և երկմտենք, մեր հին ուղիները նետենք հանդարտ ջրերի մեջ, կամ թաղենք մեր ապստամբության զենքերը՝ դուրս թողնելով բռնակները: Բայց երկդիմի նվիրվածությունը մեր ուխտերին դուռ չի բացի դեպի Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սրբագործող զորությունը:

Ուխտերը պահելու մեր նվիրվածությունը չպետք է պայմանական լինի կամ տարբերվի մեր կյանքի փոփոխվող հանգամանքներից: Աստծո հանդեպ մեր կայունությունը պետք է նման լինի հուսալի Կոնգո գետին, որը հոսում է Կինշասա տաճարի մոտով: Այս գետը, ի տարբերություն աշխարհի գետերի մեծ մասի, տարին բոլոր հաստատուն հոսք ունի,[14] և ամեն վայրկյան մոտ 11 միլիոն գալոն (41.5 միլիոն լիտր) ջուր է լցնում Ատլանտյան օվկիանոս:

Փրկիչն Իր աշակերտներին հրավիրեց լինել վստահելի և անսասան: Նա ասաց. «Հետևաբար, հաստատեք սա ձեր սրտերում, որ դուք պետք է անեք այն բաները, ինչ ես կուսուցանեմ և կպատվիրեմ ձեզ»:[15] Մեր ուխտերը պահելու «հաստատուն» վճռականությունը թույլ է տալիս Աստծո հարատև ուրախության խոստումների լիարժեք իրականացում:[16]

Վերջին Օրերի շատ հավատարիմ Սրբեր ցույց են տվել, որ նրանք

«հաստատուն են» Աստծո հետ իրենց ուխտերը պահելիս և ընդմիշտ փոխվել են: Թույլ տվեք ձեզ պատմել երեք այդպիսի անձանց մասին՝ եղբայր Բանզա Մուչիոկո, քույր Բանզա Ռեգինե և եղբայր Մբույի Նկիտաբունգի:

1977թ.-ին, Բանզաներն ապրում էին Կինշասայում՝ Զաիր երկրում, որն այժմ հայտնի է որպես Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն: Նրանք շատ հարգված էին իրենց Բողոքական եկեղեցու համայնքում: Իրենց տաղանդների շնորհիվ նրանց եկեղեցին իրենց երիտասարդ ընտանիքի համար համալսարանական կրթաթոշակ նշանակեց, որպեսզի մեկնեին Շվեյցարիա սովորելու:

Երբ ժնևում էին, Եղբայր Բանզան ավտոբուսով համալասարան գնալու ճանապարհին հաճախ էր տեսնում «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի» անունով եկեղեցական փոքրիկ մի ժողովատուն: Նա հետաքրքրվեց. «Արդյո՞ք այժմ՝ վերջին օրերին, Հիսուս Քրիստոսը սրբեր ունի»: Ի վերջո, նա որոշեց գնալ և տեսնել:

Եղբայր և Քույր Բանզաներին ջերմորեն ողջունեցին ճյուղում: Նրանք տվեցին մի քանի հետևողական հարցեր Աստծո բնույթի վերաբերյալ, ինչպես օրինակ. «Եթե Աստված ոգի է քամու պես, ինչպես կարող էինք ստեղծվել Նրա նմանությամբ: Նա ինչպե՞ս կարող էր նստել գահին: Նրանք երբեք բավարարող պատասխան չէին ստացել, մինչև միսիոներները մի համառոտ դասով բացատրեցին վերականգնված վարդապետությունը: Երբ միսիոներները հեռացան, Բանզաները նայեցին միմյանց և ասացին. «Մի՞թե սա չէ այն ճշմարտությունը, որը մենք լսեցինք»: Նրանք շարունակեցին

եկեղեցի գալ և հանդիպել միսիոներների հետ: Նրանք գիտեին, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում մկրտվելը հետևանքներ է ունենալու: Նրանք կզրկվեին իրենց կրթաթոշակներից, իրենց վիզաները կդադարեցվեին և նրանց ու իրենց երկու փոքրիկ երեխաներին կպահանջեին հեռանալ Շվեյցարիայից: Նրանք որոշեցին մկրտվել և հաստատվել 1979թ.-ի հոկտեմբերին:

Մկրտությունից երկու շաբաթ անց Եղբայր և Քույր Բանզաները վերադարձան Կինշասա՝ որպես Եկեղեցու առաջին և երկրորդ անդամներ իրենց երկրում: Ժնևի ճյուղի անդամները կապ էին պահպանում նրանց հետ և օգնեցին նրանց կապվել Եկեղեցու ղեկավարների հետ: Բանզաներին խրախուսեցին հավատարմորեն սպասել խոստացված ժամանակին, երբ Աստված կհիմնադրի Իր Եկեղեցին Զաիրում:

Այդ ընթացքում, փոխանակման ծրագրով մեկ այլ ուսանող՝ Եղբայր Մբույին Զաիրից, սովորում էր Բելգիայում: Նա մկրտվեց 1980-ին Բրյուսելի ծխում: Այնուհետև, շուտով նա լիաժամկետ միսիա ծառայեց Անգլիայում: Եվ Աստված գործեց Իր հրաշքները: Եղբայր Մբույին վերադարձավ Զաիր, որպես Եկեղեցու երրորդ անդամն իր երկրում: Ծնողների թույլտվությամբ Եկեղեցու ժողովները անցկացվում էին նրա ընտանիքի տանը: 1986թ.-ի փետրվարին կառավարությանն ուղղված մի միջնորդագիր կազմվեց՝ Եկեղեցու պաշտոնական ճանաչման համար: Պահանջվեցին Զաիրի երեք քաղաքացիների ստորագրություններ: Դիմումի երեք երջանիկ ստորագրություններն էին՝ Եղբայր Բանզա, Քույր Բանզա և Եղբայր Մբույի:

Այդ հավատարիմ անդամները ճանաչեցին ճշմարտությունը, երբ լսեցին այն, նրանք ուխտ կապեցին մկրտության ժամանակ, որը խարխսեց նրանց Փրկիչին: Փոխաբերական իմաստով նրանք նետել էին իրենց հին ուղիները փրփրադեզ ջրվեժի մեջ՝ առանց հետ վերցնելու մտադրության: Ուխտի արահետը հեշտ չէր: Քաղաքական իրարանցումը, Եկեղեցու առաջնորդների հետ հազվադեպ շփումը և Սրբերի համայնքի կառուցմանը բնորոշ մարտահրավերները կարող էին հուսահատեցնել պակաս նվիրված մարդկանց: Բայց Եղբայր և Քույր Բանզան և Եղբայր Մբույին պահպանեցին իրենց հավատքը: Նրանք ներկա էին Կինշասա տաճարի նվիրագործմանը՝ 33 տարի անց

Բանզա Մուչիոկոն, Բանզա Ռեգինեն և նրանց որդիները

Մբույի Նկիտաբունգին՝ որպես լիաժամկետ միսիոներ

այն միջնորդագիրը ստորագրելուց հետո, որը հանգեցրեց Զաիրի եկեղեցու պաշտոնական ճանաչմանը:

Բանգաներն այսօր այստեղ են, համաժողովների կենտրոնում: Նրանց ուղեկցում են իրենց երկու որդիները՝ Զունիորը ու Ֆիլը և հարսները՝ Աննին և Յույսն: 1986 թվականին Զունիորը և Ֆիլը առաջին երկու մարդիկ էին, ովքեր Զաիրում մկրտվեցին Եկեղեցում: Եղբայր Մբույին դիտում է այս իրադարձությունները Կինշասայից իր կնոջ՝ Մագույի և իրենց հինգ երեխաների հետ:

Այդ ռահվիրաները հասկանում են ուխտերի իմաստը և հետևանքները, որոնց միջոցով նրանք բերվել են «Տիրոջ՝ իրենց Աստծո իմացությանը, և ուրախանալու Հիսուս Քրիստոսով՝ իրենց Քավիչով»:[17]

Ինչպե՞ս ենք մենք խարսխվում Փրկիչին և հավատարիմ մնում նրանց և տասնյակ հազարավոր Կոնգոյի Սրբերի նման, ովքեր հետևեցին նրանց և միլիոնավոր ուրիշների՝ ողջ աշխարհով մեկ: Փրկիչն ուսուցանեց մեզ՝ թե ինչպես: Ամեն շաբաթ մենք ճաշակում ենք հաղորդությունը և ուխտ կապում մեր Երկնային Հոր հետ: Մենք խոստանում ենք մեր ինքնությունը կապել Փրկիչի հետ՝ պատրաստակամ խոստանալով մեզ վրա վերցնել Նրա անունը, միշտ հիշել Նրան, և պահել Նրա պատվիրանները:[18] Ամեն շաբաթ բարեխղճորեն պատրաստվելը և արժանիորեն այդ ուխտերը կապելը՝ խարսխում է մեզ Փրկիչին, օգնում մեզ յուրացնել մեր նվիրվածությունը,[19] և ուժգնորեն մեզ առաջ է մղում ուխտի ճանապարհով:

Ես հրավիրում եմ ձեզ նվիրվել աշակերտությանը ողջ կյանքի ընթացքում: Ուխտեր կապեք և պահեք դրանք: Նետեք ձեր հին ուղիները խորը, փրփրադեզ ջրվեժների մեջ: Ամբողջապես թաղեք ձեր ապստամբության զենքերը՝ առանց դուրս մնացած բռնակների: Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ ազնիվ միտումով ուխտեր կապելը՝ հուսալիորեն պատվելով դրանք, ընդմիշտ կօրհնի ձեր կյանքը: Դուք ավելի կնմանվեք Փրկիչին, երբ միշտ հիշեք Նրան, հետևեք Նրան և պաշտեք Նրան: Ես վկայում եմ, որ Նա է ամուր հիմքը: Նա վստահելի է և նրա խոստումները հաստատ են: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Բանգա Ռեգինեն և Բանգա Մուչիոկոն

Մբույի Նկիտաբունգին և Մբույի Մագույը

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Նվիրագործումը տեղի է ունեցել մեծ պահքի կիրակի օրը, 2019թ. ապրիլի 14-ին, ինչպես նշանակվել էր Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից:
2. Նկարիչ Դեյվիդ Մեյքլը նկարել է *Կոնգոյի ջրվեժը,* աշխատելով Կիուբու ջրվեժների լուսանկարներով: Կիուբուի ջրվեժները տեղակայված են Լյուբումբաշիից մոտավորապես 249 մղոն (400 կմ) դեպի հյուսիս ՝ Կոնգոյի Դեմոկրատական հանրապետության հարավ-արևելքում:
3. Այս առարկաները հայտնի էին որպես *ինքիսի* կիկոնգոյով և որպես *ֆետիշներ* ֆրանսերենով: Այդ բառն անգլերեն թարգմանվում է որպես ամուլետներ, թալիսմաններ կամ ֆետիշներ
4. Դեյվիդ Մեյքլը նկարել է նաև *Նզոնգո ջրվեժը,* աշխատելով ջրվեժների լուսանկարների օգնությամբ: Նզոնգոյի ջրվեժը գտնվում է Կոնգոյի Դեմոկրատական հանրապետության Կինշասա քաղաքից մոտ 81 մղոն (130 կիլոմետր) հեռավորության վրա: Գետը այդ ջրվեժների մոտ հայտնի դարձավ որպես *Նզաղի Ինքիսի* կամ «Ֆետիշների գետ» անունով: Անունն արտացոլում է այն սովորույթը, որը նկարագրված է տեքստում:
5. Մ.թ.ա. 1000թ.– ին իսլանդական կլանների ղեկավարները հավաքվեցին միասին իրենց ամենամյա, երկշաբաթյա *Հանաժողովին.* մի ոչ պաշտոնական ժողով, որն ընդունեց օրենքներ, որոնք պարտադիր կլինեին բոլորի համար: Թորգեիր անունով մի մարդու խնդրվեց բոլորի համար որոշում կայացնել՝ դեպի քրիստոնեությունը դարձի գալ, թե՞ շարունակել երկրպագել նորվեգական աստվածներին: Իր վրանում երեք օր մեկուսանալուց հետո Թորգեիրը հայտարարեց իր որոշման մասին. կլանները դառնալու էին քրիստոնյա: Երբ Թորգեիրը վերադարձավ իր գյուղը, նա վերցրեց իր փայփայած սկանդինավյան Աստծո կուռքերը և դրանք նետեց մի ջրվեժի մեջ, որն այժմ հայտնի է որպես *Գոդաֆոս,* կամ «Աստվածների ջրվեժ»: Այս գործողությունը ցույց տվեց Թորգեիրի լիակատար դարձը դեպի քրիստոնեություն:
6. Ալմա 23.13, 24.17–18:
7. Տես Ալմա 23.6, Դեյվիդ Ա. Բեդնար, «Դարձ դեպի Տերը», *Լիահոնա,* նոյեմբեր 2012, 106–9:
8. Տես Եզեկիել 11.19–20, Բ Կորնթացիս 3.3:
9. Տես Հռովմայեցիս 10.14, 17:
10. Տես *Քարոզիր Իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ձեռնարկ,* խմբ. հրատ. (2018), 203:
11. Տես Dallin H. Oaks, “Taking upon Us the Name of Jesus Christ,” *Ensign,* May 1985, 80–83:
12. Տես Ալմա 5.12–14:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 82.10:
14. Կոնգո գետն ամենախոր, երկրորդ ամենահզոր և իններորդ ամենաերկար գետն է աշխարհում: Քանի որ այն երկու անգամ հատում է հասարակածը, գետի առնվազն մեկ հատվածը միշտ անձրևոտ եղանակի մեջ է, ինչը հանգեցնում է ջրի կանոնավոր հոսքին: Կանոնավոր հոսքը նշանակում է ողջ տարվա ընթացքում հոսքը համեմատաբար հաստատուն է՝ միջինը 41,000 խորանարդ մետր ջուր մեկ վայրկյանում, չնայած հոսքի արագությունը կարող է տարբեր լինել տարիների ընթացքում (միջինը 23,000–75,000 խորանարդ մետր վայրկյանում):
15. Զոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ղուկաս 14.28 (Ղուկաս 14.27, ծանոթություն *բ*):
16. Տես 2 Նեփի 9.18, Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 81–84: Նախագահ Նելսոնն ասել է. «Ուրախությունը պարգև է հավատարիմներին» (էջ 84):
17. Ալմա 37.9:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.77: 2019թ.-ի հունիսին միսիայի ղեկավարության սեմինարում հաղորդությունը ճաշակելուց հետո իր պաշտոնական ուղերձը սկսելուց առաջ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասաց. «Ինձ մոտ մի միտք ծագեց, որ այսօր իմ ուխտ կապելը շատ ավելի կարևոր է, քան իմ պատրաստած ուղերձը: Ես ուխտ կապեցի, երբ ճաշակեցի հաղորդությունը, որ ես պատրաստ կլինեմ վերցնել ինձ վրա Հիսուս Քրիստոսի անունը, և որ ես պատրաստ եմ հնազանդվել Նրա պատվիրաններին: Հաճախ ես լսում եմ այն արտահայտությունը, որ մենք հաղորդություն ենք ընդունում ՝ մկրտության ժամանակ կապած ուխտերը նորոգելու համար: Չնայած դա ճշմարիտ է, բայց շատ ավելին է, քան այդ: Ես նոր ուխտ կապեցի: Դուք նոր ուխտեր կապեցիք: . . . Արդ, ի պատասխան սրա, Նա հայտարարում է, որ մենք միշտ կունենանք Նրա Հոգին մեզ հետ: Ինչպիսի՜ օրհնություն»:
19. Տես 3 Նեփի 18.12:



ՆԱԽԱԳԱՀ ԴԱԼԼԻՆ Հ. ՕՈՒՔՍ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Տիրոջն ապավինիր

Մեր միակ հաստատուն վստահությունը Տիրոջը և իր զավակների հանդեպ Նրա սիրուն ապավինելն է:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, վերջերս ստացած մի նամակ ներկայացնում է իմ ելույթի թեման: Նամակի հեղինակը մտածում էր տաճարում ամուսնանալ մի մարդու հետ, ում հավերժական կողակիցը մահացել էր: Նա լինելու էր այդ տղամարդու երկրորդ կինը: Քրոջը անհանգստացնում էր հետևյալ հարցը. արդյոք հաջորդ կյանքում նա կունենա իր տունը, թե՞ ստիպված կլինի բնակվել իր ամուսնու և նրա առաջին կնոջ հետ: Ես հորդորեցի նրան ապավինել Տիրոջը:

Ես կշարունակեմ, կիսվելով վստահելի մի ընկերոջ փորձառությամբ, որի համար ստացել եմ նրա թույլտվությունը: Իր սիրելու կնոջ ու իրենց երեխաների մոր մահից հետո հայրը կրկին ամուսնացավ: Նրա հասուն երեխաներից ոմանք խիստ դեմ էին նրա որոշմանը և խորհրդի համար դիմեցին մի մոտ ազգականի, որը եկեղեցու հարգված առաջնորդ էր: Լսելով նրանց առարկությունները, որոնք կենտրոնացած էին հոգիների աշխարհում կամ վերջին դատաստանից հետո եկող փառքի թագավորությունների պայմանների և հարաբերությունների վրա, եկեղեցու առաջնորդը ասաց. «Ձեզ սխալ բաներ են անհանգստացնում: Ձեզ պետք է անհանգստացնի, թե ինչպիսին է լինելու *ձեր* վիճակը այդ վայրերում: Այդ մասին մտածեք: Եթե դուք հասնեք այնտեղ, ամեն բան ավելի հրաշալի կլինի, քան կարող եք պատկերացնել»:

Ինչպիսի՜ մխիթարիչ վարդապետություն: Ապավինի՛ր Տիրոջը:

Իմ ստացած նամակներից տեղյակ եմ, որ շատերին է անհանգստացնում հոգիների աշխարհին վերաբերող հարցերը, որտեղ կլինենք մահից հետո՝ նախքան հարությունը: Ոմանք ենթադրում են, որ այս մահկանացու կյանքում մեզ հետապնդող ֆիզիկական շատ խնդիրներ ու հանգամանքներ կշարունակվեն նաև հոգիների աշխարհում: Ի՞նչ գիտենք մենք իրականում հոգիների աշխարհի պայմանների մասին: Կարծում եմ, որ ԲՅ համալսարանի կրոնի դասախոսներից մեկը այդ թեմայի վերաբերյալ իր հոդվածում ճիշտ էր նկատել. «Երբ մեզ հարց ենք տալիս, թե օրինակելի աշխատություններից որքան ենք սովորել հոգիների աշխարհի մասին, պատասխանը սա է՝ «ոչ այնքան, որքան հաճախ մտածում ենք»:[1]

Իհարկե, սուրբ գրություններից սովորում ենք, որ մեր մարմնական մահից հետո, մենք՝ որպես հոգիներ, շարունակում ենք ապրել հոգիների աշխարհում: Սուրբ գրությունները նաև սովորեցնում են, որ հոգիների աշխարհը բաժանված է այս կյանքում արդար ապրած կամ արդարակյաց և ամբարիշտ մարդկանց միջև: Նրանք նաև նկարագրում են, թե ինչպես են հավատարիմ հոգիներից ոմանք ավետարանը ուսուցանում նրանց, ովքեր ամբարիշտ կամ ըմբոստ կյանքով են ապրել (տես Ա Պետրոս 3.19, Վարդապետություն և Ուխտեր 138.19–20, 29, 32, 37): Ինչն ամենակարևորն է, ժամանակակից հայտնությունը բացահայտում է, որ փրկության աշխատանքը շարունակվում է հոգիների աշխարհում (տես Վարդապետություն և Ուխտեր 138.30–34, 58), և չնայած որ մեզ

հորդորում են չհետաձգել մեր ապաշխարությունը մահկանացու կյանքում (տես Ալմա 13.27), մենք սովորում ենք, որ այնտեղ ևս ապաշխարության ինչ-որ հնարավորություն կա (տես Վարդապետություն և Ուխտեր 138.58):

Հոգիների աշխարհում փրկության աշխատանքի էությունը հոգիներին սուրբ գրություններում հաճախ նկարագրվող «գերությունից» ազատելն է: Հոգիների աշխարհում բոլորը ինչ-որ տեսակի գերության տակ են: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի փառահեղ տեսիլքում, որը կանոնական է դարձել Վարդապետություն և Ուխտեր 138 բաժնում, հայտարարվում է, որ արդար կյանքով ապրած ննջեցյալները, ովքեր «խաղաղության» վիճակում էին (Վարդապետություն և Ուխտեր 138.22), սպասում էին հարությանը (տես Վարդապետություն և Ուխտեր 138.16), քանզի «գերություն էին համարում իրենց հոգիների երկար բացակայությունն իրենց մարմիններից» (Վարդապետություն և Ուխտեր 138.50):

Ամբարիշտները տառապում են մեկ այլ տեսակի գերությունից: Չապաշխարած մեղքերի պատճառով նրանք գտնվում են Պետրոս առաքյալի ակնարկած հոգիների «բանտում» (Ա Պետրոս 3.19; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 138.42): Այդ հոգիների մասին խոսվում է որպես «գերիների» կամ որպես «բանտարկյալների» (Վարդապետություն և Ուխտեր 138:31, 42) կամ որպես «դրսի խավարը» արտաքսվածների, որտեղ պիտի լինի «լացն ու կոծը և ատամների կռճտոցը», մինչ նրանք սպասում են հարությանն ու դատաստանին (Ալմա 40.13–14):

Հիսուս Քրիստոսի հարության միջոցով հոգիների աշխարհում բոլորին աներկբա հարություն է խոստացված (տես Ա Կորնթացիս 15.22), չնայած որ տարբեր խմբերի համար այն կլինի տարբեր ժամանակաշրջաններում: Մինչ այդ նշանակված ժամանակը, այն, ինչ սուրբ գրքերը պատմում են մեզ հոգիների աշխարհում կատարվող գործերի մասին, հիմնականում վերաբերում է փրկության աշխատանքին: Մնացած բաների մասին քիչ է հայտնված: Ավետարանը քարոզվում է չիմացողներին, չզղջացողներին



ու չհնազանդվողներին, նրանց հնարավորություն տալով ազատվել գերությունից և հասնել այն օրհնություններին, որ սիրող Երկնային Հայրը պահել է նրանց համար:

Հոգիների աշխարհի դարձի եկած արդարների համար գերությունը սպասելն է, թույլտվություն ունենալով գուցե հուշել, որ երկրի վրա իրենց համար փոխարինող արարողություններ կատարվեն, որպեսզի նրանք մկրտվեն և վայելեն Սուրբ Հոգու օրհնությունները (տես Վարդապետություն և Ուխտեր 138.30–37, 57–58):[2] Այս մահկանացու փոխարինող արարողությունները նաև հնարավորություն են տալիս, քահանայության իշխանության ներքո առաջ գնալ՝ ընդլայնելու արդարների զորախմբերը, ովքեր կարող են ավետարանը քարոզել բանտում գտնվող հոգիներին:

Այս հիմունքներից ավելին մեր կանոնական սուրբ գրությունները շատ քիչ բան են պարունակում հոգիների աշխարհի մասին, որը գալիս է մահից հետո և նախորդում է վերջին դատաստանին:[3] Այսպիսով, ուրիշ էլ ի՞նչ գիտենք հոգիների աշխարհի մասին: Եկեղեցու անդամներից

շատերը տեսիլքներ կամ այլ ոգեշնչումներ են ունենում, ինչը տեղեկություն է հաղորդում այն մասին, թե ինչպես են գործերը վարում կամ կազմակերպում հոգիների աշխարհում, բայց անձնական այս հոգևոր փորձառությունները չպետք է հասկացվեն կամ ուսուցանվեն որպես Եկեղեցու պաշտոնական վարդապետություն: Եվ, իհարկե, անդամների և այլոց կողմից հրատարակված աղբյուրներում, ինչպիսիք են ժամանակավոր մահվան վերաբերյալ գրքերը, առատ շահարկումներ կան այս թեմայով:[4]

Ինչ վերաբերում է վերջինիս, կարևոր է հիշել երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի և երեց Նիլ Լ. Անդերսենի գերագույն համաժողովի ուղերձների նախազգուշացումները: Երեց Քրիստոֆերսոնը ուսուցանել է. «Պետք է հիշել, որ անցյալի, թե ներկայիս Եկեղեցու ղեկավարի յուրաքանչյուր հայտարարություն վարդապետություն չի համարվում Եկեղեցում բոլորը հասկանում են, որ առանձին առիթով որևէ ղեկավարի կողմից կատարված հայտարարությունը հաճախ ներկայացնում է անձնական կարծիք, ու թեև լավ մտածված լինի, այն միևնույն է՝ պաշտոնական չէ, ոչ էլ պարտադրող է ողջ Եկեղեցու համար»:[5]

Հաջորդ համաժողովին Երեց Անդերսենը ուսուցանեց հետևյալ առաջնորդող սկզբունքը. «Վարդապետությունը ուսուցանվում է Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի բոլոր 15 անդամների կողմից: Այն թաքնված չէ որևէ առանձին ելույթի անորոշ տողերում»:[6] Ընտանիքի մասին հռչակագիրը, որը ստորագրվել է բոլոր 15 մարգարեների, տեսանողների և հայտնողների կողմից, այդ սկզբունքի հիանալի օրինակ է:

Ընտանիքի մասին պաշտոնական հռչակագրից բացի, մարգարեական այն ուսմունքները, որոնք հաստատվում են մյուս մարգարեների և առաքյալների կողմից, նույնպես վարդապետության օրինակ են: Հոգիների աշխարհում եղած հանգամանքների մասին մարգարե Ջոզեֆ Սմիթը իր ծառայության ավարտին երկու ուսմունք է ուսուցանել, որոնք հաճախ ուսուցանել են նաև նրան հաջորդող նախագահները: Դրանցից մեկը երեց Քինգ Ֆոլլեթի թաղման քարոզի ուսմունքն է, որ հոգիների աշխարհում արդար ընտանիքի անդամները միասին կլինեն:[7] Մյուսը իր կյանքի վերջին տարվա մեկ այլ թաղման արարողության այս հայտարարությունն է. «Արդարների հոգիները վեհացում են ստացել, որպեսզի ավելի մեծ ու փառահեղ աշխատանք կատարեն: . . . հոգիների աշխարհում: . . . Նրանք հեռու չեն մեզանից և գիտեն ու հասկանում են մեր մտքերը, զգացումներն ու գործողությունները, և որոնց համար հաճախ ցավ են ապրում»:[8]

Այսպիսով, ո՞րն է ավելի վաղ նշված հարցի պատասխանը, թե որտեղ են բնակվում հոգիները: Եթե այդ հարցը ձեզ համար տարօրինակ կամ անբանական է հնչում, մտածեք ձեր ունեցած կամ ձեզ տրված շատ հարցերի մասին, որոնց գայթակղություն է եղել պատասխանել մի գիտելիքի հիման վրա, որ նախկինում լսել եք մեկ այլ անձից: Հոգիների աշխարհի մասին բոլոր հարցերին ես առաջարկում եմ երկու պատասխան: *Նախ* հիշեք, որ Աստված սիրում է իր զավակներին և անկասկած յուրաքանչյուրիս համար կանի այն, ինչ լավագույնն է: *Երկրորդ,* հիշեք Աստվածաշնչի այս ծանոթ ուսմունքը, որն ինձ օգնել է պատասխան չգտած շատ հարցերի դեպքում.

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր:

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նրան, և նա կուղղէ քո ճանապարհները» (Առակաց 3.5–6):

Նեփին նմանօրինակ մի մտքով ավարտել է իր փառահեղ սաղմոսը. «Ո՜վ Տեր, ես քեզ եմ ապավինել, և ես քեզ եմ ապավինելու հավիտյան: Ես իմ վստահությունը չեմ դնի մարմնի բազկի վրա» (2 Նեփի 4.34):

Բոլորս կարող ենք անհատապես խորհել, իսկ ընտանիքում կամ այլ մտերմիկ միջավայրում քննարկել հոգիների աշխարհի պայմանները կամ պատասխան չստացած այլ հարցերը: Սակայն, եկեք որպես պաշտոնական վարդապետություն չուսուցանենք և չներկայացնենք այն, ինչը չի բավարարում պաշտոնական վարդապետություն համարվելու չափանիշներին: Նման վարքը առաջ չի տանում Տիրոջ աշխատանքը և անգամ կարող է խանգարել մարդկանց փնտրելու Տիրոջ ծրագրով նախատեսված անձնական հայտնության մխիթարությունը կամ վեհացումը: Անձնական հայտնություններին կամ երևակայություններին չափից շատ վստահելը կարող է մեզ նույնիսկ հեռացնել կենտրոնանալու և սովորելու մեր ջանքերից, որոնք *կխոչընդոտեին* մեր հասկացողությունը

և կօգնեին մեզ ուխտի ճանապարհով առաջ քայլելիս:

Տիրոջն ապավինելը ծանոթ և ճշմարիտ վարդապետություն է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Այդ մասին ուսուցանում էր Ջոզեֆ Սմիթը, երբ առաջին սրբերը ծանր հալածանքների էին ենթարկվում և հանդիպում էին անհաղթահարելի թվացող խոչընդոտների:[9] Այն դեռևս լավագույն սկզբունքն է, որին կարող ենք հետևել, երբ դեռևս հայտնություն չստացած և Եկեղեցու պաշտոնական վարդապետություն չդարձած մեզ անհանգստացնող հարցերի մասին սովորելու և մխիթարություն գտնելու մեր ջանքերը խոչընդոտների են հանդիպում:

Նույն սկզբունքը կիրառելի է հանդերձյալ կյանքի համար կատարված կնքումների կամ մահկանացու իրադարձությունների կամ օրինազանցությունների արդյունքում առաջացած ցանկալի շտկումներին վերաբերող պատասխան չգտնված հարցերին: Այնքան շատ բան կա, որ չգիտենք, որ մեր միակ հաստատուն վստահությունը ապավինելն է Տիրոջը և իր զավակների հանդեպ Նրա սիրուն:

Եզրափակելով՝ հոգիների աշխարհի մասին մի բան կարող ենք հաստատ ասել, որ Հոր և Որդու փրկության աշխատանքը շարունակվում է այնտեղ: Մեր Փրկիչը նախաձեռնել է բանտարկյալներին ազատություն հայտարարելու աշխատանքը (տես Ա Պետրոս 3.18–19; 4.6; Վարդապետություն և Ուխտեր 138.6–11, 18–21, 28–37), և այդ աշխատանքը շարունակում է, քանի դեռ արժանավոր և պատրաստված սուրհանդակները շարունակում են քարոզել ավետարանը, այդ թվում նաև՝ ապաշխարություն նրանց համար, ովքեր դեռ ունեն մաքրվելու կարիքը (տես Վարդապետություն և Ուխտեր 138.57): Այդ բոլորի նպատակը նկարագրված է ժամանակակից հայտնություններում տրված Եկեղեցու պաշտոնական վարդապետությունում:

«Մահացածները, որոնք ապաշխարում են, պիտի փրկագնվեն՝ Աստծո տան արարողություններին հնազանդվելու միջոցով,

Եվ իրենց օրինազանցությունների պատիժը վճարելուց և մաքուր լվացվելուց հետո, նրանք վարձք պիտի ստանան, համաձայն իրենց գործերի, քանզի նրանք փրկության ժառանգներ են» (Վարդապետություն և Ուխտեր 138.58–59):

Մեզանից յուրաքանչյուրի պարտականությունն է՝ ուսուցանել վերականգնված ավետարանի վարդապետությունը, պահել պատվիրանները, սիրել և օգնել մեկմեկու և իրագործել սուրբ տաճարներում կատարվող փրկության աշխատանքը:

Ես վկայում եմ իմ ասածների, ինչպես նաև այն ճշմարտությունների իրականության մասին, որոնք ուսուցանվել են և դեռ ուսուցանվելու են այս համաժողովի ընթացքում: Այդ բոլորը հնարավոր է դարձել Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Ինչպես ասվում է ժամանակից հայտնության մեջ՝ Հիսուսը «փառավորում է Հորը և *փրկում է իր ձեռքի բոլոր գործերը*» (Վարդապետություն և Ուխտեր 76.43, շեշտադրումն ավելացված է): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. “What’s on the Other Side? A Conversation with Brent L. Top on the Spirit World,” *Religious Educator,* vol. 14, no. 2 (2013), 48.
2. Տես *Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith (1976), 309–10; Joseph Smith, “Journal, December 1842–June 1844; Book 2,” p. 246, The Joseph Smith Papers, josephsmithpapers.org:
3. Հոգիների աշխարհի վերաբերյալ հաճախ վկայակոչվող մեջբերման մեջ ասվում է. «Միևնույն հարաբերությունները, որոնք այստեղ գոյություն ունեն մեր մեջ, այնտեղ ևս գոյություն կունենան մեր մեջ» (Վարդապետություն և Ուխտեր 130.2): Ինչևէ, սա, հավանաբար, նկարագրում է ոչ թե հոգիների աշխարհը, այլ փառքի արքայությունը, քանի որ շարունակության մեջ նշվում է, որ «միայն թե դրանք կզուգակցվեն հավերժական փառքով, փառք, որը մենք այժմ չենք վայելում» (հատված 2):
4. Օրինակ՝ George G. Ritchie, *Return from Tomorrow* (1978) and Raymond Moody, *Life after Life* (1975):
5. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն «Քրիստոսի վարդապետությունը», *Լիահոնա,* մայիս 2012, 88; տե՛ս նաև Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 42: Տես, օրինակ Վարդապետություն և Ուխտեր 74:5 նկարագրությունը Պողոս առաքյալի անձնական ուսմունքների վերաբերյալ:
6. Նիլ Լ. Անդերսեն,«Ձեր հավատքի փորձությունը»,, *Լիահոնա,* նոյ. 2012, 41:
7. Տես *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 175:
8. *History of the Church,* 6:52; included in *Teachings of the Prophet Joseph Smith,* 326; often quoted, as in Henry B. Eyring, *To Draw Closer to God* (1997), 122; see also *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), chapter 38, “The Spirit World.”
9. Տես *Teachings: Joseph Smith,* 231–33:



ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ՝ ՆԱԽԱԳԱՀ ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորների, Տարածքային Յոթանասունականների և Բարձրագույն Պաշտոնյաների հաստատումը

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, առաջարկվում է, որ մենք հաստատենք Ռասսել Մերիոն Նելսոնին՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Դալլին Հարիս Օուքսին՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Հենրի Բենիոն Այրինգին՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Դալլին Հ. Օուքսին որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և Մ. Ռասսել Բալլարդին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի գործող Նախագահ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին՝ Մ. Ռասսել Բալլարդին, Ջեֆրի Ռ. Հոլլանդին, Դիտեր Ֆ. Ուխդորֆին, Դեյվիդ Ա. Բեդնարին, Քվենթին Լ. Քուքին, Դ. Թոդ Քրիստոֆերսոնին, Նիլ Լ. Անդերսենին, Ռոնալդ Ա. Ռասբենդին, Գարի Է. Սթիվենսոնին, Դեյլ Գ. Ռենլանդին, Գերիթ Վ. Գոնգին և Ուլիսես Սոարեսին:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ:

Առաջարկվում է, որ իրենց նվիրված ծառայության համար խորին երախտագիտությամբ ազատենք Երեցներ Վիլֆորդ Վ. Անդերսենին, Քիմ Բ. Քլարկին, Լորենս Ե. Քորբրիջին, Կլաուդիո Ռ. Մ. Կոստային, Բրեդլի Դ. Ֆոսթերին, Օ. Վինսենթ Հալեքին, Դոնալդ Լ. Հոլսթրոմին, Սթիվեն Ի. Սնոուին և Լարի Յ. Վիլսոնին և շնորհել նրանց պատվավոր անդամի կոչում:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել այս եղբայրներին և նրանց ընտանիքներին իրենց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է ազատել հետևյալ անձանց Տարածքային Յոթանասունականների կոչումից. Խուլիո Ս. Ակոստա, Բլեյք Ռ. Ալդեր, Ալեյն Լ. Ալլարդ, Օմար Ա. Ալվարեզ, Թաիչի Առբա, Կառլոս Ֆ. Առեդոնդո, Ալեյ Կ. Անունա Կրտ., Գրանտ Կ. Բենեթ, Մայքլ Հ. Բուրն, Ռոմուլո Վ. Կաբրերա, Վիլսոն Բ. Կալդերոն, Հերնանդո

Կամարգո, Խոսե Կ. Ֆ. Կամպոս, Նիկոլաս Կաստանեդա, Վալտեր Չատորա, Զենո Չոու, Ռոբերտ Ջ. Դուդֆիլդ, Ջ. Քեվին Էնս, Մելիուլա Մ. Ֆատա, Կ.Մարկ Ֆրոստ, Կլաուդիո Ռ. Գամիետե, Մաուրիչիո Գ. Գոնզագա, Լեոնարդ Դ. Գրիեր, Խոսե Լ. Իսագիեր, Թե Գուլ Յունգ, Սերժիո Լ. Կրասնոսելսկի, Միլան Ֆ. Կունց, Բրայըն Ռ. Լարսեն, Գ. Կենետ Լի, Ջերալդո Լիմա, Վ. Ջան-Պյեր Լոնո, Խումբուլանի Մդլեչե, Դեյլ Հ. Մանկ, Նորման Ռ. Նեմրով, Յուտակա Օնդա, Վոլֆգանգ Պիլզ, Ռայմունդո Պաչեկո Դեպինիո, Գենադի Ն. Պադվոդով, Աբրահամ Ի. Քուերո, Մարկո Ա. Ռեյս, Սթիվեն Կ. Ռանդալ, Ֆրանսիսկո Ժ. Ռուի դե Մենդոզա, Էդվին Վ. Սեքստոն, Ռաուլ Հ. Սպիտալե, Կ. Վալտեր Տրեվինո, Այսակե Կ. Տուկուաֆու, Խուան Ա. Ուռա, Ռաուլ Ս. Վիլանուեվա և Լեոնարդ Վու:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել նրանց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես նոր Տարածքային Յոթանասունականներ՝ Մայքլ Ջ. Քարտեր, Ալֆրեդ Քունգու, Ռ. Փեփեր Մուրեյ, Ռայան Կ. Օլսեն և Լոտուա Թյունը:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանավորները, Տարածքային Յոթանասունականները և Եկեղեցու բարձրագույն պաշտոնյաները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ:

Ովքեր դեմ քվեարկեցին որևէ առաջադրման, խնդրում ենք զրուցել իրենց ցցի նախագահի հետ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք միշտ երախտապարտ ենք ձեզ Եկեղեցու ղեկավարների հանդեպ ձեր մշտական հավատքի և աղոթքների համար: ■

ԵՐԵՑ ԴԵՅՎԻԴ Ա. ԲԵԴՆԱՐ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Շարունակ արթուն լինեք աղոթքում

(Ալմա 34.39, Մորոնի 6.4, Ղուկաս 21.36)

Մշտական զգոնություն է անհրաժեշտ՝ չեզոքացնելու ինքնագոհությունն ու անփութությունը:

Ես անկեղծորեն աղոթում եմ, որ Սուրբ Հոգու օգնությունը լինի իմ և ձեր հետ, մինչ ուրախանում ենք և երկրպագում միասին:

1976 թվականի ապրիլին Երեց Բոյդ Ք. Փաքերը Եկեղեցու գերագույն համաժողովում հատկապես խոսեց երիտասարդների համար: Իր դասական ուղերձում, որը կոչվում էր «Հոգևոր կոկորդիլոսներ», նա պատմեց, որ Աֆրիկայում մի հանձնարարության ժամանակ նա տեսել էր, թե ինչպես էին լավ քողարկված կոկորդիլոսները սպասում՝ որսալու ոչինչ չկասկածող զոհերին: Այդ ժամանակ նակոկորդիլոսներին նմանեցրեց սատանայի հետ, ով որսում է անզգույշ երիտասարդներին՝ քողարկելով մեղքի մահացու բնույթը:

Ես 23 տարեկան էի, երբ Երեց Փաքերը տվեց այդ ելույթը, իսկ ես ու Սյուզանը մի քանի օր հետո սպասում էինք մեր առաջին երեխային: Մենք տպավորված էինք մեղքից խուսափելու և մի կարևոր հոգևոր դաս ուսուցանելու համար

կենդանիների սովորական վարքը վարպետորեն օգտագործելու նրա ուղերձի բովանդակությունից:

Ես և Սյուզանը նույնպես, շատ հանձնարարություններով ճամփորդել ենք Աֆրիկայում: Եվ մենք հնարավորություն ենք ունեցել տեսնելու այն հոյակապ կենդանիներին, որոնք

ապրում են այդ մայրցամաքում: Հիշելով Երեց Փաքերի ելույթի ազդեցությունը մեր կյանքում, մենք փորձել ենք դիտարկել և սովորել դասեր Աֆրիկյան վայրի բնության կենսակերպից:

Ցանկանում եմ նկարագրել իմ և Սյուզանի տեսած երկու վագրակատուների հատկանիշներն ու ռազմավարությունը,որոնցով նրանք որսում էին իրենց զոհին, և մեր նկատած որոշ բաներ կապեցինք Հիսուս Քրիստոսի ավետարանով ամենօրյա ապրելակերպի հետ:

Վագրակատուները և այծեղջերուները

Վագրակատուները ամենաարագ ցամաքային կենդանիներն են երկրի վրա և վազքի արագությունը հասնում է 120 կ/ժ: Այդ գեղեցիկ կենդանիները կարող են անշարժ դիրքից վազելով զարգացնել 109 կ/ժ արագություն երեք վայրկյանից քիչ ժամանակահատվածում: Վագրակատուները գիշատիչներ են, որոնք սողոսկում են իրենց զոհի մոտ և վազում կարճ տարածություն՝ հետապնդելու և հարձակվելու համար:

Ես և Սյուզանը գրեթե երկու ժամ հետևում էինք երկու վագրակատուների, որոնք դարանամուտ հետևում էին եղջերուների մի մեծ խմբի, որոնք Աֆրիկայի ամենահայտնի և տարածված այծեղջերուներն են: Աֆրիկյան տափաստանների չոր խոտը բարձր էր՝ շականակագույն ոսկյա երանգով, և գրեթե ամբողջովին թաքցնում էր գիշատիչներին, երբ նրանք դարանակալել էին այծեղջերուների խմբին: Վագրակատուները միմյանցից հեռու էին մոտավորապես 100 մղոն (91 մետր), բայց գործում էին միասնաբար:

Մինչ մի վագրակատուն ուղիղ նստում էր խոտի մեջ և չէր շարժվում, մյուս վագրակատուն փորսող տալով մոտենում էր ոչինչ չկասկածող այծեղջերուներին: Ապա այն վագրակատուն, որն ուղիղ նստած էր խոտի մեջ, անհետացավ ճիշտ նույն պահին, երբ մյուս վագրակատուն ուղիղ նստեց: Այս հաջորդական ձևը, երբ մի վագրակատուն փորսող մոտենում էր, մինչ մյուսը ուղիղ նստում էր խոտերի մեջ, շարունակվեց երկար ժամանակ: Ռազմավարության քողարկված նրբությունը նպատակ ուներ խաբել այծեղջերուներին և դրանով շեղել նրանց ուշադրությունը մոտեցող վտանգից: Համբերությամբ և հաստատամտությամբ երկու վագրակատուները գործում էին որպես թիմ՝ որպեսզի ապահովեին իրենց հաջորդ ճաշը:

Այծեղջերուների մեծ խմբի և մոտեցող վագրակատուների միջև դիրքավորվել էին մի քանի ավելի մեծ և ավելի ուժեղ այծեղջերուներ, ինչպես մրջունների պահակները թմբերի վրա: Փոքրիկ բլուրների վրայից արոտավայրերի ամբողջական տեսադաշտը հնարավորություն էր ընձեռում պահակ այծեղջերուներին հետևել վտանգի նշաններին:

Ապա, երբ վագրակատուները հանկարծակի հայտնվում էին հասանելի տարածության վրա, այծեջերուների ողջ խումբը շրջվում էր և փախչում: Ես չգիտեմ, թե ինչպես էին պահակ այծեղջերուները հաղորդակցվում ավելի մեծ խմբի հետ, բայց ինչ-որ ձևով զգուշացնում էր տրվում, և բոլոր այծեղջերուները շարժվում էին դեպի ապահով վայր:

Իսկ հետո ի՞նչ էին անում վագրակատուները: Առանց հապաղելու երկու վագրակատուները վերսկսում էին իրենց հերթափոխման գործելակերպը՝ մեկը ցած կռանալով և սողալով առաջ, մինչ մյուսը ուղիղ նստում էր խոտի մեջ: Հետապնդման գործելակերպը շարունակվում էր: Նրանք կանգ չէին առնում: Նրանք չէին հանգստանում կամ ընդմիջում չէի անում: Նրանք անողոքաբար հետևում էին իրենց շփոթեցման և շեղման ռազմավարությանը: Ես և Սյուզանը տեսանք, թե ինչպես վագրակատուներն անհետացան տարածության մեջ՝ ավելի ու ավելի մոտենալով այծեղջերուների խմբին:

Այդ գիշեր ես և Սյուզան մի հիշարժան զրույց ունեցանք այն մասին, թե ինչ էինք դիտարկել և սովորել: Մենք այդ փորձառությունը քննարկեցինք նաև մեր երեխաների ու թոռների հետ և բացահայտեցինք շատ արժեքավոր դասեր: Այժմ ես կնկարագրեմ այդ դասերից երեքը:

Դաս 1.Զգուշացեք չարի քողարկված հրապույրներից

Ինձ համար վագրակատուները նրբազեղ, հրապուրիչ և գրավիչ արարածներ են: Վագրակատվի սև բծերով դեղնավուն երանգով մոխրասպիտակավուն մորթին հանդիսանում է գեղեցիկ քողարկում, որը այդ կենդանիներին դարձնում է գրեթե անտեսանելի, երբ նրանք հետապնդում են իրենց զոհին աֆրիկյան արոտավայրերում:

Նույն ձևով, հոգևորապես վտանգավոր գաղափարները և գործողությունները հաճախ կարող են հրապուրիչ, ցանկալի կամ հաճելի թվալ: Այսպիսով, մեր ժամանակակից աշխարհում մեզանից յուրաքանչյուրը պետք է զգույշ լինի հրապուրիչ չարից, որը ձևացնում է, թե բարի է: Ինչպես Եսայիան է նախազգուշացրել. «Վայ նրանց, որ չարին ասում են բարի, և բարիին չար. որ խաւարը շինում են լոյս, և լոյսը խավար. Որ դառնը քաղցր են շինում, եւ քաղցրը՝ դառն»:[1]

Մի տարօրինակ ժամանակաշրջանում, երբ մարդկային կյանքի սրբության խախտումն ազդարարվում է որպես իրավունք և քաոսը նկարագրվում է որպես ազատություն, որքան օրհնված ենք մենք՝ ապրելով այս վերջին օրերի տնտեսությունում, երբ վերականգնված ավետարանի լույսը կարող է պայծառ փայլել մեր կյանքում և օգնել մեզ նկատել հակառակորդի խավար խաբկանքներն ու շեղումները:

«Քանզի նրանք, ովքեր իմաստուն են և ընդունել են ճշմարտությունը, *և վերցրել են Սուրբ Հոգին որպես իրենց ուղեկից, և չեն խաբվել*,– ճշմարիտ ասում եմ ձեզ, նրանք չպիտի կտրվեն և կրակի մեջ գցվեն, այլ պիտի մնան այդ օրը»:[2]

Դաս 2.Արթուն կացեք և զգոն եղեք

Այծեղջերուի համար անփութության կամ անուշադրության մի կարճ պահը կարող է արագ հարձակում հրավիրել վագրակատվի կողմից: Նմանապես, հոգևոր ինքնագոհությունը և անփութությունը մեզ խոցելի են դարձնում հակառակորդի առաջխաղացումների համար: Հոգևոր անմտությունը մեծ վտանգ է հրավիրում մեր կյանք:

Նեփին նկարագրել է, թե ինչպես վերջին օրերում սատանան կփորձի խաղաղեցնել և հանդարտեցնել Աստծո զավակներին մարմնական ապահովության կեղծ զգացման հանդեպ, «այնպես որ նրանք կասեն. Ամեն ինչ լավ է Սիոնում. այո՛, Սիոնը բարգավաճում է, ամեն ինչ լավ է, *և այդպես դևը խաբում է նրանց հոգիները*, և զգուշորեն հեռացնում նրանց՝ իջեցնելով դժոխք»:[3]

Մշտական զգոնություն է անհրաժեշտ չեզոքացնելու ինքնագոհությունն ու անփութությունը: Զգաստ լինելն այն վիճակն է կամ գործողությունը, որը *պահում է ուշադիր պահպանություն* հնարավոր վտանգի կամ դժվարությունների դեմ: Իսկ պահապան լինելը նշանակում է *արթուն մնալու* վիճակ, որպեսզի հսկեն և պաշտպանեն: Հոգևորապես արտահայտվելով, մենք պետք է զգոն և զգաստ մնանք Սուրբ Հոգու հուշումների և այն ազդանշանների հանդեպ, որոնք գալիս են Տիրոջ աշտարակի պահապաններից:[4]

«Այո, և ես նաև հորդորում եմ ձեզ, . . . որ դուք շարունակ արթուն լինեք աղոթքում, որպեսզի դուք չմոլորեցվեք դևի գայթակղություններով, . . . քանզի ահա, նա հատուցում է ձեզ՝ ոչ լավ բանով»:[5]

Մեր կյանքի, Փրկիչի և Նրա ավետարանի վրա կենտրոնանալը հնարավորություն է տալիս մեզ հաղթահարել բնական մարդու հոգևորապես քնկոտ և ծույլ լինելու միտումը: Քանի որ մենք օրհնված ենք տեսնող աչքերով և լսող ականջներով,[6] Սուրբ Հոգին կարող է մեծացնել տեսնելու և լսելու մեր կարողությունը, երբ մենք սովորաբար չենք մտածում, որ պետք է նայենք կամ լսենք, կամ զուցե չենք

Այծեղջերուի համար անփութության կամ անուշադրության մի կարճ պահը կարող է արագ հարձակում հրավիրել վագրակատվի կողմից: Նմանապես, հոգևոր ինքնագոհությունը և անփութությունը մեզ խոցելի են դարձնում հակառակորդի առաջխաղացումների համար:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ (ԱՋՈՒՄ)՝ ISTOCK.COM/ANGELIKA-Ի ԿՈՐՈՒՄԻՑ:

մտածում, որ որևէ բան կարելի է տեսնել կամ լսել:

«Հետևաբար, արթուն մնացեք, որ պատրաստ լինեք»:[7]

Դաս 3.Հասկացեք թշնամու մտադրությունը

Վագրակատուն գիշատիչ է, որը բնականաբար որսում է այլ կենդանիներ ևս: Ամբողջ օրը, ամեն օր վագրակատուն գիշատիչ է:

Սատանան «արդարության և այն մարդկանց թշնամին է, որոնք ջանում են կատարել Աստծո կամքը»:[8] Ամբողջ օրը, ամեն օր նրա միակ մտադրությունը և միակ նպատակն է Աստծո որդիներին ու դուստերին իր նման թշվառ դարձնելը:[9]

Հոր երջանկության ծրագիրը կոչված է՝ ուղղություն տալ Իր զավակներին, օգնել նրանց զգալ հարատև ուրախություն և հարություն առած, վեհացված մարմիններով նրանց ապահով տուն բերել՝ Իր մոտ: Դևն աշխատում է Աստծո որդիներին և դուստրերին շփոթեցնել, դժբախտ դարձնել և խանգարել նրանց հավերժական առաջընթացին: Հակառակորդն աշխատում է անողոքաբար հարձակվել Հոր ծրագրի այն մասերի վրա, որոնք ամենաշատն է ատում:

Սատանան մարմին չունի և նրա հավերժական առաջընթացը կանգ է առել: Ճիշտ, ինչպես գետի հունով հոսող ջուրը կանգնեցվում է պատնեշով, այդպես էլ հակառակորդի հավերժական առաջընթացը խափանվել է, որովհետև նա չունի ֆիզիկական մարմին: Իր ապստամբության պատճառով Լյուցիֆերը զրկել է իրեն բոլոր մահկանացու օրհնություններից և փորձառություններից, որոնք հնարավոր են դառնում մսից և ոսկորներից կազմված խորանի միջոցով: *Անիծված* բառի սուրբգրային հիմնական իմաստներից մեկը ցույց է տալիս նրա առաջընթացը շարունակելու և մեր Երկնային Հորը նմանվելու նրա անկարողությունը:

Քանի որ ֆիզիկական մարմինը այդքան էական է Հոր երջանկության ծրագրում և մեր հոգևոր զարգացման համար, Լյուցիֆերը ձգտում է խանգարել մեր առաջընթացին՝ մեզ գայթակղելով անպատշաճ ձևով օգտագործել մեր մարմինները: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ հոգևոր ապահովությունը, ի վերջո, կայանում է նրանում, որ «երբեք չանեք առաջին հրապուրիչ քայլը՝ չգնաք այնտեղ, ուր դուք չպիտի գնաք և չանեք այն, ինչ դուք չպիտի անեք»: . . . Որպես մարդկային էակներ, մենք բոլորս ունենք [ֆիզիկական] ցանկություններ, որոնք անհրաժեշտ են մեր գոյատևման համար: «Այդ ցանկությունները բացարձակապես կարևոր են կյանքի հարատևման համար: Այսպիսով, ի՞նչ է անում հակառակորդը: . . . Նա հարձակվում է մեզ վրա մեր ցանկությունների միջոցով: Նա գայթակղում է մեզ ուտել բաներ, որոնք մենք չպետք է ուտենք, խմել բաներ, որոնք չպետք է խմենք և սիրենք այնպես, ինչպես չպետք է սիրենք»:[10]

Հավերժության գլխավոր հեգնանքներից մեկն այն է, որ հակառակորդը, որը թշվառ է հենց այն պատճառով, որ չունի ֆիզիկական մարմին, հրավիրում և հրապուրում է մեզ մասնակից լինել իր թշվառությանը՝ մեր մարմինների անպատշաճ օգտագործման միջոցով: Հենց այն գործիքը, որը նա չունի և չի կարող օգտագործել, հանդիսանում է հրապուրելու նրա փորձերի հիմնական թիրախը՝ մեզ ֆիզիկական և հոգևոր կործանման տանելու համար:

Թշնամու մտադրությունը հասկանալը կենսական է՝ հնարավոր հարձակումների դեմ նախապատրաստվելու համար:[11] Հենց այն պատճառով, որ զորավար Մորոնին գիտեր Լամանացիների այդ մտադրությունը, նա պատրաստվեց նրանց դիմավորել իրենց գալու ժամանակ և հաղթեց:[12] Եվ այդ նույն սկզբունքը և խորհուրդը վերաբերում է մեզանից յուրաքանչյուրին:

«Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա:

Եվ որ դուք կարողանաք խույս տալ թշնամու զորությունից»:[13]

Հրավեր, խոստում և վկայություն

Ճիշտ, ինչպես կարևոր դասեր կարելի է սովորել դիտարկելով վագրակատուների և այծեղջերուների վարքը, այդպես էլ մեզանից յուրաքանչյուրը պետք է որոնի դասեր և զգուշացումներ, որոնք գտնվում են ամենօրյա կյանքի հասարակ իրադարձությունների մեջ: Երբ ձգտենք ունենալ բաց միտք և սիրտ՝ ստանալու երկնային ուղղորդում Սուրբ Հոգու միջոցով, այդ ժամանակ որոշ մեծագույն հրահանգներ, որոնք մենք կարող ենք ստանալ և շատ հզորագույն զգուշացումներ, որոնք կարող են պաշտպանել մեզ, կգան մեր անձնական սովորական փորձառությունների ընթացքում: Հզոր առակներ են պարունակվում ինչպես սուրբ գրություններում, այնպես էլ մեր ամենօրյա կյանքում:

Ես լուսաբանեցի բազմաթիվ դասերից միայն երեքը, որոնք կարելի է գտնել Աֆրիկայում իմ և Սյուզանի ունեցած արկածներում: Ես հրավիրում եմ և խրախուսում ձեզ խորհրդածել վագրակատուների և այծեղջերուների



այդ դրվագի մասին և լրացուցիչ դասեր գտնել ձերև ձեր ընտանիքի համար: Խնդրում եմ միշտ հիշեք, որ ձեր տունն է ավետարանը սովորելու և նրանով ապրելու իսկական կենտրոնը:

Երբ հավատքով արձագանքեք այս հրավերին, ոգեշնչված մտքեր կգան ձեր միտքը, հոգևոր զգացումներ կուռչեն ձեր սրտում, և դուք կճանաչեք այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկեք կամ շարունակեք, որպեսզի կարողանաք «ձեզ վրա վերցնել [Աստծո] ողջ սպառազինությունը[ը], որպեսզի դուք կարողանաք դիմանալ չար օրվանը, արած լինելով ամեն բան, որպեսզի կարողանաք կանգուն մնալ»:[14]

Ես խոստանում եմ, որ արդյունավետ նախապատրաստության և հոգևոր պաշտպանության օրհնությունները կհորդեն ձեր կյանք, երբ զգոն և անընդհատ արթուն լինեք աղոթելու համար:

Ես վկայում եմ, որ առաջ մղվելով ուխտի արահետում, ստանում ենք հոգևոր ապահովություն և մեր կյանք ենք հրավիրում հարատև ուրախություն: Եվ ես վկայում եմ, որ հարություն առած կենդանի Փրկիչը կաջակցի և կզորացնի մեզ՝ ինչպես լավ, այնպես էլ վատ ժամանակներում: Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եսայիա 5.20:
2. Վարդապետություն և Ուխտեր 45.57, շեշտադրումն ավելացված է:
3. 2 Նեփի 28.21, շեշտադրումն ավելացված է:
4. Տես Եզեկիել 33.7, Վարդապետություններ և Ուխտեր 101.44–58, Սուրբ Գրքերի ուղեցույց, «Պահապաններ», scriptures.ChurchofJesusChrist.org:
5. Ալմա 34.39:
6. Տես Մատթեոս 13.16:
7. Վարդապետություն և Ուխտեր 50.46:
8. Սուրբ գրքերի ուղեցույց, «Դև», scriptures.ChurchofJesusChrist.org
9. Տես 2 Նեփի 2.27:
10. Russell M. Nelson, in “Advice from the Prophet of the Church to Millennials Living in a Hectic World,” Newsroom, Feb. 18, 2018, newsroom.ChurchofJesusChrist.org.
11. Տես Ալմա 2.7–13:
12. Տես Ալմա 43.29–33, 48–50:
13. Վարդապետություն և Ուխտեր 38.30–31:
14. Վարդապետություն և Ուխտեր 27.15:

ԵՐԵՑ ՌՈՒԲԵՆ Վ. ԱԼԻՈ
Յոթանասունից

Գտնվել է Մորմոնի Գրքի զորությամբ

Բոլորը պետք է զգան և գտնվեն Մորմոնի Գրքում պարունակվող ճշմարտությունների զորությամբ:

Երբ ես այցելում եմ նորադարձներին իրենց տներում, հարցերից մեկը, որ սիրում եմ հաճախակի ուղղել նրանց, այն է, թե նրանք ու նրանց ընտանիքներն ինչպես են իմացել Եկեղեցու մասին, և ինչպես են որոշել մկրտվել: Նշանակություն չունի՝ արդյոք մարդը այդ պահին ակտիվ անդամ է, թե չի հաճախել եկեղեցի մի քանի տարի: Պատասխանը միշտ նույնն է. ժպիտով և դեմքի ուրախ արտահայտությամբ նրանք սկսում են պատմել այն մասին, թե ինչպես են իրենք գտնվել: Փաստորեն, թվում է, որ դարձի այդ պատմությունը միշտ այն մասին է, թե նրանք ինչպես են գտնվել:

Ինքը՝ Հիսուս Քրիստոսը, Տերն է կորսված բաների: Նա հոգում է կորսված բաների մասին: Անկասկած, դրա համար նա ուսուցանեց երեք առակները, որոնք մենք գտնում ենք Ղուկասի 15-րդ գլխում. մոլորված ոչխարի, կորած դրամի և, ի վերջո, անառակ որդու առակները: Այս բոլոր պատմություններն ունեն մեկ ընդհանուր նմանություն. նշանակություն չունի, թե նրանք ինչու էին կորսվել: Անգամ նշանակություն չունի՝ արդյո՞ք

նրանք տեղյակ էին, որ կորսված են:: Այնտեղ տիրում է ուրախության գերագույն զգացումը, որին հետևում է բացականչությունը. «Ուրախացէք ինձ հետ. Որովհետեւ իմ կորած ոչխարը գտայ»:[1] Ի վերջո, ոչինչ հիրավի կորսված չէ Նրա համար:[2]

Ես կկամենայի այսօր ձեզ հետ կիսվել ինձ համար մի շատ թանկ պատմությամբ այն մասին, թե ես ինքս ինչպես գտնվեցի:

Իմ 15 տարին լրանալուց առաջ իմ քեռին՝ Մանուել Բուստոսը, հրավիրեց ինձ որոշ ժամանակ անցկացնել իր և իր ընտանիքի հետ այստեղ՝ Միացյալ Նահանգներում: Դա լավ հնարավորություն կլիներ, որ ես անգլերեն սովորեի: Իմ քեռին միացել էր Եկեղեցուն շատ տարիներ առաջ և հրաշալի միսիոներական հոգի ուներ: Հավանաբար, դրա համար իմ մայրը, առանց իմ գիտության, խոսել էր նրա հետ և ասել, որ ինքը կընդունի հրավերը մի պայմանով, որ նա չփորձի համոզել ինձ դառնալ իր Եկեղեցու անդամ: Մենք կաթոլիկ էինք, մենք կաթոլիկ ենք եղել բազմաթիվ սերունդներ, և պատճառ չկար փոխվելու: Իմ քեռին լիովին համաձայն էր և պահում էր իր խոստումն այն աստիճան, որ անգամ չէր ցանկանում պատասխանել Եկեղեցու մասին իմ պարզ հարցերին:

Իհարկե, իմ քեռին ու նրա հրաշալի կինը՝ Մարջորին, չէին կարող խուսափել լինել այն, ինչ իրականում կային:[3]

Ինձ հատկացրին մի սենյակ, որը մեծ գրադարան ուներ: Ես տեսա, որ այդ գրադարանում կոպիտ հաշվարկով կար Մորմոնի Գրքի 200 օրինակ տարբեր լեզուներով, որոնցից 20-ը՝ իսպաներեն:

Մի օր հետաքրքրությունից դրդված, ես վերցրի Մորմոնի Գրքի մի օրինակ իսպաներենով:

Դա այն օրինակներից մեկն էր՝ վառ կապույտ փափուկ կազմով, որի վրա կար Մորոնի հրեշտակի պատկերը: Երբ բացեցի այն, առաջին էջի վրա գրված էր հետևյալ խոստումը. «Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:

Ապա ավելացնում էր. «Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[4]

Դժվար է բացատրել այն ազդեցությունը, որ այս սուրբ գրություններն ունեցան իմ մտքի ու սրտի վրա: Անկեղծ ասած, ես «ճշմարտություն» չէի փնտրում: Ես պարզապես պատանի էի, ապրում էի երջանիկ կյանքով և վայելում էի այդ նոր մշակույթը:

Այնուամենայնիվ, մտքում ունենալով այդ խոստումը, ես գաղտնի սկսեցի կարդալ գիրքը: Երբ շարունակեցի կարդալ, հասկացա, որ եթե ես իրոք ցանկանում էի ինչ-որ բան քաղել դրանից, պետք է սկսեի աղոթել: Իսկ մենք բոլորս շատ լավ գիտենք, թե ինչ է պատահում, երբ դուք որոշում եք ոչ միայն կարդալ, այլև աղոթել Մորմոնի Գրքի վերաբերյալ: Դա հենց այն էր, ինչ կատարվեց ինձ հետ: Դա այնքան հատուկ բան էր և այնքան անզուգական, այո, նույնը, ինչ պատահել է միլիոնավոր մարդկանց հետ ամբողջ աշխարհում: Սուրբ Հոգու զորությամբ ես հասկացա, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

Հետո ես զնացի իմ քեռու մոտ՝ բացատրելու, թե ինչ էր պատահել և ասելու, որ ես պատրաստ էի մկրտվելու: Իմ քեռին չկարողացավ թաքցնել իր զարմանքը: Նա նստեց իր ավտոմեքենան, գնաց օդանավակայան, ապա վերադարձավ ինքնաթիռի իմ հետդարձի տոմսով և իմ մայրիկին ուղղված մի երկտողով, որում պարզապես ասվում էր. «Ես ոչ մի առնչություն չունեմ սրա հետ»:

Ինչ-որ իմաստով նա ճիշտ էր: Ես ուղղակի գտնվել էի Մորմոնի Գրքի զորությամբ:

Ամբողջ աշխարհում կարող են լինել շատ մարդիկ, ովքեր գտնվել են մեր հրաշալի միսիոներների կողմից՝ ամեն անգամ որևէ հրաշագործ եղանակով: Կամ զուցե նրանք գտնվել են ընկերների միջոցով, որոնց Աստված դիտավորյալ դրել է նրանց ճանապարհին: Կարող է նույնիսկ պատահել, որ նրանք գտնվել են այս սերնդից ինչ-որ մեկի կամ իրենց նախնիներից մեկի կողմից:[5] Ինչ էլ որ լինի, որպեսզի առաջ ընթանան դեպի ճշմարիտ դարձ, վաղ թե ուշ նրանք բոլորը պետք է զգան և գտնվեն Մորմոնի Գրքում պարունակվող ճշմարտությունների զորությամբ: Միևնույն ժամանակ նրանք պետք է անձամբ լուրջ պարտավորություն ստանձնեն Աստծո հանդեպ, որ կձգտեն պահել Նրա պատվիրանները:

Երբ վերադարձա Բուենոս Այրես, իմ մայրը հասկացավ, որ ես իրոք

ցանկանում էի մկրտվել: Քանի որ ես ապստամբ հոգի ունեի, ընդդիմանալու փոխարեն նա շատ իմաստուն կերպով աջակցեց ինձ իմ որոշման մեջ: Եվ նույնիսկ առանց իմանալու այդ, նա՝ ինքը, անցկացրեց իմ մկրտության հարցազրույցը: Իսկապես, ես կարծում եմ, որ նրա հարցազրույցը նույնիսկ ավելի մանրամասն էր, քան մեր միսիոներների հարցազրույցը: Նա ասաց ինձ. «Եթե դու ցանկանում ես մկրտվել, ես կաջակցեմ քեզ: Բայց նախ ես պատրաստվում եմ մի քանի հարց տալ քեզ և ցանկանում եմ, որ դու շատ խորը մտածես ու ազնվորեն պատասխանես: Դու պարտավորվո՞ւմ ես ամեն կիրակի անպայման հաճախել եկեղեցի»:

Ես ասացի նրան. «Այո, իհարկե, ես պատրաստվում եմ անել այդ»:

«Դու գաղափար ունե՞ս, թե ինչքան է տևում կիրակնօրյա եկեղեցին»:

«Այո, ես գիտեմ»,- ասացի ես:

Նա պատասխանեց. «Դե, եթե դու մկրտվես, ես պիտի համոզվեմ, որ դու կհաճախես եկեղեցի»: Հետո նա հարցրեց ինձ, արդյոք ես իսկապես պատրաստ եմ երբեք ալկոհոլ չօգտագործել կամ չծխել:

Ես պատասխանեցի. «Իհարկե, ես պատրաստվում եմ հնազանդվել այդ կանոնին, ևս»:

Ինչին նա ավելացրեց. «Եթե դու մկրտվես, ես պիտի համոզվեմ, որ դու կհետևես դրան»: Հետո այդ ձևով շարունակեց քննել ինձ յուրաքանչյուր պատվիրանի վերաբերյալ:

Իմ քեռին զանգել էր մայրիկիս և ասել, որ նա չանհանգստանա, և որ ես շուտով կհաղթահարեմ այդ ամենը: Չորս տարի անց, երբ ես ստացա Ուրուգվայ Մոնտեվիդեո միսիայում ծառայելու իմ կանչը, մայրս զանգահարեց քեռուս և հարցրեց, թե ես ճշգրտորեն երբ էի պատրաստվում հաղթահարել այդ ամենը: Ճշմարտությունն այն է, որ այն ժամանակից ի վեր, երբ ես մկրտվեցի, նա ամենաերջանիկ մայրն էր:

Ես հասկացա, որ Մորմոնի Գիրքը վճռորոշ էր դարձի գործընթացում, քանի որ անձամբ էի զգում խոստումը, որ «ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն»:[6]

Նեփին այսպես է բացատրել է Մորմոնի Գրքի հիմնական նպատակը.

«Մենք աշխատում ենք ջանասիրաբար՝ գրելու և համոզելու մեր զավակներին, նաև մեր եղբայրներին հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ: . . .

Եվ [այսպիսով] մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, . . . որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:[7]

Ամբողջ Մորմոնի Գիրքը լի է այդ նույն սրբազան նպատակով:

Այս պատճառով ցանկացած ընթերցող, ով անկեղծորեն ուսումնասիրում է այն աղոթքի ոգով, ոչ միայն կսովորի Քրիստոսի մասին, այլև կսովորի *Քրիստոսից*: Հատկապես, եթե նրանք որոշում կայացնեն «փորձե[լ] Աստծո խոսքի ուժը»[8] և հապճեպ չմերժեն այն՝ կանխակալ անհավատության պատճառով,[9] ինչ ուրիշներն ասել են այն բաների մասին, որոնք երբեք չեն կարդացել:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Երբ ես մտածում եմ Մորմոնի Գրքի մասին, միշտ հիշում եմ *զորություն* բառը: Մորմոնի Գրքի ճշմարտությունները *զորություն* ունեն բժշկելու, սփոփելու, վերականգնելու, սատար կանգնելու, զորացնելու, մխիթարելու և քաջալերելու մեր հոգիները»:[10]

Այսօր ես հրավիրում եմ մեզ բոլորիս, անկախ նրանից, թե որքան ժամանակ ենք եկեղեցու անդամ, թույլ տալ, որ Մորմոնի Գրքի

ճշմարտությունների զորությունը գտնի և ընդունի մեզ կրկին և օրեցօր, մինչ մենք ջանասիրաբար փնտրում ենք անձնական հայտնություն: Այն կվարվի այդպես, եթե մենք թույլ տանք:

Ես հանդիսավոր վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը և, որ Սուրբ Հոգին ժամանակ առ ժամանակ կհաստատի դրա ճշմարտությունը բոլոր նրանց, ովքեր անկեղծ սրտով գիտելիք են փնտրում իրենց հոգիների փրկության համար:[11] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս 15.6, տես նաև Ղուկաս 15.9, 32:
2. Լայն իմաստով սուրբ գրությունները բացատրում են մարգարեություններ, որոնք պատմում են Իսրայելի կորսված ցեղերի հավաքման մասին (տես Ռասսել Մ. Նելսոն, «Ցրված Իսրայելի հավաքումը», *Լիահոնա,* նոյեմբեր 2006, 79–82): Չնայած նրանք կորսված են, սակայն կորսված չեն Նրա համար (տես 3 Նեփի 17.4): Հետաքրքիր է նշել նաև, որ նրանք չեն գիտակցում, որ իրենք կորսված են, մինչև իրենց գտնվելու ժամանակը, հատկապես երբ ստանում են իրենց հայրապետական օրհնությունը:
3. Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆը մեջբերել է Ասիսի Սբ. Ֆրանցիսկոսի խոսքերը. «Բոլոր ժամանակներում քարոզիր ավետարանը, իսկ եթե անհրաժեշտ է, օգտագործիր բառեր» («Սպասելով Դամասկոսի ճանապարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 77; see also William Fay and Linda Evans Shepherd, *Share Jesus without Fear* [1999], 22):
4. Մորոնի 10.4–5:
5. Մեր նախնիի դարձի պատմությունը նույնպես մեր պատմությունն է: Երեց Վիլյամ Ռ. Վոքերը ուսուցանել է. «Հրաշալի կլիներ, եթե Վերջին Օրերի յուրաքանչյուր Սուրբ իմանար իր նախահայրերի դարձի պատմությունը» («Ապրեք հավատքին հավատարիմ», *Լիահոնա,* մայիս 2014, 97): Ուստի մենք բոլորս ինչ-որ ձևով գտնվել ենք ուղղակիորեն կամ մեր նախնիների միջոցով, ի երախտագիտություն մեր Երկնային Հորը, ով գիտե վերջը ի սկզբանե (տես Աբրահամ 2.8):
6. Մորմոնի Գրքի նախաբանը, տես նաև Ալմա 31.5:
7. 2 Նեփի 25.23, 26:
8. Ալմա 31.5:
9. Տես Ալմա 32.28:
10. Ռասսել Մ. Նելսոն. «Վկայություն Մորմոնի Գրքի մասին. Ինչպիսի՞ն կլինի ձեր կյանքն առանց նրա»: *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 62:
11. Տես 3 Նեփի 5.20:

ՆԱԽԱԳԱՀ ՌԱՍՍԵԼ Մ. ՆԵԼՍՈՆ

Վկաներ, Ահարոնյան Քահանայության քվորումներ, Երիտասարդ Կանանց դասարաններ

Փոփոխությունները, որոնք մենք այժմ կհայտարարենք, նպատակ ունեն օգնել երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց զարգացնել իրենց անձնական սրբազան ներուժը:

Միրելի՛ եղբայրներ և քույրեր, հրաշալի է կրկին ձեզ հետ լինել այս գերագույն համաժողովին: Շաբաթվա սկզբում Եկեղեցու անդամներին հայտարարվեց քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելու մասին առ այն, թե ովքեր կարող են ծառայել որպես վկաներ մկրտության և կնքման արարողությունների ժամանակ: Կցանկանայի առանձնացնել այդ երեք կետերը:

1. Մահացած անձի փոխարինող մկրտության ժամանակ կարող է վկա լինել յուրաքանչյուր ոք, ով կրում է գործող տաճարային երաշխավորագիր, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման երաշխավորագիր:
2. Օժտում ստացած ցանկացած անդամ, ով կրում է գործող տաճարային երաշխավորագիր, կարող է ծառայել ապրող անձանց կամ փոխարինողների միջոցով կնքման արարողությունների վկա:
3. Եկեղեցու ցանկացած մկրտված անդամ կարող է ծառայել որպես վկա ապրող անձի մկրտության ժամանակ: Այս փոփոխությունը վերաբերում է տաճարից դուրս բոլոր մկրտություններին:

Քաղաքականության այս ճշգրտումները ընթացակարգային են: Հիմքում ընկած վարդապետություններն ու ուխտերն անփոփոխ են: Բոլոր արարողություններում դրանք հավասարապես արդյունավետ են: Այս փոփոխությունները պետք է մեծապես խթանեն ընտանիքների մասնակցությունը այդ արարողություններին:

Այսօր նաև ուզում էի ձեզ ներկայացնել նաև այն փոփոխությունները, որոնք վերաբերում են մեր երիտասարդներին և նրանց ղեկավարներին:

Դուք կհիշեք, որ ես հրավիրեցի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու երիտասարդներին ընդգրկվել Տիրոջ երիտասարդների գումարտակում, որպեսզի մասնակցեն Երկրի վրա այսօր գոյություն ունեցող ամենամեծ գործին՝ Իսրայելի հավաքմանը:[1] Այս հրավերը ես հղեցի մեր երիտասարդներին, քանի որ նրանք առանձնապես շնորհալի են՝ ուրիշների հետ կապ հաստատելու և համոզիչ ձևով հաղորդելու այն, ինչին հավատում են: Հավաքման գործը կարևոր է՝ աշխարհը և մարդկանց Տիրոջ Երկրորդ Գալուստին նախապատրաստելու համար:

Յուրաքանչյուր ծխում Տիրոջ երիտասարդների գումարտակը ղեկավարում է եպիսկոպոսը՝ Աստծո մի նվիրված ծառա: Նրա առաջին և ամենակարևոր պարտականությունն է հոգ տանել իր ծխի երիտասարդ տղաների և երիտասարդ աղջիկների մասին: Եպիսկոպոսը և նրա խորհրդականները ծխերում ղեկավարում են Ահարոնյան քահանայության քվորումների և Երիտասարդ կանանց դասարանների աշխատանքը:

Փոփոխությունները, որոնք մենք այժմ կհայտարարենք, նպատակ ունեն օգնել երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց զարգացնել իրենց անձնական սրբազան ներուժը: Մենք ուզում ենք նաև ամրապնդել Ահարոնյան Քահանայության քվորումները և Երիտասարդ կանանց դասարանները, ինչպես նաև աջակցություն ցուցաբերել եպիսկոպոսներին և չափահաս մյուս ղեկավարներին՝ աճող սերնդին ծառայելու գործում:

Երեց Քվենթին Լ. Քուքն այժմ կքննարկի այն փոփոխությունները, որոնք վերաբերում են երիտասարդ տղամարդկանց: Եվ այսօր երեկոյան, կանանց գերագույն նիստի ժամանակ Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ Քույր Բոննի Հ. Քորդոնը կքննարկի այն փոփոխությունները, որոնք վերաբերում են երիտասարդ կանանց:

Առաջին Նախագահությունը և Տասներկուսը միավորված են մեր երիտասարդությանը զորացնելուն ուղղված այս ջանքերը հաստատելու գործում: Օ՜, որքան ենք մենք սիրում նրանց և աղոթում նրանց համար: Նրանք «Իսրայելի հույսն են, Սիոնի բանակը, խոստացված օրվա զավակները»:[2] Մենք մեր լիակատար վստահությունն ու երախտագիտությունն ենք հայտնում մեր երիտասարդներին: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» (երիտասարդների համաշխարհային հոգևոր հավաք, հունիսի 3, 2018թ.), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org:
2. “Hope of Israel,” *Hymns,* no. 259.

ԵՐԵՑ ՔՎԵՆԹԻՆ Լ. ՔՈՒՔ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Փոփոխություններ երիտասարդներին զորացնելու համար

Ավելի շատ երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք կարձագանքեն կոչին և կմնան ուխտի արահետում մեր երիտասարդների վրա այդպիսի լազերանման կիզակետի շնորհիվ:

Շնորհակալություն, սիրելի Նախագահ Նելսոն, այդ ուրախալի հայտնությամբ առաջնորդելու համար, որը վերաբերում է մկրտություններին մասնակցող վկաներին, և ուղղորդման համար, որով խնդրել եք մեզ կիսվել, որ օգնենք զորացնել երիտասարդներին և զարգացնենք նրանց սրբազան ներուժը:

Նախքան այդ փոփոխություններով կիսվելը, մենք մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում այն բացառիկ ուղու համար, որով անդամներն արձագանքեցին ավետարանի շարունակվող Վերականգնման զարգացումներին: Ինչպես Նախագահ Նելսոնն առաջարկեց անցյալ տարի, դուք խմել եք ձեր վիտամինները:[1]

Դուք ուրախությամբ ուսումնասիրում եք *Եկ, հետևիր ինձ* ձեռնարկը տանը:[2] Դուք նաև արձագանքեցիք եկեղեցում կատարվող փոփոխություններին: Երեցների քվորումի անդամները և Սփոփող Միության քույրերը միասնաբար կատարում են փրկության աշխատանքը:[3]

Մեր երախտագիտությունն անսահման է:[4] Մենք հատկապես երախտապարտ ենք, որ մեր երիտասարդությունը շարունակում է մնալ ուժեղ և հավատարիմ:

Մեր երիտասարդությունն ապրում է հուզիչ, բայց նաև դժվարին ժամանակներում: Հասանելի ընտրությունները երբեք ավելի ցնցող չեն եղել: Մեկ օրինակ. ժամանակակից սմարթֆոնները հասանելիություն են ապահովում աներևակայելի կարևոր և վեհացնող տեղեկատվության համար, ներառյալ՝ ընտանեկան պատմությունը և սուրբ գրությունները: Մյուս կողմից, այն պարունակում է հիմարություն, անբարոյականություն և չարիք, որը հեշտությամբ մատչելի չէր անցյալում:

Որպեսզի օգնենք մեր երիտասարդներին կողմնորոշվել ընտրությունների այդ լաբիրինթոսում, Եկեղեցին պատրաստել է երեք խորը և բազմակողմանի նախաձեռնություններ: Առաջինը, ուսումնական ծրագիրը ուժեղացվել է և տարածվել է դեպի տուն: Երկրորդը երեխաների և երիտասարդների մի ծրագիր է, որը ներառում է հետաքրքիր միջոցառումներ և անհատական զարգացում, և ներկայացվեց անցյալ կիրակի Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի, Նախագահ Մ. Ռասսել Բալլարդի և Բարձրագույն Պաշտոնյաների կողմից: Երրորդ նախաձեռնությունը կազմակերպչական փոփոխություններ են՝ երիտասարդությանը եպիսկոպոսների և մյուս ղեկավարների ավելի նշանակալի կիզակետը դարձնելու համար: Այդ կիզակետը պետք է լինի հոգևորապես հզոր և օգնի մեր երիտասարդներին դառնալ այն երիտասարդական գումարտակը, որը Նախագահ Նելսոնը խնդրել է նրանց դառնալ:

Փոխկապակցված ձևաչափեր

Այս նախաձեռնությունները, վերջին մի քանի տարիների ընթացքում հայտարարվածների հետ միասին, մեկուսացած փոփոխություններ չեն: Փոփոխություններից յուրաքանչյուրը հանդիսանում է փոխկապակցված ձևաչափի անբաժանելի մասը՝ օրհնելու Սրբերին և նախապատրաստելու նրանց հանդիպել Աստծուն:

Ձևաչափի մի մասը կապված է աճող սերնդի հետ: Մեր երիտասարդությանը խնդրում ենք ավելի շատ անձնական պատասխանատվություն վերցնել փոքր տարիքում. ծնողները և ղեկավարները չստանձնեն այն, ինչ

երիտասարդները կարող են ինքնուրույն անել իրենց համար:[5]

Հայտարարություն

Այսօր մենք հայտարարում ենք կազմակերպչական փոփոխություններ երիտասադների համար ծխի և ցցի մակարդակով: Ինչպես Նախագահ Նելսոնը բացատրեց, Քույր Բոննի Հ. Քորդոնը կքննարկի փոփոխությունները Երիտասարդ Կանանց համար այս երեկո: Փոփոխությունների նպատակներից մեկը, որը ես կքննարկեմ այժմ, Միարոնյան Քահանայություն կրողների, քվորումների և քվորումի նախագահությունների ուժեղացումն է: Այդ փոփոխությունները համահունչ են Վարդապետություն և Ուխտեր 107.15-ում նշված մեր գործելակերպին, որտեղ ասվում է. «Եպիսկոպոսությունն այս [Միարոնյան] քահանայության նախագահությունն է, և կրում է նույնի բանալիներն ու իշխանությունը»:

Եպիսկոպոսի սուրբգրային պարտականություններից մեկը քահանաներին նախագահելն է և նրանց հետ խորհրդի նստելը՝ սովորեցնելով նրանց իրենց պաշտոնի պարտականությունները:[6] Բացի այդ, առաջին խորհրդականը եպիսկոպոսությունում կունենա հատուկ պատասխանատվություն ուսուցիչների համար, իսկ երկրորդ խորհրդականը՝ սարկավագների համար:

Հետևաբար, որպեսզի համահունչ լինենք Վարդապետություն և Ուխտերի այդ հայտնության հետ, Երիտասարդ տղամարդկանց նախագահությունները ծխի մակարդակում կդադարեցվեն: Այդ հավատարիմ եղբայրները շատ բարիք են արել և մենք շնորհակալություն ենք հայտնում նրանց:

Մենք հուսով ենք, որ եպիսկոպոսությունները մեծ շեշտ կդնեն և կկենտրոնանան երիտասարդ տղամարդկանց քահանայության պարտականությունների վրա և կօգնեն նրանց իրենց քվորումի պարտականություններում: Չափահաս Երիտասարդ ընդունակ տղամարդիկ կկանչվեն խորհրդատուներ, որպեսզի օգնեն Միարոնյան Քահանայության քվորումի նախագահություններին և եպիսկոպոսությանը իրենց պարտականություններում:[7]

Մենք վստահ ենք, որ ավելի շատ երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք կարձագանքեն կոչին և կմնան ուխտի արահետում մեր երիտասարդների վրա այդպիսի լազերանման կիզակետի շնորհիվ:

Տիրոջ ոգեշնչված օրինակով եպիսկոպոսը ծխում պատասխանատվություն է կրում ամենքի համար: Նա օրինում է երիտասարդների ծնողներին ինչպես նաև երիտասարդներին: Մի եպիսկոպոս պարզեց, որ երբ ինքը խորհրդակցում էր մի երիտասարդ տղամարդու հետ, ով մաքառում էր պոռնոգրաֆիայի դեմ, կարողացավ օգնել երիտասարդին իր ապաշխարության գործընթացում միայն այն ժամանակ,երբ նա օգնեց ծնողներին սիրով և հասկացողությամբ արձագանքել խնդրին: Երիտասարդ տղամարդու բժշկումը բժշկում էր իր ընտանիքի համար և հնարավոր եղավ եպիսկոպոսի միջոցով, ով աշխատում էր ողջ ընտանիքի անունից: Երիտասարդ տղամարդն այժմ դարձել է արժանի Մելքիսեդեկյան Քահանայություն կրող և լիաժամկետ միսիոներ:



Ինչպես այս պատմությունն է հուշում, այս ճշգրտումները պետք է.

- Օգնեն եպիսկոպոսներին և նրանց խորհրդականներին՝ կենտրոնանալ երիտասարդների և Երեխաների միության հանդեպ իրենց հիմնական պարտականությունների վրա:
- Միարոնյան Քահանայության զորությունն ու պարտականությունները դնեն յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու անձնական կյանքի և նպատակների կենտրոնում:

Այս փոփոխությունները նաև.

- Շեշտադրում են Միարոնյան քահանայության քվորումի նախագահությունների պարտականությունները և նրանց ուղիղ գծով հաշվետվությունը եպիսկոպոսությանը:
- Խրախուսեք չափահաս ղեկավարներին աջակցել և ուսուցանել Միարոնյան Քահանայության քվորումի նախագահություններին՝ բարձրացնելով նրանց պաշտոնի զորությունն ու ազդեցությունը:

Ինչպես նշվեց, այս ճշգրտումները չեն նվազեցնում *երիտասարդ կանանց համար*եպիսկոպոսության պատասխանատվությունը: Ինչպես Նախագահ Նելսոնը հենց նոր ուսուցանեց. «[Եպիսկոպոսի] առաջին և ամենակարևոր պարտականությունն է հոգ տանել իր ծխի երիտասարդ տղամարդկանց և *երիտասարդ կանանց* մասին»:[8]

Ինչպե՞ս են մեր սիրելի և աշխատասեր եպիսկոպոսները կատարում այդ պարտականությունը: Ինչպես հիշում եք 2018 թվականին Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները հարմարեցվեցին նույնիսկ ավելի սերտորեն աշխատելու Սփոփող Միությունների հետ, որպեսզի երեցների քվորումները և Սփոփող Միությունները եպիսկոպոսի ղեկավարությամբ կարողանան օգնել կատարել կարևոր պարտականությունները, որոնք նախկինում խլում էին նրա ժամանակի մեծ մասը: Այդ

պարտականությունները ներառում են՝ միսիոներական աշխատանքը և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքը ծխում,[9] ինչպես նաև ծխի անդամների սպասավորման մեծ մասը:

Եպիսկոպոսը *չի կարող* լիազորել որոշ պարտականություններ, ինչպես օրինակ՝ զորացնել երիտասարդներին, լինել ընդհանուր դատավոր, հոգ տանել կարիքավորների մասին, վերահսկել ֆինանսները և աշխարհիկ գործերը: Սակայն սրանք, ավելի քիչ են, քան մենք կարող էինք հասկանալ նախկինում: Ինչպես Ջեֆրի Ռ. Հոլլանդը բացատրեց անցյալ տարի, երբ Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների փոփոխությունները հայտարարվեցին. «Եպիսկոպոսը անշուշտ մնում է ծխում նախագահող քահանայապետը: [Երեցների քվորումների և Սփոփող Միությունների] այս նոր համաձայնեցումը նրան թույլ կտա նախագահել Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության աշխատանքի վրա՝ *առանց պահանջելու, որ նա կատարի այդ երկու մարմիններից որևէ մեկի աշխատանքը.*»[10]

Օրինակ, Սփոփող Միության նախագահը և երեցների քվորումի նախագահը, ինչպես հանձնարարված է, կարող են ավելի մեծ դեր ստանձնել չափահասների հետ խորհրդատվություն իրականացնելիս, *ինչպես կարող է Երիտասարդ Կանանց նախագահը երիտասարդ կանանց հետ խորհրդատվություն իրականացնել:* Թեև միայն եպիսկոպոսը կարող է ծառայել որպես ընդհանուր դատավոր, այս մյուս առաջնորդները նույնպես իրավունք ունեն երկնքից հայտնություն ստանալ՝ օգնելու այն մարտահրավերների դեպքում, որոնք չեն պահանջում ընդհանուր դատավոր կամ կապված չեն որևէ տեսակի չարաշահումների հետ:[11]

Դա չի նշանակում, որ երիտասարդ կինը չի կարող կամ չպետք է խոսի եպիսկոպոսի կամ իր ծնողների հետ: Նրանց կիզակենտրոնը երիտասարդությունն է: Բայց դա իրոք նշանակում է, որ երիտասարդ կանանց ղեկավարը լավագույնս կարող է օգնել երիտասարդ կնոջը անձնական կարիքները

լուծելու հարցում: Եպիսկոպոսությունը նույնքան մտահոգված է երիտասարդ կանանց համար, որքան երիտասարդ տղամարդկանց համար, բայց մենք ընդունում ենք այն ուժը, որը գալիս է ուժեղ, մտահոգ և կենտրոնացած Երիտասարդ Կանանց ղեկավարներից, ովքեր սիրում են և սովորեցնում՝ իրենց վրա չվերցնելով դասարանի նախագահությունների դերը, այլ օգնում են երիտասարդներին հաջողության հասնել այդ դերերում:

Քույր Քորդոնը կկիսվի երիտասարդ կանանց համար լրացուցիչ հետաքրքիր փոփոխություններով: Ես, համենայն դեպս, հայտարարում եմ, որ ծխի Երիտասարդ Կանանց նախագահները այժմ հաշվետու են և խորհրդակցում են ուղիղ ծխի նախագահի հետ: Անցյալում այդ հանձնարարությունը կարող էր լիազորվել որևէ խորհրդականի, բայց առաջ գնալով, երիտասարդ կանայք կլինեն այն մեկի անմիջական պարտականությունը, ով կրում է ծխի համար նախագահելու բանալիները: Սփոփող Միության նախագահը կշարունակի հաշվետվություն տալ ուղիղ եպիսկոպոսին:[12]

Գերագույն և ցցի մակարդակներում մենք կշարունակենք ունենալ Երիտասարդ տղամարդկանց նախագահություններ: Ցցի մակարդակում մի բարձրագույն խորհրդական կլինի Երիտասարդ տղամարդկանց նախագահը,[13] և բարձրագույն խորհրդականների հետ, ովքեր նշանակված են Երիտասարդ Կանանց և Երեխաների Միությանը, կընդգրկվեն ցցի Ահարոնյան Քահանայության և Երիտասարդ Կանանց հանձնաժողովում: Այդ եղբայրները կաշխատեն ցցի Երիտասարդ Կանանց նախագահության հետ այդ հանձնաժողովում: Ցցի նախագահի որևէ խորհրդականի մասնակցությամբ որպես նախագահող, այս հանձնաժողովը ձեռք կբերի ավելի մեծ կարևորություն, որովհետև «Երեխաներ և երիտասարդներ» նոր նախաձեռնության շատ ծրագրեր և միջոցառումներ կլինեն ցցի մակարդակով:

Այս բարձրագույն խորհրդականները ցցի նախագահության ղեկավարությամբ, կարող են ծառայել, որպես ռեսուրս եպիսկոպոսի և Ահարոնյան Քահանայության քվորումների համար, նույն ձևով ինչպես բարձրագույն խորհրդականները ծառայություն են մատուցում ծխի երեցների քվորումներին:

Որպես սրա հետ կապված հարց, մեկ այլ բարձրագույն խորհրդական կծառայի որպես ցցի կիրակնօրյա դպրոցի նախագահ և, ըստ անհրաժեշտության, կարող է ծառայել ցցի Ահարոնյան Քահանայության և Երիտասարդ Կանանց հանձնաժողովում:[14]

Լրացուցիչ կազմակերպչական փոփոխությունները հետագայում կբացատրվեն ղեկավարներին ուղարկվող տեղեկություններում: Այդ փոփոխությունները ներառում են.

- Եպիսկոպոսության երիտասարդների հանձնաժողովի ժողովը կփոխարինվի «ծխի երիտասարդների խորհուրդ»-ով:
- «Միացյալ միջոցառումներ» եզրույթը կհանվի և կփոխարինվի «Երիտասարդ կանանց միջոցառումներ», «Ահարոնյան Քահանայության քվորումի միջոցառումներ» կամ «երիտասարդների միջոցառումներ» եզրույթներով և, հնարավորության դեպքում, տեղի կունենան ամեն շաբաթ:
- Ծխի բյուջեն երիտասարդների միջոցառումների համար պետք է բաժանվի Երիտասարդ տղամարդկանց և Երիտասարդ կանանց կազմակերպությունների միջև՝ յուրաքանչյուր կազմակերպությունում երիտասարդների թվաքանակի համաձայն: Բավականաչափ գումար կտրվի Երեխաների Միության միջոցառումների համար:
- Բոլոր մակարդակներում՝ ծխի, ցցի, և գերագույնի, մենք

կօգտագործենք «կազմակերպություն» եզրույթը «օժանդակ» բառի փոխարեն: Նրանք, ովքեր ղեկավարում են Գերագույն Սփոփող Միությունը, Երիտասարդ Կանանց, Երիտասարդ Տղամարդկանց, Երեխաների Միությունը և Կիրակնօրյա Դպրոցի կազմակերպությունները, կկոչվեն որպես «Բարձրագույն պաշտոնյաներ»: Նրանք, ովքեր ղեկավարում են կազմակերպությունները ծխի և ցցի մակարդակներում, կկոչվեն «ծխի պաշտոնյաներ» և «ցցի պաշտոնյաներ»:[15]

Փոփոխությունները, որոնք հայտարարվեցին այսօր, կսկսվեն հենց որ ծխերը, շրջանները և ցցերը պատրաստ լինեն, բայց պետք է ավարտին հասցվեն մինչև 2020թ.-ի հունվարի 1-ը: Երբ այս փոփոխությունները միացվեն և համատեղվեն նախորդ փոփոխությունների հետ, կներկայացնեն հոգևոր և կազմակերպչական նախաձեռնություն՝՝ վարդապետության համաձայն օրինելով և զորացնելով ամեն տղամարդու, կնոջ, երիտասարդի և երեխայի, օգնելով յուրաքանչյուրին հետևել մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի օրինակին, մինչ առաջադիմում ենք ուխտի արահետում:

Միրելի՛ եղբայրներ և քույրեր, ես խոստանում եմ և վկայում, որ այս բազմակողմանի փոփոխությունները, Ռասսել Մ. Նելսոնի՝ ոգեշնչված նախագահի և մարգարեի առաջնորդությամբ, արտոնություն կտա և կզորացնի Եկեղեցու յուրաքանչյուր անդամի: Մեր երիտասարդները կզարգացնեն ավելի մեծ հավատք Փրկիչի հանդեպ, պաշտպանված կլինեն հակառակորդի գայթակղություններից, կկանգնեն պատրաստ՝ հանդիպելու կյանքի մարտահրավերներին: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Վերջին Օրերի Սրբերի մարգարեն, կինը և առաքյալը կիսվում են գլոբալ սպասավորման գաղափարներով», Newsroom, Oct. 30, 2018, newsroom.ChurchofJesusChrist.org:
2. Բացի այդ, դուք հատուկ ջանքեր եք գործադրել՝ օգտագործելու Եկեղեցու ճիշտ անունը, ինչպես ուսուցանվել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից և ամեն անգամ հիշել եք մեր Փրկիչին սիրով և ակնածանքով:
3. «Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներն առաջ են ուղարկվում «աշխատելու նրա այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար» (Վարդապետություն և Ուխտեր 138.56): Փրկության աշխատանքը ներառում է՝ անդամների միսիոներական աշխատանքը, նորադարձների պահպանումը, քիչ ակտիվ անդամների ակտիվացումը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները և ավետարանի ուսուցումը: Եպիսկոպոսությունը ուղղորդում է ծխում այս աշխատանքը՝ աջակցվելով ծխի խորհրդի մյուս անդամների կողմից» (*Handbook 2: Administering the Church,* 5.0, ChurchofJesusChrist.org):
4. Որպես ղեկավարներ, մենք սիրում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին ձեր բարության և ձեր աշակերտության համար: Մենք հարգանքի տուրք ենք մատուցում անհատներին, մայրերին, հայրերին, երիտասարդներին և երեխաներին, ովքեր քայլում են ուխտի արահետով և այդ անում են նվիրվածությամբ և ուրախությամբ:
5. 2019թ.-ին 11 տարեկան սարկավագները սկսեցին բաժանել հաղորդությունը, իսկ 11 տարեկան երիտասարդ կանայք և երիտասարդ տղամարդիկ ստացան սահմանափակ օգտագործման տաճարային երաշխավորագրեր: Անցյալ տարի Նախագահ Նելսոնը կոչ արեց մեր երիտասարդ տղամարդկանց և կանանց ընդգրկվել երիտասարդական գումարտակում՝ վարագույրի երկու կողմում հավաքելու ցրված Իսրայելը (տես «Իսրայելի հույսը» [համաշխարհային հոգևոր երեկույթ, հունիսի 3, 2018], HopeofIsrael.ChurchofJesusChrist.org): Արձագանքը ցնցող էր:

   Լիաժամկետ միսիոներներն այժմ ծառայում են բացառիկ ձևով ավելի երիտասարդ տարիքում: Սկսած 2012 թ.-ի հոկտեմբերի 6-ից երիտասարդ տղամարդիկ իրավունք ունեն ծառայել 18 տարեկանից, իսկ երիտասարդ կանայք՝ 19 տարեկանից:
6. Նաև Ահարոնի Քահանայության վրա նախագահողի պարտականությունն է՝ նախագահել [այդ] քահանաների վրա և խորհրդի նստել նրանց հետ՝ նրանց ուսուցանելու իրենց պաշտոնի պարտականությունները: . . . Այս նախագահը պիտի լինի եպիսկոպոս. քանզի սա այդ քահանայության պարտականություններից մեկն է (Վարդապետություն և Ուխտեր 107.87–88):
7. Չափահաս ղեկավարները ևս կկոչվեն Ահարոնյան Քահանայության քվորումի մասնագետներ, որպեսզի օգնեն ծրագրերին և միջոցառումներին և հաճախեն քվորումի ժողովներին, որպեսզի եպիսկոպոսությունը կարողանա կանոնավորապես այցելել Երիտասարդ Կանանց դասերին և միջոցառումներին, իսկ և երբեմն՝ Երեխաների Միություն: Որոշ մասնագետներ կարող են կանչվել՝ օգնելու որոշակի միջոցառման, օրինակ՝ ճամբարին, մյուսները կարող են կանչվել երկարատև ժամկետով՝ օգնելու քվորումի խորհրդատուներին: Յուրաքանչյուր քվորումի ժողովում, ծրագրում կամ միջոցառման մեջ կլինեն միշտ երկու չափահաս տղամարդիկ Չնայած դերերը և կոչումները կփոխվեն, մենք չենք ակնկալում չափահաս տղամարդկանց թվի նվազեցում, ովքեր ծառայում են և աջակցում Ահարոնյան Քահանայության քվորումներին:
8. Ռասսել Մ. Նելսոն, «Վկաներ, Ահարոնյան Քահանայության քվորումներ և Երիտասարդ Կանանց դասարաններ», *Լիահոնա,* նոյեմբեր 2019, 39, շեշտադրումն ավելացված է, see also Ezra Taft Benson, “To the Young Women of the Church,” *Ensign,* Nov. 1986, 85:
9. Մենք նաև խորհուրդ ենք տալիս եպիսկոպոսներին ավելի շատ ժամանակ անցկացնել երիտասարդ չափահաս ամուրի անդամների և նրանց ընտանիքների հետ:
10. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, գերագույն համաժողովի ղեկավարների ժողով, ապրիլ 2018, տես նաև «Արդյունավետ սպասավորում», ministering .ChurchofJesusChrist.org: Երեց Հոլլանդն ուսուցանել է, որ պարտականությունները, որոնք եպիսկոպոսը չի կարող լիազորել, Ահարոնյան Քահանայության քվորումների և երիտասարդ կանանց վրա նախագահելն է, ընդհանուր դատավոր լինելը, ֆինանսները վերահսկելը, եկեղեցու աշխարհիկ գործերը և աղքատների ու կարիքավորների մասին հոգ տանելը: Երեցների քվորումը և Սփոփող Միության նախագահությունները և մյուսները կարող են ստանձնել հիմնական պատասխանատվություն՝ միսիոներական աշխատանքի, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի, ծխում ուսուցման որակի և Եկեղեցու անդամներին հսկելու և սպասավորելու համար:
11. Ընդհանուր դատավորի բանալիները պահանջող հանգամանքների դեպքում՝ ցանկացած տեսակի չարաշահման հարցերը պետք է որոշվեն եպիսկոպոսների կողմից՝ համաձայն Եկեղեցու քաղաքականության:
12. Ցցի Սփոփող Միության Նախագահը նույնպես կշարունակի հաշվետվություն ներկայացնել ուղիղ ցցի նախագահին:
13. Ցցի Երիտասարդ Տղամարդկանց նախագահի խորհրդականները կարող են կանչվել ցցի անդամներից կամ, անհրաժեշտության դեպքում, կարող է լինել բարձրագույն խորհրդական՝ նշանակված Երիտասարդ Կանանց համար և բարձրագույն խորհրդական՝ նշանակված Երեխաների Միության համար:
14. Եղբայրը, ով ծառայում է որպես Կիրակնօրյա դպրոցի նախագահ, ամեն ամիս երկու կիրակի նշանակալի պատասխանատվություն է կրում երիտասարդների ուսումնական ծրագրի համար:
15. Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց, Երիտասարդ Տղամարդկանց,Կիրակնօրյա Դպրոցի և Երեխաների Միության նախագահությունները գերագույն և ցցի մակարդակներում Բարձրագույն Պաշտոնյաներ են կամ ցցի պաշտոնյաներ: Ծխի մակարդակում եպիսկոպոսությունը ղեկավարում է երիտասարդ տղամարդկանց, այսպիսով երիտասարդ տղամարդկանց խորհրդատուները ծխի պաշտոնյաներ չեն:

ՄԱՐԿ Լ. ՓԵՅՍ
Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ

Եկ, հետևիր ինձ. Տիրոջ հակառազմավարությունը և կանխարգելող ծրագիրը

Տերը պատրաստում է Իր ժողովրդին հակառակորդի հարձակումների դեմ: Եկ, հետևիր ինձ. *Տիրոջ հակառազմավարությունը և կանխարգելող ծրագիրը:*

Մենք ուրախ ենք հանդիպել միմյանց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս մեծ գերագույն համաժողովում: Օրհնություն է՝ ստանալ Տիրոջ միտքն ու կամքը Իր մարգարեների և առաքյալների ուսմունքների միջոցով: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Տիրոջ ապրող մարգարեն է: Մենք անչափ երախտապարտ ենք, ստանալով Նրա ոգեշնչված խորհուրդն ու ուղղորդումը:

Ես ավելացնում եմ իմ վկայությունը հնչած վկայություններին: Ես բերում եմ իմ վկայությունը Աստծո՝ մեր Հավերժական Հոր մասին: Նա ապրում է, սիրում է մեզ և հոգ է տանում մեր մասին: Նրա երջանկության ծրագիրը ապահովում է օրհնություններ այս մահկանացու կյանքի համար և մեր վերադարձը՝ Նրա ներկայություն:

Ես նաև վկայում եմ Հիսուս Քրիստոսի մասին: Նա Աստծո Միածին Որդին է: Նա *փրկել է մեզ* մահից և փրկագնում է մեղքից, եթե մենք Նրա հանդեպ հավատք ենք գործադրում

և ապաշխարում ենք: Մեզ համար կատարած Նրա անսահման քավությունը բերում է մեզ անմահության և հավերժական կյանքի օրհնություններ: Իրոք՝ «Փա՛ռք Աստծուն Իր սուրբ Որդու անզուգական պարգևի համար», («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Լիահոնա,* մայիս 2017, շապիկի ներսի մասում):

Վերջին օրերի սրբերն ամբողջ աշխարհում օրհնված են՝ երկրպագելու Հիսուս Քրիստոսին Նրա տաճարներում: Այդ տաճարներից մեկը ներկայումս կառուցվում է Կանադայի Վինիպեգ քաղաքում: Ես և կինս՝ Աննե Մարին, հնարավորություն ունեցանք այս տարվա օգոստոսին այցելել շինարարական տարածք: Տաճարը շատ գեղեցիկ է նախագծված և, անշուշտ, շքեղ կլինի, երբ ավարտվի: Այնուամենայնիվ, հնարավոր չէ շքեղ տաճար ունենալ Վինիպեգում կամ այլ վայրում, առանց ամուր և հաստատուն հիմքի:

Վինիպեգում հողի սառեցման-հալեցման շրջանը և դրա արդյունքում հողի հետ տեղի ունեցող փոփոխությունները դժվարացնում էին տաճարի հիմքի կառուցումը: Հետևաբար, որոշվեց, որ տաճարի հիմքը բաղկացած կլինի պողպատե բետոնածածկ 70 ձողերից: Ձողերի երկարությունը 18 մետր է, իսկ տրամագիծը՝ 30–50 սմ: Դրանք այնքան խորն են խրվում գետնի մեջ, մինչև բախվեն մակերեսից մոտավորապես 15 մետր խորության վրա գտնվող պինդ հանքանյութին: Այս կերպ 70 ձողերն ամուր ու հաստատուն հիմք են ստեղծում Վինիպեգի գեղեցիկ տաճարի համար:

Որպես վերջին օրերի սրբեր, մեր կյանքում մենք փնտրում ենք նման ամուր ու հաստատուն հիմք՝ հոգևոր հիմք, որն անհրաժեշտ է մահկանացության և մեր երկնային տուն վերադառնալու ճամփորդությունն անցնելու համար: Այդ հիմքը զցված է դեպի Տեր Հիսուս Քրիստոսը մեր դարձի վեմի վրա:

Հիշենք Մորմոնի Գրքից Հելամանի ուսմունքները. «Եվ, այժմ, իմ որդիներ, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը

պտտահողմում, այո երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի» (Հելաման 5.12):

Բարեբախտաբար, մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ մարգարեներն ու առաքյալները սովորեցնում են մեզ Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին: Նրանց խորհուրդներին հետևելով, մենք հաստատուն հիմք կունենանք Քրիստոսում:

Մեկ տարի առաջ 2018 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի ներածական ելույթում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն այս հայտարարությունն ու զգուշացումը հղեց մեզ. «Եկեղեցու երկարատև նպատակն է՝ օգնել բոլոր անդամներին մեծացնել իրենց հավատքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, օգնել նրանց Աստծո հետ ուխտեր կապել և պահել դրանք, ինչպես նաև ամրապնդել և կնքել իրենց ընտանիքները: Այսօրվա դժվարին աշխարհում դա այնքան էլ հեշտ չէ: *Հակառակորդը մեծ պրագությամբ ավելացնում է հարձակումները հավատքի վրա, մեր վրա և ընտանիքների վրա:* Հոգևորապես գոյատևելու համար մեզ անհրաժեշտ են *հավատազմավարություն և կանխարգելող ծրագրեր*» («Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 7, շեշտադրումն ավելացված է):

Նախագահ Նելսոնի ուղերձից հետո Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուկը ներկայացրեց *Եկ, հետևիր ինձ* նյութը անհատների և ընտանիքների համար: Նրա ելույթում մասնավորապես ասվում էր.

- «Տնային ուսումնասիրության համար նախատեսված, նոր՝ *Եկ, հետևիր ինձ* նյութը . . . նախատեսված է օգնել անդամներին տանը սովորել ավետարանը»:
- «Այս նյութը նախատեսված է Եկեղեցու յուրաքանչյուր անհատի և ընտանիքի համար» [*Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար* (2019), vi]:

- «Մեր նպատակն է հավասարակշռել Եկեղեցու և տան փորձն այնպես, որ մեծանա հավատքը, հոգևորությունը և ամրապնդվի դարձը դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը»: («Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 9–10):

Այս տարվա հունվարից սկսած վերջին օրերի սրբերն ամբողջ աշխարհում սկսեցին ուսումնասիրել Նոր Կտակարանը *Եկ, հետևիր ինձ* նյութի օգնությամբ: Շաբաթական ծրագրով *Եկ, հետևիր ինձ* նյութն օգնում է մեզ ուսումնասիրել սուրբ գրությունները, ավետարանի վարդապետությունը և մարգարեների ու առաքյալների ուսմունքները: Դա բոլորիս համար հիանալի նյութ է:

Ի՞նչ ենք տեսնում ամբողջ աշխարհում այս ինը ամսվա ընթացքում սուրբ գրությունների ուսումնասիրության արդյունքում: Մենք տեսնում ենք, որ վերջին օրերի սրբերն ամենուրեք աճում են Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով ու նվիրվածությամբ: Մենք տեսնում ենք, որ անհատներն ու ընտանիքները ժամանակ են հատկացնում շաբաթվա ընթացքում, որ ուսումնասիրեն մեր Փրկիչի խոսքերը: Մենք տեսնում ենք, որ մեր կիրակնօրյա դասարաններում բարելավվում են ավետարանի քարոզները, երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները տանը և կիսվում ենք մեր մտքերով եկեղեցում: Մենք տեսնում ենք ավելի մեծ ընտանեկան ուրախություն և միասնություն, քանի որ փոխել ենք կարգը՝ սուրբ գրությունները պարզապես կարդալու փոխարեն ավելի խորն ենք ուսումնասիրում դրանք:

Ես արտոնություն ունեցա հանդիպել վերջին օրերի սրբերի հետ և լսել *Եկ, հետևիր ինձ* նյութի հետ կապված նրանց փորձի մասին: Նրանց հավատքի արտահայտությունները ուրախությամբ լցրեցին իմ սիրտը: Ահա մի քանի մեկնաբանություններ, որոնք ես լսել եմ աշխարհի տարբեր ծայրերի Եկեղեցու անդամներից.

- Մի հայր ասաց. «Ես սիրում եմ *Եկ, հետևիր ինձ* նյութը, քանի որ այն ինձ հնարավորություն է տալիս Փրկիչի մասին վկայել իմ երեխաներին»:
- Մեկ այլ ընտանիքում երեխաներից մեկն ասաց. «Լավ առիթ է լսել, երբ ծնողներս բերում են իրենց վկայությունները»:
- Մի մայր ասաց. «Մեզ ոգեշնչել է այն, թե ինչպես Աստծուն առաջին տեղը դասել: Ժամանակը, [որը մեր կարծիքով մենք չունեինք], [լցվել է] հույսով, ուրախությամբ, խաղաղությամբ և հաջողություններով այնպես, որ մենք չէինք պատկերացնում, որ դա հնարավոր է»:
- Մի ամուսնական զույգ ասել է. «Մենք սուրբ գրությունները կարդում ենք բոլորովին այլ կերպ, քան նախկինում էինք կարդում: Մենք ավելի շատ բան ենք սովորում, քան նախկինում: Տերը ցանկանում է, որ ամեն ինչ ուրիշ կերպ տեսնենք: Տերը պատրաստում է մեզ»:
- Մի մայրիկ նկատել է. «Ես սիրում եմ, որ միասին սովորում ենք նույն բաները: Նախկինում մենք կարդում էինք: Հիմա՝ սովորում ենք»:
- Մի քույր կիսվեց այս խորաթափանց հեռանկարով. «Նախկինում դուք դաս էիք անցկացնում, իսկ սուրբ գրությունները լրացնում էին այն: Այժմ, դուք ուսումնասիրում եք սուրբ գրությունները, իսկ դասը լրացնում է դրանք»:

- Քույրերից մեկն այսպես է մեկնաբանել. «Ես զգում եմ տարբերությունը, նյութն ուսումնասիրելու և դա չանելու միջև: Առաջին դեպքում ես ավելի հեշտ եմ շփվում մարդկանց հետ՝ խոսում Հիսուս Քրիստոսի և մեր համոզմունքների մասին»:
- Մի տատիկ ասել է. «Կիրակի օրերին ես կանչում եմ իմ երեխաներին և թոռներին, և մենք միասին կիսվում ենք մտքերով *Եկ, հետևիր ինձ* նյութից:
- Մի քույր ասել է. «*Եկ, հետևիր ինձ* նյութն այնպիսի ազդեցություն ունի, կարծես Փրկիչն անձամբ է սպասավորում ինձ: Այն երկնային ոգեշնչում ունի»:
- Մի հայր մեկնաբանել է. «Երբ մենք ուսումնասիրում ենք *Եկ, հետևիր ինձ* նյութը, նման ենք իսրայելացիներին՝ ներկում ենք մեր դռանդիները, պաշտպանելով մեր ընտանիքները կործանիչի ազդեցությունից»:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, հաճելի է հանդիպել ձեզ և լսել, թե ինչպես են *Եկ, հետևիր ինձ* նյութի հետ կապված ձեր ջանքերը օրհնում ձեր կյանքը: Շնորհակալություն ձեր նվիրվածության համար:

Որպես ուղեցույց, *Եկ, հետևիր ինձ* նյութի օգնությամբ սուրբ գրությունների ուսումնասիրությունը կամրապնդի մեր դարձը դեպի Հիսուս Քրիստոսը և Նրա ավետարանը: Մենք չենք կրճատում կիրակի օրվա մեկ ժամը, որպեսզի տանը մեկ ժամ ավել սուրբ գրություն կարդանք: Ավետարանի ուսումնասիրությունը շարունակական ջանք է ամբողջ շաբաթվա համար: Ինչպես մի քույր խորաթափանցորեն նշել է. «Նպատակը եկեղեցու երկրպագությունը մեկ ժամով կրճատելը չէ, այլ՝ եկեղեցին վեց օրով երկարացնելը»:

Այժմ, կրկին դիտարկենք այն նախազգուշացումը, որ մեր մարգարեն՝ Նախագահ Նելսոնն արել էր 2018 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի բացմանը.

«Հակառակորդը մեծ արագությամբ ավելացնում է հարձակումները հավատքի վրա, մեզ վրա և ընտանիքների վրա: Հոգևորապես գոյատևելու համար մեզ անհրաժեշտ են հակառակորդի ռազմավարությանը դեմ և այն կանխարգելող ծրագրեր» («Ներածական ելույթ», 7):

Այնուհետև (մոտավորապես 29 ժամ անց) կիրակի կեսօրին, նա փակեց համաժողովն այս խոստումով. «Եթե դուք ջանասիրաբար ձգտեք ձեր տունը վերածել ավետարանի ուսուցման կենտրոնի, . . . հակառակորդի ազդեցությունը ձեր կյանքի և ձեր տան վրա կնվազի» («Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 113):

Ինչպե՞ս կարող են հակառակորդի հարձակումներն ավելանալ, և, միևնույն ժամանակ, նրա ազդեցությունը նվազել: Այդպես կարող է լինել, և դա տեղի է ունենում ամբողջ Եկեղեցում, որովհետև Տերը նախապատրաստում է Իր ժողովրդին հակառակորդի հարձակումների դեմ: *Եկ, հետևիր ինձ* նյութը Տիրոջ հակառազմավարությունն է և կանխարգելող ծրագիրը: Ինչպես ուսուցանել է Նախագահ Նելսոնը. «Տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական նոր ծրագիրը ներուժ ունի բացահայտելու ընտանիքների զորությունը»: Այնուամենայնիվ, դա պահանջում է և պահանջելու է մեր լավագույն ջանքերը, յուրաքանչյուրս պետք է «բարեխղճորեն և ուշադիր հետևի ու իր տունը դարձնի հավատքի սրբավայր» («Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր», 113):

Ի վերջո, ինչպես ասաց Նախագահ Նելսոնը. «Մենք յուրաքանչյուրս պատասխանատու ենք մեր հոգևոր աճի համար» («Ներածական ելույթ», 8):

Եկ, հետևիր ինձ նյութով Տերը պատրաստում է մեզ «այսօր մեզ հանդիպող չար ժամանակների համար» (Քվենթին Լ. Քուկ, «Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը», 10): Նա օգնում է մեզ կառուցել այդ «հաստատուն հիմք[ը], հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի» (Հելաման 5.12): Դա վկայության հիմքն է, որն ամուր խարսխված է դեպի Տեր Հիսուս Քրիստոսը մեր դարձի հենքի վրա:

Թող որ սուրբ գրություններն ուսումնասիրելու մեր ամենօրյա ջանքերն ամրապնդեն մեզ և ապացուցեն, որ արժանի ենք այդ խոստացված օրհնություններին: Այս մասին եմ ես աղոթում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ԵՐԵՑ Լ. ԹՈԴ ԲԱԴՋ
Յոթանասունից

Հաստատուն և անվիատ վստահություն

Աստծուն վստահելը ներառում է՝ վստահել Նրա ժամանակին, և պահանջում է համբերություն ու տոկունություն, որը դիմանում է կյանքի փոթորիկներին:

Մեր որդի Դանը Աֆրիկայում իր միսիայի ժամանակ շատ լուրջ հիվանդացավ, և նրան տարան սահմանափակ միջոցներով մի բուժկենտրոն: Երբ կարդացինք մեզ ուղղված նրա առաջին նամակը, մենք ակնկալում էինք, որ նա հուսահատված կլիներ, բայց փոխարենը գրել էր. «Նույնիսկ այն ժամանակ, երբ պառկած էի անհետաձգելի օգնության սենյակում, ես խաղաղություն էի զգում: Երբևէ իմ կյանքում այդքան հաստատուն և անվիատ երջանկություն չեմ զգացել»:

Երբ ես և կինս կարդացինք այս խոսքերը, չկարողացանք զսպել մեր հուզմունքը: *Հաստատուն և անվիատ երջանկություն:* Մենք երբևէ չէինք լսել, որ երջանկությունը նկարագրվեր այդ ձևով, բայց նրա խոսքերը ճշմարիտ էին հնչում: Մենք գիտեինք, որ երջանկությունը, որը նա նկարագրում էր, պարզապես հաճույք չէր կամ բարձր տրամադրություն, այլ խաղաղություն և ուրախություն, որոնք գալիս են, երբ մենք անձնատուր ենք լինում Աստծուն և վստահում ենք Նրան *բոլոր բաներում:*[1] Մենք նույնպես ունեցել էինք այդպիսի ժամանակներ մեր կյանքում, երբ Աստված խաղաղություն էր խոսել մեր հոգիներին, և հորդորել մեզ հույս ունենալ Քրիստոսի հանդեպ, երբ կյանքը դժվարին էր ու անորոշ:[2]

Լեքին ուսուցանում է, որ եթե Ադամի ու Եվայի անկումը չլիներ, «նրանք մնացած կլինեին անմեղության վիճակում, չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն: . . .

Բայց, ահա, *բոլոր բաներն* արվել են նրա իմաստությամբ, ով գիտե *բոլոր բաները:*

Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»:[3]

Տարօրինակ կերպով, չարչարանքներն ու վշտերը պատրաստում են մեզ, որ մենք զգանք ուրախություն, եթե վստահենք Տիրոջը և մեզ համար ունեցած Նրա ծրագրին: Այս ճշմարտությունը հրաշալի է նկարագրված 13-րդ դարի մի պոետի կողմից. «Վիշտը պատրաստում է ձեզ ուրախության համար: Այն բռնի կերպով մաքրում է ամեն բան ձեր տնից, որպեսզի նոր ուրախությունը տեղ ունենա մուտք գործելու համար: Այն թափ է տալիս դեղին տերևները ձեր սրտի ճյուղերից, որպեսզի նոր, կանաչ տերևներ կարողանան աճել դրանց տեղում: Այն դուրս է բերում նեխած արմատները, որպեսզի դրանց տակ թաքնված նոր արմատներն աճելու տեղ ունենան: Ինչ էլ որ վիշտը տանի ձեր սրտից, շատ ավելի լավ բաներ կփոխարինեն դրանց»:[4]

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանել է. «Ուրախությունը, որը Փրկիչն առաջարկում է [մեզ] . . . հաստատուն է, հավաստիացնելով մեզ, որ մեր «ձախորդություններն ու չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ» [Վարդապետություն և Ուխտեր 121.7] և կնվիրագործվեն մեր օգտի համար»:[5] Մեր փորձություններն ու չարչարանքները կարող են տեղ

ազատել ավելի մեծ ուրախության համար։[6]

Ավետարանի բարի լուրը ոչ թե վշտերից ու դժբախտություններից ազատ կյանքի խոստումն է, այլ նպատակով և իմաստով լի կյանքի խոստումն է. կյանք, որտեղ վշտերն ու չարչարանքները կարող են «կուլ գնա[լ] Քրիստոսի ուրախության մեջ»։[7] Փրկիչը հայտարարել է. «Աշխարհքումը նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»։[8] Նրա ավետարանը հույսի ուղերձ է։ Վիշտը, Հիսուս Քրիստոսի հանդեպ հույսով զուգակցված, իր մեջ կրում է երկարատև ուրախության խոստումը։

Դեպի խոստումի երկիր Հարեդացիների ուղևորության պատմությունը կարող է որպես այլաբանություն օգտագործվել մահկանացու կյանքի մեր ուղևորության համար։ Տերը խոստացել էր Հարեդի եղբորը և նրա ժողովրդին, որ «կգնա [նրանց] առջևից դեպի մի երկիր, որն ամենաընտիրն է աշխարհի բոլոր երկրներից»։[9] Նա պատվիրեց նրանց բեռնանավեր կառուցել, և նրանք հնազանդորեն գնացին կառուցելու դրանք՝ համաձայն Տիրոջ հրահանգների։ Սակայն, երբ գործն առաջ էր գնում, Հարեդի եղբոր մոտ մտահոգություններ առաջացան, որ Տիրոջ նախագիծը բեռնանավերի կառուցվածքի մասին բավարար չէր։ Նա բացականչեց.

«Ո՛վ Տեր, ես կատարեցի գործը, որ դու պատվիրել էիր ինձ, և ես կառուցել եմ բեռնանավերը, ինչպես որ դու ես հրահանգել ինձ։

Եվ ահա, ո՜վ Տեր, դրանցում լույս չկա»։[10]

Ահա, ո՜վ Տեր, մի՞թե դու թույլ կտաս, որ մենք անցնենք այս մեծ ջուրը խավարի մեջ»։[11]

Երբևէ դատարկե՞լ եք ձեր հոգին Աստծո առաջ այդ ձևով։ Երբ ձգտում ենք ապրել՝ ինչպես Տերն է պատվիրում, և արդար ակնկալիքները չեն իրականանում, երբևէ հետաքրքրվե՞լ եք՝ արդյո՞ք դուք պետք է անցնեք այս կյանքը խավարի միջով։[12]

Հետո Հարեդի եղբայրը ավելի մեծ մտահոգություն արտահայտեց բեռնանավերում գոյատևելու իրենց կարողության մասին։ Նա աղաղակեց. «Եվ բացի այդ մենք կմեռնենք, քանզի դրանցում մենք չենք կարող շնչել, բացի այն օդից, որ դրանցում կա»։[13] Արդյո՞ք կյանքի դժվարությունները երբևէ դժվարացրել են ձեր շնչառությունը և ստիպել են ձեզ հետաքրքրվել, թե դուք ինչպե՞ս կարող եք դիմանալ մինչև օրվա վերջ, էլ ուր մնաց վերադառնաք դեպի երկնային տուն։

Տերը աշխատեց Հարեդի եղբոր հետ՝ լուծում տալով նրա բոլոր մտահոգություններին, բայց հետո Նա բացատրեց. «Դուք չեք կարող անցնել այս մեծ ջրանդունդը, եթե *ես չնախապատրաստեմ* [ուղի] ձեզ ծովի ալիքների դեմ, և քամիների, որոնք առաջ գնացած կլինեն, և ջրհեղեղների, որոնք պիտի գան»։[14]

Տերը հստակեցրեց, որ, ի վերջո, Հարեդացիները չէին կարող հասնել խոստումի երկիր առանց Իրեն։ Նրանք չէին վերահսկում իրավիճակը, և միակ ճանապարհը, որով նրանք կարող էին հատել մեծ ջրանդունդը, Նրան վստահելն էր։ Այս փորձառություններն ու Տիրոջ խրատները, կարծես, խորացնում էին Հարեդի եղբոր հավատքը և ամրապնդում Տիրոջ հանդեպ Նրա վստահությունը։

Նկատեք, թե նրա աղոթքները հարցերից ու մտահոգություններից ինչպես փոխվեցին հավատքի ու վստահության արտահայտությունների.

«Եվ ես գիտեմ, ո՜վ Տեր, որ դու ունես ամենայն զորություն և կարող ես անել ինչ որ կամենաս՝ մարդկանց օգտի համար. . . .

«Ահա, ո՜վ Տեր, դու կարող ես անել այս։ Մենք գիտենք, որ դու ի

վիճակի ես ցույց տալ մեծ զորություն, որը փոքր է թվում մարդկանց հասկացողությանը»։[15]

Գրված է, որ հետո Հարեդացիները «նստեցին . . . բեռնանավերը, և դուրս եկան ծով, իրենց *հանձնելով* Տիրոջը՝ իրենց Աստծուն»։[16] *Հանձնել* նշանակում է վստահել կամ անձնատուր լինել։ Հարեդացիները նստեցին իրենց բեռնանավերը ոչ թե նրա համար, որ նրանք ճշգրտորեն գիտեին, թե ինչ կպատահեր իրենց ուղևորության ընթացքում։ Հարեդացիները նստեցին իրենց բեռնանավերը, քանի որ նրանք սովորել էին վստահել Աստծո զորությանը, բարությանն ու ողորմությանը, ուստի նրանք պատրաստ էին Տիրոջը հանձնել իրենց և իրենց բոլոր կասկածներն ու վախերը։

Վերջերս մեր թոռնիկ Էբին վախենում էր վարել կարուսելի կենդանիներից մեկը, որը վերև ու ներքև էր շարժվում։ Նա նախընտրեց մեկ ուրիշը, որը չէր շարժվում։ Ի վերջո, նրա տատիկը համոզեց նրան, որ այն ապահով կլինի, ուստի վստահելով նրան, Էբին բարձրացավ կենդանու վրա։ Ապա լայն ժպտալով, ասաց. «Ես ապահով չեմ զգում, բայց ապահով եմ»։ Հավանաբար հարեդացիներն այդպես էին զգում։ Վստահելով Աստծուն, միշտ չէ, որ կարող ենք ապահով զգալ, բայց դրան հետևում է ուրախությունը։

Ուղևորությունը հեշտ չէր Հարեդացիների համար։ «Նրանք բազմաթիվ անգամներ թաղվեցին ծովի խորքերում «ալիքների լեռների պատճառով, որոնք փլուզվում էին նրանց վրա»։[17] Սակայն «քամին երբեք չդադարեց փչել խոստացված երկրի *ուղղությամբ*»։[18] Որքան էլ դժվար է հասկանալ, հատկապես մեր կյանքի այնպիսի ժամանակներում, երբ հանդիպակաց քամիներն ուժեղ են, իսկ ծովերը փոթորկալից, մենք կարող ենք հանգիստ լինել՝ իմանալով, որ Աստված Իր անսահման բարությամբ ուղղորդում է մեզ առաջ ընթանալ դեպի մեր երկնային տուն։

Ապա շարունակվում է. «Նրանք առաջ էին քշվում. և ծովի ոչ մի հրեշ չէր կարող նրանց ջարդուփշուր անել, ոչ էլ կետ, որ կարողանար վնասել նրանց. և նրանք անընդհատ լույս

ունեին՝ լիներ ջրի վրա, թե ջրի տակ»:[19] Մենք ապրում ենք այնպիսի աշխարհում, որտեղ մահվան, մտավոր և ֆիզիկական հիվանդությունների, ամեն տեսակի փորձությունների ու չարչարանքների հրեշավոր ալիքները հարվածում են մեզ: Սակայն, Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով և Նրան վստահելու մեր ընտրությամբ, *մենք* կարող ենք մշտապես լույս ունենալ՝ լինի ջրի վրա, թե՝ ջրի տակ: *Մենք* կարող ենք վստահ լինել, որ Աստված երբեք չի դադարի մեր նավերը տանել դեպի երկնային տուն:

Մինչ Հարեդացիները տարուբերվում էին բեռնանավերում, «նրանք գովք էին երգում առ Տերը. . . . և գովերգում Տիրոջն ամբողջ օրը. և երբ գալիս էր գիշերը, նրանք չէին դադարում գովերգել Տիրոջը»:[20] Նրանք ուրախություն և երախտագիտություն էին զգում նույնիսկ իրենց չարչարանքների ժամանակ: Նրանք դեռ չէին հասել խոստումի երկիրը, սակայն ցնծում էին խոստացված օրհնություններով Նրա հանդեպ ունեցած *հաստատուն* և *անվիհատ* վստահության շնորհիվ:[21]

Հարեդացիների բեռնանավերը ջրի վրա 344 օր առաջ մղվեցին:[22] Կարո՞ղ եք պատկերացնել: Աստծուն վստահելը ներառում է՝ վստահել Նրա ժամանակին, և պահանջում է համբերություն ու տոկունություն, որը դիմանում է կյանքի փոթորիկներին:[23]

Ի վերջո, Հարեդացիները «խոստացված երկրի ափն իջան: Եվ երբ նրանք իրենց ոտքը դրեցին խոստացված երկրի ափերին, նրանք վար կռացան երկրի երեսին, և իրենց խոնարհեցրին Տիրոջ առջև, և ուրախության արցունքներ թափեցին Տիրոջ առջև, իրենց վրա նրա բազում գորովագութ ողորմությունների համար»:[24]

Եթե մենք հավատարիմ ենք և պահում ենք մեր պատվիրանները, մենք ևս մի օր ապահով տուն կհասնենք, կխոնարհվենք Տիրոջ առաջ և ուրախության արցունքներ կհեղենք մեր կյանքում նրա գորովագութ ողորմությունների համար, ներառյալ՝ վշտերի, որոնք տեղ ազատեցին ավելի շատ ուրախության համար:[25]

Ես վկայում եմ, որ երբ մենք ինքներս մեզ հանձնենք Տիրոջը և հաստատուն և անվիհատ կերպով

վստահենք Հիսուս Քրիստոսին և մեր կյանքում Նրա աստվածային նպատակներին, Նա կայցելի մեզ հավաստիացումներով, խաղաղություն կխոսի մեր հոգիներին և «մենք կհուսանք մեր ազատմանը նրանով»:[26]

Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է: Նա բոլոր ուրախությունների աղբյուրն է:[27] Նրա շնորհը բավարար է և Նա հզոր է փրկելիս:[28] Նա է աշխարհի լույսը, կյանքը և հույսը:[29] Նա չի թողնի, որ մենք կորչենք:[30] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ալմա 36.3, 57.27:
2. Տես Ալմա 58.11:
3. 2 Նեփի 2.23–25, շեշտադրումն ավելացված է:
4. Տես *The Mathnawi of Jalalu'ddin Rumi* (1925–40), trans. Reynold A. Nicholson, vol. 5, 132:
5. Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 82:
6. Տես Neal A. Maxwell, «Plow in Hope», *Liahona,* July 2001. «Քավիչ Հիսուսը նաև «իր անձը մատնեց մահվան»: . . . Երբ մենք որևէ առիթով «մատնում ենք» մեր հոգիները մեր անձնական աղոթքների ժամանակ, այդ կերպ տեղ ենք ազատում ավելի շատ ուրախության համար»:
7. Ալմա 31.38, տես նաև Neal A. Maxwell, «Brim with Joy» (Brigham Young University devotional address, Jan. 23, 1996), speeches.byu.edu: «Երբ մենք հասնենք նվիրաբերման կետին, մեր չարչարանքները կուլ կգնան Քրիստոսի ուրախության մեջ: Դա չի նշանակում, որ մենք չենք կրի չարչարանքներ, այլ դրանք կդրվեն հեռանկարում, որը մեզ թույլ կտա հաղթահարել դրանք: Հետամուտ լինելով մեր կայուն ուրախությանը և արդարության աճող զգացումին, մենք կզգանք ուրախության ևս մեկ կաթիլ՝ մեկը մյուսի հետևից, մարգարեի խոսքերով՝ երբ մեր սիրտը «մինչև պռունկը լցվի ուրախությամբ» (Ալմա 26.11): Վերջապես հոգու բաժակը կլցվի»:
8. Հովհաննես 16.33:
9. Եթեր 1.42:
10. Եթեր 2.18–19:
11. Եթեր 2.22:
12. Տես Հովհաննես 8.12:
13. Եթեր 2.19, համեմատեք Մարկոս 4.38, տես նաև Մարկոս 4.35–41:
14. Եթեր 2.25, շեշտադրումն ավելացված է:
15. Եթեր 3.4–5
16. Եթեր 6.4, շեշտադրումն ավելացված է:
17. Եթեր 6.6:
18. Եթեր 6.8, շեշտադրումն ավելացված է, տես նաև 1 Նեփի 18.8:
19. Եթեր 6.10:
20. Եթեր 6.9, տես նաև 1 Նեփի 18.16:
21. Տես 1 Նեփի 5.5: Դեռևս անապատում Լեքին ցնծում էր խոստացված օրհնություններով:
22. Տես Եթեր 6.11:
23. Տես Եբրայեցիս 10.36, Ալմա 34.41, Վարդապետություն և Ուխտեր 24.8, 64.32:
24. Եթեր 6.12:
25. Տես 1 Նեփի 1.20, 8.8, Ալմա 33.16:
26. Ալմա 58.11:
27. Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», 82:
28. Տես 2 Նեփի 31.19, Ալմա 34.18, Մորոնի 10.32:
29. Տես «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Լիահոնա,* մայիս 2017, շապիկի ներսի մասում:
30. Տես 1 Նեփի 1.14:

ԵՐԵՑ ԽՈՐԽԵ Մ. ԱԼՎԱՐԱԴՈ
Յոթանասունից

Մեր հավատքի փորձությունից հետո

Երբ մենք հետևենք Աստծո ձայնին և Նրա ուխտի ճանապարհին, Նա կզորացնի մեզ մեր փորձություններով:

Երբ ես երեխա էի, Ֆռանկ Թելլի անունով Եկեղեցու մի բարի անդամ առաջարկեց օգնել իմ ընտանիքին՝ իր մասնավոր ինքնաթիռով թռչելու Պուերտո Ռիկոյից Սոլթ Լեյք Սիթի, որպեսզի մենք կարողանայինք կնքվել տաճարում, բայց շուտով խոչընդոտներ հայտնվեցին: Իմ քույրերից մեկը՝ Մերիվիդը, հիվանդացավ: Անհանգստացած, ծնողներս աղոթեցին, որպեսզի իմանան՝ ինչպես վարվել, և, սակայն, հուշում ստացան կատարել ուղևորությունը: Նրանք վստահ

էին, որ եթե իրենք հավատարմորեն հետևեն տաճար գնալու Տիրոջ հուշումներին, Նա կհսկի մեր ընտանիքը և կօրհնի մեզ, և այդպես էլ եղավ:

Անկախ նրանից, թե ինչ խոչընդոտների ենք բախվում կյանքում, մենք կարող ենք վստահ լինել, որ Հիսուս Քրիստոսը կպատրաստի առաջընթաց ճանապարհը, երբ մենք քայլենք հավատքով: Աստված խոստացել է, որ բոլոր նրանք, ովքեր ապրում են ըստ Նրա հետ կապած ուխտերի, Նրա ուրույն ժամանակին կստանան բոլոր խոստացված օրհնությունները: Երեց Հոլլանդն ուսուցանել է. «Որոշ օրհնություններ շուտ են գալիս, մյուսները գալիս են ուշ, իսկ մի մասն էլ չի գալիս, քանի դեռ երկնքում չենք, բայց նրանց համար, ովքեր ընդունում են Հիսուս Քրիստոսի ավետարանը, *դրանք գալիս են*»:[1]

Մորոնին ուսուցանել է, որ «հավատքը բաներ են, որոնց համար հույս ունենք և չենք տեսնում, ուստի, մի վիճեք, եթե դուք չեք տեսնում, քանզի նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում»:[2]

Մեր հարցը պետք է լինի. «Մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի լավագույնս դիմակայենք փորձություններին, որոնք հանդիպում են մեր ճանապարհին»:

Որպես Եկեղեցու Նախագահ իր առաջին հրապարակային ելույթի ժամանակ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Որպես նոր նախագահություն, մենք ցանկանում ենք սկսել՝ մտքում ունենալով վերջնական նպատակը: Այդ իսկ պատճառով մենք այսօր ձեզ հետ խոսում ենք տաճարից: Նպատակը, որին մեզանից յուրաքանչյուրը ձգտում է, զորությամբ Տիրոջ տանը օժտվելն է, ընտանիքներով կնքվելը, տաճարում կապած ուխտերին հավատարիմ մնալը, ինչը մեզ արժանի կդարձնի Աստծո մեծագույն պարգևին, որն է՝ հավերժական կյանքը: Տաճարային արարողությունները և այնտեղ կապած ձեր ուխտերը կարևորագույն հիմք են՝ ձեր կյանքը, ձեր ամուսնությունն ու ընտանիքը ամրացնելու և հակառակորդի հարձակումներին դիմակայելու ձեր ունակության համար: Տաճարային երկրպագությունը և այնտեղ ձեր ծառայությունը ձեր նախնիների համար կօրհնեն ձեզ ավելի մեծ անձնական հայտնություններով ու խաղաղությամբ, և կամրացնեն ուխտի ուղու վրա մնալու ձեր վճռականությունը»:[3]

Երբ մենք հետևենք Աստծո ձայնին և Նրա ուխտի ճանապարհին, Նա կզորացնի մեզ մեր փորձություններով:

Տարիներ առաջ իմ ընտանիքի ճամփորդությունը դեպի Սոլթ Լեյք Սիթիի Տաճար դժվար էր, բայց երբ մոտեցանք տաճարին, մայրս, հավատքով լի, ասաց. «Ամեն բան լավ կլինի մեզ հետ, Տերը կպաշտպանի մեզ»: Շուտով մենք կնքվեցինք ընտանիքով, իսկ քույրս առողջացավ: Այս ամենը տեղի ունեցավ միայն իմ ծնողների հավատքի փորձությունից և այն բանից հետո, երբ նրանք հետևեցին Տիրոջ հուշումներին:

Իմ ծնողների այս օրինակը այսօր դեռևս ազդեցություն ունի մեզ վրա: Նրանց օրինակն ուսուցանեց մեզ ավետարանի վարդապետության *ինչուն* և օգնեց մեզ հասկանալ այն իմաստը, նպատակն ու օրհնությունները, որոնք ավետարանն է մեզ տալիս: Հասկանալով Հիսուս

Քրիստոսի ավետարանի *ինչուն*, նաև կարող ենք հավատքով դիմակայել մեր փորձություններին:

Ի վերջո, այն ամենը, ինչ Աստված խնդրում ու պատվիրում է մեզ անել, Նրա սիրո արտահայտությունն է մեր հանդեպ և Նրա ցանկությունը՝ տալու մեզ այն օրհնությունները, որոնք պահված են հավատարիմների համար: Մենք չենք կարող ենթադրել, որ մեր երեխաներն ինքնուրույն կսովորեն սիրել ավետարանը. մեր՝ ծնողներիս պարտականությունն է ուսուցանել նրանց: Երբ մենք օգնում ենք մեր զավակներին իմաստուն կերպով օգտագործել իրենց ազատ կամքը, մեր օրինակը կարող է ոգեշնչել նրանց կատարել իրենց արդար ընտրությունները: Նրանց հավատարիմ ապրելակերպը, իր հերթին, կօգնի իրենց զավակներին անձամբ հասկանալ ավետարանի ճշմարտությունը:

Երիտասարդ տղամարդի՛կ և երիտասարդ կանա՛յք, լսեք թե մարգարեն ինչպես է խոսում ձեզ հետ այսօր: Ձգտեք անձամբ սովորել աստվածային ճշմարտությունները և անձամբ հասկանալ ավետարանը: Նախագահ Նելսոնը վերջերս խորհուրդ է տվել. «Ի՞նչ իմաստություն է պակասում ձեզ: . . . Հետևեք Մարգարե Ջոզեֆի օրինակին: Գտեք մի խաղաղ վայր: . . . Խոնարհվեք Աստծո առաջ: Ձեր սիրտը բացեք ձեր Երկնային Հոր առաջ: Դիմեք Նրան պատասխանների համար»:[4] Երբ աղոթքով առաջնորդություն խնդրեք ձեր սիրառատ Երկնային Հորից՝ լսելով ապրող մարգարեների խորհուրդները և հետևելով արդար ծնողների օրինակին, դուք ևս կարող եք հավատքի ամուր օղակ դառնալ ձեր ընտանիքում:

Դիմում եմ ծնողներին, ում զավակները, գուցե, շեղվել են ուխտի ճանապարհից, մեղմորեն հետ վերադարձրեք նրանց: Օգնեք նրանց ըմբռնել ավետարանական ճշմարտությունները: Սկսեք հիմա, երբեք ուշ չէ:

Արդար ապրելակերպի մեր օրինակը ևս կարող է նկատելի լինել: Նախագահ Նելսոնն ասել է. «Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք սովոր ենք մտածել «եկեղեցու» մասին որպես մի բանի, որը տեղի է ունենում մեր հավաքատներում և աջակցվում է այն ամենով, ինչը տեղի է ունենում մեր տներում: Մենք պետք է ճշգրտումներ կատարենք այդ օրինաչափության մեջ: Այժմ *տնակենտրոն Եկեղեցու* ժամանակն է, որին աջակցում է այն ամենը, ինչ տեղի է ունենում մեր ճյուղերի, ծխերի և ցցերի շենքերի ներսում»:[5]

Սուրբ գրություններն ուսուցանում են. «Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանալ նորանից»:[6]

Դրանք նաև ասում են. «Եվ արդ, քանի որ խոսքի քարոզելն ուներ մեծ միտում՝ առաջնորդել ժողովրդին անելու այն, ինչն արդար էր, այո, այն ունենում էր ավելի զորավոր ազդեցություն մարդկանց մտքերի վրա, քան սուրը, կամ որևէ այլ բան, որ պատահել էր նրանց. հետևաբար, Ալման մտածեց, որ հարկ էր, որ նրանք փորձեին Աստծո խոսքի ուժը»:[7]

Մի պատմություն կա մի կնոջ մասին, ով անհանգստացած էր, որ իր որդին շատ կոնֆետ էր ուտում: Մայրը միշտ նախատում էր որդուն, բայց նա շարունակում էր ուտել: Լիովին հուսահատված, մայրը որոշեց որդուն տանել մի իմաստուն մարդու մոտ, որին նա հարգում էր:

Կինը մոտեցավ իմաստունին և ասաց. «Պարո՛ն, իմ որդին չափազանց շատ կոնֆետ է ուտում: Կարո՞ղ էիք խորհուրդ տալ նրան այլևս կոնֆետ չուտել»:

Ուշադիր լսելով կնոջը, իմաստունը շրջվեց ու ասաց նրա որդուն. «Գնա տուն և վերադարձիր երկու շաբաթից»:

Կինը որդու հետ տուն վերադարձավ, սակայն շփոթված ուզում էր իմանալ, թե նա ինչու չխնդրեց տղային այդքան շատ կոնֆետ չուտել:

Երկու շաբաթ անց նրանք վերադարձան: Իմաստունն ուղիղ նայեց տղային և ասաց. «Տղա՛ս, դու պետք է դադարես այդքան շատ կոնֆետ ուտել: Դա վնասակար է քո առողջությանը»:

Տղան գլխով արեց և խոստացավ, որ այլևս չի շարունակի այդ սովորությունը:

Տղայի մայրը շրջվեց դեպի իմաստունը և հարցրեց. «Դուք ինչո՞ւ չասացիք դա երկու շաբաթ առաջ»:

Իմաստունը ժպտաց: «Մա՛յր, երկու շաբաթ առաջ ես ինքս դեռևս շատ կոնֆետ էի ուտում»:

Այդ մարդն ապրում էր այնպիսի ազնիվ կյանքով, որ գիտեր՝ իր խորհուրդն ուժ կունենա միայն այն դեպքում, եթե ինքն անձամբ հետևի դրան:

Ազդեցությունը, որը մենք ունենք մեր զավակների վրա, ավելի հզոր է, երբ նրանք տեսնում են մեզ ուխտի ճանապարհով հավատարմորեն քայլելիս: Մորմոնի Գրքի Հակոբ մարգարեն այդպիսի արդարակեցության օրինակ է: Նրա որդի Ենովսը գրել է Հակոբի ուսմունքների ազդեցության մասին.

«Ես՝ Ենովս, գիտենալով իմ հորը, որ նա արդար մարդ էր,– քանզի նա ինձ սովորեցրել էր իր լեզվով և նաև Տիրոջ խրատով ու ուսմունքով,– և օրհնված լինի իմ Աստծո անունը դրա համար: . . .

. . . Խոսքերը, որոնք ես հաճախ լսել էի իմ հորն ասելիս, հավերժական կյանքի և սրբերի ուրախության մասին, խորը ընկղմվել էին իմ սրտում»:[8]

Դեռահաս զինվորների մայրերն ապրում էին ավետարանով, և նրանց զավակները լի էին համոզմունքով: Նրանց զորապետը պատմում է.

«Նրանք սովորեցվել էին իրենց մայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց:

Եվ նրանք կրկնեցին ինձ իրենց մայրերի խոսքերն՝ ասելով. Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա»:[9]

Ենովսն ու դեռահաս զինվորները զորացան իրենց ծնողների հավատքով, որն օգնեց նրանց դիմակայել իրենց հավատքի փորձություններին:

Մեր օրերում մենք օրհնված ենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով, որը բարձրացնում է մեզ, երբ մենք անհանգիստ ենք և հուսահատված: Մենք համոզվում ենք, որ մեր ջանքերը պտուղ կտան Տիրոջ ժամանակին, եթե մենք առաջ ընթանանք մեր հավատքի փորձությունների միջով:

Վերջերս ես,իմ կինը և Տարածքային Նախագահությունն ուղեկցում էինք Երեց Դեյվիդ Ա. Բեդնարին՝ մասնակցելու Հայիթի Պորտ-աու-Փրինս Տաճարի նվիրագործմանը: Մեր որդի Խորխեն, ով եկել էր մեզ հետ, իր փորձառության մասին ասաց. «Ապշեցուցիչ է, հայրի՛կ: Երբ Երեց Բեդնարը սկսեց նվիրագործման աղոթքը, ես զգացի, որ սենյակը լցվեց ջերմությամբ և լույսով: Աղոթքը այնքան բան ավելացրեց տաճարի նպատակի իմ հասկացողությանը: Այն իրոք Տիրոջ տունն է»:

Մորմոնի գրքում Նեփին ուսուցանում է մեզ, որ երբ մենք ցանկանանք իմանալ Աստծո կամքը, Նա կզորացնի մեզ: Նա գրել է. «Ես՝ Նեփիս, լինելով չափազանց երիտասարդ, . . . և նաև ունենալով մեծ իղձեր՝ իմանալու Աստծո խորհուրդները, ուստի, ես կանչեցի առ Տերը. և ահա, նա այցելեց ինձ և այնպես փափկացրեց իմ սիրտը, որ ես հավատացի բոլոր այն խոսքերին, որոնք ասվել էին հորս կողմից. այդ պատճառով ես չապստամբեցի նրա դեմ՝ իմ եղբայրների նման»:[10]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, եկեք օգնենք մեր զավակներին և մեզ շրջապատող բոլոր մարդկանց հետևել Աստծո ուխտի ճանապարհին, որպեսզի Հոգին կարողանա ուսուցանել նրանց և փափկացնել նրանց սրտերը, որ նրանք ցանկանան հետևել Նրան իրենց կյանքի ընթացքում:

Երբ ես մտորում եմ իմ ծնողների օրինակի շուրջ, հասկանում եմ, որ մեր հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեզ ցույց կտա ճանապարհը դեպի մեր երկնային տուն: Ես գիտեմ, որ հրաշքները գալիս են հավատքի փորձությունից հետո:

Ես իմ վկայությունն եմ բերում Հիսուս Քրիստոսի և Նրա քավիչ զոհաբերության մասին: Ես գիտեմ՝ Նա է մեր Փրկիչն ու Ազատարարը: Նա և մեր Երկնային Հայրը 1820 թվականի գարնան այն առավոտ հայտնվեցին երիտասարդ Ջոզեֆ Սմիթին՝ Վերականգնման մարգարեին: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մեր օրերի մարգարեն է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Jeffrey R. Holland, “An High Priest of Good Things to Come,” *Liahona,* Jan. 2000, 45–45:
2. Եթեր 12.6:
3. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 95:
5. Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 7:
6. Առակաց 22.6:
7. Ալմա 31.5:
8. Ենովս 1.1, 3:
9. Ալմա 56.47–48:
10. 1 Նեփի 2.16:

ԵՐԵՑ ՌՈՆԱԼԴ Ա. ՌԱՍԲԵՆԴ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Կանգնել մեր խոստումների և ուխտերի կողքին

Ես հրավիրում եմ ձեզ ամենայն լրջությամբ խորհել Տիրոջը և ուրիշներին տված խոստումների և ուխտերի մասին, իմանալով, որ ձեր խոսքը կապում է ձեզ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, փակելով այս նիստը, թող որ մեզանից յուրաքանչյուրն իր սրտում պահի Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ այս օրը ծնված վկայությունը: Մենք օրհնված ենք, որ միասին վայելում ենք այս սուրբ ժամանակը, ամրապնդելով Տեր Հիսուս Քրիստոսին տված մեր խոստումը, որ մենք Նրա ծառաներն ենք և Նա մեր Փրկիչն է:

Ես մեծ կարևորություն եմ տալիս խոստումներ և ուխտեր կապելուն և պահելուն: Որքա՞ն կարևոր է ձեզ համար պահել ձեր խոսքը, լինել վստահելի, անել այն, ինչ խոստացել եք, փորձել պատվել ձեր սրբազան ուխտերը, լինել ազնիվ: Հավատարիմ մնալով Տիրոջը և ուրիշներին տված խոստումներին, մենք բռնում ենք դեպի մեր Երկնային Հայրը տանող հետադարձի ճամփան, և զգում ենք Նրա սերը մեր կյանքում:

Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը մեր մեծ օրինակն է, երբ հարցը վերաբերում է խոստումներ և ուխտեր կապելուն և պահելուն: Նա երկիր եկավ՝ խոստանալով կատարել Հոր կամքը: Նա ուսուցանել է ավետարանի սկզբունքները խոսքով և գործով: Նա քավել է մեր մեղքերը, որ մենք կարողանանք կրկին ապրել: Նա պատվել է Իր խոստումներից յուրաքանչյուրը:

Կարո՞ղ ենք նույնն ասել մեզանից յուրաքանչյուրի վերաբերյալ: Որո՞նք են վտանգները, եթե մի փոքր խաբում ենք, մի փոքր սայթաքում կամ մեր ստանձնած պարտավորություններից մի փոքր շեղվում ենք: Ի՞նչ կպատահի, եթե մենք հեռանանք մեր ուխտերից: Արդյո՞ք ուրիշները կգան Քրիստոսի մոտ՝ տեսնելով մեր օրինակը: Արդյո՞ք կարելի է վստահել ձեր խոսքին: Խոստումները պահելը սովորություն չէ. դա Հիսուս Քրիստոսի աշակերտը լինելու հատկանիշ է:

Մշտապես հիշելով աշխարհիկ կյանքում մեր ունեցած թուլությունների մասին՝ Տերը խոստացել է. «Ուրախ եղեք, և մի վախեցեք, քանզի ես՝ Տերս, ձեզ հետ եմ, և ես կանգնելու եմ ձեր կողքին»:[1] Ես զգացել եմ Նրա ներկայությունը, երբ ունեցել եմ հավաստիացման, մխիթարության, ավելի մեծ հոգևոր խորաթափանցության կամ ուժի կարիք, և ես շատ զգացված եմ ու երախտապարտ Նրա աստվածային օժանդակության համար:

Տերն ասել է. «Կլինի այնպես, որ ամեն հոգի, որ թողնում է իր մեղքերը և գալիս է ինձ մոտ, և կանչում է իմ անունը, և հնազանդվում է իմ ձայնին, և պահում է իմ պատվիրանները, պիտի տեսնի իմ երեսը և իմանա, որ ես եմ»:[2]

Սա հավանաբար Նրա ամենամեծ խոստումն է:

Իմ խոսքը պահելու կարևորության մասին ես սովորել եմ իմ պատանեկության տարիներին: Նման մի օրինակ է, երբ ես կանգնեցի բոլորի առջև՝ տալու իմ սկաուտական երդումը: Ամերիկայի սկաուտների հետ մեր ընկերակցությունը միշտ կարևոր ժառանգություն կլինի իմ և Եկեղեցու համար: Սկաուտական կազմակերպությանը, այն տղամարդկանց և կանանց, ովքեր ջանասիրաբար ծառայել են որպես սկաուտների առաջնորդներ, մայրերին, ովքեր իսկապես արժանի են գնահատանքի, և այն երիտասարդներին, ովքեր մասնակցել են սկաուտական ծրագրին, ես ասում եմ՝ շնորհակալություն:

Այս նիստի ընթացքում մեր թանկագին մարգարեն՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, և Երեց Քվենթին Լ. Քուքը հայտարարեցին փոփոխությունների մասին, որոնք մեր ուշադրությունը կվերահրավիրեն պատանիների վրա և կհամապատասխանեցնեն մեր կազմակերպությունները հայտնությամբ տրված ճշմարտության հետ: Բացի դրանից, անցյալ կիրակի, Նախագահ Նելսոնը և Նախագահ Մ. Ռասսել Բալլարդը բացատրեցին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Երեխաների և Պատանիների նոր ծրագիրը ողջ Եկեղեցու համար: Դա հրաշալի նախաձեռնություն է, որը կենտրոնացած է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի վրա: Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը միասին են սկսել այս նախաձեռնությունը, և ես անձամբ բերում եմ իմ վկայությունը, որ Տերն այս ճանապարհին առաջնորդել է մեր ամեն մի քայլը: Ես շատ ուրախ եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու երեխաներն ու պատանիները վայելելու են այդ ամբողջ ուշադրությունը թե՛ տանը, և թե՛ եկեղեցում՝ ավետարանն ուսումնասիրելու, ծառայելու, միջոցառումների և անձնական զարգացման ընթացքում:

Գալիք 2020թ. պատանիների թեման խոսում է Նեփիի դասական խոստումի մասին՝ «կգնամ և կանեմ»: Նա գրել է. «Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, ասացի հորս. Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը պատվիրաններ չի տալիս մարդկանց զավակներին՝ առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց»:[3] Չնայած սրանք վաղուց ասված խոսքեր են, մենք այսօր Եկեղեցում հետևում ենք այդ խոստումին:

«Կգնամ և կանեմ» նշանակում է՝ վեր կանգնել աշխարհի ուղիներից, ստանալով և գործելով ըստ անձնական հայտնության, ապրելով արդար՝ հույսով և ապագայի հանդեպ հավատով, կապելով և պահելով Հիսուս Քրիստոսին հետևելու ուխտեր, որով ավելի է մեծանում մեր սերը Նրա՝ աշխարհի Փրկիչի հանդեպ:

Ուխտը երկկողմանի խոստում է մեր և Տիրոջ միջև: Որպես Եկեղեցու անդամներ մկրտվելիս, մենք ուխտում ենք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը, ապրել Նրա նման: Մորմոնի ջրերում մկրտվածների նման մենք ուխտում ենք դառնալ Նրա ժողովուրդը, «հոժար կրելու մեկը մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն, . . . սգալու նրանց հետ, ովքեր սգում են. . . . մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»:[4] Եկեղեցում միմյանց ծառայելով մենք կատարում ենք հենց այդ խոստումները պատվելու մեր պարտավորությունը:

Երբ ճաշակում ենք հաղորդությունը, մենք նորոգում ենք Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու ուխտը և այլ խոստումներ տալիս մեր զարգացման համար: Մեր ամենօրյա մտքերը և գործողությունները, լինեն մեծ, թե՝ փոքր, արտացոլում են նրա հանդեպ մեր նվիրվածությունը: Ի

պատասխան՝ Նա տալիս է սրբազան խոստում. «Եթե դուք միշտ հիշեք ինձ, դուք իմ Հոգին կունենաք ձեզ հետ»:[5]

Այսօր իմ հարցը հետևյալն է. արդյո՞ք մենք կատարում ենք մեր խոստումներն ու ուխտերը, թե՞ երբեմն մոտենում ենք դրանց մասնակի նվիրվածությամբ, որոնք պատահականորեն ենք կապել, ուստի և հեշտությամբ խախտում ենք: Երբ մեկին ասում ենք. «Ես կաղոթեմ ձեր համար», անո՞ւմ ենք: Երբ խոստանանք. «Ես կգամ ու կօգնեմ», կանե՞նք: Երբ պարտավորվում ենք վճարել մեր պարտքը, վճարո՞ւմ ենք: Երբ մենք բարձրացնում ենք մեր ձեռքը հաստատելու մեր կողքի անդամին նոր ծառայության մեջ, որը նշանակում է աջակցել, արդյո՞ք անում ենք:

Երբ պատանի էի, մի երեկո մայրս նստեց ինձ հետ իր անկողնու մոտ և ջերմեռանդորեն խոսեց Իմաստության Խոսքով ապրելու կարևորության մասին: «Տարիների ընթացքում ուրիշների փորձից ես գիտեմ,- ասաց նա,- որ հոգևոր և զգայունության անկում են ապրում նրանք, ովքեր չեն հետևում Իմաստության Խոսքին»: Նա նայեց ուղիղ իմ աչքերին և ես զգացի, որ նրա խոսքերը ներթափանցում են սրտիս մեջ. «Խոստացիր ինձ, Ռո՛ննի, այս օրը (նա կոչում էր ինձ Ռոննի), որ դու միշտ կապրես Իմաստության Խոսքով»: Ես հանդիսավոր կերպով տվեցի նրան այդ խոստումը, և այս բոլոր տարիների ընթացքում ես պահել եմ այն:

Այդ պարտավորությունը ծառայել է ի օգուտ ինձ իմ պատանեկության շրջանում, իսկ ավելի ուշ՝ բիզնեսի շրջանակներում բազմաթիվ առիթների ժամանակ: Ես ի սկզբանե կայացրել էի կարևոր որոշում՝ հետևելու Աստծո օրենքներին, և երբեք կարիք չեմ ունեցել վերադառնալու այդ հարցին: Տերն ասել է. «Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ. բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք»:[6] Ի՞նչ է Նա ասում նրանց, ովքեր պահում են Իմաստության Խոսքը: Որ մենք կունենանք առողջ լինելու խոստումը, ուժ, իմաստություն, գիտելիք, իսկ հրեշտակները կպաշտպանեն մեզ:[7]

Մի քանի տարի առաջ Քույր Բեդնարը և ես Սոլթ Լեյքի Տաճարում էինք մեր դուստրերից մեկի կնքման առիթով: Մինչ մենք կանգնած էինք տաճարի բակում մեր կրտսեր դստեր հետ, ով բավականաչափ մեծ չէր արարողությանը մասնակցելու համար, մենք խոսեցինք Աստծո սուրբ տաճարում կնքվելու կարևորության մասին: Ինչպես մայրս էր սովորեցրել ինձ տարիներ առաջ, մենք ասացինք մեր դստերը. «Մենք ցանկանում ենք, որ դու ապահով կնքվես տաճարում, և մենք ուզում ենք, որ դու խոստանաս մեզ, որ երբ կգտնես քո հավերժական զուգընկերոջը, դուք նրա հետ կորոշեք օրը, թե երբ եք կնքվելու տաճարում»: Նա մեզ խոստում տվեց:

Դրանից հետո նա բազմիցս նշել է, որ մեր զրույցը և նրա խոստումը պաշտպանել են իրեն և հիշեցրել, «ամենակարևոր բանի մասին»: Ավելի ուշ նա սրբազան ուխտեր կապեց, երբ տաճարում կնքվեց իր ամուսնու հետ:

Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Մենք . . . հզորացնում ենք Փրկիչի ուժը մեր կյանքում, երբ կապում ենք սրբազան ուխտեր և ճշգրտությամբ պահում այդ ուխտերը: Մեր ուխտերը կապում են մեզ Նրա հետ և տալիս մեզ աստվածային զորություն»:[8]

Երբ մենք պահում ենք միմյանց տված խոստումները, ավելի հավանական է, որ մենք կպահենք նաև Տիրոջը տված խոստումները: Հիշեք Տիրոջ խոսքերը. «Որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[9]

Եկեք միասին անդրադառնանք սուրբ գրություններում առկա խոստումների օրինակներին: Ամմոնը և Մոսիայի որդիները Մորմոնի Գրքում պարտավորվել էին «Աստծո խոսքը քարոզել»:[10] Երբ Ամմոնը գերի վերցվեց լամանացիների զորքի կողմից, նրան տարան լամանացիների թագավոր Լամոնիի մոտ: Նա

խոստացավ թագավորին. «Ես կլինեմ քո ծառան»:[11] Երբ ավազակները եկան գողանալու թագավորի ոչխարները, Ամմոնը կտրեց նրանց բազուկները: Թագավորն այնքան հիացած էր, որ լսեց ավետարանի վերաբերյալ Ամմոնի ուղերձը և դարձի եկավ:

Հռութը Հին Կտակարանում խոստացավ իր սկեսուրին. «Ուր որ գնաս գնալու եմ»:[12] Նա հավատարիմ մնաց իր խոստումին: Բարի Սամարացին Նոր Կտակարանի առակում խոստացավ իջևանատիրոջը, որ եթե նա հոգ տաներ վիրավոր ճամփորդի համար, «ինչ որ աւելի ծախք անես, ես միւսանգամ ետ դառնալիս կ'վճարեմ քեզ»:[13] Զորամը Մորմոնի Գրքում խոստացավ անապատ գնալ Նեփիի և նրա եղբայրների հետ: Նեփին գրել է. «Երբ Զորամը երդում տվեց մեզ, նրա վերաբերյալ մեր մտավախությունները փարատվեցին»:[14]

Իսկ ինչ կասեք «հայրերին տված» հնադարյան խոստումի մասին, ինչպես նկարագրված է սուրբ գրություններում, որ «զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը»:[15] Նախաերկրային կյանքում, երբ մենք ընտրեցինք Աստծո ծրագիրը, մենք խոստացանք օգնել հավաքելու Իսրայելը վարագույրի երկու կողմերում: Տարիներ առաջ Երեց Զոն Ա. Վիթսոն բացատրել է. «Մենք ընկերակցեցինք Տիրոջը: Ծրագրի մշակումը դարձավ ոչ միայն Հոր աշխատանքը և Փրկիչի գործը, այլ նաև մեր աշխատանքը»:[16]

«Այսօր հավաքումն ամենակարևոր բանն է երկրի վրա»,- ասել է Նախագահ Նելսոնը, մինչ շրջագայում էր աշխարհում: «Երբ մենք խոսում ենք *հավաքման* մասին, մենք պարզապես ասում ենք այս հիմնարար ճշմարտությունը. մեր Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրը վարագույրի երկու կողմերում արժանի է լսել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը»:[17]

Որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ, ես ավարտում եմ հրավերով և խոստումով: Առաջին՝ հրավերը. ես հրավիրում եմ ձեզ խորհել Տիրոջը և ուրիշներին տված խոստումների և ուխտերի մասին ամենայն լրջությամբ, իմանալով, որ ձեր խոսքը կապում է ձեզ: Երկրորդ, ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք անեք դա, Տերը կհաստատի ձեր խոսքերը և հավանություն կտա ձեր գործերին, մինչ դուք ջանասիրաբար կկառուցեք ձեր կյանքը, ձեր ընտանիքը և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Նա կլինի ձեզ հետ, իմ թանկագին եղբայրներ և քույրեր, և դուք կարող եք վստահ առաջ նայել, քանի որ «ընդունվում եք երկնքում, որի շնորհիվ [դուք] կարողանում եք բնակվել Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում . . . քանզի Տեր Աստված է ասել դրանք»:[18]

Սրա մասին ես վկայում և խոստանում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 68.6:
2. Վարդապետություն և Ուխտեր 93.1:
3. 1 Նեփի 3.7:
4. Մոսիա 18.8–9:
5. 3 Նեփի 18.7:
6. Վարդապետություն և Ուխտեր 82.10:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 89.18–21:
8. Ռասսել Մ. Նելսոն, «Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2017, 41:
9. Մատթեոս 25.40:
10. Ալմա 17.14:
11. Ալմա 17.25:
12. Հռութ 1.16:
13. Ղուկաս 10.35:
14. 1 Նեփի 4.37:
15. Վարդապետություն և Ուխտեր 2.2, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 27.9, 128.17, Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.39:
16. John A. Widtsoe, "The Worth of Souls," *Utah Genealogical and Historical Magazine,* Oct. 1934, 189.
17. Russell M. Nelson, "Hope of Israel" (worldwide youth devotional, June 3, 2018), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org, 8.
18. Մոսիա 2.41:



Կանանց նիստ | 5 Հոկտեմբեր, 2019թ.

ՌԵՅՆԱ Ի. ԸԲԱՐԹՈ
Ստիպող Միության Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ամպերի և արևի շողերի միջով, Տեր մնա ինձ հետ:

Ես վկայում եմ, որ «ամպերի և արևի շողերի միջով» Տերը կմնա մեզ հետ, որ մեր «չարչարանքները [կուլ գնան] Քրիստոսի ուրախության մեջ»:

Մեր սիրելի օրհներգն արտահայտում է հետևյալ խնդրանքը. «Ամպերի և արևի շողերի միջով, Տե՛ր մնա ինձ հետ»:[1] Մի անգամ ինքնաթիռի մեջ էի գտնվում, երբ մի մեծ փոթորիկ սկսվեց: Նայելով պատուհանից, ես ներքևում տեսա ամպերի մի խիտ զանգված: Մայր մտնող արևի ճառագայթներն արտացոլվում էին ամպերի վրա, որից նրանք շատ էին փայլում: Շուտով ինքնաթիռն իջավ խիտ ամպերի միջով, և մենք հանկարծ հայտնվեցինք խավարի մեջ, որն ամբողջովին փակեց մեզ այն լույսից, որին ականատես եղանք մի քանի վայրկյան առաջ:[2]

Մեր կյանքում նույնպես կարող են սև ամպեր ի հայտ գալ, որոնք կարող են փակել մեր տեսողությունն Աստծո լույսից, և նույնիսկ կասկածի տեղիք տալ, թե արդյո՞ք այդ լույսը այլևս գոյություն ունի մեզ համար: Այդ ամպերից մի քանիսը՝ ընկճվածության, անհանգստության և հոգեկան ու հուզական չարչարանքի այլ ձևեր են: Դրանք կարող են աղավաղել այն ուղին, որով մենք ընկալում ենք ինքներս մեզ, մյուսներին և նույնիսկ՝ Աստծուն: Դրանք ազդում են աշխարհի տարբեր անկյուններում գտնվող բոլոր տարիքի կանանց և տղամարդկանց վրա:

Նմանապես, վնասակար է թերահավատության անզգայացնող ամպը, որը կարող է ազդել այն մարդկանց վրա, ովքեր չեն ունեցել այդ մարտահրավերները: Մարմնի ցանկացած մասի նման, ուղեղը ենթակա է հիվանդությունների, վնասվածքների և քիմիական անհավասարակշռության: Երբ մեր միտքը տառապանքի մեջ է, մենք կարող ենք օգնություն խնդրել Աստծուց, մեր շրջապատից և բժշկական ու հոգեկան առողջության մասնագետներից:

«Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր»:[3] Մեր Երկնային ծնողների և մեր Փրկիչի նման մենք ունենք ֆիզիկական մարմին[4] և զգացմունքներ:[5]

Սիրելի՛ քույրեր, բնական է, երբ երբեմն տխրում կամ անհանգստանում եք: Տխրությունն ու անհանգստությունը մարդկային բնական հույզեր են:[6] Այնուամենայնիվ, եթե մենք անընդհատ տխրում ենք, և եթե մեր ցավն արգելափակում է մեր Երկնային Հոր և Նրա Որդու սերը և Սուրբ Հոգու ազդեցությունը զգալու ունակությունը, ապա գուցե մենք տառապում ենք ընկճախտով, անհանգստության կամ այլ հուզական վիճակներից:

Իմ դուստրը մի անգամ գրել է. «Կար մի ժամանակ . . . [երբ] ես ամբողջ ժամանակ սաստիկ տխրում էի: Միշտ մտածում էի, որ տխրությունը ամաչելու

բան է, և որ դա թուլության նշան է: Ուստի ես ոչ-ոքի չէի ասում տխրությանս մասին: . . . Ես ինձ լիովին անպետք էի զգում»:[7]

Մի ընկեր նկարագրել է այսպես. «Իմ վաղ մանկությունից ի վեր ես անընդհատ պայքար եմ մղել հուսահատության, մթության, միայնության և վախի զգացողությունների հետ և այնպիսի զգացում ունեի, որ կարծես կոտրվել եմ կամ արատավոր եմ: Ամեն ինչ արեցի, որպեսզի թաքցնեմ իմ ցավը և տպավորություն ստեղծեմ, որ աճում եմ և ուժեղ եմ»:[8]

Իմ սիրելի՛ ընկերներ, դա կարող է պատահել մեզանից յուրաքանչյուրի հետ, հատկապես, երբ լինելով երջանկության ծրագրի հավատացյալներ, մենք մեզ վրա ավելորդ բեռ ենք դնում՝ մտածելով, որ հիմա պետք է կատարյալ լինենք: Այդպիսի մտքերը կարող են ճնշող լինել: Կատարելության հասնելը մի գործընթաց է, որը տեղի է ունենալու մեր ողջ մահկանացու կյանքում և դրանից հետո, և միայն Հիսուս Քրիստոսի շնորհի միջոցով:[9]

Ի տարբերություն դրա, երբ մենք կիսվում ենք մեր հուզական խնդիրներով և ընդունում, որ կատարյալ չենք, մենք թույլ ենք տալիս ուրիշներին կիսվել իրենց դժվարություններով: Միասին մենք գիտակցում ենք, որ հույս կա և ստիպված չենք միայնակ տառապել:[10]

Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մենք ուխտ ենք կապել Աստծո հետ, որ «հոժար ենք կրելու մեկս մյուսի բեռը» և «սգալու նրանց հետ, ովքեր սգում են»:[11] Դա կարող է նշանակել, որ մենք պետք է տեղեկացված լինենք հուզական հիվանդությունների մասին, գտնենք այնպիսի միջոցներ, որոնք կօգնեն լուծել այդ դժվարությունները, և ի վերջո, մեզ և ուրիշներին մոտեցնենք Քրիստոսին, ով Բժշկող Տերն է:[12] Նույնիսկ, եթե մենք չգիտենք, թե ինչպես վերաբերվել ուրիշների տառապանքներին, եթե ընդունենք, որ նրանց ցավն իրական է, դա կարող է առաջին քայլը դառնալ նրանց հասկանալու և բուժելու համար:[13]

Որոշ դեպքերում ընկճախտի կամ անհանգստության պատճառը կարելի է հայտնաբերել, մինչդեռ այլ

դեպքերում այն դժվար կլինի նկատել:[14] Մեր ուղեղը կարող է տառապել լարվածության[15] կամ չափազանց-հոգնածության պատճառով,[16] ինչը երբեմն կարելի է բարելավել սննդակարգի, քնի և վարժությունների կարգավորման շնորհիվ: Հնարավոր է նաև անհրաժեշտ լինի բուժում և դեղամիջոցներ՝ որակավորված մասնագետների հսկողության ներքո:

Չբուժված հոգեկան կամ հուզական հիվանդությունը կարող է հանգեցնել մեկուսացման, թյուրիմացությունների, խզված հարաբերությունների, ինքնավնասման և նույնիսկ ինքնասպանության աճի: Ես դա իմ մաշկի վրա եմ զգացել, քանի որ իմ հայրը տարիներ առաջ մահացավ՝ ինքնասպանություն գործելով: Նրա մահը ցնցեց և մեծ վիշտ պատճառեց ինձ և իմ ընտանիքին: Տարիներ պահանջվեցին իմ վիշտը հաղթահարելու համար, և միայն վերջերս իմացա, որ ինքնասպանության մասին պատշաճ ձևով խոսելն իրականում օգնում է կանխել այն, այլ ոչ թե խրախուսում է դա:[17] Ես իմ երեխաների հետ բացահայտ քննարկել եմ իմ հայրիկի մահը և ականատես եմ եղել այն ապաքինմանը, որը Փրկիչը կարող է տալ վարագույրի երկու կողմերում գտնվող մարդկանց:[18]

Դժբախտաբար, ծանր ընկճախտից տառապող մարդկանցից շատերը հեռանում են իրենց ընկերակից Սրբերից, քանի որ կարծում են, որ չեն համապատասխանում ինչ-որ երևակայական մարդու չափանիշներին: Մենք կարող ենք օգնել նրանց իմանալ, որ սա իսկապես նրանց տեղն է: Կարևոր է հասկանալ, որ ընկճախտը թուլության արդյունք չէ, ոչ էլ այն սովորաբար արդյունք է մեղքի:[19] Այն «մեծանում է գաղտնիության մեջ, սակայն փոքրանում է կարեկցանքի դեպքում»:[20] Միասին մենք կարող ենք ճեղքել մեկուսացման և խարանի ամպերը, որպեսզի ամոթի բեռը հեռացվի և ապաքինման հրաշքները տեղի ունենան:

Իր մահկանացու ծառայության ընթացքում Հիսուս Քրիստոսը բժշկեց հիվանդներին և տառապողներին, բայց յուրաքանչյուր ոք ստիպված էր հավատք դրսևորել Նրա հանդեպ և գործել՝ Նրա բժշկումը ստանալու համար: Ոմանք կտրել էին երկար ճանապարհ, ոմանք էլ մեկնել ձեռքը՝ դիպչելու Նրա հագուստին, իսկ մյուսներին պետք է բերեին Նրա մոտ, որպեսզի բուժվեին:[21] Երբ գործը հասնում է ապաքինման, արդյո՞ք մենք բոլորս, որ հուսալքված ենք, Նրա կարիք չունենք: «Մի՞թե մենք բոլորս մուրացկաններ չենք»:[22]

Եկեք հետևենք Փրկիչի ուղուն և մեծացնենք մեր կարեկցանքը, քչացնենք դատելու մեր միտումները և դադարենք լինել ուրիշների հոգևոր վիճակի հսկիչները: Միրով լսելը ամենամեծ նվերներից մեկն է, որը մենք կարող ենք առաջարկել, և մենք կարող ենք օգնել՝ կրելով կամ հոգեպես բարձրացնելով այն ծանր ամպերը, որոնք խեղդում են մեր սիրելիներին և ընկերներին,[23] որպեսզի մեր սիրո միջոցով նրանք կարողանան մի անգամ ևս զգալ Սուրբ Հոգին և ընկալել այն լույսը, որը ճառագում է Հիսուս Քրիստոսից:

Եթե անընդհատ շրջապատված եք «խավարի մեգով»,[24] դիմեք Երկնային Հորը: Ձեզ հետ կատարված ոչ մի բան չի կարող փոխել այն հավերժական ճշմարտությունը, որ դուք Նրա զավակն եք, և որ Նա սիրում է ձեզ:[25] Հիշեք, որ Քրիստոսը ձեր Փրկիչն ու Քավիչն է, իսկ Աստված ձեր Հայրն է: Նրանք հասկանում են:

Պատկերացրեք նրանց ձեր կողքին՝ լսելով և աջակցություն առաջարկելով:[26] «[Նրանք] կմխիթարեն ձեզ ձեր չարչարանքների մեջ»:[27] Արեք հնարավոր ամեն բան և ապավինեք Տիրոջ քավող շնորհին:

Ձեր տառապանքները չեն որոշում ձեր էությունը, բայց դրանք կարող են *զտել* ձեզ:[28] «Մարմնի խայթի» շնորհիվ[29] դուք գուցե կարողանաք ավելի շատ կարեկցանք զգալ ուրիշների հանդեպ: Սուրբ Հոգուց առաջնորդվելով, կիսվեք ձեր պատմությամբ, որպեսզի «սատարեք թույլերին, բարձրացնեք ընկած ձեռքերը և ամրացնեք տկար ծնկները»:[30]

Նրանց համար, ովքեր ներկայումս տառապում են կամ աջակցում են որևէ մեկին, ով տառապում է, եկեք պատրաստ լինենք հետևելու Աստծո պատվիրաններին, որպեսզի մենք միշտ ունենանք Նրա Հոգին մեզ հետ:[31] Եկեք անենք «փոքր և հասարակ բաներ»,[32] որոնք մեզ հոգևոր ուժ կտան: Ինչպես Ռասսել Մ. Նելսոնն է ասել. «Ոչ մի բան այնպես չի բացում երկինքները, ինչպես աճող մաքրության համակցությունը՝ ճշգրիտ հնազանդության, անկեղծ որոնման, Մորմոնի Գրքում Քրիստոսի խոսքերով ամենօրյա սնուցման և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքին կանոնավոր ժամանակ տրամադրման հետ»:[33]

Եկեք հիշենք, որ մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսն, «իր [վրա է առել] մեր թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, . . . ինչպես սատարել [մեզ]՝ ըստ մեր թուլությունների»:[34] Նա եկավ, որ «կոտրած սիրտ ունեցողներին բժշկի, . . . բոլոր սգավորներին մխիթարի . . . որ նորանց փառք տրուի մոխրի տեղ, ուրախութեան իւղ՝ սուգի տեղ, գովութեան պատմուճան՝ հանգուած սրտի տեղ»:[35]

Ես վկայում եմ ձեզ, որ «ամպերի և արևի շողերի միջով» Տերը մնում է մեզ հետ, որ մեր «չարչարանքները կուլ են գնում Քրիստոսի ուրախության մեջ»,[36] և «շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել»:[37] Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը կվերադառնա Երկիր՝ «իր թևերի մեջ ունենալով բժշկություն»:[38] Ի վերջո, Նա « կ՚ջնջէ բոլոր արտասուքը մեր աչքերիցը. եւ այլեւս չի լինիլ սուգ»:[39] Բոլոր նրանք, ովքեր «կգան Քրիստոսի մոտ և կկատարելագործվեն Նրանում»,[40] «արեւն այլ եւս պիտի մար չմտնէ, այլ Եհովան պիտի լինի [մեր] յաւիտենական լոյսը, եւ պիտի վերջանան [մեր] սուգի օրերը»:[41] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. “Abide with Me!” *Hymns,* no. 166.
2. Երբ մենք ամպերից վեր էինք, մենք չէինք կարող պատկերացնել այն խավարը, որն ընկած էր մեզանից մի քանի մետր ներքև, իսկ երբ մեզ ներքևում խավարը ծածկեց, դժվար էր պատկերացնել արևի պայծառությունը, որը փայլում էր մեզանից ընդամենը մի քանի մետր վերև:
3. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
4. «Ոգին ու մարմինը՝ մարդու հոգին են» (Վարդապետություն և Ուխտեր 88.15): «Ձեր մարմինը ձեր հոգու տաճարն է: Եվ այն, թե ինչպես կօգտագործեք ձեր մարմինը, կազդի ձեր հոգու վրա» (Ռասսել Մ. Նելսոն, «Որոշումներ հավերժության համար» *Լիահոնա,* նոյ. 2013, 107):
5. Օրինակ տես՝ Եսայիա 65.19, Ղուկաս 7.13, 3 Նեփի 17.6–7, Մովսես 7.28: Սովորելով ճանաչել և գնահատել մեր հույզերը, կօգնենք մեզ ավելի կառուցողական օգտագործել դրանք և ավելի շատ նմանվել մեր Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին:
6. See “Sadness and Depression,” kidshealth.org/en/kids/depression.html.
7. Hermana Elena Aburto blog, hermanaelenaaburto.blogspot.com/2015/08. Նա նաև գրել է.

   «Այդ փորձությունն ինձ հնարավորություն տվեց իսկապես գործադրելու իմ հավատը փրկության ծրագրի նկատմամբ: Որովհետև ես գիտեի, որ իմ Երկնային Հայրը սիրում էր ինձ, և որ նա ծրագիր ուներ ինձ համար, և որ Քրիստոսն իսկապես գիտեր, թե ինչպես եմ տառապում»:

   Աստված ամոթանք չի տալիս,
   երբ հմտության պակաս ունեք:
   Նա ուրախությամբ օգնում է ձեզ
   կատարելագործվել և ապաշխարել: Նա չի
   ակնկալում, որ դուք ամեն ինչ միանգամից
   շտկեք: Կարիք չկա, որ դուք դա միայնակ
   անեք» (iwillhealthee.blogspot.com/2018/09):
8. Անձնական նամակագրություն Նա նաև գրել է. «Իմ Փրկիչի Քավության բուժիչ բալասանն իմ ճամփորդության ընթացքում եղել է խաղաղության և ապահովության ամենաառաջին աղբյուրը: Երբ ես մենակ եմ զգում իմ տառապանքների մեջ, ես հիշում եմ, որ Նա արդեն զգացել է հենց այն, ինչի միջով անցնում եմ ես: . . . Մեծ հույս է տալիս այն գիտելիքը, որ իմ ապագա կատարելագործված, հարություն առած մարմինը չի տանջվի այս մահկանացու [չարչարանքից]»:
9. Տես Russell M. Nelson, “Perfection Pending,” *Ensign,* Nov. 1995, 86–88, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո», *Լիահոնա,* նոյ. 2017, 40–42, Ջ. Դեվն Քորնիշ, «Արդյո՞ք ես բավականաչափ լավն եմ: Արդյոք ես կիասնե՞մ սելեստիալ արքայություն»: *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 32–34, Սեսիլ Օ. Սեմյուելսոն «Ի՞նչ է նշանակում կատարյալ լինել: *New Era,* Jan. 2006, 10–13.
10. Այս խնդիրների մասին կարևոր է խոսել մեր երեխաների, ընտանիքների և ընկերների հետ՝ մեր տներում, ծխերում և համայնքներում:
11. Մոսիա 18.8–9:
12. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Հիսուս Քրիստոս՝ Բժշկող Տերը,» *Լիահոնա,* նոյ. 2005, 85–88, Քերոլ Մ. Սթեֆենս, «Բժշկող Տերը», *Լիահոնա,* նոյ. 2016, 9–12:
13. Իմանալով, թե ինչպես ճանաչել նախանշաններն ու ախտանիշները մեր և ուրիշների մեջ, կարող է օգտակար լինել մեր և ուրիշների համար: Մենք կարող ենք նաև հայտնաբերել սխալ կամ անառողջ մտածելակերպի օրինաչափությունները և սովորել, թե ինչպես փոխարինել դրանք ավելի ճշգրիտ և առողջ մտածելակերպով:
14. Ընկճախտ կարող է առաջանալ նաև դրական կենցաղային փոփոխությունների պատճառով, ինչպիսիք են՝ երեխայի ծնունդը կամ նոր գործը, և կարող է առաջանալ, երբ մարդու կյանքում ամեն ինչ լավ է:
15. See “Understanding Stress,” *Adjusting to Missionary Life* (2013), 5–10.
16. Տես Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Ինչպես կոտրված անոթը», *Լիահոնա,* նոյ. 2013, 40:
17. See Dale G. Renlund, “Understanding Suicide” (video), ChurchofJesusChrist.org; “Talking about Suicide” (video), ChurchofJesusChrist.org; Kenishi Shimokawa, “Understanding Suicide: Warning Signs and Prevention,” *Liahona,* Oct. 2016, 35–39.
18. «Բուժման սկզբում պահանջվում է մանկական հավատք այն անդառնալի փաստի հանդեպ, որ Երկնային Հայրը

սիրում է ձեզ և տվել է բժշկվելու ճանապարհը: Նրա Սիրեցյալ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, տվեց Իր կյանքը այդ բուժումն ապահովելու համար: Սակայն չկա հրաշագործ լուծում, չկա հասարակ դեղամիջոց բժշկվելու համար, ոչ էլ հեշտ ճանապարհ դեպի լիարժեք ապաքինումը: Բժշկումը պահանջում է խոր հավատք առ Հիսուս Քրիստոս և բուժելու Նրա անսահման կարողությունը» (Ռիչարդ Գ. Սքոտ, «Բուժել բռնության կործանարար հետևանքները» *Լիահոնա,* մայիս 2008, 42): Երբ խնդիր կա, մեր միտումն այն շտկելն է: Այնուամենայնիվ, մենք չպետք է դառնանք մեր կամ մյուսների խնդիրների միակ շտկողները: Պարտադիր չէ, որ ամեն ինչ ինքներս անենք: Իմ կյանքում բազումառիթներով ես դիմել եմ թերապևտների, որպեսզի ինձ օգնեն անցնել դժվար ժամանակների միջով:

19. Տես Հովհաննես 9.1–7:
20. Jane Clayson Johnson, *Silent Souls Weeping* (2018), 197.
21. Տես Մատթեոս 9.2–7, 20–22, 14.35–36, Մարկոս 1.40–42, 2.3–5, 3 Նեփի 17.6–7:
22. Մոսիա 4.19, Տես նաև Ջեֆրի Ռ. Հոլլանդ. «Մի՞թե մենք բոլորս մուրացկաններ չենք»: *Լիահոնա,* նոյեմբեր 2014, 40–42:
23. Տես Հռովմեացիս 2.19, 13.12, տես նաև Ջեֆրի Ռ. Հոլլանդ, "Come unto Me" (Brigham Young University devotional, Mar. 2, 1997), speeches.byu.edu:
24. 1 Նեփի 8.23, տես նաև 1 Նեփի12.4, 17, 3 Նեփի 8.22:
25. Տես Սաղմոս 82.6, Հռովմեացիս 8.16–18, Վարդապետություն և Ուխտեր 24.1, 76.24, Մովսես 1.1–39:
26. Տես *Adjusting to Missionary Life* 20, տես նաև Միքիայի մարգարեությունը 7.8, Մատթեոս 4.16, Ղուկաս 1.78–79, Հովհաննես 8.12:
27. Հակոբ 3.1, տես նաև Եփեսացիս 5.8, Կողոսացիս 1.10–14, Մոսիա 24.13–14, Ալմա 38.5: Կարդացեք ձեր հայրապետական օրհնությունը կամ խնդրեք քահանայության օրհնություն, որպեսզի կարողանաք լսել և հիշել, թե երկնային Հայրը որքան է սիրում ձեզ և ցանկանում է օրհնել ձեզ:
28. Տես Բ Կորնթացիս 4.16–18, Վարդապետություն և Ուխտեր 121.7–8, 33, 122.5–9:
29. Բ Կորնթացիս 12.7:
30. Վարդապետություն և Ուխտեր 81.5, տես նաև Եսայիա 35.3:
31. Տես Մորոնի 4.3, Վարդապետություն և Ուխտեր 20.77:
32. Ալմա 37.6:
33. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 95:
34. Ալմա 7.12, տես նաև Եսայիա 53.4, 2 Նեփի 9.21, Մոսիա 14.4:
35. Եսայիա 61.1–3, տես նաև Ղուկաս 4.18:
36. Ալմա 31.38, տես նաև Ալմա 32.43, 33.23:
37. 2 Նեփի 25.23:
38. Մաղաքիա 4.2, 3 Նեփի 25.2:
39. Հայտնություն 21.4:
40. Մորոնի 10.32:
41. Եսայիա 60.20:

ԼԻԶԱ Լ. ՀԱՐԿՆԵՍ
Երեխաների Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Պատվելով Նրա անունը

Ուխտի ինքնությամբ և պատկանելությամբ, մեզ կոչում են Հիսուս Քրիստոսի անունով:

Երբ ծնողները հուզմունքով սպասում են երեխայի ծնվելուն, նրանք պարտավոր են ընտրել իրենց նոր երեխայի անունը: Գուցե, երբ ծնվել եք, ստացել եք մի անուն, որը ձեր ընտանիքում փոխանցվել է սերնդե-սերունդ: Կամ, գուցե, ձեր անունը հանրաճանաչ է եղել այդ տարի կամ այդ տարածքում, որտեղ դուք ծնվել եք:

Հելաման մարգարեն ու նրա կինը իմաստալից ընտանեկան անուններ տվեցին իրենց նորածին որդիներին՝ Նեփիին և Լեքիին: Ավելի ուշ Հելամանն ասաց իր որդիներին.

«Ահա, ես տվել եմ ձեզ մեր առաջին ծնողների անունները, . . . որ երբ դուք հիշեք ձեր անունները, դուք կարողանաք հիշել նրանց. և երբ դուք հիշեք նրանց, դուք կարողանաք հիշել նրանց գործերը. . . . որ ասվել է, և նաև գրվել, որ դրանք բարի էին:

Հետևաբար, իմ որդինե՛ր, ես կկամենայի, որ դուք անեք այն, ինչ բարի է»:[1]

Նեփիի և Լեքիի անունները նրանց օգնեցին հիշել իրենց նախնիների բարի գործերը և խրախուսեցին նրանց նույնպես բարիք գործել:

Քույրե՛ր, անկախ նրանից, թե որտեղ ենք մենք ապրում, ինչ լեզվով ենք խոսում, կամ 8 տարեկան ենք, թե՝ 108, բոլորս ունենք ընդհանուր մի հատուկ անուն, որն ունի այս նույն նպատակները:

«Վասնզի [ամենքս]՝ որ Քրիստոսումը մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք . . . որովհետեւ [մենք] ամենքս մէկ ենք Քրիստոս Յիսուսումը»:[2]

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, «սկզբում մեր պատրաստակամությունը հայտնեցինք մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը՝ մկրտության արարողության շնորհիվ»:[3] Այդ ուխտի ժամանակ մենք խոստացանք, որ միշտ կհիշենք Նրան, կպահենք Նրա պատվիրանները և կծառայենք ուրիշներին: Այս ուխտը պահելու մեր պատրաստակամությունը թարմացվում է յուրաքանչյուր կիրակի օր, երբ մենք մասնակցում ենք հաղորդությանը, և

ևս մեկ անգամ ուրախանում «կյանքի նորոգության մեջ [ման գալու] *օրհնությամբ*»:[4]

Անունը, որը մեզ տրվել է հենց սկզբից, արտացոլում է մեր անհատական ինքնությունը և օգնում է մեզ մասը կազմել մեր երկրային ընտանիքների: Սակայն, երբ մկրտության ժամանակ «վերստին ծնվեցինք», մեր ինքնության մասին հասկացողությունը մեծացավ: «Ուխտի շնորհիվ, որ դուք արել եք, դուք կկոչվեք Քրիստոսի զավակներ . . . քանզի ահա, . . . նա հոգով ծնեց ձեզ. քանզի դուք ասում եք, որ ձեր սրտերը փոխվել են նրա անվան հանդեպ հավատքի միջոցով. հետևաբար, դուք ծնվել եք նրանից»:[5]

Այսպիսով, ուխտի ինքնությամբ և պատկանելությամբ, մեզ կոչում են Հիսուս Քրիստոսի անունով: Եվ «տրված չի լինի ո՛չ ուրիշ անուն, ո՛չ ուրիշ ճանապարհ, ո՛չ էլ միջոց, որի շնորհիվ կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին. միայն Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով»:[6]

Հիսուս Քրիստոսի անունը հայտնի է եղել դեռևս Նրա ծնունդից շատ առաջ: Բենիամին Թագավորին հրեշտակը մարգարեացել է. «Եվ նա կկոչվի Հիսուս Քրիստոս, Աստծո Որդի, . . . և նրա մայրը կկոչվի Մարիամ»:[7] «Քավիչ սիրո»[8] Նրա գործը նույնպես հայտնի է դարձվել Աստծո զավակներին այն ժամանակից սկսած, ինչ ավետարանը եղել է Երկրի վրա, Ադամի և Եվայի օրերից մինչև հիմա, որ նրանք իմանան «թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:[9]

Անցյալ տարի Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը «մարգարեական խնդրանք» հղեց քույրերին՝ «ապագան կառուցելու համար օգնեք հավաքել ցրված Իսրայելը»: Նա հրավիրեց մեզ կարդալ Մորմոնի Գիրքը և «նշել այն հատվածները, որոնք խոսում են կամ մատնացույց են անում Փրկիչին»: Նա մեզ խնդրեց «[մեր ընտանիքների] և ընկերների հետ անկեղծ խոսել Քրիստոսի մասին, հրճվել Քրիստոսով, և քարոզել Քրիստոսի մասին»: Գուցե դուք սկսել եք ճանաչել նրա խոստման պտուղները, որ «դուք և նրանք ավելի կմոտենաք Փրկիչին: . . . Եվ փոփոխություններ,

նույնիսկ հրաշքներ, կսկսեն տեղի ունենալ»:[10]

Փրկիչին հետևելու մեր խոստումը մեզ ուժ է տալիս, որպեսզի պաշտպանենք ճշմարտությունն ու արդարությունը՝ անկախ նրանից՝ արդյոք մենք գտնվում ենք մեծ բազմության մեջ, թե մեր մենավոր վայրերում, որտեղ ոչ ոք չգիտի մեր գործողությունները, բացառությամբ՝ Աստծո: Երբ մենք հիշում ենք Նրան և Նրա անունը, որը կրում ենք, մենք մեզ թույլ չենք տալիս ինքնանվաստացնող համեմատություններ կամ ամբարտավան դատողություններ անել: Կենտրոնանալով Փրկիչի վրա, մենք մեզ տեսնում ենք այնպես, ինչպիսին իրականում կանք՝ Աստծո նվիրական զավակի:

Հիշելով մեր ուխտը՝ մենք մի կողմ ենք դնում աշխարհիկ անհանգստությունները, անվստահությունը փոխարինում քաջությամբ և հույս տածում փորձության ժամանակ:

Իսկ երբ ուխտի ճանապարհին մեր զարգացման ընթացքում սայթաքում և ընկնում ենք, պետք է միայն հիշենք Նրա անունը և մեր հանդեպ Նրա սիրառատ բարությունը: «Քանզի նա ունի ողջ զորությունը, ողջ իմաստությունը և ողջ հասկացողությունը. նա ըմբռնում է բոլոր բաները, և նա ողորմած Էակ է, . . . ի փրկություն նրանց, ովքեր կապաշխարեն ու կհավատան նրա անունին»:[11] Անշուշտ, Հիսուսի անունից ավելի քաղցր ձայն չկա բոլոր նրանց համար, ովքեր կոտրված սրտով և փշրված հոգով փորձում են «ավելի լավ գործել և ավելի լավը լինել»:[12]

Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Անցել են այն օրերը, երբ դուք կարող էիք լինել հանգիստ և անհոգ քրիստոնյաներ: Ձեր կրոնը միայն կիրակի օրը Եկեղեցում հայտնվելու համար չէ: Խոսքն իսկական աշակերտ լինելու մասին է՝ կիրակի առավոտից մինչև շաբաթ երեկո: . . . Տեր Հիսուս Քրիստոսի կես դրույքով աշակերտ չի լինում»:[13]

Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու մեր պատրաստակամությունն

ավելին է, քան բառերի պաշտոնական փոխանակում: Դա պասիվ խոստում կամ մշակութային հնարամտություն չէ: Դա ծիսակատարության ուղերձ կամ անվանապիտակ չէ, որը մենք կրում ենք: Դա ասացվածք չէ, որ մենք պարզապես դնում ենք դարակի վրա կամ կախում պատից: Նրա անունը «հագած ենք»,[14] գրված է մեր սրտերում և «փորագրված [մեր] դեմքին»:[15]

Փրկիչի քավիչ զոհաբերությունը պետք է միշտ հիշել՝ մեր մտքում, գործողություններում և ուրիշների հետ հարաբերություններում: Նա ոչ միայն հիշում է *մեր անունները,* այլև Նա միշտ հիշում է *մեզ*: Փրկիչը հայտարարել է.

«Քանզի կարո՞ղ է կինը մոռանալ իր ծծկեր մանկանը, որ կարեկցանք չունենա իր արգանդի որդուն: Այո՛, նրանք կարող է մոռանան, սակայն ես քեզ չեմ մոռանա, ո՛վ Իսրայելի տուն:

Ահա, ես փորագրել եմ քեզ իմ ձեռքերի ափերի վրա»:[16]

Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն ուսուցանել է. «Պատվե՛ք այն անունները, որոնք կրում եք, որովհետև մի օր դուք արտոնություն և պարտավորություն կունենաք հաշվետվություն տալու . . . ձեր Հորը երկնքում, . . . թե դուք ինչպես եք վարվել [այդ անունների] հետ»:[17]

Նեփիի ու Լեքիի խնամքով ընտրված անունների նման, կարո՞ղ ենք ասել և գրել մեր մասին, որ մենք Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ենք: Արդյո՞ք մենք պատվում ենք Հիսուս Քրիստոսի անունը, որը մենք պատրաստակամորեն վերցրել ենք մեզ վրա: Արդյո՞ք մենք «պաշտոնյա և վկա ենք»[18] Նրա սիրասուն և քավիչ զորության:

Վերջերս ես լսում էի Մորմոնի Գիրքը: 2 Նեփիի վերջին գլխում ես *լսեցի,* թե ինչպես Նեփին ասաց մի բան, որը նախկինում երբեք չէի *կարդացել:* Իր հիշատակարանում նա ամբողջությամբ ուսուցանում և վկայում է «Քավիչի», «Իսրայելի Սուրբի», «Աստծո գառի» և «Մեսիայի» մասին: Բայց իր պատմության վերջում ես լսեցի նրա այս խոսքերը. «Ես հրճվում եմ պարզությամբ. ես հրճվում եմ ճշմարտությամբ. ես հրճվում եմ *իմ Հիսուսով,* քանզի նա փրկագնել է իմ հոգին»:[19] Երբ լսեցի այս խոսքերը, սիրտս ուրախացավ, և ես ուզեցի կրկին ու կրկին լսել: Ես ճանաչեցի և արձագանքեցի այդ հատվածին ճիշտ այնպես, ինչպես կճանաչեի և կարձագանքեի իմ անվանը:

Տերն ասել է. «Այո՛, օրհնված է այս ժողովուրդը, որոնք հոժար են կրել իմ անունը, քանզի իմ անունով պիտի նրանք կոչվեն. և նրանք իմն են»:[20]

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, «եկեք ուրախությամբ [մեզ վրա վերցնենք] Քրիստոսի անունը[21] և պատվենք Նրա անունը՝ սիրով, նվիրվածությամբ և բարի գործերով: Ես վկայում եմ, որ Նա է «Աստծո Գառը, այո, հիրավի, Հավերժական Հոր Որդին»:[22] Նրա սուրբ զավակի՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հելաման 5.6–7:
2. Գաղատացիս 3.27–28:
3. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Ուխտերի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2009, 20:
4. Հռովմայեցիս 6.4:
5. Մոսիա 5.7:
6. Մոսիա 3.17:
7. Մոսիա 3.8:
8. Ալմա 26.13:
9. 2 Նեփի 25.26:
10. Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, «Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 69–70:
11. Ալմա 26.35:
12. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել», *Լիահոնա,* մայիս, 2019թ.,68:
13. Russell M. Nelson, “Disciples of Jesus Christ—Defenders of Marriage” (Brigham Young University commencement, Aug. 14, 2014), 3, speeches.byu.edu.
14. Գաղատացիս 3.27:
15. Ալմա 5.19:
16. 1 Նեփի 21.15–16:
17. George Albert Smith, “Your Good Name,” *Improvement Era,* Mar. 1947, 139.
18. Գործք Առաքելոց 26.16:
19. 2 Նեփի 33.6, շեշտադրումն ավելացված է:
20. Մոսիա 26.18:
21. Ալմա 46.15:
22. 1 Նեփի 11.21:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Դալլին Հ. Օուքս
Առաջին Խորհրդական

Ռասսել Մ. Նելսոն
Նախագահ



Հենրի Բ. Այրինգ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Մ. Ռասսել Բալլարդ

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Գարի Ի. Սթիվենսոն



Դեյլ Գ. Ռենլանդ



Գերիթ Վ . Գոնգ



Ուլիսես Սոարես

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Պատրիկ Քիրոն

Քարլ Բ. Քուք

Ռոբերտ Ս. Գայ

Տերենս Մ. Վինսոն

Հոսե Ա. Թեքսեյրա

Կառլոս Ա. Գոդոյ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆԱՎՈՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



Դին Մ. Դեյվիս
Առաջին Խորհրդական

Ջեռալդ Կոսե
Նախագահող Եպիսկոպոս

Վ. Քրիսթոֆեր Վաղել
Երկրորդ Խորհրդական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ



Միլթոն Կամարգո
Առաջին Խորհրդական

Մարկ Լ. Փեյս
Նախագահ

Ժան Է. Նյուման
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ



Միշել Քրեյգ
Առաջին Խորհրդական

Բոննի Հ. Քորդոն
Նախագահ

Բեքի Քրեյվեն
Երկրորդ Խորհրդական

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Շերոն Յուբեն
Առաջին Խորհրդական

Ջին Բ. Բինգհեմ
Նախագահ

Ռեյնա Ի. Ըբարթո
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Լիզա Լ. Հարկնես
Առաջին Խորհրդական

Ջոյ Դ. Ջոնս
Նախագահ

Քրիստինա Բ. Ֆռանկո
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ



Դուգլաս Դ. Հոլմս
Առաջին Խորհրդական

Սթեֆեն Վ. Օուեն
Նախագահ

Մ. Ջոզեֆ Բրոու
Երկրորդ Խորհրդական

Հոկտեմբեր 2019



ԲՈՆՆԻ Հ. ՔՈՐԴՈՆ
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Սիրելի դուստրեր

Երիտասարդ Կանանց Միությունում մեր կատարած գործերի առանցքում մեր ցանկությունն է՝ օգնել ձեզ ձեռք բերել անսասան հավատք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Իմ սիրելի քույրեր, ուրախ եմ ձեզ հետ լինելու համար: Մենք վկա ենք առատ հայտնությունների, որոնք հոգևորապես թե՛ ծանր են, թե՛ հուզիչ:

Սկզբում ես կկամենայի ներկայացնել ձեզ իմ մի քանի ընկերների: Նրանք երիտասարդ կանայք են, ովքեր ունեն առանձնահատուկ տաղանդներ, սովորություններ և անհատական ու ընտանեկան հանգամանքներ: Նրանցից յուրաքանչյուրը, ինչպես դուք բոլորդ, գրավել է իմ սիրտը:

Նախ՝ ծանոթացեք Բելլայի հետ: Նա ամուր կանգնած միակ երիտասարդ կինն է Իսլանդիայի իր ճյուղում:

Ծանոթացեք Աֆրիկայից մի նվիրյալի՝ Ջոզեֆինի հետ, ով կրկին ստանձնել է Մորմոնի Գիրքն ամեն օր ուսումնասիրելու հանձնառությունը: Նա բացահայտում է այն զորությունն ու օրհնությունները, որոնք ստանում ենք այս պարզ, հավատարիմ գործողության արդյունքում:

Եվ, ի վերջո, ծանոթացեք իմ սիրելի ընկերուհու՝ Էշթինի հետ՝ մի արտասովոր երիտասարդ կնոջ, ով մահացավ քաղցկեղի դեմ վեց տարի պայքարելուց հետո: Նրա ամուր վկայությունը Հիսուս Քրիստոսի Քավության մասին դեռ արձագանքում է իմ սրտում:

Դուք *բոլորդ* հրաշալի երիտասարդ կանայք եք: Դուք առանձնահատուկ եք՝ յուրաքանչյուրդ ձեր պարգևներով ու փորձառություններով, սակայն նաև նման եք իրար շատ կարևոր ու հավերժական ձևով:

Դուք բառացիորեն Երկնային Ծնողների հոգևոր դուստրերն եք, և ոչինչ չի կարող բաժանել ձեզ Նրանց սիրուց և ձեր Փրկիչի սիրուց:[1] Երբ դուք ավելի եք մոտենում Նրան՝ անգամ փոքր մանկական քայլերով առաջ գնալով, բացահայտում եք տևական խաղաղությունը, որը բնակություն է հաստատում, որպես մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտի, ձեր հոգում:

Մեր սիրելի մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խնդրել է, որ ես կիսվեմ մի քանի ոգեշնչված փոփոխություններով, որոնք կօգնեն ձեզ «զարգացնել [ձեր] անձնական և սրբազան ներուժը»[2] և կմեծացնեն ձեր արդար ազդեցությունը: Ես կանդրադառնամ այդ փոփոխությունների չորս ոլորտներին:

Երիտասարդ Կանանց Թեմա

Առաջինը՝ Երիտասարդ Կանանց Միությունում մեր կատարած գործերի առանցքում մեր ցանկությունն է՝ օգնել ձեզ ձեռք բերել անսասան հավատք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ,[3] և ստանալ ձեր՝ որպես Աստծո դուստրերի, աստվածային ինքնության վստահ գիտակցումը:

Այս երեկո ես կցանկանայի հայտարարել Երիտասարդ Կանանց թեմայի վերանայման մասին: Ես աղոթում եմ, որ դուք զգաք, որ Սուրբ Հոգին կվկայի այս խոսքերի ճշմարտությունը, երբ ես հաղորդեմ նոր թեման.

Ես Երկնային Ծնողների սիրելի դուստրն եմ՝[4] աստվածային էությամբ և հավերժական ճակատագրով:[5]

Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտ,[6] ես ձգտում եմ նմանվել Նրան:[7] Ես ձգտում և գործում եմ լուսո անձնական հայտնության[8] և ծառայում եմ ուրիշներին Նրա սուրբ անունով:[9]

Ես կկանգնեմ որպես Աստծո վկա բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր տեղերում:[10]

Զգուշով արժանանալ վերացման,[11] ես փայփայում եմ ապաշխարության պարգևը[12] և ձգտում եմ կատարելագործվել ամեն օր:[13] Հավատքով[14] ես կամրացնեմ իմ տունը և ընտանիքը,[15]

Բելլա, Իսլանդիայից

Ջոզեֆին, Աֆրիկայից

Էշթին, ով պայքարում էր քաղցկեղի դեմ

կկապեմ ու կպահեմ սրբազան ուխտերը,[16] *և կատանամ տուրք տաճարի պարտողությունները*[17] *և օրհնությունները:*[18]

Նկատեք անցումը «մենք»-ից դեպի «ես»-ը: Այս ճշմարտություններն անհատապես կիրառելի են քեզ համար: Դու Երկնային Ծնողների սիրելի դուստրն *ես:* Դու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի ուխտի աշակերտն *ես*: Ես կոչ եմ անում ձեզ ուսումնասիրել և խորհել այս խոսքերի շուրջ: Ես գիտեմ, որ երբ դուք անեք այդ, ձեռք կբերեք վկայություն դրանց ճշմարտացիության մասին: Հասկանալով այդ ճշմարտությունները, դուք այլ կերպ կվերաբերվեք դժվարություններին: Իմանալով ձեր ինքնությունը և նպատակը, կհամաձայնեցնեք ձեր կամքը Փրկիչի կամքի հետ:

Երբ հետևեք Հիսուս Քրիստոսին, դուք կգտնեք խաղաղություն և առաջնորդություն:

Երիտասարդ Կանանց դասարանները

Փոփոխությունների երկրորդ ոլորտը վերաբերում է Երիտասարդ Կանանց դասարաններին: Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Շատ հաճախ մարդիկ կյանքի փոթորիկներից ամենից առավել պաշտպանվելու կարիք ունեն սրբավայրերում»:[19] Մեր դասարանները պետք է սրբավայրեր լինեն՝ փոթորիկներից պաշտպանվելու համար, և ապահով վայր՝ սիրո և պատկանելության համար: Ջանալով ստեղծել ավելի ամուր միասնություն, ամրապնդել ընկերությունը և մեծացնել պատկանելության զգացումը Երիտասարդ Կանանց շրջանում, մենք որոշ փոփոխություններ ենք կատարում դասարանների կառուցվածքի մեջ:

Ավելի քան 100 տարի երիտասարդ կանայք բաժանված են եղել երեք դասարանների: Անմիջապես սկսելով, մենք հրավիրում ենք Երիտասարդ Կանանց ղեկավարներին ու եպիսկոպոսներին աղոթքով դիտարկել յուրաքանչյուր երիտասարդ կնոջ կարիքները և կազմավորել նրանց ըստ ծխի հատուկ հանգամանքների: Ահա մի քանի օրինակ, թե ինչպես պետք դա արվի:

- Եթե դուք ունեք փոքր թվով երիտասարդ կանայք, կարող եք ունենալ Երիտասարդ Կանանց դասարան, որտեղ կընդգրկվեն բոլորը միասին:
- Հավանաբար դուք ունեք 12 տարեկան երիտասարդ կանանց մի մեծ խումբ և երիտասարդ կանանց մի փոքր խումբ, ովքեր տարիքով ավելի մեծ են: Կարող եք կազմավորել երկու դասարան՝ Երիտասարդ Կանայք 12 և Երիտասարդ Կանայք 13–18:
- Կամ, եթե դուք ունեք մեծ ծուխ, որտեղ հաճախում են 60 երիտասարդ կանայք, ապա կարող եք ունենալ վեց դասարան, յուրաքանչյուրը մի տարիքի համար՝ կազմավորված տվյալ տարում:

Ինչպես էլ որ ձեր դասարանները կազմավորված լինեն, դուք՝ երիտասարդ կանայք, կարևոր եք միասնության կառուցման գործում: Լույս եղեք ձեզ շրջապատողների համար: Սիրո և հոգատարության աղբյուր եղեք, որը դուք հույս ունեք ստանալ ուրիշներից: Աղոթքով սրտում խորհեք և շարունակեք բարություն դրսևորել և բարի ազդեցություն ունենալ: Եթե այդպես վարվեք, ձեր կյանքը կլցվի բարությամբ: Դուք ավելի լավ զգացումներ կունենաք ուրիշների հանդեպ և, փոխարենը, կստանաք նրանց բարությունը:

Երիտասարդ Կանանց դասարանների անունները

Երրորդը՝ այս նոր կազմավորված դասարաններով հանդերձ, բոլոր դասարանները կունենան մեկ միասնական անուն՝ «Երիտասարդ Կանայք»:[20] Մենք դադարում ենք օգտագործել Փեթակ, Համաստեղություն և Դափնի անունները:

Դասարանների նախագահությունների ուժեղացումը

Վերջին ոլորտը, որի մասին կցանկանայի խոսել, դասարանների նախագահությունների կարևորությունն է: Անկախ նրանից, թե ինչպես են կազմավորված Երիտասարդ Կանանց դասարանները, *յուրաքանչյուր դասարան պետք է ունենա նախագահություն:*[21] Աստվածային ծրագրով երիտասարդ կանայք կանչված են առաջնորդելու պատանի հասակում:

Քլոե

Դասարանի նախագահության դերն ու նպատակն ուժեղացվել է և ավելի հստակ սահմանվել: Փրկության աշխատանքն այդ նշանակալի

պարտականություններից մեկն է, հատկապես՝ սպասավորության, միսիոներական աշխատանքի, ակտիվացման, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքում:[22] Այո, այսպես ենք մենք հավաքում Իսրայելը.[23] մի փառավոր աշխատանք բոլոր երիտասարդ կանանց համար՝ որպես Տիրոջ երիտասարդների գումարտակ:

Ինչպես գիտեք, Եկեղեցու բոլոր մակարդակներում Տերը նախագահություններ է կանչում՝ Իր ժողովրդին ղեկավարելու համար: Երիտասարդ կանայք, դասարանի նախագահության անդամ լինելը կարող է լինել ձեր առաջին հնարավորությունը՝ մասնակցելու առաջնորդության այս ոգեշնչված օրինակին: Չափահաս ղեկավարներ, դասարանի նախագահության կոչումը դարձրեք առաջնահերթություն, իսկ հետո ղեկավարեք նրանց հետ կողք կողքի՝ ուսուցանելով և ուղղորդելով նրանց, որպեսզի նրանք կարողանան հաջողության հասնել:[24] Անկախ նրանից, թե ինչպիսին է դասարանի նախագահության ղեկավարման փորձառության մակարդակը, սկսեք այդ կետից և օգնեք նրանց զարգացնել այն հմտություններն ու վստահությունը, որոնք կօրհնեն նրանց՝ որպես ղեկավարներ: Մերտ կապերի մեջ եղեք նրանց հետ, բայց մի կառավարեք: Հոգին կուղղորդի ձեզ, երբ առաջնորդեք նրանց:

Ծնողների և ղեկավարների՝ որպես ուսուցիչների կարևոր դերը ցույց տալու համար ուզում եմ մի պատմություն պատմել: Քլոեն կանչվեց որպես դասարանի նախագահ: Նրա իմաստուն քահանայության ղեկավարը խրախուսեց նրան փնտրել Տիրոջ օգնությունը՝ իր նախագահության համար անուններ տալու գործում: Քլոեն աղոթեց և շատ արագ ոգեշնչում ստացավ, թե ում երաշխավորի որպես իր խորհրդականներ: Երբ նա շարունակեց խորհել և աղոթել քարտուղարի համար, Հոգին բազմիցս նրա ուշադրությունը կենտրոնացրեց մի երիտասարդ կնոջ վրա, ինչը զարմացրեց Քլոեին, քանի որ երիտասարդ կինը հազվադեպ էր հաճախում եկեղեցի կամ մասնակցում միջոցառումներին:

Մի փոքր վստահ չզգալով հուշման վերաբերյալ, Քլոեն խոսեց իր

մայրիկի հետ, ով բացատրեց, որ հայտնություն ստանալու եղանակներից մեկը կրկնվող մտքեր ունենալն է: Նորոգված վստահությամբ, Քլոեն զգաց, որ կարող է երաշխավորել այս երիտասարդ կնոջը: Եպիսկոպոսն առաջարկեց կոչումը, և երիտասարդ կինն ընդունեց: Ձեռնադրվելուց հետո այդ բարիացկամ քարտուղարն ասաց. «Գիտեք, ես երբեք չեմ զգացել, որ տեղ ունեմ կամ իմ կարիքը կա որևէ տեղ: Ես զգում էի, որ չեմ հարմարվի: Բայց այս կոչման վերաբերյալ կարծես զգում եմ, որ Երկնային Հայրը նպատակ և տեղ ունի ինձ համար»: Երբ Քլոեն և իր մայրը հեռացան ժողովից, Քլոեն շրջվեց ու դիմեց նրան. «Հայտնությունն իրական է: Հայտնությունն իրոք աշխատում է»:

Դասարանի նախագահություններ, դուք կանչված եք Աստծո կողմից, և ձեզ վստահված է Նրա դուստրերի խմբի առաջնորդությունը: Տերը ճանաչում է ձեզ. . . Նա ընտրել է ձեզ»:[25] Դուք *ձեռնադրվել եք* մեկի կողմից, ով ունի քահանայության իշխանություն. դա նշանակում է, որ երբ կատարում եք ձեր կոչման պարտականությունները, դուք գործադրում եք քահանայության իշխանությունը: Ձեզանից յուրաքանչյուրը կարևոր աշխատանք ունի կատարելու: Զգայուն եղեք Սուրբ Հոգու հուշումների հանդեպ և գործեք ըստ դրանց: Երբ այդպես վարվեք, դուք վստահությամբ կծառայեք, քանի որ մենակ չեք ծառայում:

Դասարանի նախագահնե՛ր, մենք ունենք ձեր իմաստության, կարծիքի ու եռանդի կարիքը ծխի երիտասարդների նոր խորհրդում, որի մասին Երեց Քվենթին Լ. Քուքը հայտարարեց այսօր: Դուք կարևոր մաս եք կազմում ձեր եղբայրների և քույրերի կարիքների լուծման գործում:[26]

Հուսով եմ, որ դասարանների կազմավորման և ղեկավարման այս փոփոխությունները կսկսվեն, հենց որ ծխերն ու ճյուղերը պատրաստ լինեն, բայց պետք է ավարտին հասցվեն մինչև 2020թ. հունվարի 1-ը:

Իմ սիրելի քույրեր, ես վկայում եմ, որ փոփոխությունները, որոնց մասին ես խոսեցի այսօր, ոգեշնչված ուղղորդումներ են Տիրոջից: Երբ մենք ջանասիրաբար կատարենք այս փոփոխությունները, մեր տեսադաշտից երբեք չենք կորցնի մեր նպատակը. ամրացնել մեր վճռականությունը՝ հետևելու Հիսուս Քրիստոսին և օգնելու ուրիշներին գալ Նրա մոտ: Ես վկայում եմ, որ սա Նրա Եկեղեցին է: Որքան երախտապարտ եմ Նրան, որ մեզ թույլ է տալիս լինել Իր սրբազան աշխատանքի շատ կարևոր մասը:

Ես աղոթում եմ, որ նույն Հոգին, որն ուղղորդում է այս փոփոխությունները, առաջնորդի ձեզ, երբ դուք առաջ ընթանաք ուխտի ճանապարհով: Ես վկայում եմ այդ մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Հռովմայեցիս 8.35–39:
2. Ռասսել Մ. Նելսոն, «Վկաներ, Ահարոնյան Քահանայության քվորումներ, Երիտասարդ Կանանց դասարաններ», *Լիահոնա,* նոյ. 2019թ., 39:
3. Տես Առակաց 3.5–7, Հակոբ 7.5:
4. Տես Հռովմեացիս 8.16–17, Վարդապետություն և Ուխտեր 76.24, Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
5. Տես Բ Պետրոս 1.3–4, Ալմա 37.44, Վարդապետություն և Ուխտեր 78.18, «Ընտանիք. Հայտարարություն ախարհին»:
6. Տես Հովհաննես 13.14–15, 35:
7. Տես Մատթեոս 22.37–39, 25.40, 3 Նեփի 12.48:
8. Տես Հովհաննես 16.13, 3 Նեփի 14.7–8, Մորոնի 7.13, 10.5, Վարդապետություն և Ուխտեր 8.2, 9.8, 11.13:
9. Տես Մատթեոս 20.26–28, 22.37–39, 25.34–40; 3 Նեփի 26.19:
10. Տես Եսայիա 43.10, Մոսիա 18.9, Վարդապետություն և Ուխտեր 14.8:
11. Տես Հռովմայեցիս 8.17, 2 Նեփի 9.18, 31.20, Վարդապետություն և Ուխտեր 84.38, 132.49, Մովսես 1.39:
12. Տես Հելաման 12.23, Մորոնի 10.33, Վարդապետություն և Ուխտեր 58.42:
13. Տես Ալմա 34.33, Վարդապետություն և Ուխտեր 82.18:

14. Տես Եբրայեցիս 11, 2 Նեփի 31.19–20, Ալմա 32.21:
15. Տես Հեսու 24.15, Վարդապետություն և Ուխտեր 109.8, 132.19:
16. Տես Ելից 19.5, 1 Նեփի 14.14, 2 Նեփի 11.5, Վարդապետություն և Ուխտեր 54.6, 66.2, 90.24:
17. Տես Մոսիա 13.30, Ալմա 30.3, Վարդապետություն և Ուխտեր 84.20–22, Հավատո Հանգանակ 1.3:
18. Տես Սաղմոս 24.3, Եսայիա 2.3, Եզեկիել 37.26:
19. Տես Նիլ Ա. Մաքսվել, *All These Things Shall Give Thee Experience* (1979), 55:
20. Դասարանները պետք է կոչվեն միասնական անունով՝ «Երիտասարդ Կանայք»: Որպեսզի գտնեք որևէ դասարան, ներառեք տարիքը, օրինակ՝ «Երիտասարդ Կանայք 12–14», «Երիտասարդ Կանայք 15–18» (տես *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում,* 10.1.5, ChurchofJesusChrist.org):
21. Երիտասարդ Կանանց յուրաքանչյուր դասարանի համար պետք է կանչվի դասարանի նախագահություն: Որտեղ հնարավոր է, պետք է կանչվի ամբողջական նախագահություն՝ նախագահով, երկու խորհրդականներով և քարտուղարով: Եթե կարիք կա, նախագահությունը կարող է կանչվել մասնակի (տես *Ձեռնարկ 2,* 10.3.5):
22. Տես *Ձեռնարկ 2,* 10.3.5:
23. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի Հույսը» (երիտասարդների համաշխարհային հոգևոր հավաք, 3 հունիսի, 2018թ), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org:
24. Լրացուցիչ հրահանգներ մատչելի են մեծահասակ Երիտասարդ կանանց առաջնորդների համար *Ձեռնարկ 2,* գլուխ 10:
25. Henry B. Eyring, “Rise to Your Call,” *Liahona,* Nov. 2002, 76.
26. Եթե դուք ունեք միայն մեկ դասարան և դասարանի մեկ նախագահություն, նախագահությունը լրիվ կազմով կարող է մասնակցել ծխի երիտասարդների խորհրդին Ահարոնյան Քահանայության քվորումի նախագահների հետ, որպեսզի երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց հավասարակշռություն լինի (տես *Ձեռնարկ 2,* 18.2.9):

ՆԱԽԱԳԱՀ ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ուխտի կանայք Աստծո հետ գործընկերության մեջ

Դառնալով ուխտի կանայք Աստծո հետ գործընկերության մեջ, Աստծո բարի ու հրաշալի դուստրերը միշտ հոգ են տարել, առաջնորդել են և սպասավորել են:

Ես երախտապարտ եմ այն օրհնության համար, որ կարող եմ խոսել ձեզ հետ՝ Աստծո ուխտի դուստրե՛ր: Այս երեկո իմ նպատակն է խրախուսել ձեզ այն մեծ ծառայության մեջ, որին դուք կանչված եք: Այո, Աստծո յուրաքանչյուր դուստր, ով լսում է իմ ձայնը, կանչ է ստացել Տեր Հիսուս Քրիստոսի կողմից:

Ձեր կանչը սկսվեց, երբ դուք եկաք մահկանացու կյանք, որի վայրն ու ժամանակը ձեզ համար ընտրված էր Աստծո կողմից, ով կատարելապես ճանաչում ու սիրում է ձեզ՝ որպես Իր դուստրեր: Հոգևոր աշխարհում Նա ճանաչում էր և ուսուցանեց ձեզ, ապա ուղարկեց ձեզ այնտեղ, որտեղ դուք կունենայիք աշխարհի պատմության մեջ բացառիկ հնարավորությունը՝ հրավիրվել մկրտության ավազանի մեջ: Այնտեղ դուք լսել եք այս խոսքերը,

որոնք ասվել են Հիսուս Քրիստոսի կանչված ծառայի կողմից. «Լիազորված լինելով Հիսուս Քրիստոսի կողմից, ես մկրտում եմ քեզ անունով Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն»:[1]

Երբ դուք դուրս եկաք մկրտության ջրից, ընդունեցիք ծառայության մեկ այլ կանչ: Որպես Աստծո նոր ուխտի դուստրեր, դուք խոստում տվեցիք և հանձնարարություն ստացաք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, որի անդամն եք հետո հաստատվել: Դուք Աստծո հետ ուխտ եք կապել՝ վերցնել Հիսուս Քրիստոսի անունը ձեզ վրա, պահել Նրա պատվիրանները և ծառայել Նրան:

Մարդկանց, ովքեր կապել են այս ուխտերը, Տերը կանչում է այնպիսի ծառայության, որը կատարելապես կհամապատասխանի նրանց: Սակայն Աստծո ուխտի բոլոր դուստրերն ու որդիները կիսում են մի կարևոր և ուրախ կոչում: Այն է՝ ծառայել ուրիշներին Նրա անունից:

Խոսելով քույրերի հետ, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հրաշալի ամփոփեց ձեզ ուղղված Տիրոջ կանչը՝ միանալ Իրեն Իր աշխատանքում: Նախագահ Նելսոնն այսպես է նկարագրել ձեր կոչումը. «Տերն ասել է. «Աստծո գործը և փառքն է՝ իրականացնել մարդու անմահությունը և հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Ուստի Նրա նվիրյալ դուստր-աշակերտները կարող են հիրավի ասել. «Իմ գործն ու փառքն է՝ օգնել իմ սիրելիներին հասնել այդ երկնային նպատակին»:

«Կնոջ աստվածային առաքելության մի մասն է օգնել մեկ այլ մարդ արարածի՝ հասնել իր սելեստիալ ներուժին: Որպես մայր, ուսուցիչ և սնուցող Սուրբ, նա օգնում է ազդեցություն ունենալ ուրիշների կյանքի վրա, հույս ունենալով օգնել նրանց հասնել անմահության և հավերժական կյանքի: Աստծո հետ գործընկերության մեջ լինելով, նրա աստվածային առաքելությունն է օգնել հոգիներին ապրել, իսկ ոգիներին՝ վեհանալ: Սա է նրա կյանքի մեծագույն ձեռքբերումը: Այն ազնվացնող է, կատարելագործող և վեհացնող»:[2]

Դուք չեք կարող իմանալ, թե երբ և որքան ժամանակ ձեր անձնական

առաքելությունը կկենտրոնանա այնպիսի կոչումներում ծառայելու վրա, ինչպիսիք են՝ մայրը, ղեկավարը կամ սպասավորող քույրը: Իր սիրո շնորհիվ Տերը մեզ չի տալիս ժամանակի, տևողության կամ հանձնարարությունների հերթականության ընտրությունը: Սակայն սուրբ գրություններից և ապրող մարգարեների ուսմունքներից մենք գիտենք, որ այս բոլոր հանձնարարությունները կտրվեն Աստծո բոլոր դուստրերին՝ կա՛մ այս կյանքում, կա՛մ՝ հաջորդ: Եվ դրանք բոլորը սիրող ընտանիքներում հանդիսանում են նախապատրաստություն հավերժական կյանքին՝ «Աստծո բոլոր պարգևներից մեծագույնին»:[3]

Դուք իմաստուն կլինեք, եթե այժմ բոլոր ջանքերը ներդնեք պատրաստվելու համար՝ մտքում ունենալով վերջնական նպատակը: Այդ հանձնարարությունը պարզեցված է, քանի որ այդ հանձնարարություններից յուրաքանչյուրը հիմնականում պահանջում է նույն պատրաստվածությունը:

Եկեք սկսենք սպասավորող քրոջ հանձնարարությունից: Արդյո՞ք դուք ունեք այդ հանձնարարությունը՝ որպես 10-ամյա դուստր մի ընտանիքում, որտեղ մահացել է հայրը, թե՞ որպես Սփոփող Միության նախագահ, ում քաղաքը վերջերս հրդեհի է մատնվել, կամ երբ հիվանդանոցում եք և ապաքինվում եք վիրահատությունից հետո, ուրեմն դուք հնարավորություն ունեք կատարելու Տիրոջից ձեզ տրված կոչման պարտականությունները՝ լինել Նրա սպասավորող դուստրը:

Թվում է, դրանք սպասավորության շատ տարբեր հանձնարարություններ

են: Սակայն դրանք պահանջում են հզոր, սիրող սրտի պատրաստվածություն, անվախ հավատք առ այն, որ Տերը պատվիրաններ չի տալիս առանց ուղի պատրաստելու և տալիս է ցանկություն, որպեսզի կարողանանք իրագործել այն, ինչ Նա է պատվիրել:[4]

Քանի որ 10-ամյա դուստրը նախապատրաստված է, նա իր բազուկներով օղակում է իր մայրիկին և աղոթում է, որ իմանա, թե ինչպես օգնի իր ընտանիքին: Եվ շարունակում է աղոթել:

Սփոփող Միության նախագահը նախապատրաստվել էր ծառայելու՝ նախքան կբռնկվեր անսպասելի հրդեհը իրենց տարածքում: Նա ծանոթացել ու սիրել էր մարդկանց: Նրա հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ աճել էր տարիների ընթացքում, երբ ստացել էր իր աղոթքի պատասխանները, որ Տերն օգներ իրեն Նրա համար կատարած փոքր ծառայություններում: Իր երկար նախապատրաստության շնորհիվ նա պատրաստված էր ու եռանդուն, որ կազմակերպի իր քույրերին՝ ծառայելու նեղության մեջ հայտնված մարդկանց և ընտանիքներին:

Մի քույր, ով հիվանդանոցում ապաքինվում էր վիրահատությունից հետո, նախապատրաստվել էր սպասավորելու իր ընկերակից հիվանդներին: Տիրոջ անունից նա ամբողջ կյանքում սպասավորել էր անծանոթ մարդկանց՝ որպես նրանց հարևան կամ ընկեր: Երբ նա իր սրտում զգաց հիվանդանոցում սպասավորելու կանչը, այնպիսի սիրով ու քաջաբար ծառայեց ուրիշներին, որ մյուս հիվանդները չէին ցանկանում, որ նա շուտ առողջանար և գնար հիվանդանոցից:

Նույն եղանակով, որով դուք պատրաստվում եք սպասավորության, կարող եք և պետք է պատրաստվեք ձեր կոչմանը, որպեսզի ղեկավար լինեք Տիրոջ անունից: Դրա համար հավատք կպահանջվի Հիսուս Քրիստոսի հանդեպ, որը հիմնված է ձեր մեծ սիրո վրա, որը տածում եք սուրբ գրությունների հանդեպ՝ առաջնորդելով մարդկանց և ուսուցանելով Նրա խոսքն առանց երկյուղելու: Հետո դուք կպատրաստվեք, որ ունենաք Սուրբ Հոգուն՝ որպես ձեր մշտական ուղեկից: Դուք անհամբերությամբ կասեք. «Ես կանեմ», երբ Երիտասարդ Կանանց նախագահության ձեր խորհրդականը տագնապած ձայնով ասում է. «Քույր Ալվարեսը

հիվանդ է այսօր: Ո՞վ կուսուցանի նրա դասարանին»:

Համարյա նույն պատրաստվածությունն է անհրաժեշտ այն հրաշալի օրվա համար, երբ Տերը կկանչի ձեզ մայր լինել: Բայց դրա համար անհրաժեշտ է ավելի շատ սիրող սիրտ, քան այն, որի կարիքը դուք ունեիք նախկինում: Դրա համար ավելի մեծ հավատք է պահանջվում Հիսուս Քրիստոսի հանդեպ, քան երբևէ ունեցել եք ձեր սրտում: Եվ դրա համար պահանջվում է աղոթելու ունակություն՝ Սուրբ Հոգու ազդեցության, առաջնորդության և սփոփանքի համար՝ նույնիսկ հնարավորի սահմանից այն կողմ:

Դուք կարող եք խելամիտ հարց ուղղել. Ինչպե՞ս կարող է տղամարդն իմանալ, թե մայրերն ինչի կարիք ունեն: Ճիշտ հարց է: Տղամարդիկ չեն կարող իմանալ ամեն ինչ, բայց մենք կարող ենք սովորել որոշ դասեր Աստծո հայտնության շնորհիվ: Մենք շատ բան կարող ենք սովորել նաև ուսումնասիրության միջոցով, երբ հնարավորություն ունենք փնտրել Հոգուն, որ օգնի մեզ հասկանալ, թե ինչ ենք ուսումնասիրում:

Ես ուսումնասիրում եմ Քեթլին Ջոնսոն Այրինգին մեր ամուսնության 57 տարիների ընթացքում: Նա չորս որդիների և երկու դուստրերի մայր է: Մինչ օրս նա կրում է իր կոչումը՝ մայրական ազդեցություն ունենալով մեր ընտանիքի ավելի քան հարյուր անդամների վրա, և ուրիշ հարյուրավորների վրա, ում նա ընդունել է իր մայրական սրտում:

Դուք հիշում եք կնոջ աստվածային առաքելության Նախագահ Նելսոնի կատարյալ նկարագրությունը՝ ներառյալ նրա մայրության առաքելությունը. «Որպես մայր, ուսուցիչ և սնուցող սուրբ, նա օգնում է ազդեցություն ունենալ ուրիշների կյանքի վրա, հույս ունենալով օգնել նրանց հասնել անմահության և հավերժական կյանքի: Աստծո հետ գործընկերության մեջ լինելով, նրա աստվածային առաքելությունն է օգնել հոգիներին ապրել, իսկ ոգիներին՝ վեհանալ: Սա է նրա կյանքի մեծագույն ձեռքբերումը»:[5]

Որքանով որ գիտեմ, իմ կինը՝ Քեթլինը, հետևել է այդ պարտականությանը, որը տրված է մեր Հոր դուստրերին:

Ամենակարևոր մասն ինձ համար հետևյալ բառերն են՝ «նա օգնում է ազդեցություն ունենալ ուրիշների կյանքի վրա, . . . լինելով Աստծո հետ գործընկերության մեջ»: Նա չի պարտադրել: Նա ազդեցություն է ունեցել: Եվ նա հիմնական նպատակ է ունեցել իր հույսերի համար և նրանց համար, ում վրա փորձել է ազդեցություն ունենալ, նրանց համար, ում նա սիրել ու մայրություն է արել: Նրա հիմնական նպատակը Հիսուս Քրիստոսի ավետարանն էր, ինչպես ես տարիների ընթացքում հասկացա աղոթքով լի դիտարկումների միջոցով:

Դառնալով ուխտի կանայք Աստծո հետ գործընկերության մեջ, Աստծո բարի ու հրաշալի դուստրերը միշտ հոգ են տարել, առաջնորդել են, սպասավորել են և ծառայել, ինչպիսի ուղի ու վայր էլ որ Նա պատրաստել է նրանց համար: Ես խոստանում եմ, որ դուք ուրախություն կգտնեք դեպի ձեր երկնային տուն տանող ճամփորդության ժամանակ, մինչ վերադառնում եք Նրա մոտ՝ որպես ուխտը պահող Աստծո դուստր:

Ես վկայում եմ, որ Հայր Աստված ապրում ու Նա սիրում է ձեզ: Նա կպատասխանի ձեր աղոթքներին: Նրա սիրելի Որդին ամենայն մանրամասնությամբ առաջնորդում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Նրա կենդանի մարգարեն է: Եվ Ջոզեֆ Սմիթը ծառերի պուրակում տեսավ Հայր Աստծուն ու Նրա Որդի Հիսուս Քրիստոսին Նյու Յորքի Պալմիրայում: Ես գիտեմ, որ դա ճշմարիտ է: Ես վկայում եմ նաև, որ Հիսուս Քրիստոսը ձեր Փրկիչն է: Նա սիրում է ձեզ: Եվ Նրա Քավության միջոցով դուք կարող եք մաքրվել և բարձրացվել դեպի բարձր ու սուրբ կոչումներ, որոնք կգան ձեզ: Ես այսպես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 20.73:
2. Russell M. Nelson, “Woman—Of Infinite Worth,” *Ensign,* Nov. 1989, 22.
3. Վարդապետություն և Ուխտեր 14.7:
4. Տես 1 Նեփի 3.7:
5. Տես Russell M. Nelson, “Woman—Of Infinite Worth,” 22:



ՆԱԽԱԳԱՀ ԴԱԼԼԻՆ Հ. ՕՈՒՔՍ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Երկու մեծ պատվիրանները

Մենք պետք է փորձենք պահել երկու մեծ պատվիրանները: Դա անելու համար մենք պետք է քայլենք օրենքի և սիրո միջև ընկած նուրբ թելի վրայով:

Հիսուս Քրիստոսի ավետարանի իմ սիրելի քույրեր, ես ողջունում եմ ձեզ՝ որպես հավերժական ընտանիքի աստվածայնորեն նշանակված պահապաններ: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է մեզ. «Այս Եկեղեցին վերականգնվել է, որպեսզի ընտանիքները ձևավորվեն, կնքվեն և հավերժական վեհացում ստանան»:[1] Այդ ուսմունքը կարևոր հետևանքներ ունի այն մարդկանց համար, ովքեր իրենց անվանում են լեսբուհի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր, որոնց սովորաբար կոչում ենք ԼԳԲՏ:[2] Նախագահ Նելսոնը նաև հիշեցրել է մեզ, որ «պարտադիր չէ, որ միշտ իրար հետ համաձայնվենք՝ իրար սիրելու համար»:[3] Այդ մարգարեական ուսմունքները կարևոր են ընտանեկան քննարկումների ժամանակ՝ երեխաների և երիտասարդության հարցերին պատասխանելու համար: Ես աղոթքով ոգեշնչում եմ փնտրել այս լսարանի հետ խոսելու համար, քանի որ այդ հարցերը յուրահատուկ կերպով են ձեզ առնչվում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են Եկեղեցու յուրաքանչյուր ընտանիքի վրա:

I.

Խոսքս սկսում եմ նրանով, ինչը Հիսուսն ուսուցանեց որպես երկու մեծ պատվիրաններ:

«Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը:

Սա առաջին և ամենամեծ պատվիրանն է:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս»:[4]

Դա նշանակում է, որ մեզ պատվիրված է սիրել բոլորին, քանի որ բարի սամարացու մասին Հիսուսի առակն ուսուցանում է, որ յուրաքանչյուր մարդ մեր ընկերն է:[5] Բայց այս երկրորդ պատվիրանը պահելու մեր նախանձախնդրությունը չպետք է մեզ մոռացնել տա առաջին պատվիրանը՝ սիրել Աստծուն մեր բոլոր սրտովը, բոլոր անձովը և մեր բոլոր մտքովը: Մենք ցույց ենք տալիս այդ սերը, երբ «պահում ենք [Նրա] պատվիրանները»:[6] Աստված պահանջում է, որ մենք

հնազանդվենք Նրա պատվիրաններին, քանի որ միայն այդ հնազանդության և ապաշխարության միջոցով մենք կարող ենք վերադառնալ և ապրել Նրա ներկայության մեջ ու դառնալ Նրա նման կատարյալ:

Եկեղեցու չափահաս երիտասարդներին ուղղված իր վերջին ելույթի ժամանակ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոսել է նրա մասին, ինչն ինքն անվանում է «ամուր կապ Աստծո սիրո և Նրա օրենքների միջև»:[7] Օրենքները, որոնք առավելագույնս վերաբերում են իրենց ԼԳԲՏ կոչողներին, ամուսնության Աստծո օրենքներն են և դրա ուղեկից՝ մաքրաբարոյության օրենքը: Երկուսն էլ կարևոր են Իր զավակների համար մեր Երկնային Հոր փրկության ծրագրում: Ինչպես Նախագահ Նելսոնն է ուսուցանել. «Աստծո օրենքներն ամբողջովին դրդված են մեր հանդեպ Նրա անսահման սիրուց և նրա ցանկությունից, որ մենք ձեռք բերենք մեր առավելագույն ներուժը»:[8]

Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Շատ երկրներ . . . օրինականացրել են միասեռ ամուսնությունը: Որպես Եկեղեցու անդամներ, մենք հարգում ենք երկրի օրենքները . . . այդ թվում՝ ամուսնության: Սակայն, ճշմարտությունն այն է, որ սկզբում . . . ամուսնությունը կարգվեց Աստծո կողմից: Եվ մինչ օրս Նրա կողմից ամուսնությունը սահմանվում է տղամարդու և կնոջ միջև: Աստված չի փոխել ամուսնության *Իր* սահմանումը»:

Նախագահ Նելսոնը շարունակում է. «Աստված նաև չի փոխել մաքրաբարոյության Իր օրենքը: Տաճար մտնելու պահանջները չեն փոխվել»:[9]

Նախագահ Նելսոնը մեզ բոլորիս հիշեցրել է, որ «Առաքյալ լինելու մեր հանձնառությունն է՝ սովորեցնել միայն ճշմարտությունը: Այդ հանձնառությունը իրավունք *չի* տալիս, որ [Առաքյալները] փոխեն աստվածային օրենքը»:[10] Այսպիսով, իմ քույրեր, Եկեղեցու ղեկավարները միշտ պետք է սովորեցնեն տղամարդու և կնոջ միջև ամուսնության յուրահատուկ կարևորությունը և դրան վերաբերող մաքրաբարոյության օրենքը:

II.

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի եկեղեցու գործը, ի վերջո, վերաբերում է Աստծո զավակներին սելեստիալ արքայության համար պատրաստելուն, իսկ առավել ևս՝ նրա բարձրագույն փառքի՝ վեհացման կամ հավերժական կյանքի համար: Այդ բարձրագույն ճակատագրին հնարավոր է միայն արժանանալ հավերժության համար ամուսնության միջոցով:[11] Հավերժական կյանքն իր մեջ ներառում է տղամարդու և կնոջ ողջ ստեղծարար զորությունը,[12] ինչը ժամանակակից հայտնությունը նկարագրում է որպես՝ «սերունդների շարունակությունը հավիտյանս հավիտենից»:[13]

Չափահաս երիտասարդներին ուղղված իր ելույթի ժամանակ Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Աստծու օրենքներին հնազանդվելը ձեզ ապահով կպահի, մինչ դուք զարգանում եք դեպի վերջնական վեհացում»:[14], որն է՝ դառնալ Աստծո նման և ունենալ վեհացած կյանք ու մեր Երկնային Ծնողների աստվածային ներուժը: Դա այն ճակատագիրն է, որը մենք ցանկանում ենք մեր սիրելիների համար: Այդ սիրո պատճառով մենք չենք կարող թույլ տալ, որ մեր սերը փոխարինի պատվիրաններին և Աստծո ծրագրին ու աշխատանքին, որը մենք գիտենք, որ մեր սիրելիներին կհասցնի նրանց մեծագույն երջանկությանը:

Բայց կան շատ մարդիկ, ում մենք սիրում ենք, այդ թվում նաև վերականգնված ավետարանն ունեցողներից ոմանք, ովքեր չեն հավատում կամ չեն հետևում ամուսնության և մաքրաբարոյության օրենքին վերաբերող Աստծո պատվիրաններին: Ի՞նչ կասեք նրանց մասին:

Աստծո վարդապետությունը ցույց է տալիս, որ մենք բոլորս Նրա զավակներն ենք և Նա մեզ ստեղծել է, որ ուրախություն ունենանք:[15] Ժամանակակից հայտնությունն ուսուցանում է, որ Աստված մահկանացու կյանքի համար ծրագիր է պատրաստել, որտեղ բոլորը կարող են հնազանդություն ընտրել՝ Նրա բարձրագույն օրհնություններին ձգտելու համար կամ կատարել այնպիսի ընտրություններ, որոնք տանում են դեպի պակաս փառահեղ արքայություններից մեկը:[16] Աստծո բոլոր զավակների հանդեպ Իր մեծ սիրո շնորհիվ այդ պակաս արքայությունները դեռևս առավել հրաշալի են, քան մահկանացուները կարող են հասկանալ:[17] Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր է դարձնում այս ամենը, քանի որ Նա «փառավորում է Հորը և *փրկում է իր ձեռքի բոլոր գործերը*»:[18]

III.

Ես խոսեցի առաջին պատվիրանի մասին, իսկ ի՞նչ կասեք երկրորդի մասին: Ինչպե՞ս ենք մենք պահում

մեր ընկերոջը սիրելու պատվիրանը: Մենք ձգտում ենք համոզել մեր անդամներին, որ այն մարդկանց, ովքեր հետևում են լեսբուհի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդերային ուսմունքներին և գործողություններին, պետք է վերաբերվել սիրով, որը մեր Փրկիչը պատվիրում է ցուցադրել մեր բոլոր ընկերների հանդեպ: Այսպիսով, երբ միասեռ ամուսնությունները հայտարարվեցին օրինական Միացյալ Նահանգներում, Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը հայտարարեցին. «Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանում է մեզ սիրել և բարյացակամորեն ու քաղաքավարի վերաբերվել բոլոր մարդկանց, նույնիսկ այն ժամանակ, երբ մենք համաձայն չենք նրանց հետ: Մենք հաստատում ենք, որ չպետք է անհարգալից վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ, ովքեր օգտվում են համասեռ ամուսնությունը թույլատրող օրենքներից կամ դատական վճիռներից»:[19]

Ավելին, մենք չպետք է երբեք հալածենք նրանց, ովքեր չեն կիսում մեր համոզմունքները և մեր չափանիշները:[20] Դժբախտաբար, այս խնդիրներին բախվող որոշ մարդիկ շարունակում են իրենց անտեսված և մերժված զգալ մեր ընտանիքների, ծխերի և ցցերի որոշ անդամների և ղեկավարների կողմից: Մենք բոլորս պիտի ձգտենք դառնալ ավելի բարի և ավելի քաղաքավարի:

IV.

Մեզ անհասկանալի պատճառներով մեր մահկանացու փորձառության մեջ մենք ունենք տարբեր մարտահրավերներ: Բայց մենք գիտենք, որ Աստված կօգնի մեզանից յուրաքանչյուրին հաղթահարել այս մարտահրավերները, եթե անկեղծորեն փնտրենք Նրա օգնությունը: Տառապելով և ապաշխարելով մեր սովորած Աստծո օրենքները խախտելուց հետո, մեզ բոլորիս սպասվում է փառքի որևէ արքայություն: Ամենամեծ և վերջին դատը կլինի Տիրոջ կողմից, ով միայն Ինքը ունի մեզ դատելու անհրաժեշտ գիտելիքը, իմաստությունը և շնորհը:

Միևնույն ժամանակ մենք պետք է փորձենք պահել այդ երկու մեծ պատվիրանները: Դա անելու համար մենք պետք է քայլենք օրենքի և սիրո միջև ընկած նուրբ թելի վրայով՝ պահելով պատվիրանները, քայլելով ուխտի ճանապարհով և միևնույն ժամանակ սիրելով մեր մերձավորներին: Այս քայլարշավը մեզանից պահանջում է փնտրել աստվածային ոգեշնչում, թե ինչին պետք է աջակցենք, ինչին ընդդիմանանք, ինչպես սիրենք, հարգալից լսենք և ուսուցանենք այդ ընթացքում: Մեր քայլարշավը պահանջում է, որ մենք ոչ թե փոխզիջումների գնանք պատվիրանների հարցում, այլ լիարժեք ցույց տանք փոխըմբռնում և սեր: Մեր ճանապարհին պետք է ուշադիր լինենք երեխաների հանդեպ, ովքեր վստահ չեն իրենց սեռական կողմնորոշման մեջ, և չպետք է խրախուսել վաղաժամ պիտակավորումը, քանի որ շատ երեխաների մոտ ժամանակի ընթացքում այդ անվստահությունը նվազում է:[21] Մեր քայլարշավի ժամանակ պետք է հակառակվենք ուխտի ճանապարհից շեղող համոզմունքներից և մերժենք այն մարդկանց օգնությունը, ովքեր հեռացնում են Տիրոջից: Այս ամենի ժամանակ մենք հիշում ենք, որ Աստված խոստանում է հույս, կատարյալ ուրախություն և օրհնություն բոլոր նրանց, ովքեր պահում են Նրա պատվիրանները:

V.

Մայրերն ու հայրերը և մենք բոլորս պատասխանատու ենք սովորեցնել երկու մեծ պատվիրանները: Եկեղեցու կանանց համար Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն այդ պարտականությունը նկարագրեց այս հրաշալի մարգարեության մեջ. «Վերջին օրերում Եկեղեցում մեծ աճ տեղի կունենա հիմնականում այն պատճառով, որ աշխարհի լավ կանանցից շատերը . . . մեծ թվով կմիանան Եկեղեցուն: Դա տեղի կունենա այնպիսի չափերով, որ Եկեղեցու կանայք իրենց կյանքով արդարակեցություն և պարզություն կարտացոլեն, և դա այնքան վառ կարտահայտվի, որ Եկեղեցու կանայք առանձնահատուկ ձևով կտարբերվեն աշխարհի կանանցից: . . . Կլինի այնպես, որ վերջին օրերին Եկեղեցու օրինակելի կանայք վիթխարի ուժ կներկայացնեն, ինչ վերաբերում է Եկեղեցու թվական և հոգևոր աճին»:[22]

Մարգարեության մասին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարել է, որ «Նախագահ Քիմբալի կանխատեսած օրն այսօր է: Դո՛ւք եք այդ կանխատեսված կանայք»:[23] 40 տարի առաջ այդ մարգարեությունը լսած մեզանից քչերն էին գիտակցում, որ Եկեղեցու այդ կանանց թվում կլինեն

իրենց սիրելի ընկերները և ընտանիքի անդամները, որոնք ներկայումս կգտնվեն աշխարհիկ առաջնահերթությունների և սատանայական խեղաթյուրումների ներգործության ներքո: Ես աղոթում եմ և օրհնում եմ ձեզ, որ դուք ուսուցանեք և գործեք՝ այդ մարգարեությունն իրականացնելու համար. Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Սելեստիալ ամուսնություն», *Լիահոնա,* նոյեմբեր 2008, 93:
2. Մյուս սկզբնաղբյուրները հիշատակելու համար չափազանց շատ են, բայց այս հիմնականները բավարար են այս ելույթի համար:
3. Ռասսել Մ. Նելսոնը ելույթ է ունենում National Association for the Advancement of Colored People (NAACP) ամենամյա համաժողովին, Դեթրոյտ, Միչիգան, հուլիս 21, 2019թ.:
4. Մատթեոս 22.37–39:
5. Տես Ղուկաս 10.29–37:
6. Հովհաննես 14.15:
7. Russell M. Nelson, “The Love and Laws of God” (Brigham Young University devotional, Sept. 17, 2019), speeches.byu.edu.
8. Russell M. Nelson, “The Love and Laws of God.”
9. Russell M. Nelson, “The Love and Laws of God.”
10. Russell M. Nelson, “The Love and Laws of God.”
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.7–13:
12. Տես 1 Կորնթացիս 11.11, Վարդապետություն և Ուխտեր 131.1–4:
13. Վարդապետություն և Ուխտեր 132.19:
14. Russell M. Nelson, “The Love and Laws of God.”
15. Տես 2 Նեփի 2.25:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.71–113:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.89:
18. Վարդապետություն և Ուխտեր 76.43, շեշտադրումն ավելացված է:
19. «Արձագանք Գերագույն դատարանի որոշմանը, որն օրինականացնում է նույնասեռ ամուսնությունը Միացյալ Նահանգներում», կցվում է Առաջին Նախագահության նամակին, 2015 թվականի հունիսի 29-ին:
20. Տես Դալլին Հ. Օուքս, «Սիրել ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ», *Լիահոնա,* նոյեմբեր 2014, 25–28, «Սեր և օրենք», *Լիահոնա,* նոյեմբեր 2009, 26–29:
21. See, for example, Michelle Forcier, “Adolescent Sexuality,” UpToDate, June 3, 2019, uptodate.com/contents/adolescent-sexuality.
22. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ* (2006), 222–23:
23. Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Լիահոնա,* նոյեմբեր 2015, 96:

ՆԱԽԱԳԱՀ ՌԱՍՍԵԼ Մ. ՆԵԼՍՈՆ

Հոգևոր գանձեր

Երբ դուք հավատք գործադրեք Տիրոջ և Նրա քահանայության զորության նկատմամբ, Տիրոջ կողմից հասանելի դարձված այդ հոգևոր գանձն օգտագործելու ձեր ունակությունը կմեծանա:

Շնորհակալություն այդ գեղեցիկ երաժշտության համար: Երբ բոլորս ոտքի կանգնեցինք այդ միջանկյալ «Փառք Քեզ Տեր Մարգարեի համար» երգը երգելու համար, երկու զորեղ միտք ծագեց իմ մտքում: Մեկը՝ մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին է, այս տնտեսության մարգարեի մասին: Յուրաքանչյուր անցնող օրվա հետ նրա հանդեպ իմ սերն ու հարգանքն ավելանում է: Երկրորդ միտքը ծագեց, երբ նայեցի կնոջս, իմ դուստրերին, թոռներիս և ծոռներիս: Զգացի, կարծես հավակնում եմ բոլորիդ ունենալ որպես իմ ընտանիքի մի մաս:

Մի քանի ամիս առաջ տաճարի օժտման նիստի ավարտից հետո ես կնոջս, Ուենդիին, ասացի. «Հուսով եմ, որ քույրերը հասկանում են տաճարում իրենց ունեցած հոգևոր գանձերը»: Քույրեր, ես հաճախ եմ մտածում ձեր մասին, և մտածում էի ձեր

մասին նաև երկու ամիս առաջ, երբ Ուենդին և ես այցելեցինք Հարմոնի, Փենսիլվանիա:

Դա մեր երկրորդ այցելությունն էր Հարմոնի: Երկու անգամն էլ մենք խորապես հուզվում էինք, երբ քայլում էինք այդ սուրբ հողի վրա: Հարմոնիի մոտ էր, երբ Հովհաննես Մկրտիչը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և վերականգնեց Ահարոնյան քահանայությունը:

Այդտեղ էր, երբ Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալները հայտնվեցին՝ Մելքիսեդեկյան Քահանայությունը վերականգնելու համար:

Հարմոնիում էր, երբ Էմմա Հեյլ Սմիթը ծառայեց որպես իր ամուսնու առաջին դպիր, մինչ Մարգարեն թարգմանում էր Մորմոնի Գիրքը:

Եվ Հարմոնիում էր, որ Ջոզեֆը հայտնություն ստացավ, որտեղ դրսևորվում էր Տիրոջ կամքը Էմմայի նկատմամբ: Տերը հրահանգեց Էմմային բացատրել սուրբ գրությունները, հորդորել Եկեղեցին, ստանալ Սուրբ Հոգին և իր ժամանակը տրամադրել «շատ սովորելուն»: Էմմային նաև խորհուրդ տրվեց «մի կողմ դնել այս աշխարհի բաները և ավել լավ բաների ձգտել» և ամուր կառչել Աստծո հետ կապած իր ուխտերին: Տերն Իր ցուցումները եզրափակեց հետևյալ համոզիչ խոսքերով. «Սա իմ ձայնն է բոլորին»:[1]

Ամեն ինչ, որ տեղի է ունեցել այդ տարածքում, խոր ազդեցություն ունի *ձեր* կյանքի վրա: Քահանայության վերականգնումը, ինչպես նաև Էմմային տրված Տիրոջ խորհուրդը, կարող է առաջնորդել և օրհնել ձեզանից յուրաքանչյուրին: Շատ եմ ուզում, որ դուք հասկանաք, որ քահանայության վերականգնումը նույնքան կարևոր է կնոջ համար, որքան ցանկացած տղամարդու: Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնման շնորհիվ ուխտեր պահող կանայք և տղամարդիկ կարող են ստանալ «եկեղեցու *բոլոր* հոգևոր օրհնությունները»,[2] կամ, կարող ենք ասել, բոլոր հոգևոր գանձերը, որոնք Տերը պահել է Իր զավակների համար:

Յուրաքանչյուր կին և յուրաքանչյուր տղամարդ, ով Աստծո հետ ուխտ է կապում և պահում այդ ուխտերը, և ով արժանիորեն մասնակցում է քահանայության արարողություններին, ուղղակիորեն կարող է ստանալ Աստծո զորությունը: Նրանք, ովքեր օժտված են Տիրոջ տանը, իրենց ուխտի առաքինության շնորհիվ ստանում են Աստծո քահանայության զորության պարգևը, ինչպես նաև գիտելիքի պարգևը՝ իմանալու, թե ինչպես օգտագործել այդ զորությունը:

Երկինքները նույնքան բաց են այն *կանանց* համար, ովքեր օժտված են իրենց քահանայության ուխտերից բխող Աստծո զորությամբ, որքան բաց են այն տղամարդկանց համար, ովքեր կրում են քահանայությունը: Ես աղոթում եմ, որ ճշմարտությունը դրոշմվի ձեզանից յուրաքանչյուրի սրտի վրա, քանի որ ես հավատում եմ, որ այն կփոխի ձեր կյանքը: Քույրեր, դուք իրավունք ունեք ազատ օգտագործելու Փրկիչի զորությունը, որպեսզի օգնեք ձեր ընտանիքին և այլոց, ում դուք սիրում եք:

Այս պահին գուցե դուք ասում եք. «Դա լավ է հնչում, բայց ինչպե՞ս անեմ դա: Ինչպե՞ս Փրկիչի զորությունն օգտագործեմ իմ կյանքում»:

Այդ գործընթացը չեք գտնի շարադրված որևէ ձեռնարկում: Սուրբ Հոգին կլինի ձեր անձնական ուսուցիչը, երբ ձգտեք հասկանալ, թե Տերն ինչ կուզենար, որ դուք իմանայիք և անեիք: Այդ գործընթացը դանդաղ և բարդ է, բայց այն հոգևորապես կազդուրիչ է: Ի՞նչը կարող է ավելի ոգևորիչ լինել, քան Հոգով աշխատելը, որպեսզի հասկանաք Աստծո զորությունը՝ քահանայության զորությունը:

Այն, ինչ *կարող եմ* ձեզ ասել, դա այն է, որ ձեր կյանքում Աստծո զորությունը ստանալու համար պահանջվում են նույն բաները, որոնք Տերը հրահանգել է Էմմային և ձեզանից յուրաքանչյուրին:

Այսպիսով, ես ձեզ հրավիրում եմ աղոթքով ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտերի 25-րդ բաժինը և բացահայտել, թե Սուրբ Հոգին ինչ կուսուցանի *ձեզ:* Ձեր անձնական հոգևոր ջանքերն ուրախություն կբերեն ձեզ, երբ ձեռք բերեք, հասկանաք և օգտագործեք այն զորությունը, որով դուք օժտվել եք:

Այդ ջանքերի մի մասը ձեզանից կպահանջի մի կողմ դնել այս աշխարհի շատ բաներ: Երբեմն մենք գրեթե սովորական ենք խոսում աշխարհից հեռու քայլելու մասին՝ նրա հակասական, տարածված գայթակղություններով և կեղծ փիլիսոփայություններով հանդերձ: Բայց դա *իսկապես* անելու համար, դուք պետք է մանրակրկիտ և պարբերաբար քննեք ձեր կյանքը Երբ

անեք դա, Սուրբ Հոգին կհուշի ձեզ այն մասին, թե ինչի կարիքն այլևս չունեք, ինչի համար այլևս չարժե ծախսել ձեր ժամանակն ու եռանդը:

Երբ ձեր ուշադրությունը թեքեք աշխարհի շեղող հանգամանքներից, որոշ բաներ, որոնք ձեզ համար այժմ կարևոր են թվում, կդառնան քիչ կարևոր: Դուք պետք է ոչ ասեք որոշ բաների, նույնիսկ, եթե դրանք անվնաս թվան: Երբ սկսեք և շարունակեք ձեր ողջ կյանքը տևող այս գործընթացը և կենտրոնացնեք ձեր կյանքը Տիրոջ վրա՝ ձեր հեռանկարի, զգացմունքների և հոգևոր ուժի փոփոխությունները կզարմացնեն ձեզ:

Այժմ, նախազգուշացնող մի քանի խոսք: Կլինեն այնպիսի մարդիկ, որոնք կխարխլեն Աստծո զորությանը դիմելու ձեր ունակությունը: Կլինեն ոմանք, ովքեր կստիպեն ձեզ կասկածել և նվազագույնի կհասցնեն արդար կնոջ ձեր բացառիկ հոգևոր կարողությունները:

Անշուշտ, հակառակորդը չի ցանկանում, որ դուք ստանաք մկրտության ժամանակ ձեր կապած ուխտը, կամ գիտելիքի ու զորության այն խորիմաստ օժտումը, որ դուք ստացել եք կամ կստանաք տաճարում՝ Տիրոջ տանը: Եվ Սատանան, անշուշտ, չի ուզում, որ դուք հասկանաք, որ ամեն անգամ տաճարում արժանիորեն ծառայելիս կամ երկրպագելիս, դուք հեռանում եք տաճարից՝ զինված Աստծո զորությամբ և Նրա հրեշտակները «պահպանում են» ձեզ:[3]

Սատանան և նրա ծառաները միշտ կստեղծեն ճանապարհային արգելափակումներ, որպեսզի թույլ չտան հասկանալ այն հոգևոր պարգևները, որոնցով դուք օրհնվել եք, և կարող եք օրհնվել: Դժբախտաբար, որոշ ճանապարհային արգելափակումներ կարող են լինել ուրիշի սխալ պահվածքի հետևանք: Ինձ վշտացնում է այն միտքը, որ ձեզանից ինչ-որ մեկն իրեն զգացել է ոչ պիտանի, չի հավատացել քահանայության որևէ ղեկավարի, ենթարկվել է բռնության կամ դավաճանության՝ ամուսնու, հոր կամ ենթադրյալ ընկերոջ կողմից: Խոր վիշտ եմ ապրում նրա համար, որ ձեզանից ինչ-որ մեկը իրեն զգացել է անտեսված, չհարգված կամ սխալ հասկացված: Այդպիսի վիրավորանքները տեղ չունեն Աստծո արքայությունում:

Եվ ընդհակառակը, ես ոգևորվում եմ, երբ լսում եմ քահանայության ղեկավարների մասին, ովքեր անհամբերությամբ են սպասում կանանց մասնակցությանը ծխի և ցցի խորհուրդներում: Ինձ ոգեշնչում են այն ամուսինները, որոնք ցույց են տալիս, որ քահանայության իրենց ամենակարևոր պարտականությունն իրենց կանանց մասին հոգ տանելն է:[4] Ես գովաբանում եմ այն տղամարդուն, ով խորապես հարգում է հայտնություն ստանալու իր կնոջ ունակությունը և գնահատում է նրան՝ որպես հավասար գործընկեր իրենց ամուսնության մեջ:

Երբ տղամարդը հասկանում է արդար, ջանացող, օժտված Վերջին օրերի սուրբ կնոջ վեհությունն ու զորությունը, զարմանալի չէ, որ նա ոտքի է կանգնում, երբ կինը սենյակ է մտնում:

Ի սկզբանե, կանայք օրհնված էին եզակի բարոյական կողմնացույցով՝ ճիշտը սխալից տարբերելու ունակությամբ: Այն մարդկանց մոտ, ովքեր ուխտեր են կապում և պահում, այդ պարգևը մեծանում է: Եվ այդ պարգևը նվազում է նրանց մոտ, ովքեր ինքնակամ անտեսում են Աստծո պատվիրանները:

Շտապում եմ ավելացնել, որ ես տղամարդկանց ոչ մի կերպ չեմ ազատում *նաև նրանց* տրված Աստծո պահանջից՝ տարբերելու ճիշտը սխալից: Սակայն, իմ սիրելի՛ քույրեր, ճիշտը սխալից տարբերելու, հասարակության բարոյականության պահապաններ լինելու ձեր ունակությունը կարևոր է այս վերջին օրերում: Եվ մենք ակնկալում ենք, որ դուք ուսուցանեք ուրիշներին նույն կերպ վարվել: Թույլ տվեք ավելի պարզ ասեմ. եթե այս աշխարհը կորցնի իր կանանց բարոյական ուղղամտությունը, աշխարհը *երբեք* չի վերականգնվի:

Մենք՝ Վերջին Օրերի Սրբերս, այս աշխարհից չենք. մենք ուխտյալ Իսրայելից ենք: Մենք կանչված ենք ժողովրդին Տիրոջ Երկրորդ Գալուստին նախապատրաստելու համար:

Այժմ, թույլ տվեք պարզաբանել մի քանի լրացուցիչ կետեր՝ կանանց և քահանայության վերաբերյալ: Երբ դուք ձեռնադրվում եք ծառայելու կոչման մեջ այն մարդու ղեկավարության ներքո, ով կրում է քահանայության բանալիներ, ինչպիսին է ձեր եպիսկոպոսը կամ ցցի նախագահը, ձեզ տրվում է քահանայության իշխանություն՝ գործելու այդ կոչման մեջ:

Նմանապես, սուրբ տաճարում դուք ունեք իշխանություն կատարելու և պաշտոնավարելու քահանայության արարողությունների ժամանակ՝ *ամեն անգամ,* երբ դուք հաճախում եք: Տաճարային ձեր օժտումը նախապատրաստում է ձեզ դրա համար:

Եթե օժտված եք, բայց ներկայումս ամուսնացած չեք մի մարդու հետ, ով կրում է քահանայություն, և ինչ-որ մեկը ձեզ ասում է. «Ցավում եմ, որ ձեր տանը քահանայություն չունեք», խնդրում եմ հասկացեք, որ այդ հայտարարությունը ճիշտ չէ: Գուցե, դուք ձեր տանը չունեք քահանայություն *կրող,* բայց դուք ընդունել և սրբազան ուխտեր եք կապել Աստծո հետ Նրա տաճարում: Այդ ուխտերից ձեզ վրա է հորդում Նրա քահանայության զորության օժտումը: Եվ հիշեք, եթե ձեր ամուսինը մահանա, *դուք* կնախագահեք ձեր տանը:

Որպես արդար, օժտված Վերջին Օրերի սուրբ կին, դուք խոսում և

ուսուցանում եք Աստծուց բխող զորությամբ և իշխանությամբ: Հորդորելիս թե զրույցի ժամանակ, մենք կարիք ունենք, որ ձեր ձայնն ուսուցանի Քրիստոսի վարդապետությունը: Մեզ պետք է, որ դուք ներդրում ունենաք ընտանեկան, ծխի ու ցցի խորհուրդներում: Ձեր մասնակցությունը կարևոր է և երբեք էլ ցուցադրական չէ:

Իմ սիրելի՛ քույրեր, ձեր զորությունը կավելանա, երբ դուք ծառայեք ուրիշներին: Ձեր աղոթքները, ծոմապահությունը, սուրբ գրություններ կարդալու ժամանակը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի ծառայությունը կբացեն երկինքները ձեզ համար:

Ես խնդրում եմ, որ դուք աղոթքով ուսումնասիրեք *բոլոր* ճշմարտությունները, որոնք կգտնեք քահանայության մասին: Կարող եք սկսել Վարդապետություն և Ուխտեր 84 և 107 բաժիններից: Այդ բաժինները կհուշեն այլ հատվածներ: Ժամանակակից մարգարեների, տեսանողների և հայտնողների սուրբ գրությունները և ուսմունքները լցված են այս ճշմարտություններով: Երբ ձեր հասկացողությունը մեծանա և դուք հավատք գործադրեք Տիրոջ և Նրա քահանայության զորության նկատմամբ, Տիրոջ կողմից հասանելի դարձված այդ հոգևոր գանձն օգտագործելու ձեր ունակությունը կմեծանա: Երբ դա անեք, դուք ինքներդ ավելի լավ կկարողանաք օգնել ձեզ՝ ստեղծելու հավերժական ընտանիքներ, որոնք միավորված են, կնքված են Տիրոջ տաճարում և լի են մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրով:

Միմյանց ծառայելու, ավետարանը հռչակելու, Սրբերին կատարելագործելու և մահացածներին փրկագնելու մեր բոլոր ջանքերը կատարվում են տաճարում: Ամբողջ աշխարհում մենք ունենք 166 տաճարներ և շատերը գտնվում են շինարարության փուլում:

Ինչպես արդեն գիտեք, Սոլթ Լեյքի տաճարը, Տաճարային Հրապարակի և Եկեղեցու գրասենյակի շենքի հարևանությամբ գտնվող պլազան կվերանորոգվեն մի ծրագրում, որը կսկսվի այս տարվա վերջին: *Այս* սուրբ տաճարը պետք է պահպանվի և պատրաստ լինի ոգեշնչելու

ապագա սերունդներին, ինչպես դա ներգործեց մեզ վրա՝ այս սերնդի ժամանակ:

Եկեղեցու աճին զուգընթաց, կկառուցվեն ավելի շատ տաճարներ, որպեսզի ավելի շատ ընտանիքներ կարողանան ստանալ օրհնություններից ամենամեծը՝ հավերժական կյանքը:[5] Մենք տաճարը համարում ենք Եկեղեցու *ամենասուրբ* կառույցը: Երբ նոր տաճար կառուցելու ծրագրեր են հայտարարվում, այն դառնում է մեր պատմության կարևոր մասը: Ինչպես մենք այստեղ քննարկեցինք երեկոյան, դուք՝ քույրե՛ր, շատ կարևոր եք տաճարային աշխատանքի համար, և տաճարը հենց այն վայրն է, որտեղ դուք կստանաք ձեր ամենամեծ հոգևոր գանձերը:

Խնդրում ենք լսել ուշադիր և ակնածանքով, քանի որ այժմ ես կհայտարարեմ ութ նոր տաճար կառուցելու ծրագրերի մասին: Եթե մեկը հայտարարվի այն վայրում, որը կարևոր է ձեզ համար, ես առաջարկում եմ, որ դուք պարզապես աղոթքն ու երախտագիտությունը ձեր սրտում՝ ձեր գլուխը խոնարհեք: Մենք ուրախ ենք տեղեկացնել, որ նախատեսվում է տաճարներ կառուցել հետևյալ վայրերում. Ֆրիթաուն (Սիերա Լեոնե), Օրեմ (Յուտա), Պորտ Մորեսբի (Պապուա Նոր Գվինեա), Բենտոնվիլ (Արկանզաս), Բակոլոդ (Ֆիլիպիններ), Մաքալեն (Տեխաս), Կոբոն (Գվատեմալա) և Թեյլորսվիլ (Յուտա): Շնորհակալություն ձեզ, սիրելի՛ քույրեր: Մենք խորապես գնահատումենք, որ ընդունում և ակնածալից արձագանքում եք այդ ծրագրերին:

Այժմ, ավարտելով, ես կցանկանայի օրհնություն թողնել ձեզ վրա, որ դուք հասկանաք քահանայության զորությունը, որով դուք օժտվել եք և, որ դուք մեծացնեք այդ զորությունը՝ գործադրելով ձեր հավատքը Տիրոջ և Նրա զորության նկատմամբ:

Սիրելի՛ քույրեր, խորին հարգանքով և երախտագիտությամբ իմ սերն եմ հայտնում ձեր հանդեպ: Ես խոնարհաբար հայտարարում եմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է: Ես այսպես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 25.7–16:
2. Վարդապետություն և Ուխտեր 107.18, շեշտադրումն ավելացված է:
3. Վարդապետություն և Ուխտեր 109.22:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 131.2–4:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:

ԵՐԵՑ ԳԵՐԻԹ Վ. ԳՈՆԳ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Պատկանելություն ուխտին

Պատկանել Աստծուն և քայլել միմյանց հետ Նրա ուխտի արահետում, նշանակում է՝ օրհնվել ուխտին պատկանելության միջոցով:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, պատմությունը Երեխաների Միության մի երեխայի մասին է, ով սովորում է աղոթել: «Շնորհակալություն A տառի համար, B տառի համար, . . . G տառի համար»: Երեխայի աղոթքը շարունակվում է, «Շնորհակալություն

X, Y, Z տառերի համար: Սիրելի Երկնային Հայր, շնորհակալություն 1թվի համար, 2թվի համար»: Երեխաների Միության ուսուցիչն անհանգստանում է, բայց իմաստությամբ սպասում: Երեխան ասում է. «Շնորհակալություն 5 թվի համար, 6 թվի համար և շնորհակալություն Երեխաների Միության իմ ուսուցչի համար: Նա միակ անձնավորությունն է, ով երբևէ թույլ է տվել ինձ ավարտել իմ աղոթքը»:

Երկնային Հայրն իհարկե լսում է յուրաքանչյուր երեխայի աղոթքը: Անսահման սիրով Նա մեզ կոչ է անում հավատալ և պատկանել ուխտի միջոցով:

Այս աշխարհը լի է պատրանքով, մոլորությունով և աճպարարությամբ: Այնքան շատ բաներ թվում են անցողիկ և մակերեսային: Երբ մենք մի կողմ ենք դնում դիմակները, երեսպաշտությունը, ամբոխի ազդեցությունից բխող հավանությունն ու արհամարհանքը, մենք փափագում ենք ավելին, քան անցողիկ արտաքին փայլն է, վաղանցիկ կապը կամ աշխարհիկ շահերի հետապնդումը: Բարեբախտաբար, կան պատասխաններ այդ հարցերին:

Երբ խոսքը վերաբերում է Աստծո մեծ պատվիրաններին՝ ուխտի միջոցով սիրելու Նրան և մեր մերձավորներին, մենք դա անում ենք ոչ թե որպես օտարական կամ հյուր, այլ որպես Նրա տան զավակը:[1] Դարերի հնություն ունեցող տարամտությունը դեռևս ճշմարիտ է: Ուխտի պատկանելության միջոցով մեր աշխարհիկ ինքնությունը կորցնելով, մենք գտնում և դառնում ենք մեր լավագույն հավերժական ինքնությունը՝[2] ազատ, կենդանի, իրական, և սահմանում ենք մեր ամենակարևոր փոխհարաբերությունները: Ուխտի պատկանելությունը նշանակում է՝ Աստծո և միմյանց հետ կապել և պահել հանդիսավոր խոստումներ՝ սրբազան արարողությունների միջոցով, որոնք հրավիրում են, որպեսզի աստվածայնության զորությունը դրսևորվի մեր կյանքում:[3] Երբ մենք ուխտում ենք այն ամենով, ինչ մենք կանք, մենք կարող ենք դառնալ ավելին, քան մենք կանք: Ուխտի պատկանելությունը մեզ տալիս է տեղ, պատմություն, դառնալու կարողություն: Այն առաջացնում է հավատք կյանքի և փրկության հանդեպ:[4]

Աստվածային ուխտերը դառնում են սիրո աղբյուր՝ Աստծո հանդեպ և Աստծո կողմից, և դրանով իսկ՝ միմյանց հանդեպ և միմյանց հետ: Աստված՝ մեր Երկնային Հայրը, ավելի շատ է սիրում մեզ և ավելի լավ է ճանաչում մեզ, քան մենք ենք սիրում կամ ճանաչում ինքներս մեզ: Հավատքն առ Հիսուս Քրիստոս և անձնական փոփոխությունը (ապաշխարությունը) բերում են ողորմածություն, շնորհ, ներում: Սրանք հանգստացնում են ցավը, միայնակությունը, անարդարությունը, որոնք մենք տանում ենք մահկանացու կյանքում: Լինելով Աստված, մեր Երկնային Հայրը կամենում է, որ մենք ստանանք Աստծո մեծագույն պարգևը՝ Իր ուրախությունը, Իր հավերժական կյանքը:[5]

Մեր Աստվածը ուխտի Աստված է: Իր էության համաձայն, Նա «պահում է ուխտը և ցույց է տալիս ողորմածություն»:[6] Նրա ուխտերը հարատևում են, «քանի դեռ ժամանակը կտևի, կամ երկիրը կանգուն լինի, կամ նրա երեսին մեկ մարդ կլինի՝ փրկվելու»:[7] Կանխորոշված

չէ, որ մենք թափառենք իրական գոյության անորոշության և կասկածի մեջ, այլ ուրախանանք փայփայած ուխտի փոխհարաբերություններում, որոնք «ավելի ուժեղ են քան մահվան կապանքները»:[8]

Աստծո արարողություններն ու ուխտերը համընդհանուր են իրենց պահանջներով և անհատական՝ իրենց հնարավորությունով: Աստծո արդարությամբ յուրաքանչյուր անհատ ամեն տեղ և ամեն տարիքում կարող է ստանալ փրկարար արարողություններ: Գործադրվում է ազատ կամք՝ անհատներն են ընտրում՝ ընդունե՞լ արդյոք առաջարկվող արարողությունները: Աստծո արարողությունները ուղեցույցներ են ապահովում ուխտերի Նրա արահետում: Իր զավակներին տուն տանելու Աստծո ծրագիրը մենք անվանում ենք փրկագնման ծրագիր, փրկության ծրագիր, երջանկության ծրագիր: Փրկագնումը, փրկությունը, սելեստիալ երջանկությունը հնարավոր են Հիսուս Քրիստոսի շնորհիվ, ով «իրագործեց այս կատարյալ քավությունը»:[9]

Պատկանել Աստծուն և քայլել միմյանց հետ Նրա ուխտի արահետում, նշանակում է՝ օրհնվել ուխտի պատկանելության միջոցով:

Առաջինը, ուխտի պատկանելությունը կենտրոնանում է Հիսուս Քրիստոսի վրա՝ որպես «նոր ուխտի միջնորդ»:[10] Բոլոր բաները կարող են գործել միասին մեր բարու համար, երբ մենք «սրբագործվում ենք Քրիստոսում . . . Հոր ուխտի մեջ»:[11] Ամեն բարի և խոստացված օրհնություն գալիս է նրանց, ովքեր հավատարիմ են մնում մինչև վերջ: «Աստծո պատվիրանները պահողները» պետք է լինեն «օրհնված բոլոր բաներում՝ թե՛ նյութական, թե՛ հոգևոր» և «բնակվեն Աստծո հետ . . . անվերջ երջանկության մեջ»:[12]

Երբ մենք պատվում ենք մեր ուխտերը, մենք երբեմն կարող ենք զգալ, թե գտնվում ենք հրեշտակների ընկերակցության մեջ: Եվ մենք կլինենք նրանց [հետ], ում սիրում ենք, և ովքեր օրհնում են մեզ վարագույրի այս կողմում և նրանց, ովքեր սիրում և օրհնում են մեզ վարագույրի մյուս կողմից:

Վերջերս ես և Քույր Գոնգը տեսանք ուխտի պատկանելության լավագույն դրսևորումը հիվանդանոցի մի սենյակում: Մի երիտասարդ հայր երիկամի խիստ կարիք ուներ փոխպատվաստման համար: Նրա ընտանիքը արտասվել էր, ծոմ պահել և աղոթել նրա համար, որ երիկամ ստանար: Երբ լուր եկավ, որ կյանք փրկող երիկամը հենց նոր մատչելի էր դարձել, նրա կինը կամաց ասաց. «Հուսով եմ մյուս ընտանիքը նորմալ վիճակում է»: Պատկանելությունը ուխտի միջոցով Պողոս Առաքյալի խոսքերով այն է, «որ ձեզ հետ մխիթարուիմ մեր փոխադարձ՝իմ և ձեր հաւատքի միջոցով»:[13]

Կյանքի ճանապարհին գուցե կորցնենք հավատն առ Աստված, բայց Նա երբեք չի կորցնում հավատը մեր հանդեպ: Ինչ էլ որ լինի, Նրա դռան լույսը միշտ վառ է: Նա հրավիրում է մեզ գալ, վերադառնալ ուխտերին, որոնք նշում են Նրա արահետը: Նա պատրաստ սպասում է գրկելու մեզ, նույնիսկ, երբ մենք «դեռ շատ հեռու ենք»:[14] Երբ մենք հավատքի աչքով նայում ենք մեր փորձառության օրինաչափություններին, ծիածանին կամ կապված կետերին, մենք կարող ենք տեսնել Նրա գորովագութ ողորմածությունները և խրախուսանքը, հատկապես մեր փորձությունների,ցավերի ու մարտահրավերների, ինչպես նաև մեր ուրախությունների մեջ: Որքան էլ հաճախ մենք սայթաքենք կամ ընկնենք, եթե մենք շարունակում ենք առաջ շարժվել դեպի Նա, Նա կօգնի մեզ ամեն անգամ մի քայլով:

Երկրորդ, Մորմոնի Գիրքը ուխտի պատկանելության ապացույց է, որը մենք կարող ենք պահել մեր ձեռքում: Մորմոնի Գիրքը խոստացված գործիք է Աստծո զավակների հավաքման համար, որը մարգարեացվել է որպես նոր ուխտ:[15] Երբ մենք կարդում ենք Մորմոնի Գիրքը մենակ և ուրիշների հետ, մտքում թե բարձրաձայն, մենք կարող ենք հարցնել Աստծուն «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս», և ստանալ Սուրբ Հոգու զորությամբ հավաստիացում, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:[16] Սա ներառում է հավաստիացում, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է, Ջոզեֆ Սմիթը Վերականգնման մարգարեն է, և Տիրոջ Եկեղեցին կոչվում է Նրա անունով՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:[17]

Մորմոնի Գիրքը խոսում է հնադարյան և ժամանակակից ուխտի միջոցով ձեզ հետ, ովքեր Լեքիի զավակներն եք՝ «մարգարեների զավակները»:[18] Ձեր նախահայրերը ստացել են ուխտի խոստում, որ դուք՝ նրանց հետնորդները, կճանաչեք ձայնը կարծես փոշու միջից՝ Մորմոնի Գրքում:[19] Այդ ձայնը, որը դուք զգում եք, երբ կարդում եք, վկայում է ձեզ, որ դուք «ուխտի զավակներ եք»[20] և Հիսուսը ձեր Բարի Հովիվն է:

Մորմոնի Գիրքը հրավիրում է մեզանից յուրաքանչյուրին Ալմայի խոսքերով՝ մտնել «ուխտի մեջ [Տիրոջ] հետ, որ [մենք] կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որպեսզի նա իր Հոգին ավելի առատորեն դուրս թափի [մեզ] վրա»:[21] Երբ մենք ուզում ենք փոխվել դառնալ ավելի լավը, ինչպես մի մարդ է ասել՝ «դադարել թշվառ լինել և լինել երջանիկ՝ լինելով երջանիկ», մենք դառնում ենք բաց՝ ուղղորդման, օգնության և ուժի համար: Մենք կարող ենք գալ ուխտով՝ պատկանելու Աստծուն և հավատարիմ հավատացյալների մի համայնքի և ստանալ այն օրհնությունը, որը խոստացվել է Քրիստոսի վարդապետությունում[22] այժմ:

Բոլոր իր զավակներին օրհնելու համար՝ վերականգնված քահանայության իշխանությունը և զորությունը ուխտի պատկանելության երրորդ չափորոշիչն է: Այս տնտեսությունում Հովհաննես Մկրտիչը և Պետրոս, Հակոբոս, և Հովհաննես Առաքյալները եկան որպես փառավորված սուրհանդակներ Աստծո կողմից՝ վերականգնելու Նրա քահանայության իշխանությունը:[23] Աստծո քահանայությունը և Նրա արարողությունները մեղմացնում են երկրի վրա փոխհարաբերությունները և կարող են կնքել ուխտի փոխհարաբերություններ երկնքում:[24]

Քահանայությունը կարող է բառացիորեն օրհնել օրորոցից մինչև գերեզման՝ մանկան անվան և օրհնությունից մինչև գերեզմանի նվիրագործում: Քահանայության օրհնությունները բժշկում են, մխիթարում,

խորհուրդ տալիս: Մի հայր բարկացած էր իր որդու վրա, մինչև ներողամիտ սեր առաջացավ, երբ հայրը որդուն սրտառուչ քահանայության օրհնություն տվեց: Լինելով Եկեղեցու միակ անդամն իր ընտանիքում, մի սիրելի երիտասարդ կին, համոզված չէր իր հանդեպ Աստծո սիրո վերաբերյալ, մինչև նա ստացավ ոգեշնչված քահանայության օրհնություն: Ողջ աշխարհով մեկ ազնվազարմ հայրապետները հոգևորապես պատրաստվում են հայրապետական օրհնություններ տալու համար: Երբ հայրապետը դնում է իր ձեռքերը ձեր գլխին, նա զգում է և արտահայտում Աստծո սերը ձեր հանդեպ: Ձեր հայրապետական օրհնությունը կընդգրկի ձեր տոհմածառը Իսրայելի տան մեջ: Նա արտահայտում է օրհնություններ Տիրոջից: Մի Հայրապետի կին, ով շատ խորամիտ էր, պատմեց ինձ, թե ինչպես են ինքը և իր ընտանիքը հրավիրում Հոգին այն օրերին, երբ իրենց հայրը հայրապետական օրհնություններ է տալիս:

Ի վերջո, ուխտի պատկանելության օրհնությունները գալիս են, երբ հետևում ենք Տիրոջ մարգարեին և ուրախանում տաճարային ուխտով ապրելիս՝ ներառյալ ամուսնության մեջ: Ուխտով ամուսնությունը դառնում է աստվածային և հավերժական, երբ մենք ամեն օր ընտրում ենք վեր դասել մեր կողակցի և ընտանիքի երջանկությունը մեր սեփականից: Երբ «ես»-ը դառնում է «մենք», մենք աճում ենք միասին: Մենք ծերանում ենք միասին, մենք երիտասարդանում ենք միասին: Երբ օրհնում ենք միմյանց ողջ կյանքի ընթացքում՝ մոռանալով ինքներս մեզ, մենք մեր հույսերը և ուրախությունները սրբագործված ենք գտնում ժամանակի և հավերժության մեջ:

Մինչդեռ իրավիճակները տարբեր են լինում, երբ մենք անում ենք հնարավոր ամեն բան լավագույն ձևով և անկեղծորեն խնդրում և փնտրում Նրա օգնությունը ողջ կյանքում, Տերը կառաջնորդի մեզ Իր ժամանակին և Իր ձևով, Սուրբ Հոգով:[25] Ամուսնական ուխտերը կապվում են նրանց փոխադարձ ընտրությամբ, ովքեր կատարում են այդ՝ հիշելով ազատ կամքի հանդեպ Աստծո և մեր հարգանքը, և Նրա օգնության օրհնությունը, երբ մենք միասնաբար որոնում ենք այն:

Պատկանելության ուխտի պտուղները ընտանիքի սերունդների վրա զգացվում են մեր տներում և սրտերում: Խնդրում եմ թույլ տաք ինձ ցույց տալ անձնական օրինակներով:

Երբ Քույր Գոնգն ու ես սիրահարվեցինք ամուսնության հեռանկարով, ես սովորեցի ազատ կամքի և որոշումների վերաբերյալ: Որոշ ժամանակ մենք սովորում էինք երկու տարբեր երկրներում երկու տարբեր աշխարհամասերում: Ահա թե ինչու, ես կարող եմ անկեղծորեն ասել, որ գիտությունների դոկտորի աստիճան եմ ստացել միջազգային հարաբերություններում:

Մի անգամ հարցրեցի. «Երկնային Հայր, ամուսնանա՞մ Սյուզանի հետ»: Ես խաղաղություն զգացի: Բայց հենց այդ ժամանակ էր, որ ես սովորեցի աղոթել անկեղծ միտումով. «Երկնային Հայր, ես սիրում եմ Սյուզանին և ցանկանում ամուսնանալ նրա հետ: Խոստանում եմ լինել լավագույն ամուսինը և հայրը»: Երբ ես կայացրի իմ լավագույն որոշումները և գործի դրեցի դրանք, այդ ժամանակ էր, որ ստացա իմ ամենաամուր հոգևոր հաստատումները:

Այժմ, մեր Գոնգ և Լինդսի երկու ընտանիքներում ԸնտանեկանՈրոնման տոհմածառերը, պատմություններն ու նկարներն օգնում են մեզ բացահայտել և կապել՝ սերնդային ուխտի պատկանելության ապրած փորձառության միջոցով:[26] Մեզ համար հարգված նախնիների շարքում են.

Մեծ Տատ Էլիս Բլաուեր Բանգերտերը, ով մեկ օրում ամուսնության երեք առաջարկ ստացավ, հետագայում խնդրեց իր ամուսնուն, որ մի ոտնակ ամրացնի իր խնոցուն, որ կարողանա կարագ հարել և թել մանել և կարդալ միաժամանակ:

Մեծ Պապ Լոյ Կուեյ Չարը տարավ իր երեխաներին իր մեջքին և իր ընտանիքի մի քանի իրեր ավանակի վրա, երբ անցնում էին լավայով պատված դաշտերը Հավայան Մեծ կղզում: Չար ընտանիքի սերունդների նվիրվածությունը և զոհաբերությունը օրհնեցին մեր ընտանիքն այսօր:

Մերի Էլիս Փաուել Լինդսի տատը մենակ մնաց հինգ փոքր երեխաներով, երբ նրա ամուսինը և ավագ որդին հանկարծակի ընդամենը օրերի տարբերությամբ մահացան: 47 տարեկան այրի տատը մեծացրեց իր ընտանիքը տեղի ղեկավարների և անդամների աջակցությամբ: Այդ բոլոր տարիների ընթացքում տատը խոստանում էր Տիրոջը, որ եթե Նա օգներ իրեն, ինքը երբեք չէր տրտնջա: Տերն օգնեց նրան: Նա երբեք չտրտնջաց:

Սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, ինչպես վկայել է Սուրբ Հոգին, ամեն բարի և հավերժական բան հիմնված է Աստծո՝ մեր Հավերժական Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի, Նրա Քավության կենդանի իրողության վրա: Մեր Տեր Հիսուս Քրիստոսը նոր ուխտի Միջնորդն է: Հիսուս Քրիստոսի մասին վկայելը Մորմոնի Գրքի ուխտի նպատակն է:[27] Երդումով և ուխտով, Աստծո վերականգնված քահանայության իշխանությունը նախատեսված է՝ օգնելու Աստծո բոլոր զավակներին, ներառյալ ուխտի ամուսնության միջոցով, սերնդային ընտանիքով և անձնական օրհնություններով:

Էլիս Բլաուեր Բանգերտեր

Լոյ Կուեյ Չար

Մերի Էլիս Փաուել Լինդսի

Մեր Փրկիչը հայտարարում է. «Ես եմ Ալֆան և Օմեգան՝ Քրիստոս Տերը. այո՛, [այսինքն ես եմ նա՝] սկիզբը և վերջը՝ աշխարհի Քավիչը»:[28]

Ի սկզբանե մեզ հետ լինելով, Նա մեզ հետ է մեր ուխտի ողջ պատկանելության մեջ՝ մինչև վերջ: Ես այսպես եմ վկայում Հիսուս Քրիստոսի սրբազան և սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Isaac Watts, "My Shepherd Will Supply My Need," *Ensign,* Sept. 2015, 73:
2. Տես Մատթեոս 10.39:
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.20:
4. See *Lectures on Faith* (1985), 69.
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:
6. Վարդապետություն և Ուխտեր 109.1:
7. Մորոնի 7.36, տես նաև Մորոնի 7.32:
8. Վարդապետություն և Ուխտեր 121.44:
9. Վարդապետություն և Ուխտեր 76.69:
10. Եբրայեցիս 12.24, Վարդապետություն և Ուխտեր 76.69; 107.19, տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Գաղատացիս 3.20 (Աստվածաշնչի հավելված):
11. Մորոնի 10.33, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 90.24, 98.3:
12. Մոսիա 2.41:
13. Հռովմայեցիս 1.12, տես նաև Մոսիա 18.8–9:
14. Ղուկաս 15.20:
15. Տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ, Վարդապետություն և Ուխտեր 84.57:
16. Մորոնի 10.4:
17. Տես 3 Նեփի 27.7–8, Վարդապետություն և Ուխտեր 115.3:
18. 3 Նեփի 20.25:
19. Տես 2 Նեփի 26.16, 33.13:
20. 3 Նեփի 20.26:
21. Մոսիա 18.10:
22. Տես 2 Նեփի 31.2, 12–13:
23. Տես Վարդապետություն և Ուխտեր13, 27.12, Վարդապետություն և Ուխտերի Նախաբան:
24. Տես Վարդապետություն և Ուխտեր 128.8, տես նաև Ելից 19.5–6, Վարդապետություն և Ուխտեր 84.40: Նրանք, ովքեր արժանավորությամբ պահում են ուխտերը, դառնում են թանկարժեք գանձ, քահանաների թագավորություն, սուրբ ազգ: Պատկանելություն ուխտին Նրանք, ովքեր պահում են ուխտերը սրբագործված են դառնում Տիրոջ համար:
25. Տես Վարդապետություն և Ուխտեր 8.2:
26. Սերունդները կարող են սովորել միմյանցից, նույնիսկ, երբ յուրաքանչյուր սերունդ սովորում է ինքնուրույն: Քրիստոնյա գրող Սորեն Քիրքիգարդը հետաքրքիր առաջարկ է անում. «Ինչ էլ որ մի սերունդը սովորի մյուսից, ոչ մի սերունդ իսկապես մարդասիրական ոչինչ չի սովորում նախորդից» (*Fear and Trembling,* trans. Vigilius Haufniensi [2018], 117):
27. Տես Մորմոնի Գրքի տիղոսաթերթը:
28. Վարդապետություն և Ուխտեր 19.1:



ՔՐԻՍՏԻՆԱ Բ. ՖՌԱՆԿՈ
Երեխաների Խմբի Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ուրախություն գտնել ավետարանով կիսվելիս

Մենք ունենք սիրող Երկնային Հայր, ով սպասում է մեր դարձին, որ օրհնի մեր և մեր շուրջը գտնվողների կյանքը:

Երեխաների Միության իմ սիրած երգերից մեկը սկսում է հետևյալ խոսքերով.

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի
Սրբերի Եկեղեցու անդամն եմ ես։
Գիտեմ, թե ով եմ ես։
Գիտեմ Աստծո ծրագիրը։
Հավատքով կիսվելիս նրան։
Ես հավատում եմ Փրկիչին՝ Հիսուս
Քրիստոսին։[1]

Ճշմարտությունների ինչպիսի պարզ ու գեղեցիկ արտահայտում, որոնց մենք հավատում ենք:

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք գիտենք, թե ովքեր ենք մենք: Մենք գիտենք, որ «Աստված մեր հոգիների Հայրն է: Մենք . . . Նրա զավակներն ենք, և Նա սիրում է մեզ: Մենք ապրել ենք [Նրա հետ երկնքում], նախքան երկիր [գալը]»:

Մենք գիտենք Աստծո ծրագիրը: Մենք այնտեղ Նրա հետ էինք, երբ Նա ներկայացրեց այն: Մեր Երկնային Հոր «ողջ նպատակը՝ Նրա աշխատանքը և Նրա փառքը, մեզանից յուրաքանչյուրին հնարավորություն տալն է վայելելու Նրա բոլոր օրհնությունները: Նա . . . Իր նպատակն իրագործելու կատարյալ ծրագիր տվեց: Մենք հասկացանք և ընդունեցինք . . . երջանկության, . . . փրկագնման և . . . փրկության այդ ծրագիրը» նախքան երկիր գալը:

Փրկիչն առանցքային դեր է խաղում Աստծո ծրագրում: Իր

Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը կատարեց Իր Հոր նպատակը և յուրաքանչյուրիս համար հասանելի դարձրեց փրկությունն ու վեհացումը: Սատանան կամ դևը Աստծո ծրագրի մի թշնամի է» և եղել է ի սկզբանե:

Կամքի ազատությունը, կամ ընտրելու հնարավորությունը, Իր զավակներին տրված Աստծո մեծագույն պարգևներից է: . . . Մենք պետք է ընտրենք՝ կամ հետևել Հիսուս Քրիստոսին կամ հետևել սատանային»:[2]

Սրանք հասարակ ճշմարտություններ են, որոնցով մենք կարող ենք կիսվել ուրիշների հետ:

Թույլ տվեք պատմել ձեզ, թե ինչպես է մի անգամ մայրս կիսվել նման պարզ ճշմարտություններով, պարզապես պատրաստ լինելով զրուցելու և հնարավորությունը նկատելու համար:

Տարիներ առաջ մայրս վերադառնում էր Արգենտինայից՝ ուր մեկնել էր եղբորս այցելելու: Մայրս երբեք չի սիրել թռչել ինքնաթիռով, ուստի, նա խնդրեց որդիներիցս մեկին տալ իրեն օրհնություն, որ հանգիստ ու ապահով լինի: Որդիս հուշում ստացավ օրհնելու նաև իր տատիկին Սուրբ Հոգու հատուկ առաջնորդությամբ՝ ամրացնելով և դիպչելով շատերի սրտերին, ովքեր ցանկություն ունեն սովորելու ավետարանի մասին:

Սոլթ Լեյքի օդակայանում մայրս և եղբայրս հանդիպեցին մի 7-ամյա աղջնակի, ով իր ընտանիքի հետ տուն էր վերադառնում լեռնադահուկային ուղևորությունից: Նրա ծնողները նկատեցին, թե որքան երկար էր նա զրուցում մորս և եղբորս հետ և որոշեցին միանալ նրանց: Նրանք ներկայացրին իրենց և դստերը որպես Էդուարդո, Մարիա Սյուզանա և Ջադա Փոլ: Այդ հրաշալի ընտանիքի հետ բնական ու ջերմ շփում սկսվեց:

Երկու ընտանիքներն էլ ուրախ էին, որ նույն թռիչքով միասին են մեկնելու Բուենոս Այրես (Արգենտինա): Մինչ նրանք շարունակեցին զրույցը, մայրս հասկացավ, որ մինչ այդ պահը նրանք երբևէ չէին լսել Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու մասին:

Սյուզանայի տված առաջին հարցերից մեկը հետևյալն էր. «Կպատմե՞ք ինձ այն գեղեցիկ թանգարանի մասին, որի վերևում ոսկե արձան կա»:

Մայրս բացատրեց, որ գեղեցիկ շինությունը թանգարան չէր, այլ Տիրոջ Տաճարը, որտեղ մենք ուխտեր ենք կապում Աստծո հետ, որպեսզի կարողանանք մի օր վերադառնալ ու ապրել Նրա հետ: Սյուզանան խոստովանեց մորս, որ նախքան Սոլթ Լեյք մեկնելը նա աղոթքով խնդրել էր, որ ինչ-որ բան ամրացներ իր հոգին:

Թռիչքի ընթացքում մայրս բերեց ավետարանի վերաբերյալ իր պարզ, բայց ուժեղ վկայությունը և հրավիրեց Սյուզանային գտնել միսիոներներին իր հայրենիքում: Սյուզանան հարցրեց մորս. «Ինչպե՞ս կարող եմ գտնել նրանց»:

Մայրս պատասխանեց. «Դուք չեք կարող նրանց չնկատել. նրանք կամ երկու երիտասարդներ են սպիտակ վերնաշապիկով և փողկապով, կամ կոկիկ հագնված երկու երիտասարդ կանայք, և նրանք միշտ կրում են անվանապիտակ, որի վրա գրված է նրանց անունը և նաև «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»:

Ընտանիքները փոխանակեցին հեռախոսահամարները և հրաժեշտ տվեցին միմյանց Բուենոս Այրեսի օդակայանում: Սյուզանան, ով այդ ժամանակվանից դարձավ իմ լավ ընկերը, բազմիցս ասել է ինձ, որ շատ էր տխրել օդակայանում մայրիկիցս բաժանվելիս: Նա ասել է. «Մայրդ փայլում էր: Չեմ կարող բացատրել, սակայն նրա մեջ լուսավոր մի բան կար, որից ես չէի ուզում բաժանվել»:

Տուն վերադառնալուն պես Սյուզանան և նրա դուստրը՝ Ջադան, գնացին կիսվելու այդ փորձառությամբ Սյուզանայի մոր հետ, ով ապրում էր երկու փողոց այն կողմ: Մինչ նրանք վարում էին մեքենան, Սյուզանան նկատեց երկու երիտասարդների, որոնք քայլում էին փողոցն ի վար՝ հագնված ճիշտ մորս նկարագրածի պես: Նա կանգնեցրեց մեքենան փողոցի մեջտեղում, դուրս եկավ մեքենայից և հարցրեց այդ երկու երիտասարդներին. «Դուք պատահմամբ Հիսուս Քրիստոսի Եկեղեցուց չէ՞ք»:

Նրանք ասացին՝ «Այո»:

«Միսիոներնե՞ր»,- հարցրեց նա:

Նրանք երկուսն էլ ասացին. «Այո, ճիշտ այդպես»:

Ապա նա ասաց. «Նստեք մեքենաս. դուք գալիս եք մեր տուն ինձ ուսուցանելու»:

Երկու ամիս անց Մարիա Սյուզանան մկրտվեց: Նրա դուստրը՝ Ջադան, նույնպես մկրտվեց, երբ դարձավ ինը տարեկան: Մենք դեռևս աշխատում ենք Էդուարդոյի հետ, ում մենք սիրում ենք՝ անկախ ամեն ինչից:

Այդ ժամանակից ի վեր Սյուզանան դարձել է լավագույն միսիոներներից մեկը, որ ես երբևէ հանդիպել եմ: Նա նման է Մոսիայի որդիներին. բազում հոգիներ է բերում դեպի Քրիստոսը:

Մեր զրույցներից մեկի ժամանակ ես հարցրի նրան. «Ո՞րն է քո գաղտնիքը: Ինչպե՞ս ես ուրիշների հետ կիսվում ավետարանով»:

Նա ասաց ինձ. «Դա շատ պարզ է: Ամեն օր տանից դուրս գալուց առաջ

ես աղոթում եմ, խնդրելով Երկնային Հորը առաջնորդել ինձ մեկի մոտ, ով ունի ավետարանի կարիքն իր կյանքում: Երբեմն ես վերցնում եմ Մորմոնի Գիրք, որ կիսվեմ նրանց հետ կամ միսիոներների տված քարտերը, և երբ սկսում եմ խոսել մեկի հետ, ես պարզապես հարցնում եմ, թե արդյոք նա լսել է Եկեղեցու մասին»:

Սյուզանան նաև ասել է. «Այլ անգամներ ես պարզապես ժպտում եմ, մինչ սպասում եմ գնացքին: Մի օր մի մարդ նայեց ինձ ու ասաց. «Ինչո՞ւ եք ժպտում»: Նրա հարցն ինձ հանկարծակիի բերեց:

Ես պատասխանեցի. «Ժպտում եմ, որովհետև երջանիկ եմ»:

Ապա նա ասաց. «Իսկ ինչո՞ւ եք դուք այդքան երջանիկ»:

Ես պատասխանեցի. «Ես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ, և դա երջանկացնում է ինձ: Լսե՞լ եք եկեղեցու մասին»:

Երբ նա պատասխանեց՝ ոչ, նա տվեց նրան քարտ և հրավիրեց հաճախել կիրակնօրյա ծառայությանը: Հաջորդ կիրակի նա դիմավորեց նրան դռան մոտ:

Նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է.

«Գոյություն ունեն ավետարանով կիսվելու երեք քայլեր, որոնք կարող են կատարել եկեղեցու բոլոր անդամները: . . .

Առաջինը, մենք բոլորս էլ կարող ենք աղոթել փրկության այս աշխատանքի կարևոր մասը դառնալու ցանկության համար: . . .

Երկրորդը, մենք կարող ենք պահել պատվիրանները: . . . Հավատարիմ անդամները միշտ կունենան Փրկիչի Հոգին . . . իրենց հետ, որը կառաջնորդի նրանց, երբ նրանք ցանկանան մասնակցել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով կիսվելու հրաշալի գործին:

Երրորդը, մենք կարող ենք աղոթել ոգեշնչման համար, թե *մենք* ինչ կարող ենք անել . . . ուրիշների հետ ավետարանով կիսվելու համար . . . [և] նվիրվածությամբ աղոթել և գործել ըստ ձեր ստացած ոգեշնչման»:[3]

Եղբայրնե՛ր, քույրե՛ր, երեխանե՛ր և պատանինե՛ր, կարո՞ղ ենք մենք լինել իմ ընկեր Սյուզանայի նման ավետարանով կիսվել ուրիշների հետ: Կարո՞ղ ենք հրավիրել մեր ընկերներից մեկին, ով մեր հավատքից չէ, կիրակի օրը մեզ հետ գալ եկեղեցի: Կամ գուցե կարո՞ղ ենք կիսվել Մորմոնի Գրքի օրինակով մեր բարեկամի կամ ընկերոջ հետ: Կարո՞ղ ենք մենք օգնել ուրիշներին գտնել իրենց նախնիներին FamilySearch-ում կամ կիսվել ուրիշների հետ, թե ինչ ենք սովորել շաբաթվա ընթացքում, մինչ ուսումնասիրել ենք *Եկ, հետևիր ինձ* ձեռնարկը: Կարո՞ղ ենք ավելի նմանվել մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին և կիսվել ուրիշների հետ, թե ինչն է մեզ երջանկություն բերում մեր կյանքում: Այս հարցերից յուրաքանչյուրի պատասխանն է՝ այո՛: Մենք կարող ենք անել դա:

Սուրբ գրություններում մենք կարդում ենք, որ «Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներն առաջ են ուղարկվում «աշխատելու նրա այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար» (Վարդապետություն և Ուխտեր 138.56): Փրկության այս աշխատանքը ներառում է անդամների միսիոներական աշխատանքը, նորադարձների պահպանումը, ոչ ակտիվ անդամների ակտիվացումը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները և ավետարանի ուսուցումը»:[4]

Իմ թանկագի՛ն ընկերներ, Տերն ունի մեր կարիքը, որ հավաքի Իսրայելը: Վարդապետություն և

Ուխտերում Նա ասել է. «Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ինչ եք ասելու. բայց շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ կտրվի ամեն մարդու համար չափված բաժինը»:[5]

Բացի դրանից, Նա խոստացել է մեզ.

«Եվ, եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք գեթ մեկ հոգի, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ, իմ Հոր արքայությունում:

Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ Հոր արքայություն, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ»:[6]

Երեխաների Միության երգը, որով ես սկսեցի իմ ելույթը, ավարտվում է այս խորիմաստ հայտարարությամբ.

Ես հավատում եմ Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին:
Կփառաբանեմ նրա անունը:
Կանեմ ճիշտը,
Կհետևեմ նրա լույսին:
Կհոչակեմ նրա ճշմարտությունը:[7]

Ես վկայում եմ, որ այս խոսքերը ճշմարիտ են, և որ մենք ունենք սիրող Երկնային Հայր, ով սպասում է մեր դարձին, որ օրհնի մեր և մեր շուրջը գտնվողների կյանքը: Թող որ մենք ցանկություն ունենանք բերելու մեր եղբայրներին և քույրերին Քրիստոսի մոտ. սա է իմ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Հիսուս Քրիստոսի Եկեղեցին», *Երեխաների երգարան,* 77:
2. *Քարոզիր Իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ձեռնարկ,* (2018), 48:
3. Դալլին Հ. Օուքս, «Կիսվել վերականգնված ավետարանով», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 58:
4. *Handbook 2: Administering the Church,* 5.0, ChurchofJesusChrist.org; see also L. Whitney Clayton, "The Work of Salvation: Then and Now," *Liahona,* Sept. 2014, 23.
5. Վարդապետություն և Ուխտեր 84.85:
6. Վարդապետություն և Ուխտեր 18:15–16:
7. «Հիսուս Քրիստոսի Եկեղեցին», 77:

ԵՐԵՑ ԴԻՏԵՐ Ֆ. ՈՒԽԴՈՐՖ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ձեր մեծ արկածը

Ամեն օր Փրկիչը մեզ հրավիրում է մի կողմ դնել մեր հարմարավետությունն ու ապահովությունը և միանալ Իրեն աշակերտության ճանապարհին:

Հոբիթների մասին

Երեխաների կողմից սիրված ֆանտաստիկ վեպը, որը գրվել է տարիներ առաջ, սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Ժամանակով գետնի տակ, իր բնում մի հոբիթ էր ապրում»:[1]

Բիլբո Բեգինսի պատմությունը շատ սովորական, ոչնչով աչքի չընկնող մի հոբիթի մասին է, որին արկած ունենալու ուշագրավ հնարավորություն ընձեռվեց՝ մեծ պարգև ստանալու խոստումով:

Փաստն այն էր, որ ինքնահարգանք ունեցող հոբիթները հիմնականում չէին ներքաշվում արկածների մեջ: Նրանք շատ հարմարավետ կյանքով էին ապրում: Նրանք օրական վեցանգամյա սնունդ էին վայելում և իրենց օրերն անցկացնում էին իրենց պարտեզներում՝ այցելուների հետ հեքիաթներ փոխանակելով, երգելով, նվագելով երաժշտական գործիքներ և ընկղմվելով կյանքի պարզ ուրախությունների մեջ:

Այնուամենայնիվ, երբ Բիլբոյին առաջարկում են մեծ արկածի հեռանկարը, մի բան դիպչում է նրա սրտին: Նա սկզբից ևեթ հասկանում է, որ ճամփորդությունը դժվար է լինելու: Գուցե՝ վտանգավոր: Նույնիսկ հավանական է, որ նա չվերադառնա:

Այնուամենայնիվ, արկածի կանչն արձագանք է գտնում նրա սրտի խորքում: Եվ այսպես, այս սովորական հոբիթը, թողնելով հարմարավետությունը, կանգնում է մեծ արկածի ճանապարհին, որի ընթացքն էր «գնալն ու գալը»:[2]

Ձեր արկածը

Թերևս պատճառներից մեկը, որ այս պատմությունը հարազատ է շատերիս,այն է, որ սա նաև մեր պատմությունն է:

Շատ, շատ վաղուց, նույնիսկ նախքան մեր ծնվելը, մի տարիքում, որը ջնջվել է ժամանակով և ամպածածկ է եղել հիշողությունից, մեզ նույնպես հրավիրել են արկած ունենալ: Դա առաջարկել է Աստված՝ մեր Երկնային Հայրը: Արկածի առաջարկի ընդունումը կնշանակեր՝ թողնել Նրա անմիջական ներկայության հարմարավետությունն ու ապահովությունը: Դա կնշանակեր՝ գալ երկիր և արկած ունենալ, որը լի կլիներ անսպասելի վտանգներով ու փորձություններով:

Մենք գիտեինք, որ հեշտ չէր լինելու:

Բայց մենք նաև գիտեինք, որ ձեռք կբերեինք թանկարժեք գանձեր,

այդ թվում՝ ֆիզիկական մարմիններ և կճաշակեինք մահկանացության ծայրաստիճան ուրախություններն ու վշտերը: Մենք կսովորեինք ձգտել, փնտրել և պայքարել: Մենք կհայտնաբերեինք ճշմարտություններ Աստծո և մեր վերաբերյալ:

Իհարկե, մենք գիտեինք, որ ճանապարհի ընթացքում շատ սխալներ էինք թույլ տալու: Սակայն մենք նաև խոստում ունեինք՝ որ Հիսուս Քրիստոսի մեծ զոհաբերության շնորհիվ կկարողանայինք մաքրվել մեր օրինազանցություններից, մաքրագործվել և զտվել հոգով և, մի օր, հարություն առնել ու վերամիավորվել նրանց հետ, ում մենք սիրում ենք:

Մենք գիտեինք, թե որքան շատ է Աստված մեզ սիրում: Նա մեզ կյանք է տվել և ցանկանում է, որ մենք հաջողենք: Հետևաբար, Նա մեզ համար Փրկիչ էր պատրաստել: Մեր Երկնային Հայրն ասել է. «Այնուամենայնիվ, դու կարող ես ընտրել քեզ համար, քանզի դա տրված է քեզ»:[3]

Մահկանացության արկածի որոշ մասերը պետք է որ անհանգստացնող և, նույնիսկ, սարսափեցնող լինեին Աստծո զավակների համար, քանի որ մեր հոգևոր եղբայրներից և քույրերից շատերը որոշում կայացրին դեմ գնալ դրան:[4]

Բարոյական ազատ կամքի պարգևով ու զորությամբ, մենք որոշեցինք, որ այն ներուժը, որը կարող ենք ձեռք բերել, և այն, ինչ կարող ենք դառնալ հավերժական առումով, գերազանցում է ռիսկը:[5]

Եվ այսպես, վստահելով Աստծո և Նրա Միրելի Որդու խոստումներին և զորությանը, մենք ընդունեցինք մարտահրավերը:

Ես ընդունել եմ:

Դուք՝ նույնպես:

Մենք համաձայնեցինք թողնել մեր առաջին վիճակի ապահովությունը և ձեռնամուխ եղանք մասնակցելու «գալ ու գնալու» մեծ արկածին:

Արկածի կանչը

Այնուամենայնիվ, մահկանացու կյանքը մեզ շեղելու միտում ունի, այդպես չէ՞: Մենք հակված ենք մոռանալ մեր նպատակաուղղվածությունը, աճի և առաջընթացի փոխարեն գերադասելով հարմարավետությունն ու հեշտությունը:

Բայց մեր սրտի խորքում մնում է անհերքելի մի բան, որը փափագում է ավելի բարձր ու վեհ նպատակ: Այս փափագը պատճառներից մեկն է, թե ինչու են մարդիկ մոտենում ավետարանին և Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն: Վերականգնված ավետարանը, ինչ-որ իմաստով, արկածի կանչի նորացում է, որը մենք ընդունել ենք այդքան վաղուց: Ամեն օր Փրկիչը մեզ հրավիրում է մի կողմ դնել մեր հարմարավետությունն ու ապահովությունը և միանալ Իրեն՝ աշակերտության ճանապարհին:

Այս ճանապարհին շատ ոլորաններ կան: Կան բլուրներ, դաշտավայրեր և շրջադարձեր: Կարող են լինել նաև փոխաբերական սարդեր, տրոլներ և նույնիսկ մեկ-երկու վիշապ: Բայց եթե դուք մնաք ճանապարհին և վստահեք Աստծուն, ապա, ի վերջո, կգտնեք ձեր փառահեղ ճակատագրի ուղին և կվերադառնաք ձեր երկնային տուն:

Ուրեմն, ինչի՞ց պետք է սկսեք:

Դա շատ պարզ է:

Դարձրեք ձեր սիրտը դեպի Աստված:

Առաջինը, դուք պետք է որոշեք ձեր սիրտը դարձնել դեպի Աստված: Ամեն օր ձգտեք գտնել Նրան: Սովորեք սիրել Նրան: Ապա, թույլ տվեք, որ այդ սերը ոգեշնչի ձեզ սովորել, հասկանալ, հետևել Նրա ուսմունքներին և պահել Աստծո պատվիրանները: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը տրվել է մեզ պարզ ու հասարակ մի եղանակով, այնպես, որ երեխան կարող է հասկանալ: Միևնույն ժամանակ, Հիսուս Քրիստոսի ավետարանը պարունակում է կյանքի դժվարագույն հարցերի պատասխանները, և ունի այնպիսի խորություն ու բարդություն, որ նույնիսկ ողջ կյանքի ընթացքում ուսումնասիրելով և խորհելով, մենք հազիվ թե հասկանանք նույնիսկ փոքրագույն մասը:

Եթե կասկած ունեք այս արկածի առումով, քանի որ կասկածում եք ձեր ունակության վրա, հիշեք, որ

աշակերտությունն այն չէ, որ ամեն ինչ կատարյալ արվի, այլ՝ որ հասկանալով արվի: Այն, թե ով եք դուք իրականում, ավելի շատ ձեր ընտրություններն են ցույց տալիս, քան ձեր ունակությունները:[6]

Նույնիսկ, երբ ձախողվում եք, կարող եք չդադարել փորձել, հակառակը՝ քաջություն գտնեք, առաջ մղվեք և վեր կացեք: Սա է ճամփորդության մեծ ստուգարքը:

Աստված գիտի, որ դուք կատարյալ չեք և ժամանակ առ ժամանակ կձախողվեք: Երբ պայքարում եք, Աստված ձեզ ավելի քիչ չի սիրում, քան երբ հաղթում եք:

Ինչպես սիրող ծնող, Նա ընդամենը ցանկանում է, որ դուք հասկանալով փորձեք: Աշակերտությունը նման է դաշնամուր նվագելուն: Սկզբում հնարավոր է միայն երկու մատով պարզ մեղեդի նվագել: Սակայն, երբ շարունակում ես պարապել, այդ պարզ հնչյունները մի օր վերածվում են հրաշալի սոնատների, ռապսոդիաների և համերգների:

Այդ օրը կարող է չգալ այս կյանքում, սակայն այն գալու է: Աստված միայն խնդրում է, որ գիտակցաբար շարունակեք ձգտել:

Սիրով օգնության հասեք ուրիշներին

Ձեր ընտրած այս ճանապարհի վերաբերյալ կա մի հետաքրքիր, համարյա զավեշտալի մի բան. ավետարանական ձեր արկածի ժամանակ առաջընթաց ունենալու միակ ճանապարհն է՝ օգնել ուրիշներին, որ նրանք նույնպես առաջադիմեն:

Աշակերտության ճանապարհը մյուսներին օգնելն է: Հավատքը, հույսը, սերը, կարեկցանքը և ծառայությունը հոկում են մեզ՝ որպես աշակերտներ:

Աղքատներին և կարիքավորներին օգնելու ձեր ջանքերի միջոցով հասնելով նրանց, ովքեր դժվարությունների մեջ են, ձեր սեփական բնավորությունը մաքրվում և կերտվում է, ձեր ոգին մեծանում է, և դուք մի փոքր ավելի վստահ եք քայլում:

Բայց այս սերը չի կարող գալ փոխհատուցում ստանալու ակնկալիքներով: Դա չի կարող լինել այնպիսի ծառայություն, որը կատարվում է ճանաչման, շողոքորթության կամ բարեհաճության նպատակներով:

Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները սիրում են Աստծուն և Նրա զավակներին՝ առանց որևէ փոխադարձ բան ակնկալելու: Մենք սիրում ենք նրանց, ովքեր հիասթափեցնում են մեզ, ովքեր մեզ չեն սիրում: Նույնիսկ նրանց, ովքեր մեզ ծաղրում են, վիրավորում և վնաս են պատճառում:

Երբ դուք լցնում եք ձեր սիրտը Քրիստոսի մաքուր սիրով, ապա տեղ չեք թողնում վիրավորելու, դատելու և ամաչեցնելու համար: Դուք պահում եք Աստծո պատվիրանները, որովհետև սիրում եք Նրան: Ընթացքում, դուք աստիճանաբար նմանվում եք Քրիստոսին ձեր մտքերով ու գործերով:[7] Սրանից մեծ ուրիշ ի՞նչ արկած կարող է լինել:

Պատմեք ձեր պատմությունը

Երրորդ բանը, որում մենք փորձում ենք վարպետանալ այս ճամփորդության ընթացքում այն է, որ մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը և չենք ամաչում Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ լինելուց:

Մենք չենք թաքցնում մեր հավատքը:

Մենք չենք կոծկում այն:

Հակառակը, մենք խոսում ենք մարդկանց հետ մեր ճամփորդության մասին սովորական, բնական ձևով: Դա այն է, ինչ ընկերներն են անում՝ նրանք խոսում են թեմաների շուրջ, որոնք կարևոր են իրենց համար: Թեմաների՝ որոնք բխում են իրենց սրտերից և նշանակալից են իրենց համար:

Ահա, թե ինչ եք դուք անում: Լինելով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, դուք պատմում եք ձեր պատմություններն ու փորձառությունները:

Երբեմն ձեր պատմածը մարդկանց մոտ ծիծաղ է առաջացնում: Երբեմն արցունքներ են հայտնվում նրանց աչքերում: Երբեմն դրանք կօգնեն մարդկանց շարունակել համբերությամբ, ճկունությամբ և քաջությամբ հաղթահարել ևս մեկ ժամ, ևս մեկ օր, և մի փոքր էլ մոտենալ Աստծուն:

Պատմեք ձեր փորձառությունների մասին մարդկանց, սոցիալական կայքերում, խմբերում, ամենուրեք:

Վերջին խոսքերից մեկը, որ Հիսուսն ասաց Իր աշակերտներին այն էր, որ նրանք պետք է գնային, աշխարհի բոլոր ազգերին պատմեին հարություն առած Քրիստոսի մասին:[8] Այսօր մենք նույնպես ուրախությամբ ստանձնում ենք այդ վեհ լիազորությունը:

Ի՜նչ հրաշալի ուղերձ մենք պետք է հաղորդենք. Հիսուս Քրիստոսի շնորհիվ յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա կարող է ապահով տուն վերադառնալ՝ իրենց երկնային տունը, և այնտեղ բնակվել փառքի և արդարության մեջ:

Կիսվելու ուրիշ լավ նորություններ էլ կան:

Աստված հայտնվեց մարդուն մեր օրերում: Մենք ունենք կենդանի մարգարե:

Թույլ տվեք հիշեցնել ձեզ, որ Աստծուն պետք չէ, որ դուք «վաճառեք» վերականգնված ավետարանը կամ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին:

Նա պարզապես ակնկալում է, որ դուք չթաքցնեք այն գրվանի տակ:

Եվ եթե մարդիկ որոշեն, որ Եկեղեցին իրենց հարմար չէ, դա նրանց որոշումն է:

Դա չի նշանակում, որ դուք ձախողվել եք: Շարունակեք լավ վերաբերվել նրանց: Չի բացառվում, որ կրկին հրավիրեք նրանց եկեղեցի:

Հազվադեպ սոցիալական շփումների և կարեկից քաջ աշակերտության միջև տարբերությունը՝ հրավերն է:

Մենք սիրում և հարգում ենք Աստծո բոլոր զավակներին, անկախ նրանց կյանքի դիրքից, ռասայից կամ կրոնից, կյանքում կատարած նրանց որոշումներից:

Մեր կողմից մենք կասենք. «Եկե՛ք և տեսե՛ք: Ինքներդ պարզեք, թե աշակերտության ճանապարհով քայլելն ինչպես է օգուտ բերում և ազնվացնում»:

Մենք հրավիրում ենք մարդկանց «գալ և օգնել աշխարհն ավելի լավը դարձնելու մեր ջանքերում»:

Մենք ասում ենք. «Եկե՛ք այստեղ: Մենք ձեր եղբայրներն ու քույրերն ենք: Մենք կատարյալ չենք: Մենք վստահում ենք Աստծուն և ձգտում ենք պահել Նրա պատվիրանները:

«Միացեք մեզ և մենք ավելի լավը կդառնանք ձեր շնորհիվ: Եվ ընթացքում, դուք նույնպես ավելի լավը կդառնաք: Եկեք միասին մասնակցենք այս արկածին»:

Ես ե՞րբ պետք է սկսեմ:

Երբ մեր ընկեր Բիլբո Բեգինսը զգաց իր մեջ արկածային կանչը, նա որոշեց գիշերը լավ հանգստանալ, վայելել նախաճաշը և առավոտյան սկսել պատրաստվել:

Երբ Բիլբոն արթնացավ, տեսավ, որ իր տանը խառնաշփոթ է, քիչ էր մնում հետ կանգներ իր վեհ ծրագրից:

Բայց հետո եկավ նրա ընկեր Հենդալֆը և ասաց. «Ախր ե՞րբ *ես* բարեհաճելու»:[9] Ընկերներին միանալու համար Բիլբոն ստիպված էր ինքնուրույն որոշել, թե ինչ է անելու:

Եվ այսպես, շատ սովորական և ոչնչով աչքի չընկնող հոբիթն այժմ այնքան արագ դուրս վազեց շքամուտքից և հայտնվեց արկածային ուղու վրա, որ մոռացավ իր գլխարկը, ձեռնափայտը և գրպանի թաշկինակը: Նա նույնիսկ իր երկրորդ նախաճաշն անավարտ թողեց:

Թերևս այստեղից մենք նույնպես դաս ունենք քաղելու:

Եթե ես և դուք մեր մեջ մղում զգանք միանալու մեծ արկածի գործին և կիսվելու նրանով, թե մեր սիրող Երկնային Հայրն ինչ է պատրաստել մեզ համար երկար ժամանակ առաջ, ես ձեզ հավաստիացնում եմ, որ այսօր է այդ օրը, որ հետևենք Աստծո Որդուն և մեր Փրկիչին ծառայության և աշակերտության Նրա ճանապարհին:

Մենք կարող ենք ամբողջ կյանքում սպասել այն պահին, երբ ամեն ինչ կատարյալ կդասավորվի: Բայց հիմա է ժամանակը լիարժեք պարտավորվելու, որ փնտրենք Աստծուն, սպասավորենք մարդկանց և նրանց պատմենք մեր փորձառության մասին:

Մի մտածեք ձեր գլխարկի, ձեռնափայտի, թաշկինակի և թափթփված տան մասին:[10]

Նրանց, ովքեր արդեն քայլում են այդ ճանապարհով, ես հորդորում եմ լինել քաջ, ունենալ կարեկցանք, վստահություն և առաջ շարժվել:

Նրանց, ովքեր լքել են այդ ճանապարհը, ես խնդրում եմ վերադառնալ, միանալ մեզ, որ ավելի ամուր լինենք:

Եվ նրանց, ովքեր դեռ չեն սկսել, ես ասում եմ՝ ինչո՞ւ հետաձգել: Եթե դուք ուզում եք մասնակից լինել այս հոգևոր մեծ ճամփորդության հրաշքներին, կանգնեք ձեր սեփական մեծ արկածի ճանապարհին: Խոսեք միսիոներների հետ: Խոսեք վերջին օրերի սուրբ ձեր ընկերների հետ: Խոսեք նրանց հետ այս զարմանալի գործի և զարմանքի մասին:[11]

Սկսելու ժամանա՞կն է:

Եկե՛ք, միացեք մեզ:

Եթե դուք կարծում եք, որ ձեր կյանքը կարող է ավելի իմաստալից լինել, ավելի վեհ նպատակ ունենալ, ձեր ընտանեկան կապերը կարող են ավելի ամուր լինել և ավելի մոտ կարող եք լինել Աստծուն, ապա եկե՛ք, միացեք մեզ:

Եթե դուք փնտրում եք մարդկանց մի համայնք, ովքեր աշխատում են իրենց ուժերի ներածին չափով լինել լավագույն մարդիկ, օգնել կարիքավորներին և այս աշխարհին ավելի լավը դարձնել, եկե՛ք, միացեք մեզ:

Եկե՛ք և տեսեք, թե այս հրաշալի, հիասքանչ և արկածային ճամփորդությունն ինչ է իրենից ներկայացնում:

Ընթացքում, դուք կբացահայտեք ինքներդ ձեզ:

Դուք կբացահայտեք իմաստ:

Դուք կբացահայտեք Աստծուն:

Դուք կբացահայտեք ձեր կյանքի ամենաարկածային և փառահեղ ճամփորդությունը:

Սրա մասին ես վկայում եմ մեր Քավիչ և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջ. Ռ. Ռ. Թոլքին, *Հոբիտ կամ գնալն ու գալը* (Boston: Houghton Mifflin, 2001), 3:
2. *Հոբիտ* վեպի ենթավերնագիր:
3. Մովսես 3.17:
4. Տես Հոբ 38.4–7 (Աստծո զավակները ուրախացել էին), Եսայիա 14.12–13 («Աստծո աթոռից բարձր կդնեմ իմ աթոռը»), Հայտնություն 12.7–11 (պատերազմ եղավ երկնքում):

5. “The Prophet Joseph Smith described *agency* as ‘that free independence of mind which heaven has so graciously bestowed upon the human family as one of its choicest gifts’ [*Teachings of the Prophet Joseph Smith,* comp. Joseph Fielding Smith (1977), 49]. Այս «մտքի անկախությունը» կամ ազատ կամքը զորություն է, որը թույլ է տալիս անհատներին լինել «գործակալն իրենց կամքի»: (Վ&Ու 58.28): Այն ներառում է բարու և չարի միջև ընտրելու կամքի արտահայտություն, կամ՝ բարու և չարի տարբեր մակարդակների, ինչպես նաև հնարավորություն՝ զգալու այդ ընտրության հետևանքները: Երկնային Հայրն Իր զավակներին այնքան շատ է սիրում, որ ցանկանում է, որ մենք հասնենք մեր ամբողջ ներուժին՝ դառնանք Նրա նման: Առաջընթացի համար մարդը պետք է ունենա իր ցանկալի ընտրությունը կատարելու բնածին ունակություն: Իր զավակների ազատ կամքն այնքան էական Նրա ծրագրում, որ «նույնիսկ Աստված չկարողացավ մարդկանց դարձնել Իր նման՝ առանց նրանց ազատություն տալու» [Դեյվիդ Օ. Մակքեյ, “Whither Shall We Go? Or Life’s Supreme Decision,” *Deseret News,* June 8, 1935, 1]” (Byron R. Merrill, “Agency and Freedom in the Divine Plan,” in Roy A. Prete, ed., *Window of Faith: Latter-day Saint Perspectives on World History* [2005], 162).
6. *Հարրի Փոթերը և գաղտնիքների սենյակը* վեպում հեղինակ Ջ. Ք. Ռոուլինգը Հոգվարտսի դեկավար Դամբլդորի շուրթերով նման մի բան է ասում երիտասարդ Հարրի Փոթերին: Դա հրաշալի խորհուրդ է նաև մեզ համար: Ես օգտագործել եմ դա իմ նախկին ուղերձներում և կարծում եմ, որ արժե կրկնել:
7. «Սիրելիներ, հիմա Աստուծոյ որդիք ենք, եւ տակաւին յայտնուած չէ թէ ինչ պիտի լինենք. Բայց գիտենք թէ, երբոր նա կ’յայտնուի, *նորան նման կ’լինենք,* որովհետեւ կ’տեսնենք նորան ինչպէս որ է» (Ա Հովհաննես 3.2, շեշտադրումն ավելացված է):

   Թեև այդպիսի վերափոխումը գուցե վեր է մեր ըմբռնումից, «նոյն ինքն Հոգին վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք:

   Եւ եթէ որդիք՝ ապա ժառանգներ էլ, Աստուծոյ ժառանգներ *եւ Քրիստոսի ժառանգակիցներ.* որ եթէ նորա չարչարանքներին կցորդ ենք՝ փառքին էլ մասնակից լինինք:

   Որովհետեւ այնպէս եմ դատում որ այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատուելու այն գալու *փառքին հետ, որ մեզանում պիտի յայտնուի»* (Հռովմայեցիս 8.16–18, շեշտադրումն ավելացված է):
8. Տես Մատթեոս 28.16–20:
9. Թոլքին, *Հոբիթ,* 33:
10. Տես Ղուկաս 9.59–62:
11. See LeGrand Richards, *A Marvelous Work and a Wonder,* rev. ed. (1966).

ԵՐԵՑ ՎՈԼԹԵՐ Ֆ. ԳՈՆԶԱԼԵՍ
Յոթանասունից

Փրկիչի հպումը

Երբ գալիս ենք Աստծո մոտ, Նա գալիս է մեզ օգնության՝ կա՛մ բժշկելով, կա՛մ ուժ տալով, որ դիմակայենք ցանկացած իրավիճակի:

Մոտավորապես 2000 տարի առաջ Փրկիչը սարի վրա ուսուցանեց Երանությունների և ավետարանական այլ սկզբունքների մասին, այնուհետև իջավ այնտեղից: Քայլելիս Նա հանդիպեց մի մարդու, ով բորոտությամբ էր տառապում: Այդ մարդն ակնածանք և հարգանք ցուցաբերեց՝ ծնկի գալով Քրիստոսի առաջ և բուժում խնդրելով իր հիվանդությունից: Նա դիմեց մի հասարակ խնդրանքով. «Տէ՛ր, թէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել»:

Փրկիչը, մեկնելով ձեռքը, նրան դիպավ, ասելով. «Կամենում եմ՝ սրբուիր»:[1]

Այստեղից մենք սովորում ենք, որ մեր Փրկիչը միշտ ցանկանում է օրհնել մեզ: Որոշ օրհնություններ անմիջապես ենք ստանում, մյուսներին ավելի երկար ենք սպասում, հնարավոր է, որ որոշ օրհնություններ այս կյանքից հետո ստանանք, բայց օրհնությունները կգան իրենց ժամանակին:

Այս բորոտ մարդու նման մենք կարող ենք ուժ և մխիթարություն

գտնել այս կյանքում՝ ընդունելով Նրա կամքը, և իմանալով, որ Նա ցանկանում է օրհնել մեզ: Մենք կարող ենք ուժ գտնել՝ դիմակայելու ցանկացած մարտահրավերի, հաղթահարելու գայթակղությունները, ինչպես նաև մեր դժվար հանգամանքները հասկանալու և համբերելու համար: Անշուշտ, կյանքի ամենացնցող պահերից մեկի ժամանակ, Փրկիչի համբերությունն ավելի ուժեղացավ, երբ Նա ասաց Հորը. «Քո կամքը լինի»:[2]

Բորոտն իր խնդրանքը չձևակերպեց պահանջկոտ կամ հավակնոտ ձևով: Նրա խոսքերը խոնարհ վերաբերմունք էին արտահայտում, մեծ սպասումներ, սակայն նաև անկեղծ ցանկություն, որ կատարվի Փրկիչի կամքը: Սա օրինակ է մեզ համար, թե ինչպիսի տրամադրվածությամբ մենք պետք է գանք Քրիստոսի մոտ: Մենք կարող ենք գալ Քրիստոսի մոտ այնպիսի վստահությամբ, որ Նրա ցանկությունն այժմ և ընդմիշտ կլինի լավագույնը մեր մահկանացու և հավերժական կյանքի համար: Նա հավերժական հեռանկար ունի, որը մենք չունենք: Մենք պետք է գանք Քրիստոսի մոտ անկեղծ ցանկությամբ, որ մեր կամքը կուլ գնա Հոր կամքին, ինչպես՝ Նրանը:[3] Այսպիսով, մենք կպատրաստվենք հավերժական կյանքի համար:

Շատ դժվար է պատկերացնել, թե ինչ ծանր ֆիզիկական և հուզական տառապանք էր կրում այդ բորոտը, որ եկել էր Փրկիչի մոտ: Բորոտությունն ազդում է նյարդերի և մաշկի վրա՝ մարդուն այլանդակելով և դարձնելով հաշմանդամ: Բացի այդ, այն սոցիալական խարանի պատճառ էր դառնում: Բորոտությամբ տառապող մարդը ստիպված էր լքել իր սիրելիներին և ապրել հասարակությունից մեկուսացված: Բորոտները համարվում էին անմաքուր՝ թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես: Այդ իսկ պատճառով, Մովսեսի օրենքը պահանջում էր, որ բորոտները պատռված հագուստ կրեին և քայլելիս բղավեին՝ «Անմաքո՜ւր»:[4] Հիվանդ ու արհամարհված, բորոտները մահանում էին լքված տներում կամ գերեզմաններում:[5] Դժվար չէ պատկերացնել, որ այն բորոտը, որ մոտեցավ Փրկիչին, կոտրված էր:

Երբեմն այս կամ այն կերպ, մենք նույնպես կարող ենք մեզ կոտրված զգալ՝ լինի մեր սեփական, թե ուրիշների գործողությունների պատճառով, հանգամանքների բերումով, որոնք մենք կարող ենք կամ չենք կարող վերահսկել: Այդպիսի պահերին մենք պետք է մեր կամքը հանձնենք Նրա ձեռքը:

Մի քանի տարի առաջ կինս՝ Զուլման, ով իմ լավ կեսն է ու իմ լավագույն մասը, վատ նորություն ստացավ մեր երեխաներից մեկի հարսանիքից երկու շաբաթ առաջ: Նրա մոտ գտան հարականջային գեղձի ուռուցք, և այն արագորեն մեծանում էր: Նրա դեմքը սկսեց այտուցվել, և նա պետք է անմիջապես ենթարկվեր նուրբ վիրահատության: Շատ բաներ անցան նրա մտքով և ծանրացան սրտի վրա: Արդյո՞ք ուռուցքը չարորակ էր: Ինչպե՞ս պիտի նա վերականգնվեր: Արդյո՞ք նրա դեմքը կաթվածահար կլիներ: Ի՞նչ ուժգնության ցավեր կունենար: Արդյո՞ք դեմքի վրա սպիներ կմնային: Հնարավո՞ր էր արդյոք, որ ուռուցքը հեռացնելուց հետո նորից գոյանար: Արդյո՞ք նա կկարողանար մասնակցել մեր տղայի հարսանիքին: Վիրահատական սեղանին պառկելով, նա իրեն կոտրված էր զգում:

Այդ կարևոր պահին Հոգին շշնջաց նրան, որ նա պետք է ընդուներ Հոր կամքը: Ապա, նա որոշեց վստահել Աստծուն: Նա հաստատ զգաց, որ անկախ արդյունքից, Նրա կամքը լավագույնը կլինի իր համար: Շուտով նա հայտնվեց վիրահատական քնի մեջ:

Հետագայում, նա իր օրագրում այսպիսի բանաստեղծական գրառում էր կատարել. «Վիրաբույժի սեղանին խոնարհվեցի Քո առաջ, հանձնվելով Քո կամքին՝ քնեցի: Ես գիտեի, որ կարող եմ վստահել Քեզ, քանզի ոչ մի վատ բան չի գալիս Քեզանից»:

Նա ուժ և մխիթարություն ստացավ՝ իր կամքը ենթարկելով Հոր կամքին: Այդ օրը Աստված նրան շատ օրհնեց:

Անկախ մեր հանգամանքներից, մենք պետք է գործադրենք մեր հավատքը՝ գանք Քրիստոսի մոտ և գտնենք Աստծուն, ում կարող ենք վստահել: Ինչպես գրել է իմ երեխաներից մեկը.

«Ըստ մարգարեի՝ Աստծո դեմքն արեգակի պես պայծառ է,
Նրա մազերը ձյան պես սպիտակ են,
Նրա ձայնը հնչում է շառաչուն գետի պես,
Մարդը ոչինչ է Նրա առաջ. . .
Ես ցնցված եմ, հասկանալով, որ ես էլ ոչինչ եմ:
Միայն դրանից հետո ես հարթում եմ իմ ուղին դեպի Աստված, ում կարող եմ վստահել:
Միայն դրանից հետո ես գտնում եմ Աստծուն, ում կարող եմ վստահել»:[6]

Աստվածն, ում մենք վստահում ենք, մեծացնում է մեր հույսը: Մենք կարող ենք վստահել Նրան, քանի որ Նա սիրում է մեզ և լավագույնն է ցանկանում մեզ համար ցանկացած իրավիճակում:

Բորոտն առաջ եկավ հույսի զորության շնորհիվ: Աշխարհը նրան ոչ մի լուծում չէր առաջարկել, ոչ էլ՝ մխիթարություն: Այսպիսով, Փրկիչի հասարակ հպումը պետք է որ շոյանք լիներ նրա ողջ հոգու համար: Մենք միայն կարող ենք պատկերացնել, թե երախտագիտության ինչպիսի խորը զգացում կունենար բորոտը Փրկիչի հպումի ժամանակ, հատկապես այն պահին, երբ լսեց «Կամենում եմ՝ սրբուիր» բառերը:

Պատմության մեջ ասվում է, որ «նորա բորոտութիւնը շուտով սրբուեցաւ»:[7]

Մենք նույնպես կարող ենք զգալ Փրկիչի սիրող և բուժող ձեռքի հպումը: Ի՞նչ ուրախություն, հույս և երախտագիտություն է ծնվում մեր հոգում՝ երբ գիտենք, որ Նա ցանկանում է օգնել մեզ մաքրվել: Երբ գալիս ենք Աստծո մոտ, Նա գալիս է մեզ օգնության՝ բժշկելով կամ ուժ տալով, որ դիմակայենք ցանկացած իրավիճակի:

Թեև Նրա, այլ ոչ թե մեր կամքն ընդունելը կօգնի մեզ հասկանալ մեր իրավիճակը: Ոչ մի վատ բան չի գալիս Աստծուց: Նա գիտի, թե որն է մեզ համար լավագույնը: Գուցե Նա չի հեռացնի մեր բեռներն անմիջապես: Երբեմն Նա կարող է թեթևացնել բեռները, ինչպես Նա արեց Ալմայի և նրա ժողովրդի հետ:[8] Ի վերջո, ուխտերի շնորհիվ բեռները կվերանան,[9] կա՛մ այս կյանքում, կա՛մ սուրբ Հարությունից հետո:

Անկեղծ ցանկություն ունենալը, որ Նրա կամքը կատարվի, ինչպես նաև մեր Քավիչի աստվածային բնույթը հասկանալը, օգնում է մեզ զարգացնել այնպիսի հավատք, որը ցույց տվեց բորոտը, որպեսզի մաքրվեր: Հիսուս Քրիստոսը սիրո Աստված է, հույսի Աստված, բուժող Աստված, Աստված, ով ուզում է օրհնել մեզ և օգնել մեզ, որ մաքրվենք: Դա այն էր, ինչ Նա ցանկացավ այս երկիր գալուց առաջ, կամավոր կերպով փրկելով մեզ, երբ մենք անօրինություն ենք գործում: Դա այն էր, ինչ Նա ցանկացավ Գեթսեմանիում, երբ տագնապի մեջ զգալով մարդկային ծայրաստիճան ցավը, վճարեց մեղքի գինը: Դա այն է, ինչ Նա ցանկանում է այժմ, երբ աղերսում է մեզ համար Հոր առաջ:[10] Այդ պատճառով Նրա ձայնը դեռ կանչում է. «Ինձ մոտ եկեք ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ»:[11]

Նա կարող է բուժել մեզ և բարձրացնել մեզ, քանի որ Նա կարող է դա անել: Նա Իր վրա վերցրեց մարմնի և հոգու բոլոր ցավերը, որպեսզի Նրա սիրտը լցվի ողորմությամբ, որ կարողանա օգնել մեզ բոլոր բաներում, բուժել մեզ և բարձրացնել մեզ:[12] Եսայիայի խոսքերը, ինչպես մեջբերում է Աբինադին, գեղեցիկ և հուզիչ են.

«Հիրավի, նա կրեց մեր ցավերը, և տարավ մեր վշտերը. . .

. . .Նա խոցոտվեց մեր օրինազանցությունների համար, խոշտանգվեց մեր անօրինությունների համար. մեր խաղաղութեան պատիժը նրա վրա էր. և նրա վերքերով ենք մենք բժշկված»:[13]

Այս նույն գաղափարն ուսուցանվում է հետևյալ պոեմում.

«Ո՛վ Հիսուս Նազարեթից,
Այս սիրտը, որ կոտրված է, չի վերակենդանանում,
Այս կյանքը, որ խորտակված է, մոտ է մահվան,
Հիսուս, կարո՞ղ ես դրանք նորոգել:

Եվ Նրա բարի և հասնող ձեռքով,
Նրա քաղցր կյանքը հրատարակում է
Մեր կոտրված կյանքերի հետ, որ վերակենան,
Նոր արարչություն՝ «ամեն բան նոր»:
Սրտի այն [նյութը] փշրված,
Ցանկությունը, պատմախնդրությունը, հույսն ու հավատը,
Չոլի՛ր, դարձնելով կատարյալ,
Ո՛վ, Հիսուս Նազարեթից»:[14]

Եթե կարծում եք, որ որևէ կերպ մաքուր չեք, եթե կոտրված եք ձեզ զգում, խնդրում եմ իմացեք, որ կարող եք մաքուր լինել, կարող եք նորոգվել, քանի որ Նա սիրում է ձեզ: Վստահ եղեք, որ ոչ մի վատ բան չի գալիս Նրանից:

Քանի որ Նա «վայր իջավ բոլոր բաներից ցած»,[15] Նա հնարավորություն է տալիս, որպեսզի մեր կյանքում կոտրված բոլոր բաները նորոգվեն, և այդպիսով մենք կկարողանանք հաշտվել Աստծո հետ: Բոլոր բաները՝ թե՛ երկրի վրա և թե՛ երկնքում, հաշտվում են Նրա միջոցով, «խաղաղութիւն անելով նորա ձեռովը նորա խաչի արիւնովը»:[16]

Մենք պետք է գանք Քրիստոսի մոտ, կատարելով անհրաժեշտ քայլերը: Այդպես անելով, խոնարհությամբ ասենք. «Տէ՛ր, թէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել»: Եթե մենք անենք դա, կարող ենք ստանալ Տիրոջ բուժիչ հպումը, Նրա ձայնի քաղցր արձագանքը. «Կամենում եմ՝ սրբուիր»:

Փրկիչը Աստված է, ում մենք կարող ենք վստահել: Նա Քրիստոսն է, Օծյալը, Մեսիան, որի մասին ես վկայում եմ Նրա՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 8.2–3:
2. Մատթեոս 26.42:
3. Տես Մոսիա 15.7:
4. Տես Ղևտացոց 13.45:
5. See Bruce R. McConkie, *Doctrinal New Testament Commentary* (1973), 1:174.
6. Տես նաև Առակաց 3.5–6, Վարդապետություն և Ուխտեր 110.2–3, Մովսես 1.2–10:
7. Մատթեոս 8.3:
8. Տես Մոսիա 24.8–15:
9. Տես Մոսիա 24.13–16:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.3–5:
11. Մատթեոս 11.28:
12. Տես Ալմա 7.12:
13. Մոսիա 14.4–5:
14. George Blair, “The Carpenter of Nazareth,” in Obert C. Tanner, *Christ’s Ideals for Living* (Sunday School manual, 1955), 22; in Jeffrey R. Holland, “Broken Things to Mend,” *Liahona,* May 2006, 71.
15. Վարդապետություն և Ուխտեր 88.6:
16. Կողոսացիս 1.20, տես նաև Բ Կորնթացիս 5.18–20:

ԵՐԵՑ ԳԱՐԻ Ի. ՍԹԻՎԵՆՍՈՆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ինձ մի խաբիր

Եթե մենք հնազանդվենք Աստծո պատվիրաններին, մենք միշտ կառաջնորդվենք ճիշտ ճանապարհով և չենք խաբվի:

Այսօր ես իմ խորհուրդը հղում եմ յուրաքանչյուրին, սակայն *հատկապես* ձեզ՝ աճող սերունդ Երեխաների Միությանը, պատանիներին ու պարմանուհիներին: Դուք մեծապես սիրված եք մեր օրերի Տիրոջ մարգարեի՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի

կողմից, այնքան շատ, որ նա անցյալ տարի խոսեց ձեզանից շատերի հետ երիտասարդների համաշխարհային հատուկ հեռարձակման ժամանակ, որը կոչվում էր «Իսրայելի հույսը»:[1] Մենք հաճախ ենք լսում, որ Նախագահ Նելսոնը ձեզ հենց այդպես էլ կոչում է՝ «Իսրայելի հույսը»՝ աճող սերունդը և Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու ապագան:

Իմ երիտասա՛րդ ընկերներ, կցանկանայի նախ կիսվել ձեզ հետ երկու ընտանեկան պատմություններով:

Դալմատին 102

Տարիներ առաջ ես աշխատանքից տուն վերադարձա և զարմացա, տեսնելով ամենուրեք ցրված սպիտակ ներկ՝ գետնի, ավտոտնակի դռան և մեր կարմիր աղյուսով տան վրա: Ավելի մոտիկից զննելով, ես բացահայտեցի, որ ներկը դեռ չէր հասցրել չորանալ: Ներկի հետքը ինձ տարավ դեպի տան հետնամասում գտնվող պարտեզը, ուստի, ես հետևեցի դրան: Այնտեղ ես գտա հնգամյա որդուս, որը վրձինը ձեռքին վազում էր մեր շան հետևից: Մեր գեղեցիկ սև Լաբրադորը կիսով չափ ներկվել էր սպիտակ:

«Ի՞նչ ես անում»: Ես հարցրի բորբոքված ձայնով:

Որդիս դադարեցրեց, նայեց ինձ, նայեց շանը, նայեց վրձնին, որից ծորում էր սպիտակ ներկը և ասաց. «Ես պարզապես ուզում եմ, որ նա նմանվի մուլտֆիլմի սև պտերով շներին. դու գիտես՝ 101 Դալմատինները»:

Ես սիրում էի մեր շանը: Կարծում էի, որ նա կատարյալ էր, բայց այդ օրը որդիս այլ կարծիք ուներ:

Ջոլավոր կատուն

Իմ երկրորդ պատմությունը մեր մեծ հորեղբոր՝ Գրովերի մասին է, ով ապրում էր քաղաքից շատ հեռու գտնվող մի տնակում: Հորեղբայր Գրովերը շատ էր ծերացել: Մենք մտածեցինք, որ մեր որդիները պետք է հանդիպեն նրան, մինչև նրա մահանալը: Ուստի, մի օր մենք երկար ճամփորդեցինք դեպի նրա համեստ տունը: Մենք միասին նստեցինք ու մեր որդիները ծանոթացան նրա հետ: Մի փոքր զրուցելուց հետո մեր երկու կրտսեր որդիները, գուցե հինգ և վեց տարեկան, ցանկացան դուրս գնալ և խաղալ:

Հորեղբայր Գրովերը, լսելով նրանց խնդրանքը, դեմքով խոնարհվեց նրանց ուղղությամբ: Նրա ծերացած ու անծանոթ դեմքը մի փոքր վախեցրեց տղաներին: Իր խոպոտ ձայնով նա ասաց նրանց. «Զգույշ եղեք, այնտեղ շատ ժանտաքիսներ կան»: Սա լսելով Լիզան և ես ավելի քան զարմացած էինք. մենք անհանգստանում էինք տղաների համար: Շուտով տղաները դուրս գնացին խաղալու, մինչ մենք շարունակում էինք մեր այցելությունը:

Ավելի ուշ, երբ նստեցինք մեքենան և տուն էինք վերադառնում, ես հարցրի տղաներին. «Դուք ժանտաքիսի հանդիպեցի՞ք»: Նրանցից մեկը պատասխանեց. «Ոչ, մենք ոչ մի ժանտաքիս էլ չտեսանք, բայց մենք տեսանք մի սև կատու՝ մեջքին սպիտակ զոլեր»:

Մեծ խաբեբան

Անմեղ երեխաների վերաբերյալ այս պատմությունները, մինչ նրանք ինչ- որ բան են հայտնաբերել կյանքի և իրականության մասին, կարող են յուրաքանչյուրիս ժպտալու առիթ տալ, սակայն դրանք նաև ավելի խորը իմաստ ունեն իրենց մեջ:

Առաջին պատմության մեջ մեր կրտսեր որդին ուներ գեղեցիկ շուն. սակայն նա վերցրել էր մի դույլ ներկ և վրձինը ձեռքին որոշել էր ստեղծել իր պատկերացրած իրականությունը:

Երկրորդ պատմության մեջ տղաները բարեբախտաբար անտեղյակ էին իրենց սպառնացող վտանգից, մինչ հանդիպել էին ժանտաքիսի: Չկարողանալով ճիշտ գնահատել իրականում իրենց տեսածը, արդյունքում կարող էր դժբախտ պատահար տեղի ունենալ: Սրանք իրականությունը սխալ ընկալելու օրինակներ են, երբ իրականության փոխարեն ենթադրվում է մեկ այլ բան: Դեպքերից յուրաքանչյուրն էլ լուրջ հետևանքների չհանգեց:

Ինչևէ, շատերն այսօր բախվում են նման խնդիրների ավելի լուրջ հանգամանքներում: Նրանք կա՛մ անկարող են տեսնել բաներն այնպիսին, ինչպիսին իրականում կան, կա՛մ էլ չեն բավարարվում ճշմարտությամբ: Դեռ ավելին, այսօր կան ուժեր, որոնք միտումնավոր մշակված են՝ մեզ հեռացնելու բացարձակ ճշմարտությունից: Այս խաբեությունները և ստերը շատ ավելին են, քան ինչ-որ բանի ինքնությունը անմեղ կերպով սխալ ընկալելը և հաճախ ունենում են ծանր հետևանքներ:

Սատանան՝ ստերի հայրը և մեծ խաբեբան, ստիպում է մեզ հարցականի տակ առնել բաների իսկությունը, և կա՛մ անտեսել հավերժական ճշմարտությունները, կա՛մ ձևափոխել դրանք ավելի հաճելի թվացող բաների: «Նա պատերազմում է Աստծո սրբերի հետ»[2] և հազարամյակներ է անցկացրել, հաշվարկելով և փորձարկելով Աստծո բոլոր զավակներին համոզելու ունակությունը, որ ընդունեն *բարին որպես չար* և *չարը՝ որպես բարի:*

Նա իր առջև նպատակ է դրել համոզելու մահկանացուներին, որ ժանտաքիսները պարզապես կատուներ են, կամ որ ներկի կիրառմամբ դուք կարող եք Լաբրադորին վերածել Դալմատինի:

Այժմ եկեք անդրադառնանք հենց այս սկզբունքի վերաբերյալ մի օրինակի սուրբ գրություններից, երբ Տիրոջ մարգարե Մովսեսը դեմառդեմ հանդիպեց հենց այս խնդրին: «Մովսեսը հափշտակվեց մի չափազանց բարձր սար, . . . նա տեսավ Աստծուն դեմառդեմ, և խոսեց նրա հետ»:[3] Աստված ուսուցանեց Մովսեսին նրա հավերժական ինքնության մասին: Չնայած Մովսեսը մահկանացու էր և անկատար, Աստված ուսուցանեց, որ Մովսեսը «Միածնի նմանությամբ է. և իմ Միածինը . . . կլինի Փրկիչը»:[4]

Ամփոփելով ասենք, որ այս փառահեղ տեսիլքում Մովսեսը տեսավ Աստծուն և նաև սովորեց մի կարևոր բան իր մասին. նա իսկապես *Աստծո որդի էր:*

Ուշադիր լսեք, թե ինչ տեղի ունեցավ, երբ փակվեց այս հրաշալի տեսիլքը: «Եվ եղավ այնպես, որ . . . Սատանան եկավ՝ նրան փորձելով ասաց. Մովսես, *մարդո՛ւ* որդի, երկրպագիր ինձ»:[5] Մովսեսը խիզախորեն պատասխանեց. «Ո՞վ ես *դու*: Քանզի ահա, ես *Աստծո* որդի եմ, նրա Միածնի նմանությամբ. և ո՞ւր է *քո* փառքը, որ ես երկրպագեմ *քեզ*»:[6]

Այլ կերպ ասած, Մովսեսն ասաց. «Դու չես կարող ինձ խաբել, քանզի ես գիտեմ, թե ով եմ ես: Ես ստեղծվել եմ Աստծո պատկերով: Դու չունես Նրա լույսը և փառքը: Ուստի, ինչո՞ւ ես պետք է երկրպագեմ քեզ կամ դառնամ քո խաբեության զոհը»:

Այժմ ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Մովսեսը շարունակում պատասխաններ տալ: Նա հայտարարում է. «Դե՛ն գնա, Սատանա. *ինձ մի խաբիր*»:[7]

Շատ բան կարող ենք սովորել հակառակորդի գայթակղությանն ուղղված Մովսեսի հզոր արձագանքից: Հրավիրում եմ ձեզ նույն կերպ արձագանքել, երբ զգում եք գայթակղության ազդեցությունը: Հրամայեք ձեր հոգու թշնամուն, ասելով՝ «Հեռացի՛ր: Դու *չունես* փառք: Մի՛ գայթակղիր կամ ստիր ինձ: Քանզի ես գիտեմ, որ ես Աստծո զավակ եմ: Եվ ես միշտ կկանչեմ առ իմ Աստվածը Նրա օգնության համար»:

Հակառակորդն, ինչևէ, հեշտությամբ չի հրաժարվում մեզ խաբելու և նսեմացնելու իր կործանիչ դրդապատճառներից: Մովսեսի դեպքում էլ նա ցանկանում էր մոռացնել տալ նրան, թե ով էր նա հավերժության մեջ:

Զայրույթի պոռթկումով «Սատանան գոչեց բարձր ձայնով, և բղավեց երկրի վրա և հրամայեց՝ ասելով. Ե՛ս եմ Միածինը, ի՛նձ երկրպագիր»:[8]

Եկեք վերանայենք: Դուք լսեցի՞ք, թե նա նոր ինչ ասաց: «Ե՛ս եմ Միածինը: *Ի՛նձ* երկրպագիր»:

Մեծ խաբեբան ասում էր. «Մի անհանգստացիր, ես քեզ չեմ վնասի. ես ժանտաքիս չեմ. ես պարզապես մի անմեղ սև ու սպիտակ զոլավոր կատու եմ»:

Ապա Մովսեսը կանչեց առ Աստված և ստացավ Նրա աստվածային ուժը: Չնայած հակառակորդը սկսեց

դողալ և երկիրը ցնցվեց, Մովսեսը *տեղի չտվեց։* Նրա ձայնը հստակ էր ու պարզ։ «Հեռացի՛ր ինձանից, Սատանա՛,- հայտարարեց նա,- քանզի այս մեկ Աստծուն միայն պիտի երկրպագեմ, որը փառքի Աստվածն է»:[9]

Ի վերջո, նա «հեռացավ . . . Մովսեսի ներկայությունից»:[10]

Ապա հայտնվեց Տերը և օրհնեց Մովսեսին իր հնազանդության համար և ասաց.

«Օրհնված ես դու, Մովսե՛ս, քանզի . . . դու ավելի ուժեղ կդարձվես, քան շատ ջրերը։ . . .

Եվ ահա, ես քեզ հետ եմ, նույնիսկ մինչև քո օրերի վերջը»:[11]

Մովսեսը վառ ու լուսավոր օրինակ տվեց մեզանից յուրաքանչյուրին, թե ինչպես կարող ենք դիմակայել հակառակորդին անկախ այն բանից, թե կյանքի որ փուլում ենք գտնվում։ Դա հզոր ուղերձ է անձամբ ձեզ համար. իմանալ, թե ինչ անել, երբ նա փորձում է խաբել ձեզ։ Քանզի դուք, Մովսեսի նման, օրհնվել եք երկնային օգնության պարգևով։

Պատվիրաններ և օրհնություններ

Ինչպե՞ս կարող եք գտնել երկնային այս օգնությունը, ճիշտ ինչպես Մովսեսը, և չխաբվել կամ չընկնել փորձության մեջ։ Այս տնտեսության ընթացքում Տերն անձամբ վերահաստատել է աստվածային օժանդակության պարզ մի ուղի, երբ հայտարարել է. «Ուստի, ես՝ Տերս, իմանալով այն աղետի մասին, որ պիտի գա երկրի բնակիչների վրա, կանչեցի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին, և երկնքից խոսեցի նրա հետ, և նրան պատվիրաններ տվեցի»:[12] Ավելի պարզ բառեր օգտագործելով, մենք կարող ենք ասել, որ Տերը, ով ի սկզբանե գիտի վերջը,[13] գիտի մեր օրերի առանձնահատուկ դժվարությունները։ Ուստի, Նա ուղի է պատրաստել խնդիրներն ու փորձությունները հաղթահարելու համար, որոնցից շատերը հանդիսանում են հակառակորդի նենգ ազդեցությունների և նրա հարձակումների անմիջական արդյունքը։

Ուղին պարզ է։ Իր ծառաների միջոցով Աստված խոսում է մեր՝ Իր զավակների հետ և տալիս մեզ պատվիրաններ։ Մենք կարող ենք

իմ մեջբերած հատվածները կարդալ հետևյալ կերպ. «Ես՝ Տերս, . . . կանչեցի իմ ծառա [Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին] և երկնքից խոսեցի նրա հետ, և նրան պատվիրաններ տվեցի»։ Մի՞թե դա փառահեղ ճշմարտություն չէ։

Ես բերում եմ հանդիսավոր վկայություն, որ Տերն իսկապես խոսել է Ջոզեֆ Սմիթի հետ երկնքից՝ սկսած փառահեղ Առաջին Տեսիլքից։ Նա նաև խոսում է Նախագահ Նելսոնի հետ մեր ժամանակներում։ Ես վկայում եմ, որ Աստված խոսել է մարգարեների հետ անցյալում և տվել նրանց պատվիրաններ, որոնք առաջնորդել են Նրա զավակներին երջանկության այս կյանքում և փառքի՝ հաջորդ կյանքում։

Աստված շարունակում է հայտնություն տալ մեր կենդանի մարգարեին այսօր։ Օրինակները շատ են. ավելի տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ծրագիրը, տնային ուսուցումը և այցելությամբ ուսուցումը սպասավորությամբ փոխարինելը, փոփոխություններ՝ կապված տաճարային կանոնների և արարողությունների հետ, և Երեխաների և Պատանիների նոր ծրագրերը։ Ես հիանում եմ բարությամբ և կարեկցանքով սիրառատ Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի, ով վերականգնեց Փրկիչի Եկեղեցին երկրի վրա ևս մեկ անգամ և մարգարե կանչեց մեր օրերում։ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը *վերանվանվող* ժամանակները փոխհատուցում է ժամանակների *լրությամբ։*

Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել

Մեր մարգարեին տրված պատվիրաններին հնազանդվելը բանալի է ոչ միայն մոլորեցնողի ազդեցություններից և խաբեություններից խուսափելու, այլ նաև հարատև ուրախություն և երջանկություն ունենալու համար։ Աստվածային այս բանաձևը շատ պարզ է. արդարակեցությունը կամ պատվիրաններին հնազանդվելը օրհնություններ է բերում, իսկ օրհնությունները բերում են ուրախություն կամ երջանկություն մեր կյանքում։

Ինչևէ, ճիշտ ինչպես սատանան փորձեց մոլորեցնել Մովսեսին, նա ձգտում է խաբել ձեզ։ Նա միշտ իրեն ձևացրել է այն, ինչ իրականում չէ։ Նա միշտ փորձում է թաքցնել իր իսկությունը։ Նա հայտարարում է, որ հնազանդությունը ձեր կյանքն անտանելի կդարձնի, և որ այն կխլի ձեզանից երջանկությունը։

Կարո՞ղ եք մտաբերել խաբելու նրա որոշ խորամանկությունները։ Օրինակ, նա շեղում է մեր ուշադրությունը ապօրինի թմրադեղերի հասցրած վնասներից և դրա փոխարեն հուշում, որ այն հաճույք կպատճառի։ Նա ընկղմում է մեզ զանազան բացասական տարրերի մեջ, որոնք առկա են սոցիալական լրատվամիջոցներում, ներառյալ՝ անիրական համեմատությունները և իդեալականացված իրականությունը։ Բացի դրանից, համացանցի միջոցով նա ներկայացնում է մեզ վնասակար նյութեր, օրինակ պոռնոգրաֆիան, կիբերհարձակումները և ապատեղեկատվությունը, նպատակ ունենալով կասկած և վախ մտցնել մեր սրտում և մտքում։ Նա խորամանկորեն շշնջում է. «Պարզապես հետևիր ինձ, և դու անպայման երջանիկ կլինես»։

Մորմոնի Գրքի մարգարեի կողմից դարեր առաջ գրված խոսքերը հատկապես վերաբերում են մեր օրերին. «Ամբարշտությունը *երբեք* երջանկություն չի եղել»:[14] Թող որ մենք տարբերենք սատանայի խաբեությունները,

ինչպիսին էլ դրանք լինեն: Թող որ մենք դիմակայենք և տեսնենք այն մեկի ստերը և ազդեցությունները, ով ցանկանում է կործանել մեր հոգիները և գողանալ մեր ներկայիս ուրախությունն ու ապագա փառքը:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, մենք պետք է շարունակենք լինել հավատարիմ և աչալուրջ, քանզի դա է ճշմարտությունը պարզելու և Տիրոջ ծառաների միջոցով Նրա ձայնը լսելու միակ ուղին: «Քանզի Հոգին խոսում է ճշմարտությունը և չի ստում: . . . Այս բաները մեզ հայտնի են դարձվում հստակորեն՝ մեր հոգիների փրկության համար: . . . Քանզի Աստված դրանք խոսել էր նաև մարգարեների հետ հնում»:[15] Մենք Ամենազոր Աստծո Սրբերն ենք, Իսրայելի հույսը: Մի՞թե կտատանվենք: «Կխուսափե՞նք պատերազմից: Ո՛չ: . . . Աստծո պատվիրաններին հոգով, սրտով հավատարիմ միշտ կլինենք»:[16]

Ես բերում եմ իմ հատուկ վկայությունը *Իսրայելի Սրբի*՝ Հիսուս Քրիստոսի մասին: Վկայում եմ Նրա մեծ սիրո, ճշմարտության և երջանկության մասին, որոնք հնարավոր են դարձվել Նրա անսահման և հավերժական զոհաբերության շնորհիվ: Եթե մենք հնազանդվենք Նրա պատվիրաններին, մենք միշտ կառաջնորդվենք ճիշտ ճանապարհով և չենք մոլորվի: Մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» (պատանիների համաշխարհային հոգևոր հավաք, հունիսի 3, 2018), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org:
2. Վարդապետություն և Ուխտեր 76.29:
3. Մովսես 1.1–2:
4. Մովսես 1.6:
5. Մովսես 1.12, շեղագրերն ավելացված են:
6. Մովսես 1.13, շեղագրերն ավելացված են:
7. Մովսես 1.16, շեղագրերն ավելացված են:
8. Մովսես 1.19:
9. Մովսես 1.20:
10. Մովսես 1.22:
11. Մովսես 1.25–26:
12. Վարդապետություն և Ուխտեր 1.17:
13. Աբրահամ 2.8:
14. Ալմա 41.10, շեղագրերն ավելացված են:
15. Հակոբ 4.13:
16. «Հավատքին հավատարիմ», *Օրհներգեր*, հ. 254:

ՆԱԽԱԳԱՀ ՌԱՍՍԵԼ Մ. ՆԵԼՍՈՆ

Երկրորդ մեծ պատվիրանը

Մեր մեծագույն ուրախության աղբյուրը մեր եղբայրներին և քույրերին օգնելն է:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, շնորհակալ եմ այն ամենի համար, որ դուք անում եք, որպեսզի օգնեք հավաքել Իսրայելը վարագույրի երկու կողմերում, ձեր ընտանիքներն ամրացնելու և կարիքի մեջ գտնվողների կյանքն օրհնելու համար: Շնորհակալ եմ, որ ապրում եք որպես Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ:[1] Դուք գիտեք և սիրով հնազանդվում եք Նրա երկու մեծ պատվիրաններին՝ սիրել Աստծուն և սիրել ձեր մերձավորներին:[2]

Վերջին վեց ամիսների ընթացքում Քույր Նելսոնը և ես հանդիպել ենք հազարավոր սրբերի, մինչ ճամփորդել ենք Կենտրոնական և Հարավային Ամերիկայում, Խաղաղ օվկիանոսի կղզիներում և Միացյալ Նահանգների մի շարք քաղաքներում: Մինչ մենք ճամփորդում ենք, հուսով ենք, որ ամրացնում ենք *ձեր* հավատը: Սակայն մենք միշտ վերադառնում ենք՝ *մեր* հավատքը զորացված անդամների և ընկերների կողմից, որոնց հանդիպում ենք: Թույլ տվեք կիսվել վերջերս մեր ունեցած փորձառություններից երեք իմաստալից պահերով:

Օքլենդում (Նոր Զելանդիա) Նախագահ Նելսոնը և Քույր Նելսոնը հանդիպեցին իմամների հետ՝ Նոր Զելանդիայի Քրայստչըրչի երկու մզկիթներից:

Մայիսին ես և Քույր Նելսոնը ճամփորդեցինք Երեց Ջերիթ Վ.-ի և Քույր Սյուզան Գոնգերի հետ դեպի Խաղաղ օվկիանոսի հարավային ափերը: Մինչ Օքլենդում էինք (Նոր Զելանդիա), պատիվ ունեցանք հանդիպելու իմամների հետ Քրայսթչրչի (Նոր Զելանդիա) երկու մզկիթներից, որտեղ ընդամենը երկու ամիս առաջ անմեղ երկրպագողները գնդակահարվել էին սարսափելի ահաբեկչության ժամանակ:

Մենք մեր ցավակցությունը հայտնեցինք այլ հավատքի այդ եղբայրներին և վերահաստատեցինք կրոնական ազատության մեր փոխադարձ նվիրվածությունը:

Մենք նաև առաջարկեցինք կամավոր աշխատանք և համեստ ֆինանսական օգնություն՝ իրենց մզկիթները վերակառուցելու համար: Այս մուսուլման ղեկավարների հետ հանդիպումը լի էր եղբայրության քնքուշ արտահայտություններով:

Օգոստոսին Երեց Քվենթին Լ. և Քույր Մերի Քուքերի հետ, ես և Քույր Նելսոնը հանդիպեցինք բազմաթիվ անհատների հետ Բուենոս Այրեսում (Արգենտինա). նրանցից շատերը մեր հավատքից չէին, սակայն նրանց կյանքը փոխվել էր Վերջին Օրերի Սրբերի Բարեգործության կողմից հատկացված անվասայլակների շնորհիվ: Մենք ոգեշնչված էինք, տեսնելով նրանց ուրախությունը, մինչ երախտագիտություն էին հայտնում շարժվելու իրենց նոր հնարավորությունների համար:

Երրորդ թանկ պահը տեղի ունեցավ մի քանի շաբաթ առաջ այստեղ՝ Սոլթ Լեյք Սիթիում: Ես մի յուրահատուկ նամակ ստացա ծննդյանս տոնին տասնչորսամյա մի պարմանուհուց, որին կկոչեմ Մերի:

Մերին գրում էր բաների մասին, որոնցով մենք նման էինք իրար. «Դուք ունեք 10 երեխա: Մենք ունենք 10 երեխա: Դուք խոսում եք մանդարիներեն: Իմ ընտանիքի երեխաներից յոթը, այդ թվում նաև ես, որդեգրված ենք Չինաստանից, ուստի մանդարիներենը մեր մայրենի լեզուն է: Դուք սրտի վիրաբույժ եք: Քույրս սրտի երկու բաց [վիրահատություն] է տարել: Ձեզ դուր է գալիս երկու ժամանոց եկեղեցին: Մեզ դուր է գալիս երկու ժամանոց եկեղեցին: Դուք բացարձակ լսողություն ունեք: Եղբայրս նույնպես բացարձակ լսողություն ունի: Նա ինձ պես կույր է»:

Մերիի խոսքերը խորապես հուզեցին ինձ, բացահայտելով ոչ միայն նրա մեծ հոգին, այլ նաև նրա ծնողների նվիրաբերումը:

Վերջին օրերի սրբերը, Հիսուս Քրիստոսի այլ հետևորդների նման, միշտ փնտրում են ուրիշներին օգնելու, բարձրացնելու և սիրելու ուղիներ: Նրանք, ովքեր պատրաստ են կոչվելու Տիրոջ ժողովուրդը, «հոժար [են] կրելու մեկը մյուսի բեռը, . . . սգալու նրանց հետ, ովքեր սգում են, . . . և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության»:[3]

Նրանք իսկապես ձգտում են ապրել համաձայն առաջին երկու մեծ պատվիրանների: Երբ մենք սիրում ենք *Աստծուն* մեր ողջ սրտով, Նա դարձնում է մեր սիրտը դեպի *ուրիշների* բարեկեցությունը մի գեղեցիկ, առաքինի շրջադարձով:

Անհնար է հաշվել ծառայությունները, որ Վերջին Օրերի Սրբերը մատուցում են ողջ աշխարհում ամեն տարվա ամեն օրը, սակայն հնարավոր *է* հաշվել, թե Եկեղեցին՝ որպես կազմակերպություն, որքան բարիքներ է հատկացնում՝ օրհնելով տղամարդկանց և կանանց, տղաներին և աղջիկներին, ովքեր ունեն օգնող ձեռքի կարիք:

Եկեղեցու մարդասիրական ծրագրերի տարածումը մեկնարկել է սկսած 1984 թվականից: Ողջ Եկեղեցին ծոմ էր պահել միջոցներ ստեղծելու համար, որպեսզի օգներ նրանց, ովքեր տուժել էին Արևելյան Աֆրիկայի ավերիչ երաշտից: Եկեղեցու անդամները նվիրաբերեցին $6,4 միլիոն ծոմապահության այդ *մեկ* օրվա ընթացքում:

Երեց Մ. Ռասսել Բալլարդը և Եղբայր Գլեն Լ. Փեյսը ուղարկվել էին Եթովպիա՝ պարզելու, թե ինչպես կարող էին այդ նվիրաբերությունները լավագույնս օգտագործվել: Ահա այդպես սկիզբ դրվեց մի ծրագրի,

որը հետագայում հայտնի դարձավ որպես Վերջին Օրերի Սրբերի Բարեգործություն:

Այդ ժամանակից ի վեր Վերջին Օրերի Սրբերի Բարեգործությունը տրամադրել է ավելի քան *երկու միլիարդ* դոլարի օգնություն՝ աջակցելով կարիքի մեջ գտնվողներին ողջ աշխարհում: Այս աջակցությունն առաջարկվում է մարդկանց՝ անկախ եկեղեցու պատկանելությունից, ազգությունից, ռասայից, սեռական կողմնորոշումից, սեռից կամ քաղաքական համոզմունքներից:

Դա ամենը չէ: Տիրոջ Եկեղեցու անդամներին օգնելու համար, ովքեր նեղության մեջ են, մենք սիրում և ապրում ենք համաձայն ծոմապահության հնագույն օրենքի:[4] Մենք քաղցած ենք մնում, որպեսզի օգնենք ուրիշներին, ովքեր քաղցած են: Ամեն ամիս մեկ օր մենք ոչինչ չենք ուտում և նվիրաբերում ենք այդ ուտելիքի գումարը (և ավելին), որպեսզի օգնենք կարիքի մեջ գտնվողներին:

Ես երբեք չեմ մոռանա իմ առաջին այցելությունը Արևմտյան Աֆրիկա 1986թ.: Շատ սրբեր էին եկել մեր ժողովներին: Չնայած նրանք նյութական ունեցվածքի առումով քիչ բան ունեին, բայց մեծ մասը եկել էր սպիտակ անբիծ հագուստով:

Ես հարցրի ցցի նախագահին, թե նա ինչպես էր հոգ տանում անդամների համար, ովքեր այդքան քիչ բան ունեին: Նա պատասխանեց, որ եպիսկոպոսները լավ էին ճանաչում իրենց մարդկանց: Եթե անդամները ի վիճակի էին օրվա մեջ երկու անգամ սնվելու, ապա օգնելու կարիք չկար: Սակայն, եթե նրանք կարողանում էին միայն մեկ անգամ սնվել կամ ավելի քիչ՝ նույնիսկ ընտանիքի օգնությամբ, եպիսկոպոսները տրամադրում էին սնունդ, որը ֆինանսավորվում էր ծոմի նվիրատվություններից: Ապա նա ավելացրեց այս ուշագրավ փաստը. ծոմի նրանց նվիրատվությունները սովորաբար *գերազանցում էին* նրանց ծախսերը: Ծոմի նվիրատվության ավելցուկն այնուհետև ուղարկվում էր *այլ վայրում* գտնվող մարդկանց, որոնց կարիքները գերազանցում էին իրենց կարիքները: Աֆրիկացի այդ աննկուն Սրբերն ինձ մի մեծ դաս ուսուցանեցին *օրենքի* զորության և ծոմի *հոգու* մասին:

Որպես Եկեղեցու անդամներ, մեզ հարազատ են նրանք, ովքեր որևէ կերպ տառապում են:[5] Որպես Աստծո որդիներ և դուստրեր, մենք բոլորս եղբայրներ և քույրեր ենք: Հին Կտակարանում մենք լսում ենք այս հորդորը. «Զեռքդ բաց քո երկրումն եղած աղքատ եւ չքաւոր եղբօրդ»:[6]

Մենք նաև ձգտում ենք ապրել համաձայն Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների, ինչպես արձանագրված են Մատթեոս 25-ում:

«Որովհետեւ սովեցի, եւ դուք տուիք ինձ ուտել. Ծարաւեցի եւ խմեցրիք ինձ. օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առաք.

Մերկ էի, եւ հագցրիք ինձ. Հիւանդ էի, եւ ինձ այցելեցիք: . . .

. . . Որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[7]

Թույլ տվեք բերել միայն մի քանի օրինակներ, թե ինչպես է Եկեղեցին հետևում Փրկիչի այս ուսմունքներին:

Քաղցածներին օգնելու համար Եկեղեցում գործում են եպիսկոպոսների 124 պահեստներ ողջ աշխարհով մեկ: Դրանց միջոցով մոտավորապես 400 000 սննդի պատվերներ են ամեն տարի տրվում կարիքի մեջ գտնվող անհատների: Այն վայրերում, որտեղ չկան պահեստներ, եպիսկոպոսները և ճյուղերի նախագահներն օգտվում են Եկեղեցու ծոմի նվիրատվություններից, որպեսզի սնունդ և այլ պարագաներ տրամադրեն իրենց կարիքավոր անդամներին:

Այնուամենայնիվ, սովի մարտահրավերը անցնում է Եկեղեցու սահմաններից: Այն ավելի ու ավելի է շատանում ողջ աշխարհով մեկ: ՄԱԿ-ի վերջերս կատարած զեկույցում նշվում է, որ աշխարհում թերսնվող մարդկանց թիվն այժմ անցնում է 820 միլիոնը կամ երկրի բնակիչների գրեթե իննից մեկը:[8]

Ինչպիսի սթափեցնող վիճակագրություն: Որքան երախտապարտ ենք մենք ձեր նվիրատվությունների համար: Ձեր սրտաբուխ առատաձեռնության շնորհիվ միլիոնավոր մարդիկ ամբողջ աշխարհում կստանան շատ անհրաժեշտ սնունդ, հագուստ, ժամանակավոր կացարան, անվասայլակներ, դեղամիջոցներ, մաքուր ջուր և ավելին:

Աշխարհով մեկ բազմաթիվ հիվանդությունների պատճառ է

ղառնում անմաքուր ջուրը։ Մինչ օրս Եկեղեցու մարդասիրական նախաձեռնությունն օգնել է մաքուր ջուր ապահովել 76 երկրների հարյուրավոր համայնքներում։

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության Լուպուտա համայնքի նախագիծը հիանալի օրինակ է։ Ավելի քան 100 000 բնակչություն ունեցող համայնքը *չուներ հոսող ջուր։* Մարդիկ ստիպված էին քայլելով անցնել երկար տարածություն ջրի ապահով աղբյուր գտնելու համար։ 18 մղոն (29 կմ) հեռավորության վրա հայտնաբերվել էր լեռնային մի աղբյուր, բայց բնակիչները չէին կարող կանոնավոր կերպով օգտվել այդ ջրից։

Երբ բարեգործության մեր միսիոներները տեղեկացան այդ խնդրի մասին, նրանք աշխատեցին Լուպուտայի ղեկավարների հետ, նյութեր և ուսուցում ապահովելով, որպեսզի ջուրը խողովակներով հասցվեր համայնք։ Լուպուտայի բնակիչները *երեք տարիների* ընթացքում ժայռերի ու ջունգլիների մեջ փորել էին մեկ մետր խորությամբ խրամատ։ Միասին աշխատելու արդյունքում, ի վերջո, հասավ ուրախալի օրը, երբ թարմ, մաքուր ջուրը հասանելի դարձավ ավանի բոլոր բնակիչներին։

Եկեղեցին օգնում է նաև քաղաքացիական բախումների, բնության ավերածությունների կրոնական հետապնդումների հետևանքով հայտնված փախստականներին։ Ավելի քան 70 միլիոն մարդ այժմ տարահանված են իրենց տներից։[9]

Միայն 2018թ. Եկեղեցին արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ նյութեր է տրամադրել փախստականներին 56 երկրներում։ Բացի դրանից, Եկեղեցու շատ անդամներ կամավոր տրամադրում են իրենց ժամանակը՝ օգնելով փախստականներին հաստատվել նոր համայնքներում։ Մենք շնորհակալություն ենք հայտնում ձեզանից յուրաքանչյուրին, ով օգնում է նրանց, ովքեր փորձում են հիմնել նոր տներ։

Միացյալ Նահանգների Deseret Industries-ի խանութներին տրվող առատ նվիրատվությունների միջոցով ամեն տարի միլիոնավոր ֆունտերի հագուստ է հավաքվում և տեսակավորվում։ Մինչ տեղի եպիսկոպոսներն օգտագործում են այս բազմաթիվ իրերը՝ կարիքավոր անդամներին օգնելու համար, *ամենամեծ* մասը նվիրաբերվում է այլ բարեգործական կազմակերպությունների, որոնք բաշխում են իրերն ամբողջ աշխարհում։

Եվ միայն անցյալ տարի Եկեղեցին տեսողության խնդիրներ ունեցող ավելի քան 300 000 մարդու պարագաներ հատկացրեց 35 երկրներում, նորածինների խնամքի պարագաներ հատկացրեց 39 երկրներում հազարավոր մայրերի և նորածինների համար, և անվասայլակներ ավելի քան 50 000 մարդու համար, որոնք ապրում են տասնյակ երկրներում։

Եկեղեցին առաջին արձագանքողներից է, երբ ողբերգություն է պատահում։ Նույնիսկ փոթորիկի հարվածից *առաջ* տուժող վայրերի Եկեղեցու և տեղի ղեկավարները ծրագրում են, թե ինչպես են օգնություն տրամադրելու և կամավոր օգնելու տուժողներին։

Միայն անցյալ տարի Եկեղեցին ամբողջ աշխարհում իրականացրել է աղետներից փրկելու ավելի քան 100 ծրագիր՝ օգնելով փոթորիկների, հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի և այլ աղետներից տուժածներին։ Առաջին իսկ հնարավորության դեպքում մեր Եկեղեցու բազմաթիվ անդամներ դեղին Օգնող Ձեռքեր բաճկոններով օգնության են հասնում աղետներից տուժածներին։ Այդպիսի ծառայությունը, որ մատուցում են ձեզանից շատերը, սպասավորման բուն էությունն է։

Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, իմ նկարագրած միջոցառումները Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու աճող բարեգործական և մարդասիրական ծրագրերի լոկ մի փոքր մասն են կազմում։[10] Եվ *դուք* եք, որ այս ամենը հնարավոր եք դարձնում։ Ձեր օրինակելի կյանքի, մեծ սրտի և օգնող ձեռքերի շնորհիվ զարմանալի չէ, որ շատ համայնքներ և կառավարությունների ղեկավարներ գովաբանում են ձեր ջանքերը։[11]

Եկեղեցու Նախագահ լինելուց ի վեր ես հաճելիորեն զարմացել եմ, թե որքան նախագահներ, վարչապետներ և դեսպաններ անկեղծորեն շնորհակալություն են հայտնել ինձ՝ իրենց ժողովրդին հատկացված մեր մարդասիրական օգնության համար։ Եվ նրանք նաև երախտագիտություն են հայտնել այն զորության համար, որը մեր հավատարիմ անդամները բերում են իրենց երկրին՝ որպես հավատարիմ, ներդրող քաղաքացիներ։

Ես նաև հիացել եմ, երբ աշխարհի ղեկավարներն այցելել են Առաջին Նախագահությանը, *իրենց հույսն* արտահայտելով, որ Եկեղեցին կհաստատվի իրենց երկրում։ Ինչո՞ւ։ Քանի որ նրանք գիտեն, որ Վերջին Օրերի Սրբերը կօգնեն ստեղծել ամուր ընտանիքներ և համայնքներ, մարդկանց կյանքը դարձնելով ավելի լավը, *որտեղ էլ* նրանք ապրեն։

Անկախ այն բանից, թե որ վայրն ենք մենք տուն անվանում, Եկեղեցու անդամները քնքշորեն զգում են, որ Աստված մեր բոլորի Հայրն է, իսկ մարդիկ՝ եղբայրներ։ Ուստի, *մեր* մեծագույն ուրախության աղբյուրը մեր եղբայրներին ու քույրերին օգնելն է՝

անկախ այն բանից, թե այս հրաշալի աշխարհի որ անկյունում ենք ապրում:

Մեր ուրախությունը բխում է ուրիշներին օգնելուց, երբ բարեխղճորեն ջանում ենք հոգ տանել ուրիշների համար նույն կերպ կամ *ավելի շատ,* քան հոգում ենք ինքներս մեր մասին: Հատկապես, ես կարող եմ ավելացնել, երբ հարմար չէ, և երբ ստիպված ենք լինում դուրս գալ մեր հարմարավետության գոտուց: Երկրորդ ամենամեծ պատվիրանի համաձայն *ապրելը* հանդիսանում է *բանալի* Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ դառնալու համար:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, դուք կենդանի օրինակներն եք պտուղների, որոնք առաջ են գալիս Հիսուս Քրիստոսի ուսմունքներին հետևելուց: Շնորհակալ եմ ձեզ: Ես սիրում եմ ձեզ:

Ես գիտեմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նրա Եկեղեցին վերականգնվել է այս վերջին օրերում, որպեսզի իրագործի դրա աստվածային նպատակները: Ես վկայում եմ այդ մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մորոնի 7.48:
2. Տես Մատթեոս 22.37–39, Ղուկաս 10.27:
3. Մոսիա 18.8–9:
4. Տես Եսայիա 58.3–12:
5. Եկեղեցու պատմության վաղ շրջանում խիզախ ռահվիրաները նույնպես քաղցած, անտուն և ուժասպառ էին:
6. Երկրորդ Օրինաց 15.11:
7. Մատթեոս 25.35–36, 40:
8. See Food and Agriculture Organization of the United Nations and others, *The State of Food Security and Nutrition in the World 2019,* 6, fao.org/3/ca5162en/ca5162en.pdf.
9. "Worldwide Displacement Tops 70 Million, UN Refugee Chief Urges Greater Solidarity in Response," United Nations High Commissioner for Refugees website, June 19, 2019, unhcr.org/en-us.
10. Եկեղեցու բարեգործական ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել ChurchofJesusChrist.org/topics/welfare; LatterDaySaintCharities.org; facebook .com/LatterDaySaintCharities; JustServe.org կայքերը:
11. «Ամենաարդյունավետ ուղին, որով մենք կընթանանք, կլինի մեր լավ կյանքը և օրինակը» (Գորդոն Բ. Հինքլի, «Գտեք գառներին, կերակրեք ոչխարներին», *Լիահոնա,* հուլիս 1999, 121):

Կիրակնօրյա ցերեկային նիստ | 6 Հոկտեմբեր 2019

ՆԱԽԱԳԱՀ ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Սրբությունը և երջանկության ծրագիրը

Անձնական սրբության մեծացմանը զուգահեռ մեծանում է նաև մեր երջանկությունը:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, ես աղոթել եմ, որ զորություն ստանամ օգնել ձեզ երջանկության որոնման ձեր ճանապարհին: Ոմանք արդեն բավականին երջանիկ են, սակայն, անկասկած, ոչ ոք չի մերժի երջանկությունը ավելացնելու առաջարկը: Հարատև երջանկության երաշխավորված առաջարկը բոլորն էլ խանդավառությամբ կընդունեն:

Դա այն է, ինչ Երկնային Հայրը, Նրա սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին առաջարկում են Երկնային Հոր յուրաքանչյուր հոգևոր զավակին, որն այժմ ապրում է, ապրելու է կամ երբևէ ապրել է այս աշխարհում: Այդ առաջարկը երբեմն անվանում են երջանկության ծրագիր: Ալմա մարգարեն է այդպես անվանել, երբ ուսուցանում էր իր որդուն, որը խճճվել էր մեղքի թշվառության մեջ: Ալման գիտեր, որ ամբարշտությունը երբեք երջանկություն չէր լինի ո՛չ իր որդու համար, ո՛չ էլ Երկնային Հոր որևէ այլ զավակի համար:[1]

Նա իր որդուն ուսուցանեց, որ երջանկության ճանապարհը միայն սրբության մեջ աճելն է: Նա պարզ դարձրեց, որ ավելի մեծ սրբություն հնարավոր է ձեռք բերել մեզ մաքրող և կատարելագործող Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:[2] Միայն Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով, շարունակական ապաշխարությամբ և ուխտերը պահելով մենք կարող ենք հայցել այն հարատև երջանկությունը, որը բոլորս ցանկանում ենք զգալ և պահպանել:

Այսօր ես աղոթում եմ, որ կարողանամ օգնել ձեզ ըմբռնել, որ անձնական սրբության մեծացմանը զուգահեռ մեծանում է նաև մեր երջանկությունը, որպեսզի դուք ապրեք այդ համոզմունքով: Այնուհետև ես կկիսվեմ նրանով, ինչ ինքս գիտեմ այն մասին,

թե ինչ կարող ենք անել, որպեսզի արժանանանք ավելի սուրբ դառնալու պարգևին:

Սուրբ գրությունները մեզ սովորեցնում են, որ, ի թիվս այլ բաների, մենք սրբագործվում կամ մաքրագործվում ենք, երբ հավատք ենք գործադրում Քրիստոսի հանդեպ,[3] դրսևորում ենք մեր հնազանդությունը,[4] ապաշխարում ենք,[5] հանուն Նրա զոհաբերում ենք,[6] ստանում են սրբազան արարողությունները և պահում ենք մեր ուխտերը Նրա հետ:[7] Սրբության պարգևին արժանանալու համար մեզ անհրաժեշտ է խոնարհություն,[8] հեզություն[9] և համբերություն:[10]

Սոլթ Լեյքի տաճարում ավելի շատ սրբություն ցանկանալու մի փորձառություն եմ ունեցել: Ես առաջին անգամ էի մտնում տաճար և ինձ շատ բան չէին ասել, թե ինչ պետք է ակնկալել: Ես տեսա շենքի վրա գրված խոսքերը. «Սրբություն Տիրոջը» և «Տիրոջ տուն»: Սպասման մեծ կանխազգացում առաջացավ իմ մեջ: Բայց և այնպես, համոզված չէի, որ պատրաստ եմ մտնել:

Մայրս և հայրս առջևից էին քայլում, երբ ներս մտանք տաճար: Մեզ խնդրեցին ցույց տալ մեր երաշխավորագրերը, որը հաստատում էր մեր արժանավորությունը:

Ծնողներս ճանաչում էին երաշխավորագրերը ստուգող մարդուն: Ուստի նրանք մի պահ մնացին խոսելու նրա հետ: Ես մենակ առաջ գնացի դեպի մի մեծ տարածություն, որտեղ ամեն ինչ շողշողում էր սպիտակ գույնով: Ես նայեցի առաստաղին, որը շատ բարձր էր, կարծես բաց երկինք լիներ: Այդ պահին մտքումս մի հստակ տպավորություն զգացի, որ նախկինում եղել եմ այդտեղ:

Բայց հետո, ես շատ մեղմ մի ձայն լսեցի. դա իմ ձայնը չէր: Մեղմությամբ ասված բառերը հետևյալն էին. «Դու երբեք այստեղ չես եղել: Դու վերհիշում ես ծննդից առաջ եղած մի պահ: Դու եղել ես այսպիսի մի սուրբ վայրում: Դու զգացիր, որ ուր որ է Փրկիչը կհայտնվի քո կանգնած տեղում: Եվ դու երջանկություն զգացիր, քանի որ շատ կուզեիր տեսնել Նրան»:

Սոլթ Լեյքի տաճարի այդ փորձառությունը տևեց ընդամենը մի պահ: Այնուամենայնիվ, դրա հիշողությունը դեռ բերում է խաղաղություն, ուրախություն ու մեղմ երջանկություն:

Այդ օրը ես շատ դասեր սովորեցի: Դասերից մեկն այն էր, որ Սուրբ Հոգին խոսում է մեղմ, բարակ ձայնով: Ես կարող եմ լսել Նրան, երբ իմ սրտում հոգևոր խաղաղություն կա: Նա երջանկության զգացում և վստահություն է հաղորդում, որ ես ավելի սուրբ եմ դառնում: Եվ դա միշտ բերում է այն երջանկությունը, որը ես Աստծո տաճարում զգացի այդ առաջին պահին:

Դուք ձեր և ուրիշների կյանքում նկատել եք երջանկության հրաշքը, որը բխում է աճող սրբությունից՝ Փրկիչին ավելի շատ նմանվելուց: Վերջին շաբաթներին այցելել եմ մահվան շեմին գտնվող մարդկանց, որոնք պատրաստ էին մահը ընդունել Փրկիչի հանդեպ լիակատար հավատքով ու երջանիկ դեմքով:

Մեկը մի տղամարդ էր, ով շրջապատված էր իր ընտանիքով: Նա իր կնոջ հետ հանգիստ զրուցում էր, երբ մենք որդուս հետ ներս մտանք: Երկար տարիներ ես ճանաչում էի նրանց: Ես տեսել էի, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի Քավությունը գործում նրանց կյանքում և նրանց ընտանիքի անդամների կյանքում:

Նրանք միասին որոշել էին դադարեցնել նրա կյանքը երկարացնող բժշկական միջամտությունը: Հանգստության զգացում կար, երբ նա

խոսում էր մեզ հետ: Նա ժպտում էր, երբ գոհություն էր հայտնում ավետարանի համար, որը մաքրագործող ազդեցություն էր ունեցել իր և իր ընտանիքի վրա: Նա պատմեց տաճարում ծառայելու իր երջանիկ տարիների մասին: Տղամարդու խնդրանքով իմ որդին օծեց նրա գլուխը սրբագործված յուղով: Ես կնքեցի օծումը: Օրհնություն տալիս ես հստակ հուշում ստացա ասել նրան, որ նա շուտով դեմառդեմ կտեսնի իր Փրկիչին:

Ես նրան խոստացա, որ նա կզգա երջանկություն, սեր և Փրկիչի հավանությունը: Երբ հեռանում էինք, նա ջերմորեն ժպտաց մեզ: Նրա վերջին խոսքերն էին ինձ. «Ասա Քեթիին, որ ես սիրում եմ նրան»: Կինս՝ Քեթլինը, տարիներ շարունակ խրախուսել էր նրա ընտանիքի սերունդներին ընդունել Փրկիչի հրավերը՝ գալ Նրա մոտ, կապել և պահել սրբազան ուխտերը և այդպիսով արժանանալ այն երջանկությանը, որը գալիս է ավելի մեծ սրբության արդյունքում:

Ժամեր անց տղամարդը մահացավ: Մահվանից մի քանի շաբաթ անց նրա այրին նվեր բերեց ինձ և կնոջս: Նա ժպտում էր մեր խոսակցության ընթացքում: Գոհության զգացումով նա ասաց. «Ես սպասում էի, որ տխուր և միայնակ կզգայի: Բայց ես ինձ շատ երջանիկ եմ զգում: Ի՞նչ եք կարծում, իմ այս վիճակը նորմա՞լ է»:

Իմանալով, թե որքան է նա սիրում իր ամուսնուն, և թե ինչպես էին երկուսն էլ եկել Տիրոջ ճանաչմանը, սիրուն և ծառայությանը, ես նրան ասացի, որ նրա երջանկության զգացումը խոստացված պարգև էր, քանի որ նա իր հավատարմ ծառայության միջոցով ավելի սրբագործված էր: Սրբությունը նրան արժանի էր դարձրել այդ երջանկությանը:

Ինձ լսողներից ոմանց մոտ հարց կառաջանա. «Ինչո՞ւ ես չեմ զգում հավատարիմներին խոստացված խաղաղությունն ու երջանկությունը: Ես հավատարիմ եմ եղել սարսափելի ձախորդության միջով անցնելիս, բայց ինձ երջանիկ չեմ զգում»:

Անգամ մարգարե Ջոզեֆ Սմիթն էր դիմակայում այդ փորձությանը: Նա աղոթում էր, որ սփոփանք գտնի, երբ գտնվում էր Միսսուրի նահանգի Լիբերթի բանտում: Նա հավատարիմ էր եղել Տիրոջը: Նրա սրբությունը աճել էր: Բայց և այնպես նրան թվում էր, թե երջանկությունից կտրված է:

Տերը նրան ուսուցանեց համբերության դասը, որի կարիքը մեր մահկանացու փորձությունների ինչ-որ պահին կամ գուցե երկար ժամանակաշրջանում բոլորս կունենանք: Ահա Տիրոջ ուղերձը Իր հավատարիմ և չարչարանք կրող մարգարեին.

«Եվ եթե քեզ զցեն հորը կամ մարդասպանների ձեռքը, և մահվան դատավճիռն անցնի վրայովդ. եթե քեզ զցեն ջրանդունդը. եթե բարձրացող ալիքը դավ նյութի քո դեմ. եթե կատաղի քամիները դառնան քո թշնամին. եթե երկինքները մթնեն, և բոլոր տարրերը համախմբվեն՝ ճանապարհը խոչընդոտելու. և այդ ամենից բացի, եթե դժոխքի ծնոտները լայն բացեն երախը, որպեսզի քեզ կուլ տան, իմացիր, որդիս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար:

Մարդու Որդին իջել է այդ ամենից ցած: Մի՞թե դու ավելի մեծ ես, քան նա:

Հետևաբար, շարունակիր ճանապարհդ, և քահանայությունը կմնա քեզ հետ. քանզի նրանց սահմանները հաստատված են՝ նրանք չեն կարող անցնել այն: Քո օրերը հայտնի են, և քո տարիները չեն կրճատվի. հետևաբար, մի վախեցիր նրանից, ինչ կարող է անել մարդը, քանզի Աստված քեզ հետ կլինի հավիտյանս հավիտենից»:[11]

Դա այն նույն ուսուցանած դասն էր, որը Տերը տվել էր Հոբին, որը մեծ գին վճարեց, որ թույլ տա, որպեսզի Քավությունը նրան ավելի սուրբ դարձնի: Հոբի սրբության մասին գիտենք նրա մասին գրված նախաբանից. «Մէկ մարդ կար Հուս երկրումը՝ անունը Յոբ. Եւ այն մարդը կատարեալ եւ ուղիղ եւ աստուածավախ էր, եւ հեռանում էր չարութիւնից»:[12]

Այնուհետև Հոբը կորցրեց իր հարստությունը, ընտանիքը և նույնիսկ առողջությունը: Գուցե հիշում եք, որ Հոբը կասկածում էր, որ իր ավելի մեծ սրբությունը, որ ձեռք էր բերվել ավելի մեծ դժվարություններով, նրան արժանի էին դարձրել ավելի մեծ երջանկության: Հոբին թվում էր, որ սրբությունը նրան դժբախտություն էր բերել:

Սակայն Տերը Հոբին ուղղիչ նույն դասը տվեց, որը տվել էր Ջոզեֆ Սմիթին: Նա թույլ տվեց, որ Հոբը տեսնի իր սրտաճմլիկ իրավիճակը հոգևոր աչքերով: Նա ասաց.

«Մէկ զօտեւորիր մէջքդ տղամարդի պէս, եւ ես քեզ հարցնեմ, ու դու ինձ հասկացրու:

Ո՞ւր էիր՝ ես երկրի հիմունքը դնելիս. Իմացրու ինձ, եթէ իմաստութիւն գիտես:

Ո՞վ դրաւ նորա չափերը, եթէ գիտես, կամ թէ ո՞վ քաշեց լարը նորա վերայ:

Ինչի՞ վերայ են խրուած նորա խարիսխները. Կամ ո՞վ է ձգել նորա անկեան քարը.

Առաւօտեան աստղերը միասին ցնծալիս, եւ Աստուծոյ բոլոր որդիքը երբոր գովաբանում էին»:[13]

Այնուհետև, երբ Հոբը ապաշխարեց Աստծուն անարդար անվանելու համար, Հոբին թույլատրվեց նայել իր փորձություններին ավելի բարձր և ավելի սուրբ տեսանկյունից: Նա ապաշխարել էր:

«Եւ Յոբը պատասխանեց Եհովային ու ասեց.

Գիտեմ որ ամեն բան կարող ես. Եւ քո դիտաւորութիւնը չի արգիլուիլ.

Ո՞վ է նա որ խորհուրդը նսեմացնէ անիմաստ խօսքերով: Իրաւ՝ խօսել եմ, բայց չեմ հասկացել, ինձ համար անիմանալի են եղել, եւ ես չ՛գիտէի:

Աղաչում եմ, լսիր որ խօսեմ, քեզ հարցնում եմ, եւ ինձ իմացրու.

Ականջի լսելով ես լսել էի քո մասին, բայց հիմա աչքս տեսնում է քեզ:

Վասնորոյ նուաստանում եմ եւ զղջում հողի եւ մոխիրի վերայ»:[14]

Երբ Հոբը ապաշխարեց և ավելի սուրբ դարձավ, Տերը օրհնեց նրան՝ տալով իր կորցրածից ավելին: Բայց ամենամեծ օրհնությունը Հոբի համար, թերևս այն էր, որ անցնելով ճախորդության և ապաշխարության միջով, նրա սրբությունն ավելացավ: Կյանքի մնացած օրերում նա արժանացավ ավելի մեծ երջանկությամբ ապրելու պարգևին:

Ավելի մեծ սրբությունը չի տրվի պարզապես խնդրելով: Այն կգա անելով այն, ինչ անհրաժեշտ է, որպեսզի Աստված փոխի մեզ:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, իմ կարծիքով, լավագույն խորհուրդն է տվել այն մասին, թե ինչպես շարժվել ուխտի ճանապարհով դեպի ավելի մեծ սրբություն: Նա ցույց է տվել ուղին՝ հորդորելով.

«Զգացեք ամենօրյա ապաշխարության ամրապնդող զորությունը՝ ամեն օր գործելով և լինելով մի փոքր ավելի լավը:

Երբ ընտրում ենք ապաշխարությունը, մենք փոխվելու որոշում ենք կայացնում: Մենք թույլ ենք տալիս Փրկիչին վերափոխելու և դարձնելու մեզ այն անձնավորությունը, որը մեր ներուժի լավագույն տարբերակն է: Մենք ընտրում ենք հոգևորապես աճել և ուրախություն ստանալ՝ փրկագնման ուրախությունը, որ Նրանում է: Երբ ընտրում ենք ապաշխարել, մենք որոշում ենք նմանվել Հիսուս Քրիստոսին»:

Նախագահ Նելսոնը շարունակեց այս քաջալերանքով, երբ ձգտում ենք ավելի սրբագործվել. «Տերը այս պահին մեզանից կատարելություն չի ակնկալում: Բայց նա ակնկալում է, որ մենք ավելի շատ մաքրագործվենք: Մաքրության ուղին ամենօրյա ապաշխարությունն է»:[15]

Նախագահ Դալլին Հ. Օուքսը, ավելի վաղ համաժողովի ելույթում, նույնպես օգնել է ինձ ավելի պարզ տեսնել, թե ինչպես ենք մենք աճում սրբության մեջ, և ինչպես կարող ենք իմանալ, որ շարժվում ենք այդ ուղղությամբ: Նա ասել է. «Ինչպե՞ս ենք մենք հոգևոր հասունության հասնում: Ինչպե՞ս ենք հասնում սրբության այն աստիճանին, երբ կարող ենք վայելել

Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը: Ինչպե՞ս ենք տեսնում և գնահատում այս աշխարհի բաները հավերժության տեսանկյունից»:[16]

Նախագահ Օուքսի պատասխանը սկսվում է ավելի մեծ հավատքով Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ որպես մեր սիրող Փրկիչի: Հավատքը մեզ մղում է ամեն օր ներում փնտրելու և ամեն օր հիշելու Նրան՝ պահելով Նրա պատվիրանները: Հիսուս Քրիստոսի հանդեպ այդ մեծ հավատքը գալիս է այն ժամանակ, երբ մենք ամեն օր սնվում ենք Նրա խոսքով:

«Ավելի շատ սրբություն տուր ինձ» օրհներգը առաջարկում է ավելի սուրբ դառնալու օգնության համար աղոթքի մի միջոց: Հեղինակն իմաստուն ձևով հուշում է, որ մեր փնտրած սրբությունը սիրող Աստծո կողմից նվեր է, որը տրվում է ժամանակի ընթացքում, այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել: Դուք հիշում եք վերջին տունը.

Էլ ավել մաքրություն,
Ավել զորություն,
Երկրից անկախություն
Էլ ավել ինձ տուր·
Թող լինեմ ավելի
Ես Քեզ արժանի,
Օրհնված, սրբացած,
Փրկիչ, Քեզ նման:[17]

Ինչպիսին էլ լինեն մեր հանգամանքները, որտեղ էլ գտնվենք տուն տանող ուխտի ճանապարհին, թող ավելի մեծ սրբություն ստանալու մեր աղոթքները պատասխան ստանան: Գիտեմ, որ երբ մեր խնդրանքը տրվի, մեր երջանկությունը կավելանա: Կարող է դանդաղ տրվել, բայց կտրվի: Ես ստացել եմ այդ համոզմունքը սիրող Երկնային Հորից և Նրա սիրելի Որդի Հիսուս Քրիստոսից:

Ես վկայում եմ, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարե էր, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը այսօր մեր կենդանի մարգարեն է: Հայր Աստված ապրում է և սիրում է մեզ: Նա ցանկանում է, որ մենք ընտանիքներով տուն վերադառնանք՝ Նրա մոտ: Մեր սիրառատ Փրկիչը տուն տանող ճանապարհին մեզ հրավիրում է հետևել Իրեն: Ուղին նրանք պատրաստել են: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ալմա 41.10:
2. Տես Ալմա 42.4–16:
3. Տես Գործք 26.18, Եթե 4.7:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.34:
5. Տես 3 Նեփի 27.19–20:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.50:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 97.8:
8. Տես Հելաման 3.35:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 101.1–5:
10. Տես Ա Հովհաննես 3.2–3, Վարդապետություն և Ուխտեր 112.13:
11. Վարդապետություն և Ուխտեր 122.7–9:
12. Հոբ 1.1:
13. Հոբ 38.3–7:
14. Հոբ 42.1–6:
15. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել», *Լիահոնա,* մայիս, 2019, 67, 68:
16. Dallin H. Oaks, “Spirituality,” *Ensign,* Nov. 1985, 63.
17. “More Holiness Give Me,” *Hymns,* no. 131:

ԵՐԵՑ ՀԱՆՍ Թ. ԲՈՒՄ
Յոթանասունից

Իմանալ, սիրել և աճել

Թող մենք բոլորս հասկանանք մեր դերը սպասավորության այս հրաշալի աշխատանքում, որպեսզի ավելի նմանվենք Նրան:

2016թ. Տաճարային Հրապարակի Թաբերնաքլ երգչախումբը այցելեց Նիդեռլանդներ և Բելգիա: Եվ քանի որ ես մասնակցում էի այդ ոգևորիչ իրադարձությանը, հնարավորություն ունեցա երկու անգամ վայելել նրանց կատարումը:

Նրանց կատարման ժամանակ ես մտածում էի, թե ինչ հսկայական ջանքեր էին պահանջվել այդքան մեծ երգչախումբը տեղափոխելու համար: Ինձ շատ հետաքրքրեց մեծ գոնգը, որի տեղափոխումը շատ դժվար էր, և հավանաբար, շատ թանկ կարժենար՝ ջութակի, շեփորի և այլ գործիքների համեմատ, որոնք հեշտությամբ կարելի է տեղափոխել թևի տակ դրած: Բայց ինչ վերաբերում է գոնգի իրական ներգրավվածությանը, ես հասկացա, որ նրան միայն մի քանի անգամ հարվածեցին համերգի ժամանակ, մինչդեռ ուրիշ ավելի փոքր գործիքներ ակտիվորեն ներգրավված էին համերգի մեծ մասում: Ես մտածեցի, որ առանց գոնգի ձայնի կատարումը չէր լինի նույնը, ուստի այդ ջանքերը պետք է գործադրվեին, որպեսզի այդ մեծ գոնգը տեղափոխվեր օվկիանոսից այն կողմ:

Երբեմն մենք, գուցե, համարենք, որ մեր հնարավորություններով այդ գոնգի նման կարող ենք միայն փոքր դեր կատարել ներկայացման մեջ: Բայց թույլ տվեք ասել, որ ձեր ձայնը շատ կարևոր է:

Մենք ունենք բոլոր գործիքների կարիքը: Մեզանից ոմանք դպրոցում հեշտությամբ են սովորում և առաջադիմում են, մինչդեռ մյուսները տաղանդներ ունեն արվեստի տարբեր բնագավառներում: Ոմանք նախագծում ու կառուցում են, խնամում են, պաշտպանում կամ ուսուցանում են ուրիշներին: Մենք բոլորս անհրաժեշտ ենք, որպեսզի բազմազանություն, հետաքրքրություն և իմաստ հաղորդենք այս աշխարհին:

Ես ցանկանում եմ իմ ուղերձը հղել նրանց, ովքեր համարում են, որ իրենք ոչինչ չունեն ներդնելու, կամ, որ իրենք ոչ մեկի համար կարևորություն և արժեք չունեն, նրանց, ովքեր կարծում են, որ իրենց կյանքում ամեն բան հրաշալի է, կամ նրանց, ովքեր գտնվում են այս երկու վիճակների միջև:

Որտեղ էլ լինեք ձեր կյանքի ճանապարհին, ձեզանից ոմանք կարող են համարել, որ այնքան ծանրաբեռնված են, որ նույնիսկ չեն զգում, որ ճանապարհի վրա են: Ես ցանկանում եմ հրավիրել ձեզ դուրս գալ խավարից և քայլել դեպի լույսը: Ավետարանի լույսը ձեզ ջերմություն ու բժշկում կտա և կօգնի հասկանալ, թե ով եք դուք իրականում, և որն է ձեր նպատակն այս կյանքում:

Մեզանից ոմանք թափառել են արգելված ճանապարհներով՝ փորձելով այնտեղ գտնել երջանկությունը:

Մեր սիրառատ Երկնային Հայրը հրավիրում է մեզ քայլել աշակերտության ճանապարհով և վերադառնալ Իր մոտ: Նա սիրում է մեզ կատարյալ սիրով:[1]

Ուրեմն ո՞րն է ճանապարհը: Ճանապարհը հետևյալն է՝ սպասավորելով միմյանց, օգնենք մեկս մյուսին հասկանալ, թե ովքեր ենք մենք:

Ինձ համար սպասավորությունը աստվածային սիրո գործադրումն է:[2] Այդ եղանակով մենք ստեղծում ենք մի միջավայր, որտեղ թե՛ տվողը, և թե՛ ընդունողը ձեռք են բերում ապաշխարելու ցանկություն: Այլ կերպ ասած, մենք փոխում ենք ուղղությունը, մոտենում և ավելի ենք նմանվում մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Օրինակ՝ կարիք չկա մշտապես հիշեցնել մեր կանանց, ամուսիններին ու երեխաներին, թե նրանք ինչպես կարող են կատարելագործվել. նրանք արդեն գիտեն դա: Այս սիրո մթնոլորտը ստեղծելով է, որ նրանք հնարավորություն կունենան կատարել անհրաժեշտ փոփոխություններն իրենց կյանքում և դառնալ ավելի լավ մարդիկ:

Այս եղանակով ապաշխարությունը դառնում է ամենօրյա մաքրման գործընթաց, որը կարող է ներառել վատ վարքագծի համար ներում խնդրելը: Ես հիշում եմ ու դեռևս վերապրում եմ

այնպիսի իրավիճակներ, երբ շատ արագ եմ դատել մարդկանց կամ հապաղել եմ լսել նրանց: Եվ օրվա վերջում, իմ անձնական աղոթքի ժամին ես զգացել եմ երկնքից ուղարկված սիրառատ խորհուրդն առ այն, որ պետք է ապաշխարեմ ու ավելի լավը դառնամ: Այդ սիրառատ միջավայրը, որը նախապես ստեղծվել է իմ ծնողների, եղբայրների, քույրերի, իսկ ավելի ուշ՝ իմ կնոջ, երեխաների, ինչպես նաև ընկերների կողմից, օգնել է ինձ ավելի լավ մարդ դառնալ:

Մենք բոլորս գիտենք, թե որտեղ կարող ենք առաջադիմել: Կարիք չկա մշտապես հիշեցնել միմյանց, այլ կարիք կա սիրել ու ծառայել միմյանց, և այդպես վարվելով, ստեղծել փոխվելու պատրաստակամության միջավայր:

Այս նույն միջավայրում մենք սովորում ենք, թե ովքեր ենք մենք իրականում, և որը կլինի մեր դերը աշխարհի պատմության վերջին օրերում՝ Փրկիչի Երկրորդ Գալուստից առաջ:

Եթե դուք ցանկանում եք իմանալ ձեր դերը, ես կկամենայի հրավիրել ձեզ գտնել մի վայր, որտեղ կարող եք մենակ լինել և խնդրել Երկնային Հորը ցույց տալ, թե որ դերը կատարեք: Հավանաբար պատասխանը կգա աստիճանաբար, իսկ հետո ավելի հստակ, երբ ավելի ամուր հիմնավորվենք ուխտի և սպասավորության արահետի վրա:

Մենք ունենք նույն դժվարությունները, որոնց բախվում էր Ջոզեֆ Սմիթը, մինչ «խոսքերի պատերազմի և տարաձայնությունների այդ աղմուկի մեջ էր»: Ինչպես կարդում ենք նրա պատմության մեջ, նա հաճախ էր հարցնում ինքն իրեն. «Ի՞նչ անել: Այս բոլոր խմբակցություններից ո՞րն է ճիշտ. կամ, միգուցե նրանք բոլորը սխա՞լ են: Եթե դրանցից որևէ մեկը ճիշտ է, ապա ո՞րն է այն, և ի՞նչպես կարող եմ դա իմանալ»:[3]

Գիտելիքով, որը Ջոզեֆը գտավ Հակոբոսի թղթում, որտեղ գրված է, «եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կտրուի նորան»,[4] նա, ի վերջո, վճռեց «խնդրէ[լ] Աստուածանից»:[5]

Ապա կարդում ենք, որ «դա առաջին անգամն էր [նրա] կյանքում, որ նման փորձ էր անում, քանզի, [իր] բոլոր անհանգստություններով հանդերձ, [նա] երբևէ չէր փորձել բարձրաձայն աղոթել»:[6]

Հետևաբար, մեզ համար ևս կարող է լինել առաջին անգամը, երբ մենք դիմում ենք Աստծուն այնպիսի եղանակով, որով երբեք նախկինում չենք դիմել:

Ջոզեֆի փորձի շնորհիվ Երկնային Հայրը և Նրա Որդի Հիսուս Քրիստոսը հայտնվեցին նրան՝ կոչելով նրան իր անունով, և արդյունքում մենք ավելի պարզ պատկերացում ունենք այն մասին, թե ով ենք մենք, և որ մենք իրոք նշանակություն ունենք:



Այնուհետև կարդում ենք, որ իր պատանեկության տարիներին Ջոզեֆը «հետապնդվում էր նրանց կողմից, ովքեր պետք որ է [նրա] ընկերները լինեին, և բարյացակամ վերաբերվեին [նրան]»:[7] Ուստի մենք կարող ենք որոշակի ընդդիմություն ակնկալել, քանի որ ապրում ենք աշակերտի կյանքով:

Եթե դուք ներկայումս համարում եք, որ չեք կարող նվազախմբի մասը լինել և ապաշխարության ճանապարհը դժվար է թվում ձեզ, իմացեք, որ եթե մենք շարունակեք փորձել, բեռը կվերցվի մեր ուսերից, և նորից լույս կլինի: Երկնային Հայրը երբեք չի լքի մեզ, երբ մենք դիմենք Նրան: Մենք կարող ենք ընկնել և բարձրանալ, իսկ Նա կօգնի մեզ թոթափել մեր ծնկների փոշին:

Մեզանից շատերը վիրավորված են, բայց Տիրոջ առաջին օգնության դեղատուփը մեծ վիրակապեր ունի մեր բոլոր վերքերը կապելու համար:

Ուստի սա այդ սերն է՝ այդ անվերապահ սերը, որը մենք կոչում ենք գթություն կամ «Քրիստոսի մաքուր սեր»,[8] որի կարիքն ունենք մեր տներում, որտեղ ծնողները սպասավորում են իրենց զավակներին, իսկ զավակներն՝ իրենց ծնողներին: Այդ սիրո միջոցով սրտեր կփոխվեն և ցանկություն կառաջանա՝ կատարելու Նրա կամքը:

Այդ սերն է, որն անհրաժեշտ է միմյանց հետ մեր հարաբերություններում՝ որպես մեր Երկնային Հոր զավակներ և Նրա Եկեղեցու անդամներ: Այն մեզ հնարավորություն կտա մեր նվագախմբում ընդգրկել բոլոր երաժշտական գործիքները, որպեսզի մենք կարողանանք երկնային հրեշտակների երգչախմբի հետ փառահեղ նվագել, երբ Փրկիչը կրկին գա:

Այդ սերն է, այդ լույսն է, որ պիտի փայլի ու պայծառացնի մեր շրջակայքը, մինչ մենք զբաղված ենք մեր առօրյա գործերով: Մարդիկ կնկատեն այդ լույսը և կմոտենան դրան: Սա այնպիսի միսիոներական աշխատանք է, որը կմոտեցնի ուրիշներին, որ «*գան և տեսնեն, գան և օգնեն, գան և մնան*»:[9] Երբ դուք ստանանք ձեր վկայությունը այս մեծ աշխատանքի մասին և այդ գործում ունեցած ձեր բաժնի վերաբերյալ, եկեք ուրախանանք մեր սիրելի մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ միասին, ով հայտարարել է. «Ես տեսել էի տեսիլք. ես գիտեի դա և գիտեի, որ Աստված գիտի դա, և չէի կարող ուրանալ»:[10]

Ես վկայում եմ, որ գիտեմ, թե ով եմ ես, և գիտեմ, թե ով եք դուք: Մենք բոլորս մեր Երկնային Հոր զավակներն ենք, ով սիրում է մեզ: Նա մեզ ուղարկել է այստեղ ոչ թե ձախողվելու համար, այլ Իր մոտ փառահեղ կերպով վերադառնալու համար: Թող որ մենք բոլորս սկսենք հասկանալ մեր բաժինը այս հրաշալի միսիոներական աշխատանքում, որպեսզի ավելի նմանվենք Նրան, երբ Փրկիչը կրկին գա, սա է իմ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես նաև Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Իմ սիրո մեջ հաստատուն մնացեք», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 48:
2. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Աստվածային սեր», *Լիահոնա,* փետ. 2003, 12–17:
3. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.10:
4. Հակոբոս 1.5, տես նաև Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.11:
5. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.13:
6. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14:
7. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.28:
8. Մորոնի 7.47:
9. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում», *Լիահոնա* մայիս 2019, 17:
10. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.25:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ՌԱՍՍԵԼ ԲԱԼԼԱՐԴ
Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Մեր մարմինների վերահսկողությունը հանձնելով մեր հոգիներին

Ամենակարևոր բաներից մեկը, որ կարող ենք սովորել այս կյանքում այն է, թե ինչպես կարևորել մեր հավերժական հոգևոր էությունը և վերահսկել մեր չար ցանկությունները:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, երբ անցյալ տարի մոտենում էր հոկտեմբերի գերագույն համաժողովը,

ես պատրաստեցի իմ համաժողովի ելույթը՝ կարևորելու համար հոգևոր աշխարհի մասին տեսիլքի 100-ամյակը, որը Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսել էր 1918 թվականի հոկտեմբերի 3-ին:

Իմ ելույթը թարգմանության ներկայացնելուց մի քանի օր անց, իմ սիրելի հավերժական ուղեկիցը՝ Բարբարան, ավարտեց իր մահկանացու փորձությունը և գնաց հոգևոր աշխարհ:

Բարբարայի մահից հետո օրեր, շաբաթներ, ամիսներ, իսկ այժմ մեկ տարի անց, ես սկսեցի ավելի գնահատել այս հատվածը. «Ապրեք միասին սիրով, այնպես որ սգաք նրանց կորստի համար, ովքեր մահանում են»:[1] Բարբարան և ես օրհնված ենք եղել 67 տարի՝ «ապրելով միասին սիրով»: Սակայն, ես իրականում զգացել եմ,

թե ինչ է նշանակում «սգալ նրանց կորստի համար», ում սիրում ենք: Օ՜, որքա՜ն եմ ես սիրում և կարոտում նրան:

Կարծում եմ, որ մեզանից շատերը չեն կարողանում լիովին գնահատել այն, ինչ ուրիշներն անում են մեզ համար, մինչև չենք կորցնում այդ մարդկանց: Գիտեի, որ Բարբարան միշտ զբաղված էր, բայց ես լիովին չէի հասկանում, թե ընտանիքը, Եկեղեցին և համայնքը որքան շատ ժամանակ էր պահանջում նրանից: Մեր ընտանիքը տարիներ շարունակ կայուն պահելու համար հազարավոր անգամներ կրկնվող ամենօրյա նվիրաբերված ջանքեր պահանջվեցին: Եվ այդ ամբողջ ժամանակ, մեր ընտանիքից ոչ-ոք չլսեց նրա բարձր ձայնը կամ որևէ վատ խոսք նրանից:

Ամբողջ անցյալ տարինհիշողությունները հեղեղել էին ինձ: Ես մտածել եմ ֆիզիկական առողջություն պահանջող այն ընտրության մասին, որը նա կատարեց՝ լինելով յոթ երեխաների մայր: Տնային տնտեսուհի լինելը միակ աշխատանքն էր, որը նա երբևէ ցանկացել է, և բոլոր ոլորտներում նա շատ հմուտ է եղել:

Հաճախ ես մտածել եմ, թե ինչպե՞ս էր նա հասցնում մեր բոլոր երեխաների և ինձ հետ: Միայն կերակուր պատրաստելն իսկապես հոգնեցնող խնդիր էր, էլ չենք խոսում այնպիսի գործերի մասին, ինչպիսիք են մեր ընտանիքի համար կոյտերով լվացք անելը և երեխաների կոշիկներին ու համապատասխան չափի հագուստին հետևելը: Մենք բոլորս դիմում էինք նրան մի շարք այլ հարցերի դեպքում, որոնք մեզ համար կարևոր էին: Եվ քանի որ դրանք մեզ համար կարևոր էին, դրանք կարևոր էին նաև նրա համար: Մի խոսքով, նա հոյակապ էր՝ որպես կին, որպես մայր, որպես ընկեր, որպես հարևան և որպես Աստծո դուստր:

Այժմ, երբ նա մահացել և շարունակում է հետագա ընթացքը, ես ուրախ եմ, որ նրա կյանքի վերջին մի քանի ամիսների ընթացքում գրասենյակից տուն գալիս նստում էի նրա կողքին և բռնում ձեռքը, երբ մենք դիտում էինք նրա սիրած մյուզիքլների վերջին մասերը՝ կրկին ու կրկին, քանի որ

Ալցհեյմերի հիվանդությունը թույլ չէր տալիս նրան հիշել, որ նա դրանք տեսել էր այդ կեսօրին: Այդ ձեռքը բռնելու օրերի հիշողություններն այժմ շատ թանկ են ինձ համար:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, խնդրում եմ առիթը մի կորցրեք ձեր ընտանիքի անդամների աչքերին սիրով նայելու համար: Երեխանե՛ր և ծնողնե՛ր, հանդիպեք իրար և արտահայտեք ձեր սերն ու գնահատանքը: Ինձ նման, ձեզանից ոմանք կարող են մի օր արթնանալ և հասկանալ, որ անցել է այդպիսի կարևոր շփման ժամանակը: Յուրաքանչյուր օր միասին ապրեք՝ ձեր սրտերը լի երախտագիտությամբ, լավ հիշողություններով, ծառայության պատրաստ և մեծ սիրով:

Այս անցած տարվա ընթացքում ես ավելի նպատակաուղղված եմ մտածել մեր Երկնային Հոր ծրագրի մասին, քան երբևէ: Իր որդի Կորիանթոնին ուսուցանելիս, Ալման դա անվանեց «երջանկության մեծ ծրագիր»:[2]

Այդ ծրագրի մասին մտածելիս այն բառը, որն այս պահին ծագում է իմ գլխում՝ «վերամիավորումն է»:

Դա մի ծրագիր է, որը մշակվել է մեր սիրող Երկնային Հոր կողմից, որի կենտրոնում ընտանեկան վերամիավորման մեծ ու փառահեղ հնարավորություններն են՝ Աստծո ընտանիքում սերնդե-սերունդ հավերժորեն վերամիավորելով ամուսիններին ու կանանց, ծնողներին ու զավակներին:

Այդ միտքն ինձ մխիթարություն և վստահություն է տալիս, որ ես կրկին կլինեմ Բարբարայի կողքին: Չնայած նա ֆիզիկապես տառապեց կյանքի վերջում, նրա հոգին ուժեղ էր, ազնիվ և մաքուր: Նա իրեն պատրաստել էր ամեն ինչում, որպեսզի երբ օրը գա, նա կարողանա կանգնել «Աստծո հաճելի դատարանի» առջև[3] լի վստահությամբ և խաղաղ համոզվածությամբ: Բայց ահա ես այստեղ եմ, երկու օրից կդառնամ 91 տարեկան և դեռ մտածում եմ. «Արդյո՞ք ես պատրաստ եմ: Արդյո՞ք անում եմ ամեն անհրաժեշտ բան, որպեսզի կրկին կարողանամ բռնել նրա ձեռքը»:

Կյանքի պարզագույն, հիմնական անտարակուսելի փաստն այս է՝ մենք բոլորս կմեռնենք: Անկախ նրանից, թե մենք կմեռնենք ծեր կամ երիտասարդ, հեշտ կամ դժվար մահով, հարուստ կամ աղքատ, սիրված կամ միայնակ, ոչ ոք չի խուսափի մահից:

Մի քանի տարի առաջ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասաց մի բան, որը հատկապես իմաստալից է այս պարագայում. «Որքան քաղցր է հավաստիացումը, որքան մխիթարիչ է խաղաղությունը, որոնք գալիս են այն գիտելիքից, որ եթե մենք ճիշտ ամուսնանանք և ապրենք ճիշտ, մեր հարաբերությունը կշարունակվի, չնայած մահվան անխուսափելիությանը և ժամանակի ընթացքին»:[4]

Ես, իհարկե, ամուսնացել եմ ճիշտ: Դրանում կասկած չի կարող լինել: Բայց համաձայն Նախագահ Հինքլիի, դա բավարար չէ: Ես նաև պետք է ճիշտ ապրեմ:[5]

Այսօր «ճիշտ ապրելը» կարող է բավականին շփոթեցնող սկզբունք լինել, մանավանդ, եթե շատ ժամանակ եք ծախսում սոցիալական լրատվամիջոցների վրա, որտեղ ցանկացած ձայն կարող է հայտարարել «իրական» ճշմարտություններ կամ կեղծ սկզբունքներ Աստծո և Իր զավակների համար Նրա ունեցած ծրագրի մասին: Բարեբախտաբար, Եկեղեցու անդամներն ունեն հավերժորեն ճշմարիտ ավետարանի սկզբունքներ, որ իմանան, թե ինչպես ապրել, որպեսզի երբ մեռնենք, ավելի լավ պատրաստված լինենք:

Իմ ծնվելուց ընդամենը մի քանի ամիս առաջ, իմ առաքյալ պապիկը՝ Երեց Մելվին Ջ. Բալլարդը, որոշ մարդկանց համար ելույթ ունեցավ և բացատրեց ճիշտ ապրելու հիմնական բնույթը: «Պայքար հանուն Հոգու» խորագրով նրա ելույթը կենտրոնացել էր մեր ֆիզիկական մարմինների և մեր հավերժական հոգիների միջև շարունակվող պայքարի վրա:

Նա ասել է. «Ամենամեծ ընդհարումը, որը երբևէ կունենան տղամարդիկ կամ կանայք. . . կլինի այն պայքարը, որը տեղի կունենա նրանց մեջ»,- բացատրելով, որ սատանան՝ «մեր հոգիների թշնամին», գրոհում է մեզ վրա՝ «մարմնական ցանկությունների, ախորժակի և հավակնությունների միջոցով»:[6] Այսպիսով, առաջնային ճակատամարտը մեր աստվածային ու հոգևոր էության և մարմնական բնական մարդու միջև է: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, հիշեք, որ մենք կարող ենք հոգևոր օգնություն ստանալ Սուրբ Հոգու ազդեցության միջոցով, որը կարող է «ամեն բան սովորեցնել ձեզ»:[7] Օգնություն կարող եք ստանալ նաև քահանայության զորության ու օրհնությունների միջոցով:

Այժմ, ես հարցնում եմ ձեզանից յուրաքանչյուրին. «Ինչպե՞ս է այդ պայքարն առաջ ընթանում ձեզ համար»:

Նախագահ Դեյվիդ Օ. Մաքկեյն ասել է. «Մարդու երկրային գոյությունը պարզապես փորձություն է այն բանի, թե արդյո՞ք նա կկենտրոնացնի իր ջանքերը, իր միտքը, իր հոգին այն իրերի վրա, որոնք նպաստում են նրա ֆիզիկական էության հարմարավետությանն ու բավարարմանը, թե՞ իր կյանքի նպատակը կդառնա հոգևոր որակների ձեռքբերումը»:[8]

Մեր մարմնական և հոգևոր էության այս պայքարը նոր չէ: Ժողովրդին ուղղված իր վերջին քարոզի ժամանակ Բենիամին թագավորն ուսուցանեց, որ «բնական մարդն Աստծո մի թշնամի է, և եղել է Ադամի անկումից ի վեր և կլինի հավիտյանս հավիտենից, մինչև նա չենթարկվի Սուրբ Հոգու հորդորներին և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ»:[9]

Պողոս Առաքյալն ուսուցանել է, որ «մարմնաւոր լինողները մարմնի

բաներն են մտածում. Իսկ հոգեւոր լինողները՝ հոգու բաները:

Որովհետեւ մարմնի խորհուրդը մահ է. Եւ հոգու խորհուրդը՝ կեանք եւ խաղաղութիւն»:[10]

Ինձ համար պարզ է, որ ամենակարևոր բաներից մեկը, որ կարող ենք սովորել այս կյանքում այն է, թե ինչպես կարևորել մեր հավերժական հոգևոր էությունը և վերահսկել մեր չար ցանկությունները: Դա չպետք է այդքան դժվար լինի: Ի վերջո, մեր հոգին, որը մեր ֆիզիկական մարմնից շատ ավելի երկար է գոյություն ունեցել, արդարությունն ընտրելու հարցում արդեն իսկ հաջողակ է եղել նախամահկանացու կյանքում: Այս Երկրի ստեղծումից առաջ մենք ապրում էինք հոգևոր աշխարհում՝ որպես մեր Երկնային ծնողների որդիներ և դուստրեր, ովքեր սիրում էին մեզ և շարունակում են սիրել մինչ այժմ:

Այո՛, այդ նախամահկանացու աշխարհում մենք ստիպված եղանք կյանքի համար կարևոր որոշումներ և ընտրություններ կատարել: Յուրաքանչյուր մարդ, ով երբևէ ապրել կամ ապրելու է այս մոլորակում, կարևոր որոշում կայացրեց՝ ընդունելու Երկնային Հոր ծրագիրը մեր փրկության համար: Այսպիսով, մենք բոլորս երկիր եկանք՝ ունենալով հաջողակ հոգևոր էության և հավերժական ճակատագրի ապացուցված ուղենիշ:

Մի պահ մտածեք այդ մասին: Իրականում դուք և ես այդ մարդն ենք և միշտ եղել ենք այդպիսին՝ Աստծո որդին և դուստրը, ունենալով հավերժության հոգևոր արմատներ և անսահման հնարավորությունների հորդող ապագա: Դուք, նախ և առաջ, և միշտ հոգևոր էակ եք: Եվ այսպես, երբ մենք ընտրում ենք մեր մարմնական բնույթը վեր դասել մեր հոգևոր բնույթից, մենք ընտրում ենք մի բան, որը հակասում է մեր իրական, ճշմարիտ, իսկական, հոգևոր եսին:

Դեռևս կասկած չկա, որ մարմնական և երկրային ազդակները բարդացնում են որոշումների կայացումը: Նախաերկրային հոգևոր աշխարհի և այս մահկանացու աշխարհի միջև ընկած մոռացության շղարշի պատճառով, մենք կարող ենք աչքաթող անել Աստծո և մեր հոգևոր էության միջև եղած փոխհարաբերությունները, և մեր մարմնական էությունը կարող է առաջնահերթություն տալ նրան, *թե ինչ ենք ուզում հենց հիմա:* Սովորելով վեր դասել Հոգու բաները մարմնի բաներից, այն կարևոր պատճառներից է, թե ինչու է այս երկրային փորձառությունը կազմում Երկնային Հոր ծրագրի մասը: Դա է նաև պատճառը, թե ինչու է ծրագիրը կառուցված Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավության ամուր և հաստատուն հիմքի վրա, որպեսզի մեր մեղքերը, ներառյալ այն սխալները, որոնք մենք կատարում ենք մարմնին ենթարկվելիս, հնարավոր լինի հաղթահարել մշտական ապաշխարության միջոցով, և մենք կարողանանք ապրել հոգևորապես կենտրոնացած: Հիմա է ժամանակը վերահսկելու մեր մարմնի ախորժակը՝ Քրիստոսի հոգևոր վարդապետությանը ենթարկվելու համար: Ահա, թե ինչո՞ւ մենք չպետք է հետաձգենք մեր ապաշխարության օրը:[11]

Հետևաբար, ապաշխարությունը դառնում է անփոխարինելի զենք մեր եսի դեմ պայքարում: Հենց անցած գերագույն համաժողովին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն անդրադարձավ այս պայքարին և հիշեցրեց մեզ, որ «երբ փորձում ենք ապաշխարել, մենք փոխվելու որոշում ենք կայացնում: Մենք թույլ ենք տալիս Փրկիչին

վերափոխելու և դարձնելու մեզ այն անձնավորությունը, որը մեր ներուժի լավագույն տարբերակն է: Մենք որոշում ենք հոգևորապես աճել և ուրախություն ստանալ՝ փրկագնման ուրախությունը Նրանում: Երբ փորձում ենք ապաշխարել, մենք որոշում ենք նմանվել Հիսուս Քրիստոսին»:[12]

Ամեն օր, երբ աղոթում եմ իմ Երկնային Հորը և վերանայում այդ օրը, ես ներում եմ խնդրում իմ կատարած սխալների համար և խոստանում եմ վաղն ավելի լավը դառնալ: Ես հավատում եմ, որ այդ ամենօրյա ապաշխարությունն օգնում է, որպեսզի իմ մարմինը հիշի, թե ով է վերահսկում ինձ:

Մեկ այլ միջոց մեր բոլորիս ունեցած շաբաթական հնարավորությունն է, որ հոգևորապես թարմանանք՝ ընդունելով հաղորդությունը որպես հիշեցում մեր հանդեպ Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավության և կատարյալ սիրո մասին:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես հորդորում եմ բոլորիդ մի փոքր դադար տալ և մտածել այն մասին, թե ինչպես եք հպատակեցնում ձեր մարմնական էությունը և զորացնում ձեր աստվածային հոգևոր էությունը, որ երբ ժամանակը գա, դուք անցնեք հոգևոր աշխարհ և միավորվեք ձեր սիրելիների հետ. որի մասին ես խոնարհաբար աղոթում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 42.45:
2. Ալմա 42.8:
3. Հակոբ 6.13:
4. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Գորդոն Բ. Հինքլի* (2016), 157:
5. Տերը հայտնել է, որ մենք պետք է ապրենք հավատարիմ մեր ուխտերին, որպեսզի ստանանք խոստացված օրհնությունները (տես Վարդապետություն և Ուխտեր 82.10, 132.5–7, 19):
6. Melvin J. Ballard, “Struggle for the Soul” (address given at the Salt Lake Tabernacle, May 5, 1928).
7. Հովհաննես 14.26:
8. *Teachings of Presidents of the Church: David O. McKay* (2003), 14.
9. Մոսիա 3.19:
10. Հռովմայեցիս 8.5–6:
11. Տես Ալմա 34.33:
12. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել», *Լիահոնա,* մայիս, 2019թ., 67:

ԵՐԵՑ ՊԻՏԵՐ Մ. ՋՈՆՍՈՆ
Յոթանասունից

Հակառակորդին հաղթելու զորությունը

Մենք ինչպե՞ս կարող ենք խաղաղություն գտնել, հիշել, թե ով ենք մենք և հաղթահարել հակառակորդի երեք մարտահրավերները:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, շնորհակալ ենք ամեն բանի համար, որ դուք անում եք, որ դառնաք և օգնեք ուրիշներին դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները և վայելել սուրբ տաճարի օրհնությունները: Շնորհակալություն ձեր բարության համար: Դուք հրաշալի եք, դուք գեղեցիկ եք:

Ես աղոթում եմ, որ մենք զգանք Սուրբ Հոգու *հաստատող* ազդեցությունը, մինչ կսկսենք լիովին ըմբռնել, որ մենք Աստծո զավակներն ենք: «Ընտանիք. հայտարարություն աշխարհին» հռչակագրում կարդում ենք. «Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր»:[1] Մենք «ընտրյալ հոգիներ ենք, որոնք պահվել էին առաջ գալու ժամանակների լրության մեջ, որպեսզի մասնակցեն վերջին օրերի մեծ աշխատանքի հիմնադրմանը»:[2] Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարել է. «Հոգևոր աշխարհում ձեզ ուսուցանել են և նախապատրաստել ամեն ինչի և յուրաքանչյուր բանի համար, որին դուք կհանդիպեք այս վերջին օրերի վերջին մասի ընթացքում (տես Վ&Ուս 138.56): Այդ ուսուցումը հարատևում է ձեր մեջ»:[3]

Դուք Աստծո ընտրյալ որդիներն ու դուստրերն եք: Դուք ունեք հակառակորդին հաղթելու զորությունը: Սակայն հակառակորդը, գիտի, թե ով եք դուք: Նա գիտի ձեր աստվածային ժառանգության մասին և ձգտում է սահմանափակել ձեր աշխարհիկ և երկնային ներուժը՝ օգտագործելով երեք բան.

- Խաբեություն
- Ուշադրության շեղում
- Հուսահատություն

Խաբեություն

Հակառակորդն օգտագործում էր խաբեության գործիքը Մովսեսի օրերում: Տերը հայտարարեց Մովսեսին.

«Ահա, դու իմ որդին ես: . . .

Ես աշխատանք ունեմ քեզ համար, . . . և դու իմ Միածնի նմանությամբ ես»:[4]

Այս փառահեղ տեսիլքից անմիջապես հետո սատանան փորձեց խաբել Մովսեսին: Նրա օգտագործած բառերը հետաքրքիր են. «Մովսես, մարդու որդի, երկրպագիր ինձ»:[5] Խաբեություն կար ոչ միայն սատանային երկրպագելու հրավերի մեջ, այլ նաև Մովսեսին՝ որպես մարդու որդի նկարագրելու մեջ: Հիշեք, Տերը նոր էր ասել Մովսեսին, որ նա Աստծո որդին էր՝ ստեղծված Միածնի նմանությամբ:

Հակառակորդն անդադար փորձում էր խաբել Մովսեսին, սակայն Մովսեսը դիմակայեց, ասելով. «Հեռացի՛ր ինձանից, Սատանա՛, քանզի այս մեկ Աստծուն միայն պիտի երկրպագեմ, որը փառքի Աստվածն է»:[6] Մովսեսը հիշեց, թե ով էր ինքը. Աստծո որդի:

Մովսեսին ուղղված Տիրոջ խոսքերը վերաբերում են ձեզ և ինձ: Մենք ստեղծվել ենք Աստծո պատկերով, և Նա աշխատանք ունի մեզ համար: Հակառակորդը, փորձում է խաբել մեզ, մոռացնել տալով, թե ով ենք մենք իրականում: Եթե մենք չենք հասկանում, թե ով ենք մենք, ապա դժվար է գիտակցել, թե ով կարող ենք դառնալ:

Ուշադրության շեղում

Հակառակորդը նաև փորձում է շեղել մեզ Քրիստոսից և Նրա ուխտի արահետից: Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը կիսվել է հետևյալով. «Հակառակորդի ծրագիրն է՝ շեղել մեզ հոգևոր վկայություններից, իսկ

Տիրոջ ցանկությունն է՝ լուսաբանել և զբաղեցնել մեզ Իր աշխատանքով»:[7]

Մեր օրերում կան շատ շեղումներ, ներառյալ՝ Twitter, Facebook, Instagram, վիրտուալ խաղերը և շատ ավելին: Տեխնոլոգիական այս միջոցները հրաշալի են, սակայն, եթե մենք զգույշ չլինենք, դրանք կարող են շեղել մեզ մեր աստվածային ներուժին հասնելուց: Դրանց պատշաճ օգտագործումը կարող է առաջ բերել երկնքի զորությունը և թույլ տալ մեզ ականատես լինել հրաշքների, մինչ մենք կփորձենք հավաքել ցրված Իսրայելը վարագույրի երկու կողմերում:

Եկեք զգույշ և ուշադիր լինենք տեխնոլոգիաների օգտագործման մեջ:[8] Շարունակ փնտրեք ուղիներ, որոնց միջոցով տեխնոլոգիան կարող է մեզ ավելի մոտեցնել Փրկիչին և թույլ տալ մեզ իրականացնել Նրա աշխատանքը, մինչ մենք պատրաստվում ենք Նրա Երկրորդ Գալուստին:

Հուսահատություն

Ի վերջո, հակառակորդը ցանկանում է, որ մենք հուսահատվենք: Մենք գուցե հուսահատվենք, երբ համեմատվենք ուրիշների հետ, կամ զգանք, որ չենք արդարացնում ինչպես ուրիշների, այնպես էլ մեր սեփական սպասումները:

Իմ դոկտորական ծրագրի սկզբում ես հուսահատություն զգացի: Այդ տարի ծրագիրն ընդունեց միայն չորս ուսանողների, և մյուս երեքը հրաշալի ուսանողներ էին: Նրանք ունեին ավելի բարձր թեստային միավորներ և ավելի շատ աշխատանքային փորձ կառավարման բարձր պաշտոններում, և նրանք վստահություն էին դրսևորում իրենց ունակությունների նկատմամբ: Ծրագրում իմ առաջին երկու շաբաթներից հետո ինձ սկսեցին հետապնդել հուսահատությունն ու կասկածը՝ գրեթե ճնշելով ինձ:

Ես որոշեցի, որ եթե ցանկանում էի ավարտել այս չորսամյա ծրագիրը, ապա պետք է ավարտեի Մորմոնի Գրքի ընթերցումն ամեն կիսամյակ: Ամեն օր, մինչ կարդում էի, իմ կյանքում իրականություն էր դառնում Տիրոջ այն հայտարարությունը, որ Սուրբ Հոգին կսովորեցներ ինձ ամեն բան և կօգներ հիշել ամեն բան:[9] Այն վերահաստատեց, թե ով եմ ես՝ որպես Աստծո որդի, հիշեցրեց ինձ չհամեմատվել ուրիշների հետ և տվեց ինձ վստահություն՝ աստվածային իմ դերում հաջողության հասնելու համար:[10]

Իմ թանկագի՛ն ընկերներ, խնդրում եմ, թույլ մի տվեք որևէ մեկին գողանալ ձեր երջանկությունը: Մի համեմատվեք ուրիշների հետ: Խնդրում եմ, հիշեք Փրկիչի հետևյալ խոսքերը. «*Խաղաղություն* եմ թողում ձեզ, իմ *խաղաղությունն* եմ տալիս ձեզ. ոչ թե ինչպես աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ: Ձեր սիրտը *չխռովի,* եւ չվախենայ»:[11]

Այսպիսով, ինչպե՞ս ենք մենք անում դա: Մենք ինչպե՞ս կարող ենք գտնել այդ խաղաղությունը, հիշել, թե ով ենք մենք և հաղթահարել հակառակորդի այդ երեք մարտահրավերները:

Առաջինը, հիշեք, որ առաջին և մեծ պատվիրանն է՝ սիրել Աստծուն մեր ողջ սրտով, ուժով, մտքով և զորությամբ:[12] Այն, ինչ անում ենք, պետք է մղված լինի Նրա և Նրա Որդու հանդեպ սիրուց: Մինչ մենք սեր կզարգացնենք Նրանց հանդեպ, պահելով Նրանց պատվիրանները, մեր անձը և ուրիշներին սիրելու մեր ունակությունը կմեծանա: Մենք կսկսենք ծառայել ընտանիքին, ընկերներին և հարևաններին, քանի որ կտեսնենք նրանց այնպիսին, ինչպիսին Փրկիչն է տեսնում նրանց՝ որպես Աստծո որդիներ և դուստրեր:[13]

Երկրորդը, աղոթեք Հորը Հիսուս Քրիստոսի անունով ամեն օր, ամեն օր, ամեն օր:[14] Աղոթքի միջոցով է, որ մենք կարող ենք զգալ Աստծո սերը և ցույց տալ մեր սերը Նրա հանդեպ: Աղոթքի միջոցով մենք հայտնում ենք մեր երախտագիտությունը և խնդրում ուժ ու քաջություն՝ ենթարկելու մեր կամքը Աստծո կամքին, և առաջնորդություն խնդրում բոլոր բաներում:

Ես հորդորում եմ ձեզ «*աղոթել* Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, . . . որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները [և դուստրերը], որպեսզի երբ նա հայտնվի, մենք *լինենք* նրա նման»:[15]

Երրորդը, կարդացեք Մորմոնի Գիրքը ամեն օր, ամեն օր, ամեն

օր:[16] Մորմոնի Գրքի իմ ընթերցումն ավելի լավ է ընթանում, երբ կարդում եմ իմ մտքում հարց ունենալով: Երբ կարդում ենք մտքում հարց ունենալով, մենք կարող ենք հայտնություն ստանալ և հասկանալ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը ճիշտ էր, երբ հայտարարում էր, որ «Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից, . . . և ապրելով ըստ դրա ցուցումների [տղամարդիկ և կանայք] ավելի շատ կմոտենան Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների»:[17] Մորմոնի Գիրքը պարունակում է Քրիստոսի խոսքերը և օգնում է մեզ հիշել, թե ով ենք մենք:

Եվ վերջինը, աղոթքով ճաշակեք հաղորդությունը ամեն շաբաթ, ամեն շաբաթ, ամեն շաբաթ: Քահանայության արարողությունների, ներառյալ հաղորդության, միջոցով է, որ մեր կյանքում բացահայտվում է աստվածայնության զորությունը:[18] Երեց Դեյվիդ Ա. Բեղնարն ուսուցանել է. «Հաղորդության արարողությունը սուրբ և կրկնվող հրավեր է՝ անկեղծորեն ապաշխարելու և լինելու հոգեպես նորոգված: Հաղորդությունը ճաշակելու գործողության ընթացքն ինքնին մեղքերը չի ներում: Բայց, երբ մենք պատրաստվում ենք բարեխղճորեն և մասնակցում այս սուրբ արարողությանը կոտրված սրտով և փշրված հոգով, ապա խոստումն է, որ մենք կարող ենք *միշտ* Տիրոջ Հոգին մեզ հետ ունենալ»:[19]

Մինչ մենք խոնարհաբար ճաշակում ենք հաղորդությունը, մենք հիշում ենք Հիսուսի տառապանքը Գեթսեմանի կոչվող այն սուրբ պարտեզում և Նրա զոհաբերությունը խաչի վրա: Մենք արտահայտում ենք մեր երախտագիտությունը Հորը, որ ուղարկեց Իր Միածնին՝ մեր Քավիչին, և ցույց ենք տալիս մեր պատրաստակամությունը՝ պահելու Նրա պատվիրանները և միշտ հիշելու Նրան:[20] Հաղորդությունը ներառում է հոգևոր լույս. այն անձնական է, զորեղ և անհրաժեշտ:

Ի՛մ ընկերներ, ես խոստանում եմ, որ եթե մենք ձգտենք սիրել Աստծուն մեր ողջ սրտով, աղոթենք Հիսուս Քրիստոսի անունով, ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը և աղոթքով ընդունենք հաղորդությունը, Աստծո ուժով մենք կկարողանանք հաղթահարել հակառակորդի *խաբեության* փորձերը, նվազագույնին հասցնել *շեղումները,* որոնք սահմանափակում են մեր աստվածային ներուժը, և դիմադրել *հուսահատությանը,* որը նվազեցնում է մեր Երկնային Հոր և Նրա Որդու սերը զգալու մեր կարողությունը: Մենք կկսենք *լիությամբ* հասկանալ, թե ով ենք մենք՝ որպես Աստծո որդիներ և դուստրեր:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես սիրով հայտարարում եմ, որ Երկնային Հայրն ապրում է և Հիսուսը Քրիստոսն է: Ես սիրում եմ Նրանց: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո թագավորությունն է երկրի վրա: Մենք ունենք *աստվածային նշանակում*՝ հավաքելու Իսրայելը և նախապատրաստելու աշխարհը Մեսիայի Երկրորդ Գալուստին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
2. Վարդապետություն և Ուխտեր 138.53, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 138.54–56:
3. Ռասսել Մ. Նելսոն, «Կանգնեք որպես իսկական հազարամյակցիներ», *Լիահոնա,* հոկտեմբեր 2016, 48:
4. Մովսես 1.4, 6:
5. Մովսես 1.12:
6. Մովսես 1.20, տես նաև Մովսես 1.16–19, 21:
7. Ronald A. Rasband, “Lest Thou Forget,” *Liahona,* Nov. 2016, 115.
8. Տես Becky Craven, “Careful versus Casual,” *Liahona,* May 2019, 9–11:
9. Տես Հովհաննես 14.26:
10. Հաջողության հասնելու մեր աստվածային դերը հավերժական կյանք ստանալն է, անկախ նրանից՝ արդյոք նա ձեռք է բերում այն, ինչ աշխարհը դիտում է որպես հաջողություն երկրային ջանքերում, թե ոչ: Սուրբ Հոգին հիշեցնում է մեզ մեր աստվածային դերը, և թե ով մենք կարող ենք դառնալ, եթե մնանք ուխտի արահետում և Տիրոջ ուժով հաղթահարենք հակառակորդի գայթակղությունները:
11. Հովհաննես 14.27, շեշտադրումն ավելացված է:
12. Տես Մատթեոս 22.37–38:
13. Տես Հովհաննես 3.16, Ա Հովհաննես 4.19, Մոսիա 2.17:
14. Տես 3 Նեփի 18.18–21:
15. Մորոնի 7.48, շեշտադրումն ավելացված է:
16. Տես Kevin W. Pearson, “Stay by the Tree,” *Liahona,* May 2015, 114–16:
17. Մորմոնի Գրքի նախաբանը:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.20–21:
19. Դեյվիդ Ա. Բեղնար, «Միշտ պահեք ձեր մեղքերի թողությունը», *Լիահոնա,* մայիս 2016, 61–62:
20. Տես Մորոնի 4.2–3, 5.1–2, Վարդապետություն և Ուխտեր 20.76–79: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ մենք ապրում ենք ժամանակներում, երբ մեծապես զգում ենք Նրա Հոգին մշտապես մեզ հետ ունենալու կարիքը:



ԵՐԵՑ ՈՒԼԻՍԵՍ ՍՈԱՐԵՍ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Վերցնենք մեր խաչը

Մեզ վրա վերցնել մեր խաչը և հետևել Փրկիչին նշանակում է՝ հավատքով առաջ ընթանալ Տիրոջ ճանապարհին և չտրվել աշխարհիկ սովորություններին:

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մենք հրաշալի ուսուցում ստացանք մեր ղեկավարների կողմից այս անցած երկու օրերի ընթացքում: Ես վկայում եմ ձեզ, որ եթե մենք ձգտենք կյանքում կիրառել այս ոգեշնչված և պատեհաժամ ուսմունքները, Տերն, Իր շնորհով կօգնի յուրաքանչյուրիս տանել մեր խաչը և կթեթևացնի մեր բեռը:[1]

Երբ Փրկիչը Փիլիպպեա Կեսարիայի կողմերում էր, Իր աշակերտներին պատմեց, որ Երուսաղեմում տառապելու է երեցների, քահանայապետերի և դպիրների պատճառով: Նա հատկապես խոսեց Իր մահվան և փառահեղ Հարության մասին:[2] Այդ ժամանակ Նրա աշակերտները լիովին չէին հասկանում երկրի վրա Նրա աստվածային առաքելությունը: Նույնիսկ Պետրոսը, երբ լսեց, թե ինչ է ասում Փրկիչը, նրան մի կողմ տանելով հանդիմանեց, ասելով. «Քաւ լիցի քեզ, Տէ՛ր, այդ չ՚լինի քեզ»:[3]

Որպեսզի օգներ աշակերտներին հասկանալ, որ Իր գործին նվիրվելը ներառում է հպատակություն և տառապանք, Փրկիչը հուզմունքով հայտարարեց.

«Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնե և իմ ետևից գա:

Որովհետեւ ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կկորցնէ նորան. եւ ով որ իր անձն ինձ համար եւ աւետարանի համար կորցնէ, նա կապրեցնէ նորան:

Որովհետեւ ի՞նչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհքն ստանայ եւ իր անձը կորցնէ. Կամ ի՞նչ գին կ՚տայ մարդ իր անձը փրկելու համար»:[4]

Այս հայտարարությամբ Փրկիչը շեշտել է, որ բոլոր նրանք, ովքեր ցանկանում են հետևել Իրեն, պետք է ուրանան իրենց անձը, վերահսկեն իրենց ցանկությունները, ախորժակը, կրքերը, զոհաբերելով ամեն ինչ, նույնիսկ կյանքը, եթե անհրաժեշտ լինի, անմնացորդ ենթարկվելով Հոր կամքին, ինչպես Նա արեց:[5] Սա է, իրականում, այն գինը, որ վճարվում է հոգու փրկության համար: Հիսուսը նպատակային և փոխաբերական իմաստով օգտագործեց խաչի խորհրդանիշը, որպեսզի օգնի Իր աշակերտներին ավելի լավ հասկանալ, թե իրականում ինչ է նշանակում զոհաբերել և նվիրված լինել Տիրոջ գործին: Խաչի պատկերը քաջ հայտնի էր Նրա աշակերտների և հռոմեական կայսրության բնակիչների շրջանում, քանի որ հռոմեացիները խաչելության զոհերին ստիպում էին հրապարակայնորեն տանել իրենց խաչը կամ խաչափայտը դեպի այն վայրը, որտեղ պետք է տեղի ունենար նրանց մահապատիժը:[6]

Փրկիչի Հարությունից հետո միայն աշակերտների միտքը բացվեց, և հասկացան այն ամենը, ինչ գրված էր Նրա մասին,[7] ինչպես նաև այն, թե ինչ էր պահանջվում իրենցից այդ ժամանակից ի վեր:[8]

Նմանապես, մենք բոլորս՝ եղբայրնե՛ր և քույրե՛ր, պետք է բացենք մեր միտքն ու մեր սիրտը, որպեսզի ավելի լավ հասկանանք մեր խաչերը վերցնելու և Նրան հետևելու կարևորությունը: Սուրբ գրություններից մենք իմանում ենք, որ նրանք, ովքեր ցանկանում են վերցնել իրենց խաչը, սիրում են Հիսուս Քրիստոսին այնպես, որ հրաժարվում են ամեն անաստվածությունից և ամեն աշխարհիկ ցանկությունից ու պահում են Նրա պատվիրանները:[9]

Եթե մենք վճռական լինենք՝ թողնելով բոլոր բաները, որոնք հակասում են Աստծո կամքին, զոհաբերելով այն, ինչ մեզանից պահանջվում է, ձգտելով հետևել Նրա ուսմունքներին, ապա դա կօգնի մեզ մնալ Հիսուս Քրիստոսի ավետարանի ճանապարհին, նույնիսկ ձախորդությունների, մեր հոգիների թուլության կամ սոցիալական ճնշման ու աշխարհիկ փիլիսոփայությունների

առկայության պարագայում, որոնք դեմ են Նրա ուսմունքներին:

Օրինակ՝ նրանց, ովքեր դեռևս չեն գտել հավերժական ուղեկից և, հնարավոր է, միայնակ ու անհույս են իրենց զգում, կամ նրանց, ովքեր ամուսնալուծված են և լքված ու մոռացված են զգում, ես հավաստիացնում եմ, որ ընդունելով Փրկիչի հրավերը՝ ձեզ վրա վերցնել ձեր խաչը և հետևել Նրան, նշանակում է հավատքով առաջ գնալ Տիրոջ ուղու վրա, պահպանել արժանապատվությունը և չտրվել աշխարհիկ սովորություններին, որոնք, ի վերջո, կխլեն մեր հույսը Աստծո սիրո և ողորմածության հանդեպ:

Նույն սկզբունքները վերաբերում են նրանց, ովքեր հրապուրանք են զգում նույն սեռի ներկայացուցիչների հանդեպ և հուսահատված ու անօգնական են իրենց զգում: Եվ գուցե այս պատճառով ոմանք այնպիսի զգացում ունեն, որ Հիսուս Քրիստոսի ավետարանն այլևս իրենց համար չէ: Եթե դա է պատճառը, ես հավաստիացնում եմ ձեզ, որ հույս միշտ կա՝ Հայր Աստծո և Նրա երջանկության ծրագրի, Հիսուս Քրիստոսի և Նրա քավող զոհաբերության և նրանց սիրառատ պատվիրաններով ապրելու հանդեպ: Իր կատարյալ իմաստությամբ, զորությամբ, արդարությամբ և ողորմածությամբ Տերը կարող է կնքել մեզ որպես Իրենը, որպեսզի մենք բերվենք Նրա ներկայության մեջ և ունենանք հավերժական փրկություն, եթե մենք հաստատուն և անխախտ ենք պատվիրանները պահելիս[10] և միշտ հարուստ ենք բարի գործերով:[11]

Նրանց համար, ովքեր լուրջ մեղքեր են գործել, այս նույն հրավերն ընդունելը, ի թիվս այլ բաների, նշանակում է՝ խոնարհվել Աստծո առաջ, խորհրդակցել Եկեղեցու համապատասխան ղեկավարների հետ և ապաշխարել ու թողնել ձեր մեղքերը: Այս գործընթացը կօրհնի նաև բոլոր մարդկանց, ովքեր պայքարում են վնասակար հակումների դեմ, որոնց թվում են՝ օփիոիդային դեղորայքը, թմրանյութերը, ալկոհոլը և պոռնոգրաֆիան: Այս քայլերը կատարելով, դուք կմոտենաք Փրկիչին, Ով, ի վերջո, կարող է ազատել ձեզ մեղքից, վշտից և հոգևոր ու ֆիզիկական ստրկությունից: Բացի այդ, գուցե ցանկանաք նաև ունենալ ձեր ընտանիքի, ընկերների և իրավասու բժիշկ և խորհրդատու մասնագետների աջակցությունը:

Երբեք մի հրաժարվեք պայքարից հաջորդական ձախողումների պատճառով, ու երբեք չմտածեք, որ ի վիճակի չեք հաղթահարելու մեղքերն ու կախվածությունը: Ավելի վատ կլինի, եթե դադարեք փորձել և շարունակեք մնալ թուլության ու մեղքի մեջ: Միշտ ձգտեք անել առավելագույնը՝ ձեր գործերով ցույց տալով, որ ցանկանում եք մաքրել անոթը ներսից, ինչպես ուսուցանել է Փրկիչը:[12] Երբեմն որոշակի դժվարությունների լուծումները գալիս են ամիսներ տևած շարունակական ջանքերի արդյունքում: Մորմոնի Գրքում հանդիպող խոստումը, որ «շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել»,[13] կիրառելի է այս դեպքերում: Խնդրում եմ հիշել, որ Փրկիչի շնորհի պարգևը «անպայման չէ, որ ժամանակով սահմանափակվի, այսինքն, տրվի միայն մեր կողմից ամեն ինչ անելուց «հետո»: Մենք կարող ենք ստանալ Նրա շնորհը մեր ջանքերը գործադրելուց առաջ, ընթացքում և հետո»:[14]

Ես վկայում եմ, որ եթե մենք շարունակաբար ձգտենք հաղթահարել մեր մարտահրավերները, Աստված կօրհնի մեզ բժշկվելու և հրաշքներ գործելու պարգևներով:[15] Նա կանի մեզ համար այն, ինչ մենք ինքներս չենք կարող անել:

Բացի այդ, նրանց համար, ովքեր դառնացած են, զայրացած, վիրավորված կամ վշտացած որևէ անարժան բանի պատճառով, վերցնել խաչը և

հետևել Փրկիչին նշանակում է փորձել մի կողմ դնել այդ զգացողությունները և դառնալ դեպի Տերը, որպեսզի Նա ազատի մեզ մտքի այս վիճակից և օգնի խաղաղություն գտնել: Ցավոք, եթե մենք կառչենք այդ բացասական զգացողություններից և հույզերից, մենք կտեսնենք, որ սկսել ենք ապրել առանց Տիրոջ Հոգու ազդեցության մեր կյանքում: Մենք չենք կարող ապաշխարել ուրիշ մարդկանց *փոխարեն,* սակայն մենք կարող ենք ներել նրանց, չցանկանալով պատանդ լինել նրանց ձեռքերում, ովքեր վնասել են մեզ:[16]

Սուրբ գրություններն ուսուցանում են, որ այս իրավիճակներից ելք կա. հարկավոր է հրավիրել մեր Փրկիչին, որ օգնի մեզ, փոխարինի մեր քարե սրտերը նոր սրտերով:[17] Որպեսզի դա տեղի ունենա, մենք պետք է կանգնենք Տիրոջ առաջ մեր թուլություններով[18] և աղերսենք Նրա օգնությունն ու ներումը,[19] հատկապես այն սրբազան պահերին, երբ ամեն կիրակի ընդունում ենք հաղորդությունը: Մենք պետք է ձգտենք ունենալ Նրա օգնությունը և կատարենք մի կարևոր ու դժվար քայլ՝ ներել նրանց, ովքեր վիրավորել են մեզ, որպեսզի մեր վերքերը սկսեն բուժվել: Ես խոստանում եմ ձեզ, որ եթե այդպես վարվեք, ձեր գիշերները թեթևությամբ կլցվեն, քանի որ ձեր միտքը խաղաղված կլինի Տիրոջով:

1839 թվականին Լիբերթի բանտում գտնվելիս, Մարգարե Ջոզեֆ Սմիթը նամակ էր գրել Եկեղեցու անդամներին, ընդգրկելով մարգարեություններ, որոնք կիրառելի են բոլոր այս իրավիճակների և իրադրությունների համար: Նա գրել է. «Բոլոր գահերն ու տիրապետությունները, իշխանություններն ու զորությունները պիտի հայտնի դարձվեն և տրվեն բոլոր նրանց, ովքեր քաջաբար համբերել են հանուն Հիսուս Քրիստոսի ավետարանի»:[20] Հետևաբար, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, նրանք, ովքեր իրենց վրա են վերցրել Փրկիչի անունը, ապավինելով Նրա խոստումներին և համբերում են մինչև վերջ, կփրկվեն[21] և կարող են Աստծո հետ ապրել անվերջ երջանկության մի վիճակում:[22]

Բոլորիս կյանքում պատահում են անբարենպաստ հանգամանքներ, որոնք մեզ տխրեցնում են, անօգնական են դարձնում, հուսահատեցնում են, երբեմն էլ՝ թուլացնում: Որոշ զգացմունքներ կարող են պատճառ դառնալ, որ հարցնենք Տիրոջը. «Ես ինչո՞ւ եմ հայտնվել այս իրավիճակում» կամ «Ինչո՞ւ չեն իրականանում իմ սպասելիքները: Ի վերջո, ես անում եմ այն ամենն, ինչ կարող եմ, որ կրեմ իմ խաչը և հետևեմ Փրկիչին»:

Իմ սիրելի՛ ընկերներ, մենք պետք է հիշենք, որ վերցնել մեր խաչը մեզ վրա նշանակում է՝ լինել խոնարհ և վստահել Աստծուն և Նրա անսահման իմաստությանը: Մենք պետք է հասկանանք, որ Նա տեղյակ է յուրաքանչյուրիս մասին, ինչպես նաև՝ մեր կարիքների: Անհրաժեշտ է նաև ընդունել այն փաստը, որ Տիրոջ ժամանակն այլ է, քան մերը: Երբեմն մենք ցանկանում ենք օրհնություն ստանալ և ժամկետ ենք սահմանում Տիրոջ համար: Մենք չենք կարող Աստծո հանդեպ ունեցած մեր հավատարմության հաշվին ժամկետ թելադրել Նրան մեր խնդրանքների պատասխանները ստանալու համար: Այդպես անելով, մենք նմանվում ենք վաղեմի թերահավատ նեփիացիներին, ովքեր ծաղրում էին իրենց եղբայրներին ու քույրերին, ասելով, որ Սամուել Լամանացու խոսքերի կատարման ժամանակն անցել է, խառնաշփոթ առաջացնելով նրանց մոտ, ովքեր հավատում էին:[23] Մենք

Քույր Ֆրանկա Կալամասսին իր չորս զավակների հետ տաճարում:

պետք է այնպես վստահենք Տիրոջը, որ հանգիստ լինենք և իմանանք, որ Նա Աստված է, որ Նա գիտի բոլոր բաները, և որ Նա տեղյակ է յուրաքանչյուրիս մասին:[24]

Վերջերս ես առիթ ունեցա սպասավորելու Ֆրանկա Կալամասսի անունով մի այրի քրոջ, ով տառապում է ծանր հիվանդությամբ: Քույր Կալամասսին իր ընտանիքի առաջին անդամն էր, ով միացել էր Հիսուս Քրիստոսի վերականգնված եկեղեցուն: Թեև նրա ամուսինը մկրտված չէր, նա համաձայնել էր հանդիպել միսիոներների հետ և հաճախ էր գնում Եկեղեցու ժողովներին: Անկախ այս հանգամանքից, քույր Կալամասսին հավատարիմ էր մնացել և մեծացրել էր իր չորս երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանով: Ամուսնու մահից մեկ տարի անց, քույր Կալամասսին տարավ իր երեխաներին տաճար, որտեղ նրանք մասնակցեցին սուրբ արարողություններին և միասին կնքվեցին որպես ընտանիք: Այս արարողությունների հետ կապված խոստումները քույր Կալամասսիին մեծ հույս տվեցին, ուրախություն և երջանկություն, օգնեցին, որ շարունակի ապրել:

Երբ սկսեցին ի հայտ գալ հիվանդության առաջին ախտանիշները, նրա եպիսկոպոսը օրհնություն տվեց նրան: Այդ ժամանակ նա եպիսկոպոսին ասաց, որ պատրաստ է ընդունել Տիրոջ կամքը, արտահայտելով իր հավատքը բուժվելու, ինչպես նաև հիվանդությանը մինչև վերջ դիմանալու հարցում:

Իմ այցի ժամանակ, երբ բռնել էի քույր Կալամասսիի ձեռքը և նայում էի նրա աչքերի մեջ, ես տեսա մի հրեշտակային փայլ, որ արտացոլվում էր նրա դեմքից՝ ցույց տալով նրա վստահությունը Աստծո ծրագրի և հույսի կատարյալ պայծառություն՝ Հոր սիրո և իր համար Նրա պատրաստած ծրագրի հանդեպ:[25] Ես զգացի, թե որքան վճռական է նա տրամադրված հավատքով համբերել մինչև վերջ՝ վերցնելով իր խաչը, անկախ ստեղծված մարտահրավերներից: Այս քրոջ կյանքը Քրիստոսի մասին վկայություն է, Նրա հանդեպ հավատքի ու նվիրվածության ապացույց:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես ցանկանում եմ վկայել, որ մեր խաչը մեզ վրա վերցնելու և Փրկիչին հետևելու համար պահանջվում է, որ հետևենք Նրա օրինակին և ձգտենք նմանվել Նրան,[26] համբերատար հաղթահարենք կյանքի հանգամանքները, տեղի չտանք ու արհամարհենք բնական մարդու ախորժակը և սպասենք Տիրոջը: Սաղմոսողը գրել է.

«Սպասիր Տիրոջը, թող սիրտդ պինդ եւ զօրաւոր լինի. Եւ սպասիր Տիրոջը»:[27]

«Նա է մեր օգնութիւնն ու պահապանը»:[28]

Ես վկայում եմ ձեզ, որ գնալով մեր Տիրոջ հետքերով և սպասելով Նրան, ով մեր կյանքի անզուգական բժիշկն է, կապահովի մեր հոգիները հանգստությամբ, իսկ մեր բեռը կդարձնի հեշտ ու թեթև:[29] Այս բաների մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մատթեոս 11.29–30, Հակոբոս 2.24, 2 Նեփի 25.23:
2. Տես Մատթեոս 16.21:
3. Մատթեոս 16.22:
4. Մատթեոս 16.24–26:
5. Տես Հովհաննես 6.38:
6. Տես Հովհաննես 19.16–17:
7. Տես Մարկոս 16.17–20, Ղուկաս 24.36–53:
8. Տես Մատթեոս 28.19–20:
9. Տես Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 16.25–29 (Աստվածաշնչի հավելվածում), տես նաև Սուրբ գրքերի ուղեցույց. “Lust”; “Natural Man”; “Sensual, Sensuality”; “Wicked, Wickedness”; scriptures.ChurchofJesusChrist.org:
10. Տես Ալմա 1.25:
11. Տես Մոսիա 5.15:
12. Տես Ալմա 60.23:
13. 2 Նեփի 25.23:
14. See Bruce C. Hafen, *The Broken Heart: Applying the Atonement to Life's Experiences* (1989), 155–56.
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 46.19, 21:
16. See Neal A. Maxwell, “Repentance,” *Ensign,* Nov. 1991, 32.
17. Տես Եզեկիել 18.31, 36.26:
18. Տես Եթեր 12.27:
19. Տես 1 Նեփի 7.21:
20. Վարդապետություն և Ուխտեր 121.29:
21. Տես 3 Նեփի 27.6:
22. Տես Մոսիա 2.41:
23. Տես 3 Նեփի 1.4–7:
24. Տես Վարդապետություն և Ուխտեր 101.16:
25. Տես 2 Նեփի 31.20:
26. Տես Մատթեոս 5.48, 3 Նեփի 12.48, 27.27:
27. Սաղմոս 27.14:
28. Սաղմոս 33.20:
29. Տես Մատթեոս 11.30, Մոսիա 24.14:

ԵՐԵՑ ՆԻԼ Լ. ԱՆԴԵՐՍԵՆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Պտուղ

Կենտրոնացած պահեք ձեր աչքերն ու սրտերը Փրկիչ Հիսուս Քրիստոսի և հավերժական ուրախության վրա, որը գալիս է միայն Նրա միջոցով:

Ես գիտեմ, թե դուք ինչ եք մտածում: Մենք կլսենք ևս մեկ ելույթ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնից: Հուսով եմ ձեզ արթուն պահել մի քանի րոպե, մինչ կսպասենք մեր սիրելի մարգարեին, ես ընտրել եմ մի շատ գրավիչ թեմա, իմ թեման պտուղն է:

Հատապտուղները, բանանը, ձմերուկը և մանգոն իրենց գույնով, հյուսվածքով և քաղցրությամբ և ավելի էկզոտիկ մրգեր, ինչպես՝ կիվիի կամ նռան պտուղը վաղուց բաղձալի անուշեղեն են:

Իր երկրային ծառայության ժամանակ Փրկիչը բարի պտուղը համեմատում էր հավերժական արժեք ունեցող բաների հետ: Նա ասել է. «Դուք պիտի ճանաչեք նրանց իրենց պտուղներից»:[1] «Ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում»:[2] Նա խրախուսեց մեզ հավաքել «պտուղ հավերժական կյանքի համար»:[3]

Իր երկրային ծառայության ժամանակ Փրկիչը համեմատում էր բարի պտուղը հավերժական արժեք ունեցող բաների հետ:

Մի վառ երազում, որին մենք բոլորս լավ ծանոթ ենք Մորմոնի Գրքից, Լեքի մարգարեն իրեն տեսնում է «մի մութ ու մռայլ անապատում»: Կա կեղտոտ ջուր, խավարի մեգ, տարօրինակ ճանապարհներ և արգելված արահետներ, ինչպես նաև երկաթյա ձող,[4] որը ձգվում է նեղ արահետի երկայնքով, տանելով դեպի մի գեղեցիկ ծառ, «պտղով, [որը դարձնում է] մարդուն երջանիկ»: Պատմելով երազը, Լեքին ասում է. «Ես ճաշակեցի դրա պտղից. . . . այն ամենաքաղցրն էր բոլորից, որ ես նախկինում երբևիցե . . . փորձել էի: . . . [Եվ], այն լցրեց իմ հոգին չափազանց մեծ ուրախությամբ:» *Այդ* պտուղը «[ավելի] բաղձալի էր [քան որևէ այլ] պտուղ»:[5]

Ծառի և պտղի իմաստը

Ի՞նչ է խորհրդանշում այդ ծառը իր ամենաթանկարժեք պտղով: Այն ներկայացնում է «Աստծո սերը»[6] և հուշակում Երկնային Հոր փրկագնման սքանչելի ծրագիրը: «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չկորչի այլ յաւիտենական կեանքն ունենայ»:[7]

Այդ թանկարժեք պտուղը խորհրդանշում է Փրկիչի անզուգական Քավության սքանչելի օրհնությունները: Մահկանացու կյանքից հետո մենք ոչ միայն կրկին կապրենք, այլև Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, մեր ապաշխարության և պատվիրանները պահելու միջոցով մենք կարող ենք ներվել մեր մեղքերից և մի օր մաքուր և անբիծ կանգնել մեր Հոր և Նրա Որդու առջև:

Ծառի պտղից ճաշակելը խորհրդանշում է, որ մենք ընդունում ենք վերականգնված ավետարանի արարողությունները և ուխտերը՝ լինելով մկրտված, ստանալով Սուրբ Հոգու պարգևը և մտնելով Տիրոջ տունը, որպեսզի ի վերուստ օժտվենք զորությամբ: Հիսուս Քրիստոսի շնորհի միջոցով և մեր ուխտերը պատվելով, մենք ստանում ենք անսահման խոստում՝ ապրել մեր արդարակյաց ընտանիքի հետ ողջ հավերժության ընթացքում:[8]

Զարմանալի չէ, որ հրեշտակը նկարագրում է պտուղը՝ որպես «հոգու համար ամենաբերկրալին»:[9] Դա իսկապես այդպես է:

Հավատարիմ մնալու մարտահրավերը

Ինչպես մենք բոլորս գիտենք, նույնիսկ, վերականգնված ավետարանի թանկարժեք պտուղը համտեսելուց հետո, անկեղծ և հավատարիմ մնալը Տեր Հիսուս Քրիստոսին, այնուամենայնիվ, հեշտ չէ: Ինչպես բազմիցս ասվեց այս համաժողովի ընթացքում, մենք շարունակում ենք դիմակայել շեղումների և խաբեությունների, խառնաշփոթի և իրարանցումի, հրապուրանքների և գայթակղությունների, որոնք փորձում են հեռու քաշել մեր սրտերը Փրկիչից և ուրախություններից ու գեղեցկություններից, որոնք մենք ճաշակել ենք Նրան հետևելիս:

Այս անբարենպաստության պատճառով Լեքիի երազը նաև նախազգուշացնում է պարունակում: Գետի մյուս կողմում մի ընդարձակ շենք կա ամեն տարիքի մարդկանցով, ովքեր, ծաղրելով և ծանակելով, մատնացույց են անում Հիսուս Քրիստոսի արդար հետևորդներին:

Մարդիկ շենքում հեգնում են և ծիծաղում նրանց վրա, ովքեր պահում են պատվիրանները, հուսալով վարկաբեկել և ծաղրել նրանց հավատքն առ Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանը: Եվ կասկածի ու արհամարհանքի բանավոր հարձակումների պատճառով, որոնք տեղում էին հավատացյալների վրա, նրանցից ոմանք, ովքեր ճաշակել են պտղից, սկսում են ամաչել այն ավետարանից, որն իրենք մի ժամանակ ընդունել էին: Աշխարհի կեղծ հրապուրանքները գայթակղում են նրանց և նրանք շրջվում են ծառից և պտղից և, սուրբ գրությունների խոսքերով՝ «[մոլորվում] են դեպի արգելված ուղիներ և կորում»:[10]

Մեր այսօրվա աշխարհում հակառակորդի շինարարական անձնակազմերն աշխատում են արտաժամյա, հապճեպ ուռճացնելով մեծ ու ընդարձակ շինությունը: Ընդարձակումը տարածվում է գետի վրայով՝ հույս ունենալով մտնել մեր տները, մինչ մատնացույց անողները և ծաղրողներն օր ու գիշեր աղաղակում են իրենց համացանցային մեգաֆոններով:[11]

Նախագահ Նելսոնը բացատրել է. «Հակառակորդը քառապատկում է իր ջանքերը, որպեսզի քայքայի վկայությունները և խոչընդոտի Տիրոջ աշխատանքը»:[12] Եկեք հիշենք Լեքիի խոսքերը. «Մենք ուշադրություն չդարձրեցինք նրանց վրա»:[13]

Չնայած մենք չպետք է վախենանք, սակայն պետք է զգոն լինենք: Երբեմն, փոքր բաները կարող են խախտել մեր հոգևոր հավասարակշռությունը: Խնդրում եմ,թույլ մի տվեք, որ ձեր հարցերը, ուրիշների վիրավորանքները, անհավատ ընկերները կամ չարաբաստիկ սխալներն ու հուսահատությունները ձեզ հեռու շրջեն քաղցր, մաքուր և հոգեզմայլ օրհնություններից, որոնք

Ինչպես մենք բոլորս գիտենք, նույնիսկ, վերականգնված ավետարանի թանկարժեք պտուղը համտեսելուց հետո, Տեր Հիսուս Քրիստոսին անկեղծ և հավատարիմ մնալը, այնուամենայնիվ, հեշտ չէ:

ԼԵՀԻԻ ԵՐԱԶԸ, ԳՐԵԳ ՕԼՍԵՆ

գալիս են ծառի թանկագին պտղից: Կենտրոնացած պահեք ձեր աչքերն ու սրտերը Փրկիչ Հիսուս Քրիստոսի և հավերժական ուրախության վրա, որը գալիս է միայն Նրա միջոցով:

Ջեյսոն Հոլլի հավատքը

Հունիսին կինս՝ Քեթին և ես մասնակցեցինք Ջեյսոն Հոլլի թաղմանը: Կյանքից հեռանալու պահին նա 48 տարեկան էր և ծառայում էր երեցների քվորումի նախագահ:

Սիա Ջեյսոնի խոսքերն այն իրադարձության մասին, որը փոխեց նրա կյանքը.

«[15 տարեկանում] ես վթարի ենթարկվեցի սուզվելիս: . . . Ես [ջարդեցի] վիզս և անդամալույծ դարձա կրծքավանդակիցս ներքև: Ես ամբողջովին կորցրի ոտքերիս վերահսկողությունը և մասնակիորեն ձեռքերիս վերահսկողությունը: Ես այլևս չէի կարողանում քայլել, կանգնել, . . . կամ ինձ կերակրել: Ես հազիվ էի կարողանում շնչել կամ խոսել:[14]

«Սիրելի՛ Հայր [Երկնքում], աղաչում էի ես, «Եթե միայն կարողանայի ունենալ ձեռքեր, գիտեմ որ կկարողանայի հաղթահարել»: Խնդրում եմ Հայր, խնդրում եմ: . . .

. . .Պահիր ոտքերս Հայր, ես ուղղակի [աղոթում եմ] ձեռքերս օգտագործելու համար»:[15]

Ջեյսոնը երբեք չօգտագործեց իր ձեռքերը: Կարողանո՞ւմ եք լսել ընդարձակ շենքի ձայները: «Ջեյսոն Հոլլ, Աստված չի լսում քո աղոթքները: Եթե Աստված սիրող Աստված է, ինչպե՞ս կարող է Նա թողնել քեզ այդպես: Ինչո՞ւ հավատք ունենանք առ Քրիստոս: Ջեյսոն Հոլլը լսեց նրանց ձայները, բայց նրանց վրա նա ուշադրություն չդարձրեց: Փոխարենը նա սնուցվեց ծառի պտղով: Նրա հավատքն առ Հիսուս Քրիստոս դարձավ անսասան: Նա ավարտեց համալսարանը և ամուսնացավ Կոլետ Քոլմանի հետ տաճարում՝ նկարագրելով նրան որպես իր կյանքի սերը:[16] Ամուսնությունից 16 տարի անց, ևս մեկ հրաշք տեղի ունեցավ, նրանց թանկագին որդին՝ Քոլմանը ծնվեց:

Նրանք ինչպե՞ս աճեցրին իրենց հավատքը: Կոլետը բացատրեց. «Մենք վստահեցինք Աստծո ծրագրին: Եվ դա մեզ հույս տվեց: Մենք գիտեինք, որ Ջեյսոնը [ապագայում մի օր] ողջ կլինի: . . . Մենք գիտեինք, որ Աստված տվել է մեզ Փրկիչ, ում քավիչ զոհաբերությունը հնարավորություն է տալիս մեզ շարունակել առաջ նայել, երբ մենք ուզում ենք հանձնվել»:[17]

Խոսելով Ջեյսոնի թաղմանը, 10-ամյա Քոլմանն ասաց, որ իր հայրն ուսուցանել էր իրեն. «Երկնային Հայրը ծրագիր [ունի] մեզ համար, երկրային կյանքը կլինի սքանչելի, և մենք կարող ենք ապրել ընտանիքներով: . . . Բայց . . . մենք ստիպված կլինենք անցնել դժվարին բաների միջով և սխալներ կգործենք»:

Քոլմանը շարունակեց. «Երկնային Հայրն Իր Որդուն՝ Հիսուսին, երկիր ուղարկեց: Նրա գործն էր կատարյալ լինել: Բժշկել մարդկանց: Սիրել նրանց: Իսկ հետո տառապել բոլոր մեր ցավերի, վշտերի և մեղքերի համար: Ապա Նա մահացավ մեզ համար»: Ապա Քոլմանը ավելացրեց. «Քանի որ Նա արել է այդ, Հիսուսը գիտի թե ինչպես եմ ես զգում հենց հիմա»:

Հիսուսի մահից երեք օր անց, Նա . . . նորից կենդանացավ Իր կատարյալ մարմնով: Սա կարևոր է ինձ համար, որովհետև ես գիտեմ որ . . . իմ [հայրիկիս] մարմինը կատարյալ կլինի և մենք միասին կլինենք որպես ընտանիք»:

Քոլմանը եզրափակեց. «Ամեն գիշեր իմ մանկությունից սկսած հայրիկս ասում էր ինձ. «Հայրիկը սիրում է քեզ, Երկնային Հայրը սիրում է քեզ, և դու լավ տղա ես»:[18]

Ուրախությունը գալիս է Հիսուս Քրիստոսի շնորհիվ:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը այսպես է նկարագրել, թե ինչու է Հոլլ ընտանիքը ուրախություն և հույս զգում: Նա ասաց.

«Ուրախությունը, որ մենք զգում ենք, շատ քիչ է կապված մեր կյանքի հանգամանքների հետ և մեծապես կապված է մեր կյանքի կիզակետի հետ:

Ջեյսոնը, Քոլմանը և Քոլեթ Հոլլը

Երբ մեր կյանքը կենտրոնացած է Աստծո փրկության ծրագրի վրա . . . և Հիսուս Քրիստոսի ու Նրա ավետարանի վրա, մենք ուրախություն ենք զգում, անկախ այն բանից՝ մեր կյանքում ինչ-որ բան տեղի է ունենում, թե ոչ: Ուրախությունը գալիս է Նրանից ու Նրա շնորհիվ: Նա բոլոր ուրախությունների աղբյուրն է. . .

«Եթե մենք նայենք աշխարհին . . . մենք երբեք ուրախություն չենք իմանա: . . . [Ուրախությունը] մի պարգև է, որը գալիս է, երբ նպատակադրված փորձում ենք ապրել արդար կյանքով, ինչպես ուսուցանել է Հիսուս Քրիստոսը»:[19]

Խոստում, երբ վերադառնաք

Եթե դուք որոշ ժամանակ եղել եք առանց ծառի պտղի, խնդրում եմ իմացեք, որ Փրկիչի ձեռքերը միշտ մեկնված են դեպի ձեզ: Նա սիրով հրավիրում է.«Ապաշխարեք և եկեք դեպի ինձ»:[20] Նրա պտուղը առատ է և միշտ ժամանակին: Այն չի կարող փողով գնվել, և նրան, ով ազնվորեն ցանկանում է այն, չի մերժվի:[21]

Եթե դուք ցանկանում եք վերադառնալ ծառի մոտ և մեկ անգամ ևս համտեսել պտուղը, սկսեք՝ աղոթելով ձեր Երկնային Հորը: Հավատացեք Հիսուս Քրիստոսին և Նրա քավիչ զոհաբերության ուժին: Ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք նայեք առ Փրկիչը «բոլոր մտորումներում»,[22] ծառի պտուղը ձերը կլինի մեկ անգամ ևս՝ համեղ ձեր քիմքին, ուրախալի ձեր հոգուն, որն «ամենամեծն է Աստծո բոլոր պարգևներից»:[23]

Երեք շաբաթ առաջ, ես տեսա Փրկիչի պտղի ուրախության լիակատար դրսևորումը, երբ Քեթին և ես մասնակցեցինք Պորտուգալիայի Լիսաբոնի Տաճարի նվիրագործմանը: Վերականգնված ավետարանի ճշմարտությունները բացվեցին Պորտուգալիային 1975 թվականին, երբ կրոնական ազատությունը հասանելի դարձավ: Բազմաթիվ ազնիվ Սրբեր, ովքեր առաջինը համտեսեցին պտղից, երբ չկային համայնքներ, ժողովատներ և 1000 մղոնից (1,600 կմ) ավելի մոտ գտնվող տաճարներ, ցնծում էին մեզ հետ, որ ծառի թանկագին պտուղն այժմ Տիրոջ տանն է՝ Լիսաբոնում,

Պորտուգալիա: Որքան եմ հարգում և մեծարում այս Վերջին Օրերի Սրբերին, ովքեր Փրկիչի վրա գամված են պահել իրենց սրտերը:

Փրկիչն ասել է, «Նա որ ինձանում մնում է, և ես նորանում, նա շատ պտուղ է բերում, որովհետեւ առանց ինձ չեք կարող ոչինչ անել»:[24]

Այս առավոտ խոսելով Եկեղեցու անդամների հետ ողջ աշխարհում, Նախագահ Նելսոնն ասաց. «Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, դուք ապրող օրինակներն եք այն պտուղների, որոնք գալիս են Հիսուս Քրիստոսի ուսմունքներին հետևելուց: Նա այնուհետև ավելացրեց. «Շնորհակալ եմ: Ես սիրում եմ ձեզ»:[25]

Նախագա՛հ Նելսոն, մենք սիրում ենք Ձեզ:

Ես ականատես եմ այն հայտնության զորությանը, որը հիմնվում է մեր սիրելի Նախագահի վրա: Նա Աստծո մարգարեն է: Հնադարյան Լեքիի նման, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հրավիրում է մեզ՝ Աստծո ընտանիքին, գալ և ճաշակել ծառի պտղից: Թող որ մենք խոնարհություն և ուժ ունենանք՝ հետևելու նրա խորհրդին:

Ես ուրախությամբ վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է: Նրա սերը, Նրա զորությունը և Նրա շնորհը բերում են բոլոր հարատև արժեքները: Ես վկայում եմ այդ մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 7.16:
2. Մատթեոս 7.17:
3. Հովհաննես 4.36:
4. 2007թ.-ի հունվարի սկզբին, երբ պատրաստվում էի Բրիգամ Յանգի Համալսարանի հոգևոր երեկույթի ելույթին որպես Յոթանասունի Նախագահության անդամ, որը տրվելու էր 2007 թ.-ի մարտի 4-ին, ես հարցրի Երեց Դեյվիդ Ա. Բեդնարին, թե ինչ էր պատրաստում 2007 թ.-ի իր փետրվարի 4-ի ելույթին այդ նույն լսարանի համար: Ես ընկրկեցի, երբ նա պատասխանեց, որ նրա ելույթը երկաթյա ձողից ամուր բռնելու մասին էր: Սա ճիշտ նույն վերնագիրն էր, որը ես էի ընտրել իմ ելույթի համար: Մեր տեքստերով միմյանց հետ կիսվելուց հետո մենք հասկացանք, որ մեր մոտեցումները տարբեր էին: Նրա ելույթը, որը կոչվում էր «Կենդանի ջրի աղբյուր», շեշտում էր երկաթյա ձողը կամ Աստծո խոսքը, որպես սուրբ գրություններն ընդգրկող: Իր ելույթում նա հարցրեց. «Արդյո՞ք դուք և ես

ՆԱԽԱԳԱՀ ՌԱՍՍԵԼ Մ. ՆԵԼՍՈՆ

Ամփոփիչ ելույթ

Անձնական արժանավորությունը պահանջում է մտքի և սրտի ամբողջական փոխակերպում, որպեսզի ավելի շատ նմանվենք Տիրոջը:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մոտենալով այս պատմական համաժողովի ավարտին, մենք շնորհակալություն ենք հայտնում Տիրոջն այս ուղերձների ոգեշնչման և այն երաժշտության համար, որը շենացրեց մեզ: Իսկապես, մենք հոգևոր խնջույք վայելեցինք:

Մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը հույս և ուրախություն կպարգևի այն մարդկանց, ովքեր կլսեն և ականջ կդնեն Նրա վարդապետությանը: Մենք նաև գիտենք, որ յուրաքանչյուր տունը կդառնա հավատքի ճշմարիտ սրբավայր, որտեղ կտիրի խաղաղություն, սեր և Տիրոջ Հոգին կբնակվի այնտեղ:

Իհարկե, Վերականգնման լավագույն զարդը սուրբ տաճարն է: Նրա սուրբ արարողություններն ու ուխտերը առանցքային նշանակություն ունեն ժողովրդին նախապատրաստելու գործում, որ ողջունեն Փրկիչին Նրա Երկրորդ Գալստյան ժամանակ: Ներկայումս ունենք 166 նվիրագործված տաճարներ և շատերն էլ գտնվում են շինարարության փուլում:

Յուրաքանչյուր նոր և նորոգված տաճարի նվիրագործումից առաջ տեղի է ունենում բաց դռների օրեր: Մեր հավատքին չհարող շատ ընկերներ մասնակցում են այդ տաճարների շրջագայություններին և ինչ-որ բան սովորում տաճարային օրհնությունների մասին: Եվ այդ այցելուներից ոմանք կոգեշնչվեն ավելին իմանալու համար: Ոմանք անկեղծ կհարցնեն, թե ինչպես կարող են արժանավոր դառնալ տաճարային օրհնություններին:

Որպես Եկեղեցու անդամներ, մենք պետք է պատրաստ լինենք՝ պատասխանելու նրանց հարցերին: Կարող ենք բացատրել, որ տաճարային օրհնությունները հասանելի են բոլոր մարդկանց համար, ովքեր կնախապատրաստվեն դրան: Սակայն, նվիրագործված տաճար մտնելուց առաջ նրանք պետք է արժանի լինեն: Տերը ցանկանում է, որ Իր բոլոր զավակները մասնակցեն Նրա տաճարում հասանելի հավերժական օրհնություններին: Նա ցուցումներ է տվել, թե յուրաքանչյուր մարդ ինչ պետք է անի, որպեսզի արժանի գտնվի Նրա սուրբ տուն մտնելու համար:

Մեզ համար նման ուսուցումը սկսելու լավ հնարավորություն է, երբ ուշադրություն ենք դարձնում տաճարի արտաքին մասում նկարագրված բառերին. «Սրբություն Տիրոջը. Տիրոջ տունը»: Նախագահ Հենրի Բ. Այրինգի այսօրվա ուղերձը և շատ ուրիշների ուղերձներ ոգեշնչել են մեզ, որ ավելի սուրբ դառնանք: Յուրաքանչյուր տաճար սուրբ վայր է. տաճարի

ամեն օր կարդում ենք, ուսումնասիրում ենք և հետազոտում սուրբ գրությունները մի ձևով, որը հնարավորություն է տալիս մեզ ամուր կառչել երկաթյա ձողից» (speeches.byu.edu):

Ապա, երեք Բեդնարի հետ իմ զրույցից մեկ շաբաթ անց, Նախագահ Բոյդ Ք. Փաքերը ԲՅՀ-ի հոգևոր երեկույթի ժամանակ ելույթ ունեցավ, որը կոչվում էր «Լեքիի երազը և դուք»: Նախագահ Փաքերը շեշտեց երկաթյա ձողը՝ որպես անձնական հայտնություն և ոգեշնչում, որը գալիս է մեզ Սուրբ Հոգու միջոցով: Նա ասաց. «Եթե դուք բռնեք ձողից, *կգաք* ձեր ճանապարհը առջևում Սուրբ Հոգու պարգևով: . . . Ամուր բռնեք երկաթե ձողը և բաց մի թողեք: Սուրբ Հոգու զորության միջոցով, դուք կարող եք *զգալ* ձեր ուղին կյանքում» (Հուն. 16, 2007, speeches.byu.edu):

Իմ թեման, «Ամուր բռնեք մարգարեների խոսքերից», 2007 թ.-ի մարտին, երկաթյա ձողը ներկայացնում էր ապրող մարգարեների խոսքերը (Մարտ 4, 2007, speeches.byu.edu):

Այս երեք ելույթների կապը պատահականություն չէր: Տիրոջ ձեռքը գործում էր որպես երեք ելույթներ, որոնք պատրաստված էին նույն լսարանի համար, բացահայտելով երկաթյա ձողի կամ Աստծո խոսքի երեք կողմերը. (1) սուրբ գրությունները կամ հնադարյան մարգարեների խոսքերը, (2) ապրող մարգարեների խոսքերը, և (3) Սուրբ Հոգու զորությունը: Դա մի կարևոր ուսուցողական փորձառություն էր ինձ համար:

5. Տես 1 Նեփի 8.4–12:
6. 1 Նեփի 11.25:
7. Հովհաննես 3.16
8. Տես Դեյվիդ Ա. Բեդնար, «Լեքիի երազը՝ ամուր բռնվել ձողից», *Լիահոնա,* 2011, 32–37:
9. 1 Նեփի 11.23:
10. 1 Նեփի 8.28
11. See Boyd K. Packer, “Lehi’s Dream and You” (Brigham Young University devotional, Jan. 16, 2007), speeches.byu.edu.
12. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել», *Լիահոնա,* մայիս, 2019թ.,68:
13. 1 Նեփի 8.33:
14. Stephen Jason Hall, “The Gift of Home,” *New Era,* Dec. 1994, 12.
15. Stephen Jason Hall, “Helping Hands,” *New Era,* Oct. 1995, 46, 47.
16. Անձնական նամակագրություն Երեց Անդերսենին Կոլետ Հոլլից:
17. Անձնական նամակագրություն Երեց Անդերսենին Կոլետ Հոլլից:
18. Թաղման ելույթ Քոլման Հոլլի կողմից, տրվել է Երեց Անդերսենին Կոլետ Հոլլի կողմից:
19. Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիահոնա,* նոյ. 2016, 82, 84:
20. 3 Նեփի 21.6:
21. Տես 2 Նեփի 26.25, 33:
22. Վարդապետություն և Ուխտեր 6.36:
23. 1 Նեփի 15.36:
24. Հովհաննես 15.5:
25. Ռասսել Մ. Նելսոն «Երկրորդ մեծ պատվիրանը» *Լիահոնա,* նոյեմբեր 2019, 100:

յուրաքանչյուր այցելու ձգտում է դառնալ ավելի սուրբ:

Տաճար մուտք գործելու բոլոր պահանջները վերաբերում են մարդու սուրբ լինելուն: Այդ պատրաստակամությունը գնահատելու համար յուրաքանչյուր մարդ, ով ցանկանում է վայելել տաճարային օրհնությունները, երկու հարցազրույց կանցնի՝ նախ եպիսկոպոսի, եպիսկոպոսության խորհրդականի կամ ճյուղի նախագահի հետ, իսկ երկրորդը՝ ցցի, միսիայի նախագահի կամ նրա խորհրդականներից մեկի հետ: Այդ հարցազրույցների ժամանակ մի քանի հարցեր կհնչեն:

Այդ հարցերից մի քանիսը պարզության համար խմբագրվել են: Այժմ ես կուզենայի կրկնել դրանք ձեզ համար:

1. Դուք ունե՞ք հավատք և վկայություն առ Աստված՝ Հավերժական Հայրը, Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին:
2. Դուք ունե՞ք վկայություն Հիսուս Քրիստոսի Քավության և որպես Փրկիչ ու Քավիչ Նրա դերի մասին:
3. Դուք ունե՞ք վկայություն Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման մասին:
4. Դուք սատարո՞ւմ եք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահին՝ որպես մարգարե, տեսանող ու հայտնող և որպես միակ անձը Երկրի վրա, ով լիազորված է կիրառելու քահանայության բոլոր բանալիները:

   Դուք սատարո՞ւմ եք եք Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

   Դուք սատարո՞ւմ եք Եկեղեցու մյուս Բարձրագույն Իշխանավորներին և տարածքային ղեկավարներին:
5. Տերն ասել է, որ բոլոր բաները պետք է «մաքրությամբ կատարվեն» Իր առաջ (Վարդապետություն և Ուխտեր 42.41):

   Դուք ձգտո՞ւմ եք բարոյապես մաքուր լինել Ձեր մտքերով և պահվածքով:

   Դուք պահո՞ւմ եք մաքրաբարոյության օրենքը:

6. Դուք հետևո՞ւմ եք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ուսմունքներին Ձեր ընտանիքի անդամների կամ ուրիշների հետ Ձեր անձնական կամ հասարակական հարաբերություններում:
7. Դուք աջակցո՞ւմ եք կամ առաջ տանում որևէ ուսմունք, գործունեություն կամ վարդապետություն, որը հակասում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից ընդունված ուսմունքներին, գործունեությանը կամ վարդապետությանը:
8. Դուք ձգտո՞ւմ եք սուրբ պահել Հանգստության օրը տանը և եկեղեցում, հաճախել Ձեր ժողովներին, պատրաստվել և արժանիորեն ընդունել հաղորդությունը, և ապրել ավետարանի օրենքներին ու պատվիրաններին ներդաշնակ կյանքով:
9. Դուք ձգտո՞ւմ եք ազնիվ լինել Ձեր բոլոր գործերում:
10. Դուք լիարժեք տասանորդ վճարո՞ղ եք:
11. Դուք հասկանո՞ւմ և պահո՞ւմ եք Իմաստության Խոսքը:
12. Դուք ունե՞ք ֆինանսական կամ այլ պարտավորություններ նախկին կնոջ կամ երեխաների հանդեպ:

    Եթե այո, դուք պարտաճանաչ կատարո՞ւմ եք այդ պարտավորությունները:
13. Դուք պահո՞ւմ եք ուխտերը, որոնք կապել եք տաճարում, այդ թվում՝ տաճարային հանդերձ կրելը, ինչպես հրահանգվել է օժտման ժամանակ:
14. Ձեր կյանքում կա՞ն լուրջ մեղքեր, որոնք պետք է շտկվեն քահանայության իշխանությունների հետ՝ որպես Ձեր ապաշխարության գործընթացի մաս:
15. Դուք ձեզ համարո՞ւմ եք արժանի՝ Տիրոջ Տուն մտնելու և տաճարային արարողություններին մասնակցելու համար:

Վաղը, տաճարային երաշխավորագրի այս վերանայված հարցերը կբաժանվեն Եկեղեցու ղեկավարներին ամբողջ աշխարհում:

Այս հարցերին ազնվորեն պատասխանելուց բացի, ակնկալվում է, որ տաճար գնացող յուրաքանչյուր չափահաս այցելու իր ամենօրյա հագուստի ներքո կրելու է քահանայության սուրբ հագուստը: Դա ներքին պարտավորվածության խորհրդանիշն է, որ ամեն օր պետք է ձգտել ավելի նմանվել Տիրոջը: Այն նաև հիշեցնում է, որ մենք ամեն օր հավատարիմ մնանք կապած ուխտերին և ամեն օր ավելի բարձր և ավելի սուրբ ձևով քայլենք ուխտի ճանապարհով:

Այժմ, մի փոքր կցանկանայի խոսել մեր երիտասարդների հետ: Մենք խրախուսում ենք ձեզ արժանի լինել սահմանափակ օգտագործման տաճարային երաշխավորագիր ստանալու համար: Ձեզ կտրվեն միայն ձեզ համար կիրառելի հարցերը, երբ պատրաստվեք որպես փոխարինողներ կատարելու մկրտության և հաստատման արարողությունները: Մենք

շատ շնորհակալ ենք տաճարային սուրբ աշխատանքին մասնակցելու ձեր արժանավորության և պատրաստակամության համար: Մենք շնորհակալ ենք ձեզ:

Տիրոջ տուն մտնելու անձնական արժանավորությունը պահանջում է անհատական հոգևոր պատրաստվածություն: Սակայն Տիրոջ օգնությամբ անհնարին ոչինչ չկա: Որոշ առումներով, տաճար կառուցելն ավելի հեշտ է, քան տաճարին պատրաստ ժողովուրդ ստեղծելը: Անձնական արժանավորությունը պահանջում է մտքի և սրտի ամբողջական փոխակերպում, որպեսզի ավելի շատ նմանվենք Տիրոջը, լինենք ազնիվ քաղաքացիներ, լինենք ավելի լավ օրինակներ և լինենք ավելի սուրբ անձ:

Ես վկայում եմ, որ նախապատրաստական այդպիսի աշխատանքները բերում են անթիվ օրհնություններ այս կյանքում և անհավատալի օրհնություններ գալիք կյանքի համար, այդ թվում՝ «չվերջացող երջանկության» վիճակում ձեր ընտանեկան միավորի հավերժացումը ողջ հավերժության ընթացքում:[1]

Այժմ ես կցանկանայի անդրադառնալ մեկ այլ թեմայի՝ գալիք տարվա ծրագրերին: 2020 թվականի գարնանը կլրանա ճիշտ 200 տարին, երբ Ջոզեֆ Սմիթը տեսավ Աստծո հայտնվելը մարդուն, որը մեզ հայտնի է որպես Առաջին Տեսիլք: Հայր Աստվածը և Նրա Սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին 14-ամյա պատանուն: Այդ իրադարձությունը նշանավորեց Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման սկիզբը իր լրիվության մեջ, ճիշտ, ինչպես կանխատեսվել էր Սուրբ Աստվածաշնչում:[2]

Այնուհետև իրար հետևից այցելություններ կատարեցին երկնային սուրհանդակներ, այդ թվում՝ Մորոնին, Հովհաննես Մկրտիչը և վաղ առաքյալներ՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը: Մյուսները հաջորդեցին նրանց՝ Մովսեսը, Եղիասը և Եղիան: Ամեն մեկն իր հետ բերեց Աստվածային իշխանություն՝ կրկին օրհնելու Աստծո զավակներին երկրի վրա:

Հրաշքով մենք ստացանք նաև Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն



Հիսուս Քրիստոսի մասին՝ զույգ սուրբ գրություն Սուրբ Աստվածաշնչի համար: Վարդապետություն և Ուխտեր և Թանկագին Մարգարիտ գրքերում հրատարակված հայտնությունները նույնպես մեծապես հարստացրել են Աստծո պատվիրանների և հավերժական ճշմարտության վերաբերյալ մեր հասկացողությունը:

Քահանայության բանալիներն ու պաշտոնները վերականգնվել են, ներառյալ՝ Առաքյալի, Յոթանասունականի, հայրապետի, Քահանայապետի, երեցի, եպիսկոպոսի, քահանայի, ուսուցչի և սարկավագի պաշտոնները: Իսկ կանայք, ովքեր սիրում են Տիրոջը, քաջաբար ծառայում են Սփոփող Միությունում, Երեխաների Միությունում, Երիտասարդ Կանանց դասարանում, Կիրակնօրյա Դպրոցում և Եկեղեցու այլ կոչումներում. և բոլորը մասն են կազմում Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման՝ իր լրիվության մեջ:

Այսպիսով, 2020 թվականը կբնութագրվի որպես երկամյա տարի: Հաջորդ ապրիլի գերագույն համաժողովը կտարբերվի նախորդ համաժողովներից: Ես հույս ունեմ, որ հաջորդ վեց ամիսների ընթացքում ամեն անդամ և ամեն ընտանիք կպատրաստվի եզակի համաժողովին, որը կնշի վերականգնված ավետարանի հիմնադրումը:

Գուցե ցանկանաք սկսել ձեր նախապատրաստությունը՝ վերստին կարդալով Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի պատմությունը, ինչպես գրված է Թանկագին Մարգարիտում: Հաջորդ տարի *Եկ հետևիր ինձ* ծրագրում մեր ուսումնասիրության նյութը կլինի Մորմոնի Գիրքը: Հնարավոր է, դուք ցանկանաք մտածել հետևյալ կարևոր հարցերի շուրջ. «Ինչպե՞ս իմ կյանքը կփոխվեր, եթե Մորմոնի Գրքից սովորած իմ գիտելիքը հանկարծակի վերցնեին ինձանից», կամ՝ «Ինչպե՞ս են Առաջին Տեսիլքից հետո տեղի ունեցած իրադարձությունները փոխել իմ և իմ սիրելի մարդկանց կյանքը»: Նաև, գուցե ցանկանաք Մորմոնի Գրքի տեսանյութերը, որոնք այժմ հասանելի են դառնում, ներառել ձեր անհատական և ընտանեկան ուսումնասիրության մեջ:

Ընտրեք ձեր հարցերը: Նախագծեք ձեր անձնական ծրագիրը: Խորասուզվեք Վերականգնման փառահեղ լույսի մեջ: Եթե այդպես անեք, հաջորդ ապրիլի գերագույն համաժողովը ոչ միայն կհիշվի, այլև կլինի անմոռանալի»:

Ավարտելով, ես կցանկանայի իմ սերն ու օրհնությունը փոխանցել ձեզ, որ յուրաքանչյուր անցնող օրվա հետ ձեզանից յուրաքանչյուրը դառնա ավելի երջանիկ և ավելի սուրբ: Միևնույն ժամանակ խնդրում եմ համոզված լինել, որ հայտնությունը շարունակվում է Եկեղեցում և կշարունակվի Տիրոջ ղեկավարության ներքո, մինչև «Աստծո նպատակներն իրականացվեն, և Մեծ Եհովան ասի՝ աշխատանքը կատարված է»:[3]

Ես օրհնում եմ ձեզ, վերահաստատում իմ սերը ձեր հանդեպ և բերում եմ իմ վկայությունը, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է և մենք Նրա ժողովուրդն ենք: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մոսիա 2.41:
2. Տես Եսայիա 2.2, 29, Եզեկիել 37.15–20, 26–28, Դանիել 2.44, Ամոս 3.7, Գործք Առաքելոց 3.21, Եփեսացիս 1.10, Հայտնություն 14.6:
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 142:

Երաշխավորագրի նորացված հարցեր և այլ տաճարային նորություններ

2019թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ներկայացրեց տաճարային երաշխավորագրի հարցազրույցի հարցերի նորացումները (տես էջ 121)։ Տաճարային չափանիշները մնացել են նույնը, բայց որոշ հարցեր պարզեցվել են։ Եկեղեցու համապատասխան ղեկավարներն արդեն ստացել են 2019թ. հոկտեմբերի 6-ի Առաջին Նախագահության նամակը, որը ներառում է նորացված հարցերը։

Նախագահ Նելսոնը նաև հայտարարեց ութ նոր տաճարների ծրագրերի մասին (տես էջ 79)։ Նոր տաճարներ կլինեն՝ Ֆրիթաուն (Սիերա Լեոնե), Օրեմ (Յուտա), Պորտ Մորեսբի (Պապուա Նոր Գվինեա), Բենտոնվիլ (Արկանզաս), Բակոլոդ (Ֆիլիպիններ), Մաքալեն (Տեխաս), Կոբոն (Գվատեմալա) և Թեյլորսվիլ (Յուտա)։

2019թ. ապրիլի գերագույն համաժողովից սկսած նվիրագործվել են Կինշասա (Կոնգոյի Դեմոկրատական հանրապետություն), Լիսաբոն (Պորտուգալիա), Պորտ-աու-Պրինս (Հայիթի), Ֆորտալեզա (Բրազիլիա) և վերանվիրագործված տաճարներ՝ Օքլենդ (Կալիֆորնիա, ԱՄՆ), Մեմֆիս (Թենեսի, ԱՄՆ), Ֆրանկֆուրտ (Գերմանիա), Օկլահոմա Սիթի (Օկլահոմա, ԱՄՆ) և Ռալլի (Հյուսիսային Կարոլինա, ԱՄՆ)։

Կառուցվել են հետևյալ տաճարների հիմքերը. Յիգո (Գուամ), Պրեյա (Կաբո Վերդե), Սան խուան (Պուերտո Ռիկո), Լիմա Պերու (Լոս Օլիվոս), Բելեմ (Բրազիլիա) և ընտրվել են վայրերը հետևյալ տաճարների համար Օքլանդ (Նոր Զելանդիա), Լայտոն և Սարագոտա Սփրինգս (Յուտա, ԱՄՆ)։

Ծրագրեր են կազմվել Սոլթ Լեյք Տաճարի վերանորոգման համար, որը կփակվի դեկտեմբերին և կվերաբացվի 2024թ., և Սենթ Ջորջ Յուտա Տաճարի համար, որը կփակվի 2019թ. նոյեմբերին և կվերաբացվի 2022 թվականին։ ■

*Տաճարների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **temples.ChurchofJesusChrist.org:***

Ձախից. Ֆորտալեզա Բրազիլիա տաճար, Լիսաբոն Պորտուգալիա տաճար, Կինշասա Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն Տաճար և Պորտ-աու-Պրինս Հայիթի Տաճար

Եկեղեցին փոխում է քաղաքականությունը արարողությունների վկաների վերաբերյալ

Գերագույն համաժողովի ղեկավարների ժողովի ժամանակ, որտեղ Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորներն ու Բարձրագույն պաշտոնյաները հրահանգներ են ստանում Առաջին Նախագահությունից, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարեց Եկեղեցու քաղաքականության ընթացակարգային փոփոխությունների մասին, որոնք վերաբերում են այն հարցին, թե ով կարող է որպես վկա ծառայել մկրտությունների և կնքումների ժամանակ։

2019թ. հոկտեմբերին 2-ի Առաջին Նախագահության նամակը մանրամասնում է այդ փոփոխությունները.

«Նախագահող իշխանության հրավերով՝

1. Ցանկացած անդամ, ով ունի գործող տաճարային երաշխավորագիր, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման երաշխավորագիր, կարող է ծառայել որպես վկա փոխարինող մկրտության ժամանակ։
2. Օժտում ստացած ցանկացած անդամ, ով ունի գործող տաճարային երաշխավորագիր, կարող է ծառայել որպես վկա ապրող անձանց կամ փոխարինողների միջոցով կնքման արարողության ժամանակ։
3. Եկեղեցու մկրտված ցանկացած անդամ, ներառյալ երեխաներն ու երիտասարդները, կարող են ծառայել որպես վկա ապրող մարդու մկրտության արարողության ժամանակ»։ ■

Ղեկավարները ներկայացնում են երեխաների և երիտասարդների նոր նախաձեռնությունը

Երեխաների ու երիտասարդների ծրագիրը կիրականցվի 2020թ. հունվարին, որպեսզի օգնենք երիտասարդներին հետևել Փրկիչին, երբ նրանք աճեն հոգևորապես, սոցիալապես, ֆիզիկապես և մտավորապես: Երեխաների ու երիտասարդների ծրագիրը քննարկող ելույթների համար այցելեք այս ամսագրի 40 և 53 էջերը:

«Ժամանակն է որդեգրել նոր մոտեցում, որը նախատեսված է օգնել այսօրվա երեխաներին և երիտասարդներին ամբողջ աշխարհում»,- ասաց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը 2019թ. սեպտեմբերի 29-ի հատուկ հեռարձակման ժամանակ:

«Ձեզ բազմաթիվ հատուկ հանձնարարություններ տալու փոխարեն,- ասաց նա երեխաներին և երիտասարդներին,- մենք հրավիրում ենք ձեզ խորհրդակցել Տիրոջ հետ այն մասին, թե դուք ինչպես կարող եք աճել հավասարակշռված ձևով: Այն օգտակար և ուրախ կլինի, բայց ձեզանից կպահանջի որոշ ջանքեր: Դուք պետք է փնտրեք անձնական հայտնություն: Դուք պետք է ինքներդ ընտրեք՝ ինչպես վարվել այդ դեպքում: Երբեմն Հոգին կարող է հուշել ձեզ կատարել դժվար գործեր: Ես կարծում եմ, դուք կընդունեք մարտահրավերը: Դուք կարող եք դժվար գործեր կատարել»:

Նախագահ Նելսոնն ասաց նաև, որ ծնողները կարևոր դեր ունեն կատարելու այդ գործում: «Խնդրում ենք, ամուր հարաբերություններ հաստատեք ձեր երեխաների և երիտասարդների հետ»,- ասաց նա: «Եկեղեցու ղեկավարները կարող են օգնել, բայց նրանք ձեր երեխաներն են: Ձեզանից բացի ոչ ոք չի կարող ավելի մեծ ազդեցություն ունենալ նրանց հաջողության վրա: Սիրեք նրանց, խրախուսեք և խորհուրդ տվեք, բայց դիմակայեք գայթակղությանը, որ հաղթահարեք դրանք: Նրանք կառաջադիմեն, երբ գործադրեն իրենց սեփական կամքը:

Այս խորհուրդը վերաբերում է նաև մեր երեխաների և երիտասարդների հրաշալի ղեկավարներին և ուսուցիչներին»,- շարունակեց Նախագահ Նելսոնը: «Մենք պետք է թույլ տանք երիտասարդ մարդկանց ղեկավարել, հատկապես նրանց, ովքեր կանչվել և ձեռնադրվել են՝ ծառայելու դասարանի և քվորումի նախագահություններում: Քահանայության իշխանությունը կպատվիրակվի նրանց: Նրանք կսովորեն, թե ինչպես ոգեշնչում ստանան իրենց դասարանը կամ քվորումը ղեկավարելիս»:

Նույն հավաքի ժամանակ Նախագահ Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող Նախագահը, ներկայացրեց Երեխաների և երիտասարդների տեսլականը. «Զորացրեք աճող սերնդի հավատքն առ Հիսուս Քրիստոսը և օգնեք երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին առաջադիմել ուխտի արահետում, երբ նրանք բախվեն կյանքի մարտահրավերներին»:[1] Նա ասաց, որ «օգնելով երեխաներին և երիտասարդներին վկայություն ձեռք բերել Հիսուս Քրիստոսի մասին, կօրհնենք նրանց, մեզ և բոլորիս կյանքը:

Հեռարձակումից հետո, երբ երիտասարդները համատեղ միջոցառում անցկացրին, որպեսզի ցուցադրեն՝ ինչպես օգտագործել *Նեռածական ուղեցույց Երեխաների և երիտասարդների համար* գրքույկը, Նախագահ Բալլարդն ասաց. «Սա միայն սկիզբն



է»: Այսօր մենք պարզապես սկսեցինք այս միջոցառումով: Սա կշարունակվի ձեր ընտանիքներում, և երբ դուք աշխատեք միասին: Մենք հրավիրում ենք ձեզ շարունակել միջոցառումը: . . . Ծնողնե՛ր, խնդրում ենք ձեզ շարունակեք սա տանը»: Նա շեշտեց, որ «սա տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ծրագիր է» և «ընտանիքները միասին ընդգրկված են այս ծրագրում: Սա այն է, ինչն այս ծրագիրն այդքան հրաշալի է դարձնում»:

Աշխարհի շատ վայրերում ծնողներն ու ղեկավարները նույնպես ստացել են իրենց ներածական ուղեցույցը: Մյուս տարածաշրջանները նույնպես կունենան իրենց լեզուներով թարգմանված Երեխաների և երիտասարդների ձեռնարկը 2020թ.-ի վերջում:

Ավետարանի ուսումնասիրությունը, ծառայությունն ու միջոցառումները, անձնական զարգացումը (ներառյալ նպատակների սահմանումը և իրականացնումը) կլինեն Երեխաների և երիտասարդների ձեռնարկի հիմնական մասերը, և երիտասարդները պետք է ընդգրկվեն ծրագրման մեջ: Երեխաներն ու երիտասարդները անձնական հայտնություն են փնտրում, երբ առաջ են ընթանում ուխտի ճանապարհով՝ աջակցություն ստանալով ընտանիքի, ղեկավարների և ուրիշների կողմից: Նախագահ Բալլարդը նշեց, որ Երեխաների և երիտասարդների ծրագիրը համաշխարհային նախաձեռնություն է, և հետևաբար հեշտությամբ կարելի է հարմարեցնել «ձեր ապրելու վայրին և ընտանեկան հանգամանքներին»:

Լրացուցիչ մանրամասներն ու նյութերը կտրամադրվեն երեխաների և երիտասարդների համար հեռարձակվող Դեմառդեմ հավաքի ժամանակ, որը տեղի կունենա 2019թ. նոյեմբերի 17-ին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Գերիթ Վ. Գոնզի մասնակցությամբ: Հրավիրում ենք մասնակցել՝ երեխաներին և երիտասարդներին, որոնց տարիքը 2020թ.-ին կլրանա 8–18 տարեկան, նրանց ծնողներին, Երիտասարդ Կանանց ղեկավարներին, Ահարոնյան Քահանայության խորհրդատուներին և Երեխաների Միության ղեկավարներին: Երեխաների և երիտասարդների ծրագրի մասին ձեր հարցերը ներկայացրեք Երեց Գոնզին հետևյալ հասցեով՝ **facetoface.ChurchofJesusChrist.org:** Ուղիղ եթերից հետո, որը կհեռարձակվի 18 լեզուներով, հոգևոր հավաքի տեսաձայնագրությունը կպահպանվի, որը ցանկացած ժամանակ կարելի է ցուցադրել կամ ներբեռնել: ■



*Տես **ChildrenandYouth.ChurchofJesusChrist.org** ինչպես նաև **ChildrenandYouthLeaders.ChurchofJesusChrist.org** լրացուցիչ տեղեկությունների համար, ներառյալ Դեմառդեմ հավաքի մասին:*

ՀՂՈՒՄ

1. *Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Երեխաներն ու երիտասարդները. Ներածական ուղեցույց Ծնողների և երեխաների համար* (2019), 1:

ԵՋՀ-ի համաժողովներ՝ երեխաների և երիտասարդների ծրագրին աջակցելու համար

Որպես Եկեղեցու նախաձեռնության մաս, ամբողջ աշխարհում երեխաների և երիտասարդների ծրագրերը միավորելու համար, սկսած 2020 թվականից, Միացյալ Նահանգների և Կանադայի ցցերը կհովանավորեն երկու տարին մեկ անգամ տեղի ունեցող Երիտասարդների Զարգացման Համար (ԵՋՀ) համաժողովները:

Ավելի քան մեկ տասնամյակ ԵՋՀ-ի համաժողովներն անցկացվել են Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս և կշարունակվեն՝ ինչպես անցյալում:

Լրացուցիչ տեղեկություններ կտրամադրվեն Դեմառդեմ հավաքի ժամանակ 2019թ. նոյեմբերի 17-ին: ■

Կազմակերպչական փոփոխությունները կենտրոնանում են երիտասարդներին զորացնելու վրա

Որպեսզի Եկեղեցու երիտասարդներին հետագայում հնարավորություն տրվի հասնել իրենց աստվածային ներուժին, 2019թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարեց Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց կազմակերպություններում կատարվող փոփոխությունների մասին (տես էջ 38): Այդ մասին բացատրեց Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքը (տես էջ 40) և Երիտասարդ Կանանց Գերագույն նախագահ Քույր Բոնի Հ. Քորդոնը (տես էջ 67):

Այս փոփոխությունները շեշտում են, որ եպիսկոպոսի «առաջին և ամենակարևոր պարտականությունն է՝ հոգ տանել իր ծխի երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց մասին»,- ասաց Նախագահ Նելսոնը: Փոփոխություններն ընդգրկում են ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահությունների գործունեության դադարեցումը: Եպիսկոպոսությունը, որպես Ահարոնյան Քահանայության նախագահություն, կաջակցվի խորհրդատուների քվորումի, իսկ որոշ դեպքերում՝ մասնագետների կողմից: Ծխի Երիտասարդ Կանանց նախագահը հաշվետվություն կտա ուղիղ եպիսկոպոսին:

Քվորումի և դասարանների նախագահությունները կկենտրոնանան փրկության աշխատանքի վրա, ներառյալ՝ անդամների միսիոներական աշխատանքի, նորադարձին Եկեղեցում պահելու, ոչ ակտիվ անդամների ակտիվացման, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքների և ավետարանի ուսուցման վրա: Երիտասարդների քվորումը և դասարանի նախագահները ծրագրում և անցկացնում են կիրակնօրյա ժողովներ, ծառայության ծրագրեր և այլ միջոցառումներ:

Երիտասարդների «Համատեղ միջոցառումներ»-ը այսուհետ կկոչվեն «Երիտասարդ Կանանց միջոցառումներ», «Ահարոնյան Քահանայության քվորումի միջոցառումներ» կամ «երիտասարդների միջոցառումներ»: Բյուջեի հատկացումները երիտասարդների միջոցառումների համար պետք է հավասար բաժանվի յուրաքանչյուր կազմակերպության երիտասարդների թվաքանակի համաձայն:

Երիտասարդ կանանց թեման ևս վերանայվել է, իսկ Երիտասարդ Կանանց դասարանների թիվը պետք է կազմակերպվի երիտասարդ կանանց թվի և կարիքների համաձայն: Դասարանները կկոչվեն «Երիտասարդ կանայք», որին կհետևի դասարանի անդամների տարիքը, օրինակ՝ «Երիտասարդ կանայք 12–14» կամ պարզապես «Երիտասարդ կանայք», երբ բոլորը միասին են, մեկ դասարանում: «Փեթակ», «Համաստեղություն» և «Դափնի» անունները այլևս չեն օգտագործվելու:

Ցցի բարձրագույն խորհրդի անդամը կծառայի որպես ցցի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, իսկ ցցի Երիտասարդ Տղամարդկանց նախագահությունը կծառայի ցցի Ահարոնյան Քահանայություն-Երիտասարդ Կանայք հանձնաժողովում՝ ցցի Երիտասարդ Կանանց նախագահության հետ, բարձրագույն խորհրդականի հետ, ով կցված է Երիտասարդ Կանանց և բարձրագույն խորհրդականի հետ, ով կցված է Երեխաների Միությանը:

Այլ փոփոխություններով Ստիպող Միությունը, Երիտասարդ Կանայք, Երիտասարդ Տղամարդիկ, Երեխաների Միությունը և Կիրակնօրյա դպրոցը կկոչվեն «կազմակերպություններ»՝ «օժանդակ կազմակերպությունների» փոխարեն, իսկ ղեկավարները Եկեղեցու մակարդակում կկոչվեն «Բարձրագույն պաշտոնյաներ» և «ցցի պաշտոնյաներ»՝ տեղական մակարդակում: ■

2020թ. ապրիլին պատրաստվելու չորս եղանակ

2020թվականը կնշանավորվի Առաջին տեսիլքի 200-րդ տարեդարձով, որը տեղի է ունեցել 1820թ. գարնանը: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարեց, որ գալիք ապրիլյան համաժողովին «կնշվի վերականգնված ավետարանի հիմնադրումը» (տես էջ 122):

Նա խրախուսեց բոլոր անդամներին և ընտանիքներին պատրաստվել այս «եզակի համաժողովին» և առաջարկեց դա անելու հնարավոր ուղիները.

1. Կրկին կարդացեք Ջոզեֆ Սմիթի Առաջին տեսիլքի պատմությունը:
2. Երբ ուսումնասիրեք *Եկ, հետևիր ինձ* ձեռնարկը 2020թ.-ին, հարցեր մտածեք ձեռք բերված գիտելիքների և օրհնությունների մասին, որոնք ստացել եք Մորմոնի Գրքի շնորհիվ:
3. Օգտագործեք Մորմոնի Գրքի նոր տեսանյութերը անհատական և ընտանեկան ուսումնասիրության ժամանակ:
4. Ընտրեք ձեր հարցերը և կազմեք ձեր ծրագիրը՝ «խորասուզվելով Վերականգնման փառավոր լույսի մեջ»:

«Եթե այդպես անեք,- ասաց Նախագահ Նելսոնը,- հաջորդ ապրիլի գերագույն համաժողովը ոչ միայն կհիշվի, այլ նաև կդառնա անմոռանալի»: ■

Եկ, հետևիր ինձ

Սովորել գերագույն համաժողովի ելույթներից

Երբ մենք ձգտում ենք մասնակցել Տիրոջ գործին, ապրող մարգարեների և Եկեղեցու մյուս բարձրագույն ղեկավարների ուսմունքները ոգեշնչող առաջնորդություն են տրամադրում մեզ: Յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ կիրակի օրերին, քվորումը և Սփոփող Միության նախագահությունները ընտրում են համաժողովի որևէ ուղերձ ուսումնասիրման համար՝ ելնելով անդամների կարիքներից և հիմնվելով Հոգու առաջնորդության վրա: Երբեմն եպիսկոպոսը կամ ցցի նախագահը նույնպես կարող են խորհուրդ տալ ուսումնասիրել որոշակի ուղերձ: Ընդհանուր առմամբ, ղեկավարները պետք է շեշտը դնեն Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների ուղերձների վրա: Սակայն վերջին համաժողովի ցանկացած ուղերձ կարող է քննարկվել:

Ղեկավարները և ուսուցիչները պետք է ուղիներ փնտրեն՝ խրախուսելու անդամներին ժողովը սկսելուց առաջ կարդալ ընտրված ուղերձները:

Երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովների մասին լրացուցիչ տեղեկության համար տես *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում,* 7.8.1, 9.4.1, ChurchofJesusChrist.org:

Ծրագրել ուսուցումը

Հետևյալ հարցերը կարող են օգնել ուսուցիչներին, երբ նրանք ծրագրեն ուսուցանել գերագույն համաժողովի ուղերձը:

1. Ելույթ ունեցողն ի՞նչ է կամենում, որ մենք հասկանանք: Ավետարանի ի՞նչ սկզբունքներ է նա ցանկանում ուսուցանել: Ինչպե՞ս է այն վերաբերում մեր քվորումին կամ Սփոփող Միությանը:

2. Իր ելույթը լրացնելու համար սուրբ գրության ի՞նչ հատված օգտագործեց ելույթ ունեցողը: Կա՞ն արդյոք ուրիշ հատվածներ, որոնք կարդալով ավելի լավ կհասկանանք սկզբունքը: (Հատվածների որոշ հղումներ կարող եք գտնել ծանոթագրություններում կամ Թեմաների ուղեցույցում:)

3. Ի՞նչ հարցեր կարող եմ տալ, որոնք կօգնեն անդամներին խորհել սկզբունքի մասին: Ի՞նչ հարցեր կօգնեն նրանց հասկանալ ուղերձի կարևորությունն իրենց կյանքում, իրենց ընտանիքներում և Տիրոջ աշխատանքում:

4. Ուրիշ ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հրավիրեմ Հոգին մեր ժողովների ժամանակ: Ի՞նչ կարող եմ օգտագործել քննարկումն ընդլայնելու համար, ներառյալ՝ պատմությունները, համանմանությունները, երաժշտությունը և նկարները: Ի՞նչ էր օգտագործում ելույթ ունեցողը:

5. Արդյո՞ք ելույթ ունեցողը որևէ հրավերի կոչ հղեց: Ինչպե՞ս կարող եմ օգնել անդամներին՝ ըստ այդ հրավերի գործելու ցանկություն ունենալ:

Միջոցառման գաղափարներ

Կան շատ եղանակներ, որոնցով կարող եք օգնել անդամներին սովորել գերագույն համաժողովի ելույթներից: Սհա մի քանի օրինակներ. դուք կարող եք ունենալ այլ գաղափարներ, որոնք ավելի լավ կգործեն ձեր քվորումում կամ Սփոփող Միությունում:

- *Քննարկեք խմբերով*
  Անդամներին փոքր խմբերի բաժանեք և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք համաժողովի տարբեր ուղերձներ՝ կարդալու և քննարկելու համար: Ապա, խնդրեք յուրաքանչյուր խմբին կիսվել իրենց սովորած ճշմարտությունով: Կամ կարող եք խմբեր ձևավորել այն մարդկանցով, ովքեր տարբեր բաժիններ են ուսումնասիրել, ապա թույլ տվեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց գրածով:

- *Պատասխանեք հարցերին՝*
  Հրավիրեք անդամներին պատասխանել հարցերին՝ համաժողովի ուղերձի վերաբերյալ հետևյալ հարցի նման: Այս ուղերձում ավետարանի ի՞նչ ճշմարտություններ ենք գտնում: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ ճշմարտությունները: Ի՞նչ հրավերներ և խոստացված օրհնություններ տրվեցին: Ի՞նչ է այս ուղերձն ուսուցանում մեզ այն , աշխատանքի մասին, որն Աստված է կամենում, որ անենք:

- *Կիսվեք մեջբերումներով*
  Հրավիրեք անդամներին կիսվել համաժողովի այն ուղերձների մեջբերումներով, որոնք ոգեշնչում են նրանց կատարել փրկության աշխատանքի իրենց պարտականությունները: Հորդորեք նրանց մտածել, թե ինչպես կարող են կիսվել այդ մեջբերումներով, որպեսզի օրհնեն որևէ մեկին, այդ թվում՝ իրենց սիրելիներին և այն մարդկանց, ում նրանք սպասավորում են:

- *Կիսվեք առարկայական դասերով*
  Հրավիրեք մի քանի անդամների տնից նախօրոք բերել որևէ առարկա, որի օգնությամբ կարող են ուսուցանել համաժողովի ուղերձի մասին: Ժողովի ընթացքում խնդրեք անդամներին բացատրել, թե ինչպես են այդ առարկաները վերաբերում ուղերձին:

- *Դաս պատրաստեք տանը ուսուցանելու համար*
  Խնդրեք անդամներին աշխատել զույգերով և համաժողովի ուղերձի թեմայով ընտանեկան երեկոյի համար մի դաս ծրագրել: Ինչպե՞ս կարող ենք ուղերձը հարմարեցնել մեր ընտանիքներին: Ինչպե՞ս կարող ենք այդ ուղերձով կիսվել այն մարդկանց հետ, ում սպասավորում ենք:

- *Կիսվեք փորձառություններով*
  Միասին կարդացեք մի քանի հայտարարություններ գերագույն համաժողովից: Խնդրեք անդամներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց կյանքից, որոնք լուսաբանում կամ ամրապնդում են այն վարդապետությունը, որն ուսուցանվել է այս հայտարարություններում:

- *Սովորեք սուրբ գրության որևէ հատված՝*
  Հրավիրեք անդամներին կարդալ սուրբ գրության որևէ հատված, որի մասին հղում է արված համաժողովի ուղերձում: Կոչ արեք նրանց քննարկել, թե այդ ուղերձի ուսմունքներն ինչպես են օգնում նրանց ավելի լավ հասկանալ այդ հատվածը:

- *Գտեք պատասխանը*
  Ժամանակի ընթացքում ստեղծեք մի քանի հարցեր, որոնց կարելի է պատասխանել՝ օգտագործելով համաժողովի ուղերձը: Կենտրոնացեք այն հարցերի վրա, որոնք խորությամբ մտածելու և ավետարանի սկզբունքները կիրառելու հնարավորություն են տալիս (տես Ուսուցանել Փրկիչի ձևով, 31–32): Ապա անդամներին թույլ տվեք ընտրել որևէ հարց և գտնել այդ հարցի պատասխանը ուղերձում: Հրավիրեք նրանց քննարկել իրենց պատասխանները փոքր խմբերում:

- *Գտեք արտահայտությունը*
  Հրավիրեք անդամներին քննել համաժողովի ուղերձը և ուշադրություն դարձնել այն արտահայտություններին, որոնք կարևոր են նրանց համար: Խնդրեք նրանց կիսվել այդ արտահայտություններով և կիսվել, թե ինչ են սովորել դրանցից: Ինչպե՞ս են այդ ուսմունքներն օգնում մեզ իրագործել Տիրոջ աշխատանքը:

- *Ստեղծեք որևէ գործ՝*
  Հրավիրեք անդամներին պատրաստել պաստառ կամ էջանիշ, որի վրա գրված է որևէ համաժողովի ուղերձից մի կարճ ոգեշնչող հայտարարություն: Նրանց հնարավորություն տվեք կիսվել իրենց պատրաստած գործերով: ■

© MICHAEL COLEMAN, ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

Քրիստոսը Երուսաղեմի ճանապարհին, Մայքլ Քոլման

«Վերականգնման լավագույն զարդը սուրբ տաճարն է։ Նրա սուրբ արարողություններն ու ուխտերը առանցքային նշանակություն ունեն ժողովրդին նախապատրաստելու՝ ողջունելու Փրկչին Նրա Երկրորդ Գալստյան ժամանակ . . .

Յուրաքանչյուր տաճար սուրբ վայր է. յուրաքանչյուր տաճարի այցելու ձգտում է դառնալ ավելի սուրբ»։

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, Ամփոփիչ ելույթ, 120, 121։

«2020 թվականը կբնութագրվի որպես երկու հարյուրամյակի տարի: Հաջորդ ապրիլի գերագույն համաժողովը կտարբերվի նախորդ համաժողովներից», - ասաց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Եկեղեցու 189-րդ կիսամյա գերագույն համաժողովի փակման նիստի ժամանակ: «Ես հույս ունեմ, որ հաջորդ վեց ամիսների ընթացքում ամեն անդամ և ամեն ընտանիք կպատրաստվի եզակի համաժողովին, որը կնշի վերականգնված ավետարանի հիմնադրումը:

. . . Եթե այդպես անեք, հաջորդ ապրիլի գերագույն համաժողովը ոչ միայն կհիշվի՝ այն կլինի անմոռանալի»:

2020թ. գերագույն համաժողովին նախապատրաստվելու գաղափարների համար այցելեք էջեր 122 և 126:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021861 112018